











АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

ВОСТОЧНОЕ  
ИСТОЧНИКОВЕДЕНИЕ

I

STUDIES  
IN ORIENTAL SOURCES

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН

1988

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՆՍՏԻՑՈՒՏ

# ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՅՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ

1988

Հպագրված է ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտի  
գիտական խորհրդի ոռոշմամբ

Խ մ բ ա զ ր ա կ ա ն կ ո լ ե զ ի ա

Գ. Խ. Սարգսյան, Ա. Ն. Տեր-Ղևոնյան, Հ. Դ. Փափազյան

Դիրքը հրատարակության են երաշխավորել  
գրախոսներ՝ պատմ. գիտ. դրկտորներ  
Հ. Մ. Եղանյանը և Ե. Դ. Սարգսյանը

Հատորում տեղ են գտել աղբյուրագիտական հոդվածներ՝ նվիրված  
հայագիտության մեջ արարական աղբյուրների ուսումնասիրությանը,  
հայատառ թուրքերների ձեռագրերին, դրամագիտությանը և վիմագրությանը:  
Բնագրերի հրապարակումների բաժնում հրատարակված են արարերեն և  
հայերեն ձեռագրեր՝ Հայաստանի և Արևելքի այլ երկրների վերաբերյալ,  
ինչպես նաև արևելագետ աղբյուրագետների հիշատակին նվիրված հոդ-  
վածներ:

Նախատեսված է արևելագետների, հայագիտների և ընթերցող լայն  
շրջանների համար:

Ա. 0505040000  
30—85  
703(02)—88

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1988

## ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

Հայ մատենագրության կապերն ու փոխառնչությունները Արևելքի այլ ժողովուրդների գրավոր մշակուլթի հետ դարերի պատմություններն և կարևոր ու շոշափելի արդյունքներ են տվել:

Արևելքի գրական հոլակավոր կոթողները՝ «Շահնամե», «Հազար և մեկ գիշեր», պարսկական պոեզիան ու բազմաթիվ այլ հուշարձաններ ծանոթ են հայ հասարակությանը՝ սկսած միջնադարից և թարգմանական մեծ ավանդույթ ունեն:

Հայ մատենագիրները տեղյակ են եղել արար բանաստեղծների ստեղծագործություններին ու տաղաշափությանը: Դուրանը քաջ ծանոթ էր միջնադարի հայ մտածողներին և թարգմանվել է հայերեն: Հայ առակագրությունն առնվազել է հնդկական «Քալիլա» և «Դիմա» ժողովածուի արարերեն թարգմանությանը: Հայ մտածողները ծանոթ էին ու թարգմանարար օգտագործել են արարական փիլիսոփայական երերը:

Հայ բժիշկները թարգմանել ու օգտագործել են արար բժիշկների, հատկապես Ռազիի ու Ավեցեննայի (Իրն Սինա) երկերը: Արարերենից հայերեն են թարգմանվել ծիարուծության, երկրագործության, ալքիմիայի, դեղաբույսերի, դեղատոմսերի (ախրապատին) մասին երկերը:

Մյուս կողմից հայերենից արարերեն են թարգմանվել տարբեր բնույթի՝ պատմական (Ագաթանգեղոս), ծիարուծական, գեղարվեստական-գրական հուշարձաններ:

Դեռ անցյալ դարի սկզբից թե՛ ելքոպացի, թե՛ հայ բանասեր պատմաբանները արար պատմիշների (Բալազուրի, Թարարի, Իրն ալ-Ասիր և այլք) և աշխարհագրագետների (Իրն Խորդադրեհ, Յակուտ և այլք) բնագրերն օգտագործել են իրենց հայագիտական հետազոտություններում, իսկ դարի երկրորդ կեսից սկսվել է և այսօր շարում ակվում է այդ աղբյուրների հայերեն, ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն, ռուսերեն և այլ լեզուներով ամբողջական կամ հատվածարար թարգմանության գործը:

Պարսիկ պատմիշներն ու աշխարհագրագետները (Ռաշիդ ալ-Դին, Համդալլահ Ղազուկինի և այլք) որպես հայագիտական հետազոտությունների աղբյուր օգտագործվել են նույնպես անցյալ դարի սկզբներից: Մեր օրերում ուսումնասիրվել են Երևանի Մատենադարանում պահպանվող պարսկերեն հրովարտակներն ու կալվածագրերը և հրատարակվել բնագրով ու թարգմանությամբ:

Հայագիտական պրատումների համար օգտագործվել են նաև թուրք պատմիշների ու աշխարհագրագետների (Քաթիր Չելեբի, Էվլիա Չելեբի և այլն) երկերը, որոնց հայերեն թարգմանությունները լույս են տեսել Վերջին տարիներին՝ մատենաշարուվ:

Այսուհեն գրեթերձ, թե՛ Արևելքի ժողովուրդների գրավոր կոթողները հայ ժողովուրդին ներկայացնելու, թե՛ Մատենադարանի արևելակեղու ձեռագրերի հրատարակման և մանավանդ հայ ժողովուրդի պատմության ու նրա մշակույթի պատմության համար արևելյան սկզբնադրյուրների պարունակած նյութի մշակման և կիրառման գործը դեռևս եռանդուն շանքեր է պահանջելու հայ արևելագետներից:

Իրենց հերթին հայ պատմիշների ու աշխարհագրագետների երկերը առատ ու արժեքավոր, շատ դեպքերում եղակի ու անփոխարինելի նյութ են մատակարարել Արևելքի տարրեր, մոտիկ ու հեռավոր երկրների ու ժողովուրդների պատմության ու մշակույթի հետազոտման համար, ինչպես Ագաթանգեղոսը, Եզնիկ Կողբացին, Փավստոս Բուզանդը, Սովոս Խորենացին, Աշխարհացուցը, Ղևոնդը, Հովհաննես Դրասիանակերտցին, Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը, Մատթեոս Ռուհայեցին, Վարդանը, մանր ժամանակագրությունները և ուրիշներ: Կարենը նյութ են պարունակում այս առումով նաև հայկական ձեռագրերի հիշատակարանները և վիմագիր արձանագրությունները:

Վերջին տարիներին մեզ մոտ էապես աշխուժացել է թե՛ արևելյան լեզուներով գրական կոթողների ու պատմական սկզբնադրյուրների ուսումնասիրման ու հրատարակման, թե՛ Արևելքի երկրների մասին հայկական աղբյուրների մշակման ու հրապարակման գործը:

Որքան էլ այս նյութերը մշակել և օգտագործել են հայ հետազոտողները համապատասխան արևելյան երկրների պատմությունն ու մշակույթը լուսաբանելու առումով, դեռևս մնում են կարենը ու արժեքավոր նյութեր, որոնք պետք է ի հայտ բերվեն և օգտագործվեն հետազոտողների կողմից:

Այս ամենն իր կազմակերպական մարմնացումն է ստացել ՀՍՍՀ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի Արևելյան աղբյուրագիտության

բաժնի ստեղծմամբ, բաժին, որը կոչված է կանոնավոր հոմի մեջ դնել և ծրագրված աշխատանքներ կատարել վերոհիշյալ բնագավառներում:

Ներկա հատորով ինստիտուտը «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», «Հին Արևելք», «Կովկաս և Բյուզանդիա» մատենաշարերի կողքին հիմնադրում է մի նոր մատենաշար՝ «Արևելյան աղբյուրագիտություն» խորագրով, որը կնպաստի Հայաստանում գիտության ալիք ճյուղի հետագա զարգացմանը:

Ա. ՏԵՐ-ՂԵՎՈՒԹՅԱՆ

ԱՐԱԲԱԿԱՆ ԱՂԻՅՈՒԹԻՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ  
ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Հայերի առնչությունը արաբների ու նրանց մշակութի հետ գալիս է դարերի խորքից: Մանոթանալով արաբներին որպես նվաճողների և հետագայում նրանց մշակութին, հայերը, բնականաբար, պիտի սովորեին արաբներնը և հետաքրքրվեին նրանց մշակութով, մանավանդ որ միջնադարյան արևելքում արաբներնը միջազգային լիզու էր:

Ը դարում այդ ժանոթացումը, հարկավ, Ղուրանից այն կողմ չեր կարող անցնել: Ղեռնդ պատմիլը<sup>1</sup> հիշում է Փուրկանը (Ղուրան) և տալիս բազմաթիվ մահմեդական կրոնական հոսանքների և աղանդների անունները, որոնց ժանոթացել էր գուցե գրավոր աղբյուրներից: Հայ նախարարներն ու հոգևորականները չեին կարող լիմանալ արաբներնը, քանի որ գործ ունեին ոչ միայն Արմինիայի կառավարիչների (ոստիկան) և զորավարների հետ, այլև անձամբ գնալով Դամասկոս ու Բաղդադ քանակցություններ էին վարում ամիրապետների հետ, ինչպես օրինակ Հայոց կաթողիկոս Հովհան Օձնեցին ու Հայոց իշխան Աշոտ Բագրատունին: Իշխանաց իշխան Բագրատ Բագրատունին, որ քաջ գիտեր արաբներնը, նանա սարկավագին պատվիրել էր գրել Հովհաննու ավետարանի մեկնությունը արաբներին<sup>2</sup>:

Իսկ արդյոք հետաքրքրություն չի եղել արաբական պատմական երկերի նկատմամբ: Ն. Ակինյանի<sup>3</sup> ենթադրությունը, թե Ղեռնդը և Մովսես Կաղանկատվացին իրենց մատյաններում խալիֆաների ցուցակներ կազմելիս ունեցել են արաբներն գրավոր աղբյուրներ, թեև վարկած է, սակայն չպիտի շտապենք ժխտել այդ հնարավորությունը: Մովսես Կաղանկատվացու երկից երևում է, որ նա ծանոթ է արաբական մահմեդական ամիսներին (Սաֆար, Ռամազան, Շաւալ, Ռաբիլ ալվալ), նույնիսկ արաբներն շահը (ամիս) բառն է գործածում<sup>4</sup>:

Այսուհանդերձ պետք է շեշտել, որ հայ մատենագիրները հիմնականում հետաքրքրվել են արաբական բժշկական<sup>5</sup>, ալքիմիական<sup>6</sup>, ձիարութական<sup>7</sup>, երկրագործական<sup>8</sup> և գեղարվեստական գրականությամբ<sup>9</sup>, ինչպես նաև ախտարական (երազահանության) գրվածքներով և նույնիսկ փիլիսոփայությամբ<sup>10</sup>:

Գրիգոր Մագիստրոս Պահավունին անկասկած բնագրով ծանոթ էր արաբական բանաստեղծական արվեստին, որ ալղբան դիպով խոսքերով բնորոշում է արաբական մատենագրության այդ խիստ կարևոր ճյուղը, հիշելով նաև հողակավոր Մուտանարրի բանաստեղծին<sup>11</sup>:

Հայերենում մի քանի հարյուր արաբական փոխառությունների առկայությունը<sup>12</sup> պետք է հետևանք համարել առաջին հերթին արաբ մատենագրության և հատկապես գիտական (բժշկական և այլն) գրականության ու գեղարվեստական արձակին բնագրով ծանոթ լինելու:

ԺԵ—ԺԸ դարերում հայ մշակութի կենտրոններում (Կոստանդնուպոլիս, Նոր Ջուղա, Հալեպ, Լվով) հետաքրքրություն առաջացավ դեպի արևելյան լեզուները և հատկապես արաբերենը: Հովհաննես քահանա Տիգրանակերտցին (ասորի) արաբերենից հայերեն է թարգմանել քրիստոնյա արաբ բժիշկ Յահիա իրն Զազլայի (մեռ. 1100) Մարմինների կարգավորում (Տակվիմ ալ-արդան) գիրքը, որ 1628 թվականին Լվովում գրի է առել Մկրտիչ գրիշը բժշկապետ Հովհաննես խոզա Զուղայեցու համար<sup>13</sup>: Մեկ ուրիշը՝ Ավետիք (ընթերցող) Տիգրանակերտցի Խաչատուրյանը արաբերենից թարգմանել կամ աղատ փոխադրել է աստղագիտական աշխատությունները<sup>14</sup>: Հալեպում և ընդհանրապես Սիրիայում ու Լիբանանում (Զմմառ) հայերի և քրիստոնյա արաբների սերտ շփումների հետևանքով ԺԵ—ԺԸ դարերում ձևավորվում է արաբախոս հայերի զանգվածը, որից դուրս եկան արարագիր հեղինակների<sup>15</sup>:

ԺԹ դարի սկզբից հայ իրականության մեջ սկիզբ առավ հետաքրքրությունը արաբերենի նկատմամբ, որի առաջին կարկառուն ներկայացուցիլն է Գևորգ Դպիր պալատցի Տեր Հովհաննիսյանը (1737—1812) իր արաբերեն-հայերեն բառարանով և արաբերենի քերականությամբ, որոնց մասին միայն հիշատակություն կա<sup>16</sup>: Հրատարակվել է սոսկ նրա պարսկերեն-հայերեն<sup>17</sup> արծեքավոր բառարանը: Գևորգ Դպրին կարելի է համարել հայ արևելագիտության հիմնադիրներից (Երեմիա Զելեպի Քյոմյուրճյանից հետո):

Արաբական աղբյուրները հայագիտությանն ի սպաս դնելու գործը իրականացավ միայն ԺԹ դարի առաջին կեսում: Դա պայմանավոր-

ված էր հայագիտության և արարական աղբյուրագիտության զարգացումը:

Հայկական աղբյուրների հրատարակման գործն սկիզբ է առել Ամստերդամում և Մարսելում Ժէ դարում: Լույս են ընծայվել է դարի Աշխարհացուցը (Աղվեսագրքի հետ), Առաքել Դավրիժեցու և Մովսես Խորենացու պատմությունները: ԺԸ դարում պատմիչների երկերը տպագրվում են Կոստանդնուպոլսում (Ագաթիանգեղոս, Զենոք Գլակ, Փավստոս Բուզանդ, Եղիշե), Վենետիկում (Ղազար Փարպեցի): ԺԹ դարի առաջին կեսում այլ պատմիչներ են հրատարակվում Վենետիկում, Երուաղեմում և բազում այլ վայրերում:

Մրան զուգահեռ զարգանում է հայագիտությունը: Մ. Զամշյանը (1738—1823) հիմք է դնում նոր հայ պատմագրությանը<sup>18</sup>, իսկ Ղ. Ինձիճյանը (1758—1833) հայ պատմագրական միտքը նոր աստիճանի է բարձրացնում Հայաստանի քաղաքական, տնտեսական, հասարակական և մշակութային կյանքի պատմությանը նվիրված իր մենագրությամբ<sup>19</sup> (որը գրել է հավանաբար 18—20-ական թվականներին): Մ. Սոմալյանը գրում է առաջին ուսումնասիրությունը հայ մատենագրության պատմության մասին<sup>20</sup>:

Հայագիտությունը զարգանում է նաև նվորապահում: Ժէ դարում լույս տեսավ Կղեմես Գալանոսի եկեղեցական բանավեճերին նվիրված աշխատությունը<sup>21</sup>: Հաջորդ դարում Մ. Վ. դը Լակրոզը<sup>22</sup> (1661—1732) և Յ. Շրոդերը<sup>23</sup> (Սքրոդեր—1680—1756) հրատարակել են հայերենի ուսումնասիրմանը նվիրված երկեր: Արբա Վիլֆրուան գրել է Փարիզի արքունի գրադարանի հայերեն ձեռագրերի ցուցակը<sup>24</sup>:

Հայագիտության զարգացումը պահանջում էր օժանդակ՝ օտար աղբյուրների տեղեկությունների ներգրավումը հայագիտական ուսումնասիրություններում: Առաջին քայլերն արել էր Մ. Զամշյանը, օգտագործելով հին հոնական, լատինական ու բյուզանդական աղբյուրները: Ղ. Ինձիճյանն ավելի առաջ էր գնացել այս հարցում: Դեռևս 1806-ին լույս տեսած «Աշխարհագրություն Հայաստանին վերաբերյալ» հատորի համար օգտվել է արար հեղինակների ելքորապական լեզուներով եղած թարգմանություններից, ապա Կոստանդնուպոլսում պատվիրած է եղել արարական որոշ աղբյուրներից թարգմանություններ կատարել, սակայն համարում չունենալով թարգմանիչների հմտության վրա, քիչ է օգտագործել այդ թարգմանությունները<sup>25</sup>: Իր Հնախոսության մեջ «Աշխարհագիրք յայլոց ազգաց» վերնագրի տակ հիշում է ԺԹ դարի աշ-

իսարհագրագետ Իդրիսիին (Էտրիս) և ԺԴ դարի պատմիչ Աբու-լ-Ֆիդա-լին (Ապիկֆետա Խսմալել) <sup>25</sup>:

Արարական աղբյուրագիտության զարգացումը Եվրոպայում Ժէ—ԺԸ և ԺԹ դարի առաջին կեսում հնարավորություն տվեց արարական սկզբնաղբյուրներն օգտագործելու արևելագիտության և ի շարս այլոց նաև հայագիտության մեջ:

Ժէ դարում լույս տեսան մի շարք քրիստոնյա արար պատմիչների՝ Մաքինի (ԺԴ դ.), Եվտիփիոսի (Ժ դ.), Աբու-լ-Ֆարազ Բար Հերբեսոսի (ԺԴ դ.), Երկերը, ինչպես նաև Ֆարղանիի (Ժ դ.) աստղաբաշխական երկը և Աբու-լ-Ֆիդայի Աշխարհագրությունից հատվածներ <sup>27</sup>: Փարիզում լույս տեսավ Բ. դ'Էրրելոյի «Արևելյան Գրադարան» <sup>28</sup> աշխատությունը, որն արևելագիտական հանրագիտարան է: Արարագիտության կենտրոններն էին Ֆրանսիան, Անգլիան և Հունանդիան: ԺԸ դարում Գերմանիայում լույս տեսավ Աբու-լ-Ֆիդայի Պատմությունը, իսկ Գ. Շնուռերը կազմեց արարերեն հրատարակությունների մատենագիտություն <sup>29</sup>:

Արարագիտությունը բուն զարգացում ապրեց ԺԹ դարում, և նրա առաջին կարկառում ներկայացուցիչը Ս. դը Սասին (1758—1838) էր Ֆրանսիայում: Նրա աշակերտներից է. Կատրըմերը հրատարակեց Մակրովիդիի (ԺԵ դ.) պատմության ֆրանսերեն թարգմանությունը, ասդա Ժ. Ռենոն և Մ. Գ. դը Սլենը լույս ընծայեցին Աբու-լ-Ֆիդայի Աշխարհագրությունը, իսկ վերջինս հրատարակեց իրն Խալիքանի (ԺԴ դ.) Կենսագրական բառարանի անգլերեն թարգմանությունը: Գ. Ֆլուուգելը հրատարակեց մատենագիտական երկու երկ՝ Նադիմի (Ժ դ.) Ֆիդիստը և Քաթիր Զելեբիի (Ժէ դ.) Քաշֆ ալ-Ճումումը: Հատկապես եռանդուն գործունեություն ծավալեց Ֆ. Վլուատենֆելդը (1808—1899), լույս ընծայելով Յակուտի (ԺԴ դ.) Աշխարհագրական բառարանը, Կազմինիի (ԺԴ դ.) աշխարհագրական երկերը և շատ այլ բնագրեր <sup>30</sup>:

Այս բոլորի հիման վրա սկսվեց արարական աղբյուրների օգտագործումը հայագիտության մեջ: Առաջին կարևոր դեմքը, որին կարող ենք այս բնագավառի հիմնադիրը համարել, Մ. Ժ. Սեն-Մարտենն է (1791—1832), որն իր «Պատմական և աշխարհագրական տեղեկություններ Հայաստանի մասին» <sup>31</sup> մենագրության առաջին հատորում շարադրում է Հայաստանի (Մեծ և Փոքր Հայք) պատմական աշխարհագրությունը, ապա Հայաստանի համառոտ պատմությունը և ժամանակակիցների պատմական աղբյուրներն, ասորերեն, արարերեն, պարսկերեն, թուրքերեն բազմաթիվ պատմաշխարհագրական երկեր, ընդ որում առատորեն մեջ բերելով արար

Հեղինակների գործերը՝ Մասուդի (Ժ դ.) Պատմությունն ու Աշխարհագրությունը, իրն Հառկալի, Իդրիսիի (ԺԲ դ.) Աշխարհագրությունները, իրն ալ-Ասիրի, Դրիգորիոս Աբու-լ-Ֆարազի Պատմությունները, Ցակուտի Աշխարհագրական բառարանը, Աբու-լ-Ֆիդայի Աշխարհագրությունը։ Պարսիկ հեղինակներից օգտվել է Համդալահ Ղաղոփնից, իսկ թուղթ մատենագիրներից՝ Քաթիր Զելեբիի (ԺԷ դ.) Զիհաննումայից։ Նյութեր է քաղել նաև Աբու-լ-Ֆարազի ասորերեն Պատմությունից։ Երկրորդ հատորում զետեղված են Հայկական աղբյուրներից թարգմանություններ, որոնց ծանոթագրություններում նույնպես օգտագործված են արար հեղինակներ։

Մ. Ժ. Սեն Մարտենի<sup>32</sup> այս արժեքավոր երկի հրապարակումից հետո հետաքրքրությունն ավելացավ Հայաստանի և ընդհանրապես Սկ և Կասպից ծովերի միջև ընկած երկրների նկատմամբ։ Ժ. Կլապրոֆը<sup>33</sup> լույս ընծայեց մի փոքրիկ ուսումնասիրություն՝ նվիրված այդ տարածության մեջ ընկած երկրների մասին Մասուդի հաղորդած տեղեկություններին։

Ինքնամիա աշխատություն է Հայազգի Մուրազա դ'Օհսոնի (1740—1807) «Կովկասի ժողովուրդները»<sup>34</sup> հետմահու հրատարակված աշխատությունը, ուր ի մի է բերել արար տարրեր մատենագիրներից քաղած տեղեկությունները, միաժամանակ տողատակում նշելով աղբյուրները։ Թղարից՝ Բալազուրի, Ժղարից՝ Մասուդի, Թարարի, իրն Ֆադլան, իրն Հառկալ, ԺԴ դարից՝ իրն ալ-Ասիր, Զաքարիա Կազուինի, Ցակուտ, ԺԴ դարից՝ Դիմաշզի, Աբու-լ-Ֆիդա, ԺԵ դարից՝ իրն ալ-Վարդի։ Օգտագործել է նաև Մունաշշիմ Բաշիի (ԺԷ դ.) արաբերեն մեծ պատմության օսմաններեն թարգմանությունը (Ահմեդ Էֆենդի) և այլն։

Հայաստանի պատմությունը ուսումնասիրելու համար հետաքրքրություն առաջացավ արարական դրամների նկատմամբ։ Գ. Ս. Ֆրենի (1782—1851) և այլոց դրամագիտական աշխատությունների հիման վրա 8. Հ. Պետերմանը (1801—1876) կազմեց Հայաստանի (Արմենիա) արար կառավարիչների (ոստիկանների) առաջին ցուցակը<sup>35</sup>։

Բ. Գ. Նիբուրը (1771—1831) արաբերենից գերմաներեն թարգմանեց Կեղծ-Վակիդիի Ասորիքի նվաճումներ գրքից Վերին Միջագետքին (Զագիրա) և Հայաստանին վերաբերող հատվածը<sup>36</sup>, Դա կարևոր է ոչ այնքան որպես աղբյուր Հայաստանի պատմության համար (քանի որ նրա անանուն հեղինակը ԺԲ դարում է գրել), որքան անգնահատելի արժեք ունի Մասնա ծոեր վեպի ուսումնասիրման համար։

Շարունակելով արարական աղբյուրների տեղեկությունները հա-

յագիտությանն ի սպաս դնելու գործը (1822—1883), Շ. Դեֆերմերին<sup>37</sup> ֆրանսիական «Ասիական հանդեսում» հոդվածների մի շարքով թարգմանարար հրատարակեց արար (Բաբրի, Իրն ալ-Ասիր, Իրն Խալդուն) և պարսիկ (Խոնդեմիր, Միրխոնդ) մատենագիրներից քաղված հատվածներ Կովկասի (նաև Հայաստանի) և հարավային Ռուսաստանի մասին:

Դերմանացի արևելագետ Ա. Դ. Մորդոմանը (1811—1879) առաջինն էր, որ փորձեց առանձին հավաքել արար պատմիչների տեղեկությունները միայն Հայաստանի մասին: Նա քաղվածարար հատվածներ է թարգմանել Բալազուրի, Թաբարի, Իրն ալ-Ասիր և Իրն Խալդուն<sup>38</sup> պատմիչներից:

Արարական գրավոր աղբյուրներին ու դրամներին առընթեր հետաքրքրություն առաջացավ նաև Հայաստանի արարերեն և արարատառ արձանագրությունների նկատմամբ: Ն. Վ. Խանիկովը (1822—1878) ուսումնասիրեց Անիի աշտարակի պատի վրա Արու Սահդ իշխանի արձանագրությունը, որը նրա յարդին է<sup>39</sup>: Կովկասի արարատառ արձանագրություններին Ն. Խանիկովն անդրադարձավ նաև հետագայում:

Կիլիկյան Հայաստանի քաղաքական պատմության համար կարելոր փաստաթուղթ է Հայոց Լոռն Դ թագավորի և Եգիպտոսի մամլուք սուլթան Կալաունի միջև 1285 թվականին կնքված դաշնագիրը, որի բնագիրը Վ. Լանգուան (1829—1869) պատմիլ Մակրիզի բնագրից հրատարակեց Կիլիկիայի հայկական թագավորության արքունի հրովարտակների և դաշնագրերի ժողովածուի մեջ՝ ֆրանսերեն թարգմանությամբ<sup>40</sup>:

Հայաստանի վերաբերյալ արարական աղբյուրների նկատմամբ հետաքրքրություն արթնացավ նաև հայ իրականության մեջ ԺԹ դարի երկրորդ կեսում:

Ա. Դ. Մորդոմանից հետո Ա. Տեր Հովհաննիսյանցը հայերեն է թարգմանում մի արար պատմիչի երկ՝ Արարշահի (ԺԵ դ.) «Լենկթեմուրի պատմությունը»<sup>41</sup>: Դրանից մեկ տարի անց լուս տեսավ Ա. Դ. Մորդոմանի վերոհիշյալ ժողովածուի (Արար պատմիչները Հայաստանի մասին) հայերեն թարգմանությունը: Ա. Տեր Հովհաննիսյանցը շուտով հրատարակեց Երուսաղեմի երկհատոր պատմությունը<sup>42</sup>, որի մեջ օգտագործվել էին արարական աղբյուրները, արարերեն վավերագրերն ու արձանագրությունները:

\*Մոնղոլ-թաթար խաների տված տարբեր բնույթի հրովարտակներ:

Մի քանի տարի անց Ղ. Ալիշանը (1820—1901) հայերեն թարգմանեց ԺԲ—ԺԳ դդ. Հայազգի արաբագիր պատմի Արու Սահի (Սալի)՝<sup>43</sup> պատմությունը (ըստ Օքսֆորդի արաբերեն բնագրի Հրատարակության)<sup>44</sup>, ուր նկարագրված են Եգիպտոսի վանքերը և միաժամանակ կարևոր տեղեկություններ՝ ֆաթիմյան Եգիպտոսում գործած հայ վեպիրների մասին:

Ընդհանրապես ԺԲ դարի վերջին և մեր դարի սկզբին մեծ առաջնթաց ապրեցին Հայագիտությունն ու արաբագիտությունը, իրար հետևից լույս տեսան Ղ. Ալիշանի «Շիրակ»<sup>45</sup>, «Սիսուան»<sup>46</sup>, «Այրարատ»<sup>47</sup>, «Սիսական»<sup>48</sup> և այլ կոթողային աշխատություններ, Ֆ. Նեկ «Քրիստոնյա Հայաստանը և նրա գրականությունը»<sup>49</sup>, Մ. Գարագաշյանի «Քննական պատմություն Հայոց»<sup>50</sup>, Ֆ. Տուրնըրիդի «Հայաստանի քաղաքական ու կրոնական պատմությունը»<sup>51</sup> և Մ. Օրմանյանի «Ազգապատումը»<sup>52</sup>:

Արաբագիտության ասպարեզում կարևոր իրադարձություն էր Հնագույն՝ Թ—Ժ դդ. աղբյուրների առաջին անգամ լույս ընծայումը: Մ. Ժ. Դը Գուեն (1836—1909) լույս ընծայեց այդ դարերի արար աշխարհագրագետների բնագրերի ութհատորանոց մատենաշարը<sup>53</sup>, ինչպես նաև Թուարի պատմիչ Բալագուրիի «Երկրների նվաճումը»<sup>54</sup>: ԺԲ դ. վերջին քառորդում Եվրոպայի գրամագետները լույս ընծայեցին տարբեր թանգարաններում պահվող արաբական դրամների հավաքածոների նկարագրությունը<sup>55</sup>, և այս նյութերը հետագայում հնարավորություն տվեցին ճշտելու Հայաստանի քաղաքական պատմության որոշ հարցեր և հատկապես լրացվեց Արմինիայի ոստիկանների ցուցակը:

Հայագիտության մեջ արաբական աղբյուրների ուսումնասիրման զարգացմանը խթանեցին նաև ԺԲ դ. և մեր դարի սկզբին լույս տեսած արաբական խալիֆության ընդհանուր պատմությանը նվիրված մենագրությունները, որտեղ տարբեր առիթներով անդրադառնում են նաև Հայաստանի պատմությանը: Այդպիսիք են Գ. Վայլի<sup>56</sup>, Լ. Ա. Սեպիյոյի<sup>57</sup>, Ա. Ֆոն Կրեմերի<sup>58</sup>, Ա. Մուլերի<sup>59</sup>, Վ. Մյուկիրի<sup>60</sup>, Յ. Վեհառուպենի<sup>61</sup> և Կ. Հյուարի<sup>62</sup> աշխատությունները:

Իրար հետևից հանդես եկան արաբական աղբյուրների օգտագործմամբ գրված Հայաստանի պատմությանն առնշվող երկեր: Վ. Տոմաշեկը Սասունին նվիրված իր երկասիրության մեջ<sup>63</sup> օգտագործել է բազում աղբյուրներ (կեղծ Վակիդի, Բալագուրի, Թաբարի, Իրն ալ-Ասիր, Արու-ԼՖիդա և այլն) հատկապես Սասունի արաբական շրջանի իրադարձությունների մեկնաբանման համար:

Հայաստանի արաբական շրջանի մասին (արաբական աղբյուրների առատ օգտագործմամբ) առաջին մենագրությունը Մ. Ղազարյանի (1864—1919) «Հայաստանը արաբական տիրապետության տակ» աշխատությունն է<sup>64</sup>: Այստեղ շարադրված են Հայաստանի քաղաքական, տնտեսական, հասարակական կյանքի պատմությունը պատշաճ մակարդակով, Արմինիայի կառավարիչների (ոստիկանների) նոր, առավել մանրամասն ցուցակը և Հայաստանի տեղանունների արաբական ձևերի բացատրությունները:

Այս շրջանում արաբական պատմագրության նկատմամբ հետաքրքրությունն այնքան ուժեղ էր, որ Ղ. Ալիշանը հայ պատմագրության պատմությանը նվիրված «Հայապատում» աշխատության մեջ, ի շարս Հայաստանի մասին այլ աղբյուրների, հիշում է հետևյալ արաբ պատմիչներին և աշխարհագրագետներին՝ Բալազուրի, Յակուբի, Կուլամա, Թարարի, Մասուդի, Իրն Հառվալ, Մովկաղյասի, Իրն ալ-Ջառազի, Կազուփինի, Իրն ալ-Ասիր, Յակուտ, Աբու-լ-Ֆիդա, ալ-Վարդի, Մակրիզի<sup>65</sup>:

Հայաստանի արաբական և բագրատումյաց ժամանակաշրջանների պատմության հետ սերտ աղերս ունի բյուզանդակետ-արաբագետ Ա. Վասիլեկի «Բյուզանդիան և արաբները»<sup>66</sup> արժեքավոր մենագրությունը, ուր շարադրված է արաբա-բյուզանդական երեքհարյուրամյա պատերազմների մի հարյուրամյակից ավելի (820—959) ժամանակաշրջանի մանրակրկիտ պատմությունը: Օգտագործված են բոլոր արաբ պատմիչների և աշխարհագրագետների երկերը, որոնք տեղեկություններ են պարունակում այս հարցի մասին: Հետագայում Մ. Կանարը<sup>67</sup>, թարգմանելով ֆրանսերենի, վերահաստարակեց այս աշխատությունը՝ հարստացնելով նոր ուսումնասիրություններով ու հարուստ թարգմանություններով՝ արաբական աղբյուրներից:

Նույն սկզբունքներով են շարադրված Յ. Մարկվարտի (1864—1930)<sup>68</sup> Հայաստանի պատմությանը վերաբերող երկերը: Նա իր «Արևելական պատմական և արևելասահական արշավներձ»<sup>69</sup> աշխատության մեջ գլուխ է հատկացրել Հայաստանի պատմության թագրատունիների շըրջանին: «Հանդես Ամսորյայում» 1913—1915 թվականներին տպագրված և ապա առանձին հատորով լույս տեսած «Հարավային Հայաստանը և Տիգրիսի ակունքները»<sup>70</sup> աշխատության մեջ նա արաբական և թագրատունյաց շրջանների հարցերին է անդրադառնում, քննարկելով հատկապես Վասպուրականի ու Տարոնի պատմությանը վերաբերող բազում դրվագներ:

Հ. Թոփեցյանն ուսումնասիրել է Հայաստանի վիճակը արարական արշավանքների նախօրեին և նվաճումից հետո<sup>70</sup>, ինչպես նաև արարական տիրապետության վախճանը և Բագրատովյաց թագավորության ծնողնդը<sup>71</sup>:

Հայաստանի և գրացի երկրների մասին արար աշխարհագրագետների տեղեկությունները, արաբերեն բնագրով և ուսուելու թարգմանությամբ, հրատարակել է Ն. Ա. Կարառլովը՝ Կովկասին նվիրված մատենաշարի մի քանի համարներում<sup>72</sup>; Նա ընդգրկել է Թ դարի հեղինակներից՝ իրն Խորդադիբեհին, Յակովիին, իրն Ռուսային, իրն ալ-Ֆակիհին և Կուտամային, իսկ Ժ դարից՝ Խոթախրիին, իրն Հառլալին, Մասուդիին և Մուկադդասիին։ Այս աշխատանքը 1899-ին մեղալի է արժանացել և Վ. Ռոզենի Կողմից վերանայվելուց հետո լուս է ընծայվել վերոհիշյալ մատենաշարում<sup>73</sup>։ Ն. Ա. Կարառլովի աշխատանքը գովելի է նրանով, որ թարգմանությանը զուգահեռ տվել է արաբերեն բնագիրը։

Գրեթե սրա հետ միաժամանակ Բ. Խալաթյանը «Հանդես Ամսորյալի» էջերում (1903—1909) հրատարակեց մի խումբ արար պատմիչների (Բայլազուրի, Յակովի, Թարարի, իրն Միսքավյան, իրն ալ-Ասիր) Հայաստանին վերաբերող հատվածները՝ թարգմանաբար<sup>74</sup>։ Հետագայում այս աշխատանքը լույս տեսավ առանձին հատորով<sup>75</sup>։

Թեպետ Լեոյի «Հայոց պատմության» երկրորդ հատորը լույս տեսավ 1947-ին, սակայն այն ավարտված էր առաջին աշխարհամարտի սկզբին։ Նրա մեջ մանրամասն շարադրված է արարական շրջանի պատմությունը<sup>76</sup>։ Չնայած արարական աղբյուրներից լեռն օգտվել է թարգմանաբար, սակայն նրա մոտ այդ շրջանի պատմական դեպքերի զարգացման ընթացքը մեծ հմտությամբ է տրված։ Մ. Օրմանյանի «Աղդապատում» կոթողային աշխատությունից<sup>77</sup> հետո լեոյի երկասիրությունը ևս մի նպաստ է արարական շրջանի պատմական երկությներն ավելի խորն ըմբռնելու համար։

Արարական աղբյուրների լայն ընդգրկումով է գրված Խոլամի Հանուգիտարանում Մ. Շտրեթի «Հայաստան»<sup>78</sup> հոդվածը, ուր շոշափվում են քաղաքական, վարչական տնտեսական կյանքի տարբեր կողմերը և գարերը։

Թեև Ն. Մառը, Հայաստանի վերաբերյալ արարական աղբյուրները մի ուսումնասիրել, սակայն արարական աղբյուրագիտության և հայագիտության համար շատ կարևոր են նրա ներհում ուսումնասիրությունները Վարդանի «Աղվեսագրքի» արաբերեն քարշումի (ասորա-

տառ արաբերեն) թարգմանության<sup>79</sup> և Ագաթանգեղոսի նորահայտ արաբերեն բնագրի մասին<sup>80</sup>:

Մեր դարի սկզբին նորեն սկսեց հետաքրքրությունը Հայաստանի արաբական արձանագրությունների նկատմամբ: Հայտնի վիմագրագետ Մ. վան Բերշեմը, որի արաբական արձանագրությունների դիվանը հետաքրքրական նյութեր է պարունակում Հայաստանի պատմության համար, հրատարակեց Նիկրկերտի, Ամիդի և այլ վայրերի արաբական արձանագրությունները, որոնք վերաբերում են Արտուրյաններին և այլոց<sup>81</sup>: Ապա Մ. Տեր Մովսիսյանը հրատարակեց Զվարթնոցի տաճարի պատերին գրված արաբերեն արձանագրությունների<sup>82</sup> գծանկարները: Վ. Բարթոլդի որոշ դիտողություններով:

Սովետական կարգերի հաստատումից հետո Երևանը աստիճանաբար դարձավ գլխավոր հայագիտական կենտրոն: Սովետական Հայաստանում հայագիտության հիմնադիրներ Հ. Աճառյանը, Հ. Մանանդյանը, Մ. Աբեղյանը, Ս. Մալխասյանը, Լենի, Գ. Ղափանցյանը և ուղիղներ լեզվաբանության, պատմագրության և գրականագիտության ասպարեզներում իրենց կոթողային աշխատություններով նոր թափ հաղորդեցին, օտար աղբյուրները հայագիտությանն ի սպաս դնելու գործին:

Այս նպատակն իրագործվեց նաև շնորհիվ Եվրոպայում և արաբական երկրներում ժամանակակից արարագիտական պրատումների արագ զարգացման: Բազմաթիվ նոր բնագրեր հրատարակվեցին, որոնց մեջ հատկապես պետք է հիշել Հ. Փոն Մժիկի<sup>83</sup> հրատարակած մատենաշարը (Խորեզմի, Սուհրար, Ջահշիարի): Ընդհանուր արևելագիտությունն ու արարագիտությունը ստացան այնպիսի կարևոր ուղեցույց, ինչպիսին Շիսլամի Հանրագիտարանն» է<sup>84</sup>, որի երկրորդ հարստացված հրատարակությունն է լույս տեսնում: Կ. Բրոկելմանն ավարտեց իր ծավալուն արարական գրականության պատմությունը՝ լրացուցիլ հատորներով, որը մատենագիտական ճոխ տեղեկություններով օժտված մի բացառիկ հանրագիտարան է<sup>85</sup>: Դրանից հետո հրատարակված նոր նյութերի հավելումով պատրաստված մի աշխատություն է Ֆ. Սեղգինի երկը<sup>86</sup>, որի մեջ շարադրանքը հասցվում է մինչև ԺԱ. դարի կեսը:

Այս շրջանում լույս տեսավ Փ. Լոռանի (1870—1955) «Հայաստանը Բյուզանդիայի և Խսամի միջև. Արարական նվաճումից մինչև 886»<sup>87</sup> արժեքավոր մենագրությունը: Նա քննության է առել Հայաստանի ներքին վիճակը (վարչատնտեսական վիճակ, նախարարական տիրություններ, եկեղեցի, ապստամբություններ և այլն) ապա հատուկ գլուխներում շարադրել է արաբա-բյուզանդական պատերազմները և Աշոտ Ա.

Բագրատոնու կողմից Հայոց թագավորության վերականգնումը։ Հետագայում լույս տեսավ այս աշխատության վերամշակված հրատարակությունը Մ. Կանարի շանքերով, ուր որպես հավելված զետեղված են արար մատենագիրներից (Բալազուրի, Յակուբի, Իրն ալ-Ֆակիհ, Թաբարի, Խսթախրի, Իրն Հառուկալ, Մուկադդասի, Տաննուկի) քաղված հատվածների թարգմանությունները։

Արաբների պատմության հայտնի մասնագետ Կ. Հյուարը «Մի ասպատակություն Հայաստանում Ժարում» հոդվածում<sup>88</sup> ուսումնամիրում է 938 թվականին Ատրպատականի գորավարներից Լաշքարիի պապատակությունը Վասպուրական և պարտությունը, ըստ ժ—ժԱ. դդ. պատմիչ Իրն Միսքավայհի տեղեկությունների, և դա առաջին դեպքն էր, որ այդ պատմիչի տվյալներն օգտագործվում էին Հայաստանի պատմության համար։

Հայաստանի պատմության Արաբական շրջանի որոշ հարցերով լրազնի է Հ. Զորյանը, որն արաբական աղբյուրների հիման վրա ուսումնասիրել է արաբների հարկային քաղաքականությունը և գյուղի ու քաղաքի միջև ստեղծված հակասությունը<sup>89</sup>։

Ժամանակի ընթացքում հրատարակված դրամագիտական նյութերը հնարավորություն տվեցին դրամագետ Ռ. Ֆասմերին (1888—1938) մի նոր կարևոր քայլ կատարելու Արմինիայի կառավարիչների<sup>90</sup> (ոստիկանների) ցուցակը լրացնելու ու կատարելագործելու հարցում։ Նրա ցուցակն ընդգրկում է Արբասյան ժամանակաշրջանը։

Խոլամին վերաբերող բնագրերը նույնպես զբաղեցրին հայ բանասերներին։ Բ. Կյուկեսերյանի<sup>91</sup> հրատարակած հայերեն ձեռագիրը՝ Մուհամմադի կենսագրության մասին, հավանաբար արաբերենից է թարգմանված, մանավանդ որ վերնագրում նշվում է նրա քարշումի լինելը, այսինքն՝ ասորատառ արաբերեն։

Արաբական աղբյուրներն առաջտորի ու քաղաքների մասին աշխատության արաբական և թագրատունյաց շրջաններին նվիրված գլուխներում<sup>92</sup>։ Նույնը կարելի է ասել նրա «Արաբական արշավանքերը Հայաստանում» և «Ժողովրդական ապստամբությունների մասին»<sup>93</sup> աշխատությունների վերաբերյալ։ Շահեկան են Բ. Առաքելյանի հոդվածները արաբական շրջանի մասին<sup>94</sup>։

Այդ ժամանակ նոր հրատարակված արաբերեն բնագրերից հետաքրքրական են Հայաստանի բագրատունյաց ժամանակաշրջանի համար կարևոր Մ. Կանարի (1888—1982) Սայֆ ալ-Դառվա ժողովածուի նյու-

թերք<sup>95</sup>: Կան հատվածներ ժԲ—ժԴ դդ. պատմիշներ Ֆարիկիից, իբն Ջաֆիրից, Ջահարիից: Հայաստանի առևտուրի և արհեստների ուսումնա-սիրման համար կարևոր է նաև այդ շրջանում լուս տեսած Ջահիղի Աբրասյան շրջանի առևտուրի մասին լուս տեսած փոքրիկ երկը<sup>96</sup>:

Արարական աղբյուրների հայերեն թարգմանության ասպարեզում պետք է հիշել Ղ. Տայանի ժԴ դարի պատմիլ իբն Մուլասսարի երկից Ֆաթիմյան խալիֆաների հայ վեղիրներին (Բադր ալ-Գամալի, Աֆդար, Վահրամ Պահապունի) վերաբերող հակիրճ հատվածները<sup>97</sup>: Իբն Խալիքանի կենսագրական հայտնի բառարանից ընդարձակ հատվածներ է թարգմանել Գ. Մըսրյանը Հայաստանի պատմությանն առնչվող արարակառավարիչների ու զորավարների մասին<sup>98</sup>:

Արարա-բյուզանդական սահմանային ընդհարումներին կրկին անդրադապ է. Հոնիգմանը<sup>99</sup> իր «Բյուզանդական կայսրության արևելյան սահմանները» մենագրության մեջ, որտեղ նույնպես օգտագործված են արարական աղբյուրներ: Ի տարրերություն Ա. Վասիլևի, է. Հոնիգմանը ծանրանում է սահմանային ամրությունների հարցին և այս տեսակետից շատ օգտակար է Հայաստանի արևմտյան գավառների դրության ուսումնասիրման համար:

Ինքնատիպ է Պ. Ժուզեփի մենագրությունը<sup>100</sup> Հայաստանում հաստատված արարական կենտրոնական տարրերի մասին: Թ դարի առաջին կեսում, երբ թուլանում էր Աբրասյանների հեղինակությունը, տեղում հողային տիրություններ ձեռք բերած արարակառավարներն ու ցեղապետները ձգուում էին ինքնուրույնության, հետևելով հայ նախարարների օրինակին: Դրանք արարական պատմագրության մեջ կոչվում են մուտադալիք՝ բռնացող:

Երկրորդ աշխարհամարտից հետո զարգացավ հետաքրքրությունն արարական նկատմամբ: Դեռևս 1940-ին Հ. Աճառյանը Երևանի համալսարանի «Օտար աղբյուրները հայերի մասին» շարքում հրատարակեց իբն Բաթության (ժԴ դ.) ուղեգործությունից Հայաստանին ու Կիլիկիային վերաբերող հատվածները<sup>101</sup> արարական բնագրով և հայերն թարգմանությամբ:

Արժեքավոր աշխատություն է Գ. Մըսրյանի «Ականավոր հայեր Եգիպտոսի մեջ» մենագրությունը<sup>102</sup>, հիմնված արարականիշներ իբն Մուլասսարի, Մակրիզիի, Կալկաշանդիի և այլոց տեղեկությունների վրա: Այստեղ առաջին անգամ այս նյութը ամբողջովին ուսումնասիրված է:

Արարական կնքագիտության ասպարեզում մի կարևոր գլուխ էր:

Հյուսիսային Կովկասի Կարաշայ (Կարաշայ—Չերքեզական ԽՄ) մարդում 1940 թ. պեղումների ընթացքում հայտնաբերված արարատառ կնիքը, հասարակ քուֆի գրությամբ և «Աշութ» իրն Սնբաթ» մակագրությամբ<sup>103</sup>: Հեղինակը գտնում է, որ այն պետք է պատկանած լիներ Թագրատունյաց թագավորության հիմնադիր Աշուտ Ա. Թագրատունյուն, քանզի նրա օրոք դեռ շատ սերտ էին հարաբերություններն Արքասյան խալիֆայության հետ: Դվինի հնագիտական պեղումների ընթացքում ևս գտնվել են արաբերեն կնքադրոշմներ<sup>104</sup>, որոնք, անկանկած, առևտրական գործարքների հետ են կապված:

Հետպատերազմյան շրջանում ամենակարևոր նորությունն այն է, որ Հայաստանի պատմության վերաբերյալ մի շարք նոր արաբերեն բնագրեր հրատարակվեցին: Վ. Մինորսկին կարողացավ ձեռք բերել երկու փոքր հատված Մոմազզիմ Բաշիի (Ժէ դ.) ծավալուն պատմությունից, որը փականքի տակ է պահպում Կոստանդնուպոլսում: Առաջինը Հայաստանին և արևելյան Անդրկովկասին վերաբերող մի հատված է<sup>105</sup>, ուր խոսվում է Շաբդադյանների մասին: Վ. Մինորսկին այն հրատարակեց բնագրով, անգլերեն թարգմանությամբ և մանրամասն ուսումնասիրությամբ: Երկրորդը վերաբերում է Շիրվանին ու Դարրանդին<sup>106</sup> և նույն սկզբունքներով է լուս ընծայված: Նա անգլերեն թարգմանություններ հրատարակեց Լոնդոնում անտիպ մնացած իրն ալ-Ազրակ ալ-Ֆարիկիի (ԺՔ դ.) պատմական երկից, նախ հատվածներ տափելով անգլիական արևելագիտական հանդեսում<sup>107</sup>, ապա որոշ քաղվածքներ հրատարակեց վերոհիշյալ հատորում<sup>108</sup>, ուր Մոմազզիմ Բաշուց վերցրած առաջին հատվածն էր ուսումնասիրել: Մինորսկին մեշհեդյան կոլված հայտնի գրչագրից լուս ընծայեց Արու Դուկաֆի (Ժ. դ.) երկրորդ հիշատակարան կոչված աշխարհագրական փոքրիկ երկը<sup>109</sup>, որը երկրորդ անգամ հրատարակվեց Պ. Բոլգակովի և Ա. Խալիդովի կողմից<sup>110</sup>:

Հայաստանի մասին որոշ տեղեկություններ ունի ԺԳ դ. պատմիչ Մուհամմադ ալ-Համազին<sup>111</sup>, որի ձեռագիրը լուս ընծայեց Պ. Գրյագնիկը: Հայաստանի մասին հարուստ տեղեկություններ ունեն Ժ. դ. պատմիչ Քուֆին<sup>112</sup>, որի պատմությունը հրատարակվեց Հայդարաբադում (Հնդկաստան) և Խալիֆա իրն Խայյաթի (Թ. դ.) պատմությունը<sup>113</sup>, որը լուս ընծայվեց նախ Բաղդադում, ապա Դամասկոս-Բեյրութում:

Կարենոր աշխատանք է կատարվել նաև արաբերեն աղբյուրներից հայերեն թարգմանության ասպարեզում: Ա. Աղամյանը թարգմանել է հատվածներ Բալազուրիից<sup>114</sup>, և Յակուբիից<sup>115</sup>: Այս ասպարեզում հատկապես մեծ է Հ. Խալբանդյանի վաստակը<sup>116</sup>, որը թարգմանել է Յա-

կուտի (ժԴ դ.) «Աշխարհագրական բառարանից», Արու-լ-Ֆիդայի (ժԴ դ.) «Պատմությունից» և իրն Շաղդադի (ժԳ դ.) «Սալահ ալ-Դինի կենսագրությունից» Հայաստանին և հայ ժողովրդին վերաբերող հատվածները Այս հատորն ունի բացառիկ նոխ ծանոթագրություններ։ Ա. Տեր Ղևոնդյանը թարգմանել է Մուսաջիմ Բաշիի այն հատվածը, որ վերաբերում է Դվինի ու Դանձակի Շաղդադյաններին<sup>117</sup>, ալ-Ֆարիկիից մինչ այժմ հրատարակված հատվածները<sup>118</sup> և իրն ալ-Ասիրը<sup>119</sup> «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» մատենաշարում, որտեղ և հրատարակվել է Հ. Նալբանդյանի վերոհիշյալ հատորը։

Արաբական պատմությունների լայն ընդուրկումով են գրված Մ. Կանարի «Համդանյանները և Հայաստանը»<sup>120</sup>, «Համդանյանների հարըստության պատմությունը Զազիրայում» ու Սիրիայում»<sup>121</sup> աշխատությունները և բազմաթիվ հայագիտական թեքում ունեցող հոդվածներ<sup>122</sup>, Հ. Նալբանդյանի Հայաստանում արաբների հարկային բաղաքականության<sup>123</sup> և ոստիկանների մասին<sup>124</sup> հոդվածները, Ա. Ալպոյանցյանի Մալաթիայի հայոց պատմության արաբական շրջանին վերաբերող հատվածը<sup>125</sup>, Ա. Տեր Ղևոնդյանի «Արաբական ամիրայությունները Թագրատունյաց Հայաստանում»<sup>126</sup> և «Հայաստանն ու արաբական խալիֆայությունը»<sup>127</sup> մենագրությունները և արար հեղինակ Ա. ալ-Սալլիդի<sup>128</sup> «Հայաստանը արաբների պատմության մեջ» աշխատությունները։

Բավական հաջողություններ արձանագրվեցին նաև դրամագիտության բնագավառում։ Ա. Բիկովը 330 (941/42) հիջրի թվականին Դվինում թողարկված մի արաբատառ դրամի ուսումնասիրման<sup>129</sup> միջոցով ճշտումներ է կատարում Դվինի և Բագրատունյաց Հայաստանի պատմության որոշ հարցերում։

Կիլիկյան Հայաստանի թագավոր Հեթում Ա-ի (1226—1269) երկշեղվան (հայատառ-արաբատառ) դրամներին (Հեթում-Քայկուրադ, Հեթում-Քայխոսրով), որոնք թողարկված են Սիս մայրաքաղաքում, շատերն են (ինչպես Վ. Լանգլուա)<sup>130</sup> անդրադարձել։ Վերջերս այդ հարցով զբաղվեցին Պ. Պտուկյանը<sup>131</sup> և հատկապես Պ. Սապաղյանը<sup>132</sup>, Վերջինս ապացուցում է, որ ճիշտ չէ նախորդ դրամագետներից շատերի այն կարծիքը, թե Հեթում Ա. թագավորի երկլեզու դրամների առկայությունը ապացույց է նրա կախմանը Խկոնիայի սուլթանությունից։ Նա զարգացնում է Կ. Սիրիլլանի<sup>133</sup> այն դրությը, թե այդ դրամները երկլեզու են թողարկված սոսկ առկտրական հարաբերությունների հեշտացման և զարգացման նպատակով։

Հայաստանում թողարկված արաբական դրամների ուսումնա-

սիրման ասպարեզում շատ մեծ վաստակ ունի և. Մուշեղյանը, որի «Դվինի դրամական շըշանառությունը դրամագիտական տվյալներով»<sup>134</sup> (ոռուսերեն) մենագրությունը հարուստ նյութեր է պարունակում Հայաստանի պատմության տարրեր շրջանների մասին: Խիստ արժեքավոր է նրա «Աբրասյան դրամների թողարկումը խալիֆաթի Արմինիա նահանգում, Ը—Ժ դարերում»<sup>135</sup> ժավալում հոդվածը և հավելվածը, որի նյութերի հիման վրա Ա. Տեր Ղևոնդյանը կազմեց Արմինիայի կառավարիչների (ոստիկանների): Նոր ցուցակը<sup>136</sup>:

Պ. Սապահյանը իր «Հայ արաբական դրամագիտության մի քանի հարցերու շուրջը»<sup>137</sup> ժավալուն հոդվածում ընդգծելով նոր հաստարակված դրամագիտական աշխատությունների նշանակությունը (Խ. Մուշեղյան) միաժամանակ մեջ է բերում Արմինիայում թողարկված մինչ այդ անհայտ մնացած դրամների լրացուցիչ ցուցակը (26 դրամ): Նա հիշում է նոր դրամագիտական հրատարակություններ, որոնցից կարևորագույններն են Արդ ալ-Ռահման ալ-Ֆահմիի և Զ. Ուոկըրի մենագրությունները:

Հետաքրքրական աշխատանքներ են կատարվել նաև վիմագրության ասպարեզում: Վ. Ա. Կրաշկովսկայան<sup>138</sup> հրատարակեց Ն. Մառի Անիում կատարած պեղումների ընթացքում հայտնաբերված մի արձանագրություն (քոփի գրածենվ), որը գտնվել է Անիի միջնաբերդի դռան վերևում և գրված է ԺԲ դարում Շաղդադյանների կողմից: Հ. Փափագյանը<sup>139</sup> լույս ընծայեց Արաքսի հովտում 1413 թ. իշխող Փիր Հուսայնի կառուցած դամբարանի արձանագրությունը, ուր գրւե նրա հայրը՝ ամիր Սաադն է թաղված:

Միշնադարում արաբերենը եղել է միջազգային լեզու և պատահական չէ, որ մեզ հասել են հայ տիրակալների թողած արաբերեն արձանագրություններ: Հայոց արքա Սմբատ Բ (977—990) Բագրատումին Հաղպատի<sup>140</sup> վանքի Ս. Նշան եկեղեցու գմբեթի վրա գտնվող իր քանդակի ապարոշի վրա փորագրել է տվել իր տիտղոսը «Եահանշահ Անիի թագավոր», իսկ Հյուսիսային Հայաստանի Զաքարյան իշխանապետության տիրակալներ Զաքարիան և Իվանեն<sup>141</sup>: Ամբերդ ամրոցի աղատագրումից (1196) հետո արաբերեն արձանագրություն են թողել՝ «Ամիրսպասալար Զաքարիա Իվանա Արծրունի»:

Երկու արձանագրություն է հրատարակել Ա. Խաչատրյանը՝ Թալինում Շաղդադյանների թողած 570 (1174) հիջորի թվականի արաբերեն շինարարական վիմագիրը<sup>142</sup> և Եղեգիսի եռալեզու (արաբերեն, պարսկերեն, հայերեն) տապանագիրը<sup>143</sup>:

Ուրախալի է նշել, որ մեր օրերում արաբերեն և արաբատառ բնագրեր են հրատարակվել Երևանում, որոնցից հատկապես պետք է հիշատակել Հ. Փափազյանի հրատարակած Մատենադարանի պարսկերեն վավերագրերի շարքը<sup>144</sup>: Դրանց մեջ կան հենց արաբերեն գրված վավերագրեր և կամ ամբողջ տողեր արաբերեն նախադասություններ ունեցող բնագրերու Որպես արաբերեն բնագրերի հրատարակություններ կարելի է նշել նաև Ա. Տեր Ղևոնդյանի Ագաթանգեղոսի ամբողջական բնագրի միջնադարյան արաբերեն թարգմանության լույս ընծայումը<sup>145</sup> և Հ. Փամկողյանի իրն ալ-Ֆակիհի (թ. դ.) ընդարձակ խմբագրության որոշ հատվածների հրապարակումը<sup>146</sup>, ըստ մեշհեդյան ձեռագրի:

Ժայ արաբական բանասիրությունը, որի մի մասն է կազմում արաբական աղբյուրների հայագիտության մեջ ուսումնասիրման և օգտագործման հարցը, հայագիտության օժանդակ ճյուղերից է, որի հետագա դարգացումը աներկրայորեն նոր, թարմ ավել կմատակարարի հայկական ուսմանց առաջընթացի համար:

### А. ТЕР-ГЕВОНДЯН

## ИЗУЧЕНИЕ И ИСПОЛЬЗОВАНИЕ АРАБСКИХ ИСТОЧНИКОВ В АРМЕНОВЕДЕНИИ

### Р е з ю м е

Армяно-арабские культурные взаимоотношения начинаются с VIII—IX вв., а арабские источники содержат богатые сведения по истории средневековой Армении.

Первая попытка использования арабских источников в арменоведении сделана Г. Инчичяном (1758—1833) в его монографиях о древней Армении. Широко использовал арабские народные источники (Масуди, Ибн Хаукал, Ибн ал-Асир, Абу-л-Фарадж Бар Эбрей, Абу-л-Фида и др.) для изучения исторической географии Армении М. Ж. Сен-Мартен (1791—1832) в своем двухтомном труде «Исторические и географические записки об Армении» (Париж, 1818, 1819).

М. д'Оссон (Тосунян, 1740—1807) в своей работе «Народы Кавказа» (Париж, 1828) собрал сведения ряда арабских историков и географов о странах Кавказа, в том числе и Армении. Б. Г. Нибур (1776—1836) подготовил немецкий перевод сочинения Псевдо-Вакиди «История завоевания Месопотамии и Армении» (Гамбург, 1847).

Данные арабских монет для составления списка арабских

правителей (остиканов) Армений (Берлин, 1840) были впервые использованы Х. Петерманом (1801—1876). Арабской эпиграфикой в Армении (Ани) впервые заинтересовался Н. Ханыков (1822—1878).

Во второй половине XIX в. появились армянские переводы сочинений арабских авторов. А. Гер-Ованесян издал перевод истории Тимура автора XV в. Арабшаха (Иерусалим, 1873). Извлечения из сочинения арабоязычного армянского историка XII—XIII вв. Абу Салиха ал-Армани («Церкви и монастыри Египта») перевел Г. Алишан (1820—1901).

М. Казарян (1864—1919) впервые изложил историю Армении VII—IX вв. на основе арабских источников (Балазури, Иакуби, Табари, Ибн ал-Асир, Иакут и др.) в своей монографии «Армения под арабским владычеством» (Марбург, 1903). Особый интерес в смысле насыщенности сведениями арабских источников представляют труды И. Маркварт (1864—1930) по истории средневековой Армении (о деятельности Багратидов, о вопросах истории южных областей Армении).

В начале нашего века были предприняты переводы некоторых трудов арабских географов IX—X вв. на русский язык Н. Караполовым (Тифлис, 1901—1908) и историков IX—XIII вв.—на армянский язык Б. Халатянцем (Вена, 1903—1909).

Следует подчеркнуть значение работы Ж. Лорана (1870—1977) «Армения между Византией и исламом» (Париж, 1919), в которой изучены политическая история, экономическое состояние Армении в VII—IX вв., а также отношения армянских нахараров и церкви с арабскими халифами.

Р. Фасмер на основе богатого пумизматического материала составил новый список арабских правителей (остиканов) Армении при Аббасидах (Вена, 1931).

В деле изучения истории западных областей Армении, явившихся ареной борьбы между халифатом и Византией VII—X вв., большое значение имеют замечательная работа А. Васильева «Византия и арабы» (СПб, 1900—1902) и исследование Э. Хонигмана «Восточные границы Византийской империи» (Брюссель, 1935), в которых использованы богатые сведения арабских источников.

После второй мировой войны В. Минорский издал отрывки из арабского сочинения Мунадджима Ыши, а также ал-Фарики, на основе которых исследовал ряд вопросов истории армянского средневековья.

Определенные заслуги имеет М. Канар (1888—1982) в изучении различных сторон армяно-арабских отношений. Он подготовил к изданию работу А. Васильева на французском языке с

дополнением переводов ценных отрывков из трудов арабских авторов. Подготовил к переизданию, опять-таки с дополнениями, также упомянутую выше работу Ж. Лорана.

В последние десятилетия в области армяно-арабской филологии и источниковедения были изданы новые работы. В их числе—переводы арабских историков и географов, сделанные А. Налбандяном (Иакут, Абу-л-Фида), А. Тер-Гевондяном (Ибн ал-Асир), труды по истории армяно-арабских политических отношений А. Алпоячяна, Г. Мысряна («Видные армяне в Египте»), А. Налбандяна, А. Тер-Гевондяна («Арабские эмирата в Багратидской Армении», «Армения и арабский халифат»), А. ал-Сайида («Армения в истории арабов»). Исследования по арабским монетам, чеканенным в Армении, выполнены А. Быковым, Х. Мушегяном («Денежное обращение Двина по нумизматическим данным»), П. Саббагяном. Издания текстов осуществлены А. Папазяном, А. Тер-Гевондяном («Арабская редакция Агафангела»), А. Жамкочяном (Ибн ал-Факих, «Известия о странах»). В. А. Крачковской, А. Папазяном, А. Хачатряном изданы арабские надписи Армении. В. А. Крачковской изучена уникальная арабская печать Ашота I царя Армении.

#### ՍԱՆՈՒԱԿՐՈՒՑՈՒՆԵՐ

1 «Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց», Պետերովը, 1887, էջ 58; Ղուրանին ծանոթ է Վարդան պատմիչը, որը հիշում է նրա սուրաներից (գլուխներից) մեկը հենց արաբերեն «սուլաթ ալրազարայ» (Կովի սուրան), որը Ղուրանի առաջին սուրան է, չհաշված բացման սուրան (Փատիհա): «Մեծին Վարդանայ Բարձրերդցուու Պատմութիւն տիեզերական», Մոսկվա, 1861, էջ 92:

2 Արաբերենը, որպես արևելյան միջազգային լեզու, օգտագործվել է Հայաստանում նաև անկախ պետականության առկայության պայմաններում: Դրա վկայությունն է Հաղպատի արձանագրությունը Բագրատունյաց թագավորության շրջանից և Ամքերդի արձանագրությունը Զաքարյան իշխանապետության ժամանակաշրջանից:

3 Ն. Աղինյան, Մովսես Դաստիարակության պատմության մասին (Կաղանկատուացի) և իր Պատմութիւն Աղվանից, Ազգային Մատենադարան, ՄԺԱ, Վիեննա, 1970, էջ 336—357:

4 «Մովսեսի Կաղանկատուացու Պատմութիւն Աղվանից աշխարհի», Տփղիս, 1912, էջ 331—332; The History of the Caucasian Albanians, by Movses Dasxuranci, tr. by Ch. Dowsett, London, 1961, p. 187—188.

5 Л. Оганесян, История медицины в Армении, 1, Ереван, 1946, стр. 57.

6 Կ. Ղաֆարյան, Ալբիմիան պատմական Հայաստանում, Երևан, 1940, էջ 50—54:

7 Բ. Գովասայյան, Բժշկարան ձիոյ և գրաստոնյ, Երևան, 1962:

8 Լ. Ալիշան, Գիրք Վաստակոց թարգմանութիւն նախնաց յարաբացի լեզուէ, Վենետիկ, 1877:

9 H. Laurentie, La version arménienne du conte de la ville d'airain, Revue

des Etudes Arménienes, I, fasc. 3, Paris, 1921, p. 287—302 Հայտնի չե, թէ Առաքել Անեցին, որ արաբերենից թարգմանել է Պղնձն քաղաքի պատմությունը (Հազար և մեկ գիշեր ժողովածովկց) և Աղեկախոսը (Երազահան) արդյո՞ք չի հետաքրքրվել պատմական գրականությամբ:

10 Ս. Պարսումյան-Տառոյան, Հովհաննես Պղնձն երգնկացիի և տաճկաց իմաստասիրաց Գրոց քաղեալ Բանքին» աղբյուր՝ Բասաէլ Խիուան ալ-Մաֆա, Հայկացյան Հայագիտական հանդես, Զ, Պելլում, 1977—1978, էջ 51—70:

11 N. Adontz, Denys de Thrace, Louvain, 1970, p. 232—233. Բ. Չուզասզյան, Հայ-իրանական գրական առնչություններ, Երևան, 1963, էջ 29—33:

12 Հ. Անայան, Հայոց լեզվի պատմություն, Բ, Երևան, 1951, էջ 169—217:

13 F. N. Finck, L. Giandschezian, Verzeichnis der armenischen Handschriften der Königlichen Universitäts Bibliothek, Tübingen, 1907, S. 119—121. Նույն ձեռագրում հիշվում է նաև, որ կա մի այլ թարգմանություն Յահիա իրեն հաս իրն Զաղլամից՝ Մինհազ ալ-Բայան (բուժման ձևերի մասին): Կա նաև նշանավոր թժիշկ Սուհամմադ իրն Զաքարիա ալ-Ռազիից մի քանի էջ թարգմանություն:

14 Հ. Անայան, Հայկական մատենագիտություն, Բ, Երևան, 1976, էջ 1014—1023:

15 G. Graf, Geschichte der Christlichen Arabischen Literatur, Vatican, 1951, IV, S. 82—93.

16 Ա. Այլազյան, Շար Հայ կենսագրությանց, Ա, Կ. Պոլիս, 1893, էջ 11—73:

17 Գևորգ Դավիթ, Պարսկերեն-Հայերեն բառարան, Կ. Պոլիս, 1826:

18 Մ. Ջամշյան, Պատմութիւն Հայոց, Ա—Գ, Վենետիկ, 1784:

19 Ղ. Իննիկինյան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեաց աշխարհի, Վենետիկ, Ա, Բ, Գ, 1835:

20 S. Somal, Quadro della storia litteraria di Armenia, Venezia, 1829.

21 Կղեմես Դալանոս, Միարանութիւն Հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռովմայ, հ. 1—2, Հռոմ, 1650—1661:

22 Է. Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն, Երևան, 1958, էջ 112—113:

23 J. J. Schröderi, Thesaurus linguae armeniacae, Amsterdam, 1711.

24 Catalogue des manuscrits arméniens de la Bibliothèque de Roy, adressé en 1735, par l'Abbé de Villefroy.

25 Ղ. Իննիկինյան, Հնախօսութիւն աշխարհագրական, Ա, էջ 20—33:

26 Նույն տեղում, Գ, էջ 323—324:

27 J. Fück, Die arabischen Studien in Europa, Leipzig, 1955, S. 79—90.

28 B. d'Herbelot, Bibliothèque Orientale, Paris, 1697.

29 Ch. Schnurrer, Bibliotheca Arabica, Halaë, 1811.

30 J. Fück, Die arabischen Studien in Europa, S. 140—157, 193—195, 201—205.

31 M. J. Saint-Martin, Mémoires historiques et géographiques sur l'Arménie, Paris, I—II, 1818—1819. Մ. Ժ. Սեն Մարտենը սովորել է Փարիզի Արևելյան կենդանի լեզուների դպրոցում: Արաբերենն ուսանել է Սիլվեստր զը Սասիի, իսկ Հայերենը՝ Շահան Զրպեաի մատ: 1820 թվականին ընտրվել է Արձանագրությունների պատեմիայի անդամ, իսկ 1822-ից Ժ. Կլապորթի և Ա. Ռեմյուզայի հետ վարել է Ալահական հանդեսը: Լրացնեներով և վերամշակված վերահրատարակել է Լոռուի Ստորին (Բյուզանդական) կայսրության պատմությունը. Histoire du Bas-Empire, par Lebeau, Paris, 1824—1936. Այս հրատարակությունը բաղկացած է 21 հատորներից:

որի 12 հատորները պատրաստել է Սեն Մարտենը, իսկ մնացածը՝ Մ. Բրուսեն։ Տե՛ս  
Ք. Պատկանյան, Հայագիտ Սեն Մարտեն, նրա կենսագրությունը և գրավոր երկասի-  
րությունները, «Փորձ», Տփդիս, 1881, մայիս-հունիս, էջ 1—18։

32 Մ. Փ. Սեն Մարտենի այս երկին անդրադարձել է Դ. Խնձրյանը (*«Հնախօսու-  
թիւն աշխարհագրական»*, Գ, էջ 326—339)։ Պատասխանելով նրա քննադատությանը  
(Journal des savants, 1828) այն մասին, թե իր 1806 թվականին Վլենետիկում հրա-  
տարակած «Հայաստան հատորում» (Դ. Ազնոնցի «Աշխարհագրութիւն լորից մասանց աշ-  
խարհիւ շարբում») լի օգտագործել արարական և պարսկական աղբյուրները, նա նշում  
է, որ ինքը հետաքրքրվել է արարական աղբյուրներով և իր հերթին գտնում է, որ Սեն  
Մարտենն իր այլ աշխատության մեջ գերազանցածել է օտար (արարական) աղբյուր-  
ները, թերագնահատելով «այլ մատենագիրներին»։

33 Macoudi, Description du Caucase et des pays qui voisinent la Mer Noire  
et la Mer Caspienne, trad. par J. Klaproth, Magasin Asiatique, I, Paris, 1—25.

34 M. D'Ohsson, Les peuples du Caucase, Paris, 1828. Բուն անունը Մուլքադ  
(Մուլքա) Թուսունյան է։ Ծնվել է Կոստանդնուպոլիսում, եղել է Ծվեդիայի զիսպան  
Օսմանյան պետությունում։ Կյանքի վերջին տարիներին ապրել է Փարիզում։ Հեղինակ  
է ընդարձակ օմանյան պատմության, որը հետմահու հրատարակել է որդին՝ Արքահամ  
Կոստանդինը (Tableau général de l'Empire Ottoman..., v. 1—7, Paris, 1788—1824)։

35 J. H. Petermann, De Osticanis arabicis Armeniae Gubernatoribus (693—  
855), Berolini, 1840. Հայերեն թարգմ.՝ «Երևակ», Կ. Պոլիս, 1859, էջ 15—20, 40—46,  
73—79։

36 F. G. Niebuhr, A. D. Mordtmann, Geschichte der Eroberung von Mesopotamien und Armenien von Mohammed ben Omar el Wakedi, Hamburg, 1847.  
Տե՛ս Հայաստանի վերաբերող մասի թարգմանությունը՝ Ա. Տեր Ղևոնյան, Աղյուկ  
Տարոնի զրուցը XII դ. արարական աղբյուրում, «Պատմա-բանասիրական հանդես»,  
1978, 3 (82), էջ 265—286։

37 C. H. Défrémery, Fragments de géographes et d'historiens arabes et persans inédits, relatifs aux anciens peuples du Caucase et de la Russie méridionale  
Paris, Journal Asiatique, 1849, t. 13, 14. 1850, t. 16. 1851, t. 17.

38 «Հատուածք պատմութեան Հայաստանի քաղեալք յարարացի պատմագրաց ի  
ձեռն Տքիր Մորթմանալ արևելագէտի», Կ. Ի. Բիշինեան, Կ. Պոլիս, 1874։

39 N. Khanykov, Inscriptions musulmanes d'Ani et les environs de Bakou,  
Bulletin de l'Academie de Sciences de St. Petersbourg, 1849. Idem, Mémoires  
sur les inscriptions musulmanes du Caucase, Journale Asiatique, 1862, t. 20, p.  
57—155. 40 M. Brosset, Les ruines d'Ani, St. Petersbourg, 1860. p. 30—31.

40 V. Langlois, Le tresor des chartes d'Arménie ou cartulaire de la chancellerie royale des Roupenides. Venise, 1863, p. 217—231. Հայերեն թարգմ.  
Բակարան, Դաշնագիր խաղաղության ընդմեջ Լևոն Գ թագավորի և նգիպուսի մեմ-  
լուքյան սուլթան Գալառունի կնքուած 1285 մայիս 7-ին, «Բանասեր», Փարիզ, 1902,  
էջ 69—79։

41 «Պատմութիւն Լենկ Թեմուրայ», թարգմ. Ա. Տեր-Հովհաննեսեանց, Երուսաղեմ, 1873։

42 Ա. Տեր Հայիաննեսյանց, Ժամանակագրական պատմություն Երուսաղեմի, Ա, Բ,  
Երուսաղեմ, 1890։

43 Արք Սահման, Պատմութիւն եկեղեցեաց և վանօրէից եպիպառոսի, Վենետիկ, 1895:

44 B. J. A. Evetts, The churches and monasteries of Egypt and some neighbouring countries, attributed to Abu Sahl, the Armenian (arab. text), Oxford, 1894.

45 Դ. Ալիշան, Եփրակ, Վենետիկ, 1881:

46 Խոյնի, Սիսուան, Վենետիկ, 1885:

47 Խոյնի, Այրարատ, Վենետիկ, 1890:

48 Խոյնի, Սիսուան, Վենետիկ, 1893:

49 F. Nève, L'Arménie chrétienne et sa littérature, Louvain, 1886

50 Մ. Գրագաշյան, Քենական պատմություն Հայոց, Ա, Բ, Տիգրիս, 1895.

51 F. Tournebize, Histoire politique et religieuse d'Arménie, Paris, 1900.

52 Մ. Օրմանյան, Ազգագաղութ, Ա—Գ, Կ, Պոլիս—Երուսաղեմ, 1912—27:

53 „Bibliotheca Geographorum Arabicorum“, I—VIII, ed. M. J. de Goeje, Lugduni Bat., 1870—1894.

54 „Liber exguationis regionum auctore al Beladsoni“, ed. M. J. de Goeje, Lugduni Bat., 1866.

55 Դրամագիտական աշխատությունների մատենագիտությունը տե՛ս Խ. Մաշեցյան, Դեռժոյն обращение Двина по нумизматическим данным, Ереван, 1962, стр. 179—185.

56 G. Well, Geschichte der Chalifen, 3 Bde. Mannheim, 1846—1851.

57 L. A. Sedillot, Histoire générale des Arabes, I—II, Paris, 1877.

58 A. von Kremer, Culturgeschichte des Orients unter den Chalifen, I—II, Wien, 1875—1877.

59 A. Müller, Der Islam im Morgen—und Abendland, I—II, Berlin, 1885. 1887.

60 W. Muir, The Caliphate Its rise, decline and fall, London, 1891.

61 J. Wellhausen, Das arabische Reich und sein Sturz, Berlin, 1902.

62 C. Huart, Histoire des Arabes, I—II, Paris, 1912—1913.

63 W. Tomaschek, Sasun und das Quellengebiet des Tigris, Wien, 1896. Հայերն թարգմ.՝ «Սասոն և Տիգրիսի աղբերաց սահմանները», պատմական և տեղագրական հետազոտութիւն, Վիեննա, 1896:

64 M. Chazarian, Armenien unter der arabischen Herrschaft, Marburg, 1903, Մկրտիչ Ղազարյանը ծնվել է 1864 թվականին Կարսում: Ավարտել է էջմիածնի Գևորգյան ճեմարանը, սովորել է Պետերբուրգի և ապա Թիվլիսի համալսարաններում, վերջինս ավարտելով գրել է «Հայաստանը արարական տիրապետության տակ» դրկտորական թեզը (հրատարակվել է 1903-ին Մարբուրգում): 1906—1912 թվականներին քահանայագործել է Պետերբուրգի Հայոց Ա. Կատարինն եկեղեցում, միաժամանակ դասավանդելով տարրեր ուսումնական հաստատություններում: 1910 թվականին հոգեհանգիստ է կատարել պաշտոնապես բանադրված և Տուլսովի համար նրա թաղման օրը, հայ համայնքի և ցուցարար ուսանողների խնդրանքով: Նա հանդիս է եկել Պետերբուրգի մամուլում («Новое время»), պատասխանելով սեհարյուրյակային հեղինակների՝ հայ ժողովրդի դեմ գրած զրարդարությանը:

1912 թվականից Հայաստանում զրադարձել է մանկավարժական աշխատանքով, եղել է

Գեորգյան ճիմարանի տեսուլի օդնական, 1914—1919 թվականներին եղել է տեսուչ Շամախիի և Աղբասանդրապոլի ուսումնարաններում։ Մահացել է 1919-ին Աղբասանդրապոլում։ Տե՛ս Ա. Տեղ-Ղևոնյան, և. Տոլստոյի հոգեհանգստը Պետերբուրգի Հայոց հենդեցում, «Գրական թերթ», 22 սեպտեմբերի 1978։ Գ. Ստեփանյան, Կենապահական բառարան, Հռ. Բ., Երևան, 1981, էջ 239։

65 Դ. Ալիքան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 32։

66 А. Васильев, Византия и Арабы, I. За время Аморийской династии, Петербург, 1900, II, За время Македонской династии, 1902.

67 Մ. Կանարը վերաբրատարակեց այս աշխատությունը ֆրանսերեն թարգմանությամբ, ճամացնելով նոր ուսումնասիրությունների տվյալներով և տալով հավելված, որ քաղվածարար թարգմանված են արար մատենագիրների տեղեկությունները (Իրեն Կուտայրա, Բալագուրի, Յակուրի, Թարարի, Սասուկի, Եղիշիքիս, Սուլի, Համզա Խաչանի, Իրեն Միհրաբավի, Իրեն ալ-Ազրակ, Իրեն Զաֆիր, Իրեն ալ-Կափիր, Սիրի Իրեն ալ-Ջաւադի, Իրեն ալ-Ադիմ, Այնի, Իրեն Տաղրիբիրդի, Սուլութի և շատ ուրիշներ)։ A. A. Vasilev, Byzance et les Arabes, t. I, La dynastie d'Amorium, Bruxelles, 1959, t. II, 1<sup>re</sup> partie, La dynastie Macédonienne, Bruxelles, 1968, t. IV; 11<sup>me</sup> partie, Extrait des sources arabes, trad. par M. Canard Bruxelles, 1950.

68 J. Marqwart, Osteuropäische und ostasiatische Streifzüge, Leipzig, 1903. Հայերին մասնակի թարգմանություն՝ Հայ Բագրատունեաց ճիշդագութիւնը, Վիեննա, 1913։

69 Idem, Südarmenien und die Tigrisquellen, Wien, 1930.

70 H. Thopotschian, Armenien vor und während der Araberzeit, Zeitschrift für armenische Philologie, Marburg, 1903.

71 Idem, Die inneren Zustände von Armenien, unter Ashot I, Berlin-Halle, 1904.

72 Н. Карапулов, Сведения арабских писателей о Кавказе, Армении... Сборник Материалов для описания местностей и племен Кавказа XXIX (Истахри), Тифлис, 1901, XXXI (Ибн ал-Факих), 1902, XXXII (Ибн Хордадхех, Кудама, Ибн Русте, Якуби), 1903, XXXVIII (Мукаддаси, Масуди, Ибн Хаукал), 1908.

73 И. Ю. Крачковский, Избранные сочинения, т. V, М.-Л., 1958, стр. 103—104.

74 «Հանդես Ամորեայ», 1903—1909։

75 «Արարացի մատենագիրները Հայաստանի մասին», թարգմ. Բ. Խալաբյանց, Վիեննա, 1919։ Այս աշխատանքն ունի որոշ թերություններ։

76 Ան, Հայոց պատմություն, Բ., Երևան, 1967, էջ 266—478։

77 Մ. Օրմանյան, Ազգապատում, Ա, Վ. Պոլիս, 1912, էջ 707—892։

78 M. Streck, Armenia, The Encyclopaedia of Islam, Leyde-London, I, 1913. ր. 435—449.

79 Ն. Մառ, Ժողովածոյք առակաց Վարդանալ, Ա, Բ, Պետերբուրգ, 1894—1896։

Հ. Տաշյան, Ժողովածոյք առակաց Վարդանալ... ըստ հայագետ Ն. Մառի, Վիեննա, 1900։

80 Н. Марр, Крещение армян, грузин, абхазов и аланий святым Григорием (арабская версия), СПб., 1905.

81 M. van Berchem. Materiaux pour l'épigraphie et l'histoire musulmans.

- du Diyar Bekr, „Amida“, Heidelberg-Paris, 1907. Տե՛ս Հ. Աստուրյան, Արաբական արձանագրություններ Հայաստանէն, «Բազմավեպ», 1909, էջ 241—245.
- 82 Ս. Sbr Մոլոխյան, էղմիածին և Հայոց հնագույն եկեղեցիները, «Ազգագրական Հանդես», ժեռ., 1907, էջ 87—132, տախու. ԺԹ, 8, 9, 10, 11, 12:
- 83 H. von Mzik, Bibliothek arabischer Historiker und Geographen, I—V, Leipzig, 1926—1930.
- 84 Encyclopédie de l'Islam, t. I—I V, Leyden-Paris, 1913—1936.
- 85 C. Brockelmann, Geschichte der arabischen Litteratur, I—II, Weimar-Berlin, 1898—1902. Supplementband, I—III, Leiden, 1936—1942.
- 86 F. Sezgin, Geschichte des arabischen Schrifttums, I—VII, Leiden, 1967—1979.
- 87 J. Laurent, L'Arménie entre Byzance et l'Islam depuis la conquête arabe jusqu'en 886, Paris, 1919.
- Ժ. Լորանը ծնվել է 1870 թվականին, սովորել է Փարիզի համալսարանում: 1895 թվականից եղել է Աթենքի ֆրանսիական դպրոցի անդամ, դասավանդել է նաև համալսարանում, ապա եղել է բանասիրական ֆակուլտետի դեկանը: Մասնակցել է առաջին համաշխարհային պատերազմին: Ճանապարհորդել է Բալկաններում ու Փոքր Ասիայում և այդ ժամանակ նրա մեջ հետաքրքրություն է արթնացել Հայաստանի անցյալի նկատմամբ: Մահացել է 1955-ին: J. Laurent, Etudes d'histoire arménienne Louvain, 1971. J. Laurent, L'Arménie entre Byzance et l'Islam depuis la conquête arabe jusqu'en 886, nouvelle édition revue et mise à jour par M. Canard (Calouste Gulbenkian foundation), Lisbonne, 1980.
- 88 Cl. Huart, Une razzia en Arménie à X<sup>e</sup> s., Revue des Etudes Arménienes, I, Paris, 1921, f. 4
- 89 Հ. Զորյան, Արարաների հարկային քաղաքականությունը ֆեոդալական Հայաստանում, «Երևանի պետական Համալսարանի Տեղեկագիր», Բ—Գ, 1927: Խոյենի, Արարական շրջանում ֆեոդալական Հայաստանի քաղաքի ու գյուղի միջև ստեղծված հակասությունը, «Տեղեկագիր Գյուղության և Արվեստի ինստիտուտի», Բ—Գ, Երևան, 1928:
- 90 R. Fasmer, Chronologie der arabischen Statthalter von Armenien und den Abbasiden, von al-Saffah bis zum Krönung Aschots I, 750—887, Wien, 1931.
- 91 R. Կիլիսերեան, Խոյանը հայ մատենագրութեան մէջ, Վիեննա, 1930:
- 92 Հ. Մանանյան, Արարական արշավանքները Հայաստանում, Մանք հետազոտություններ, Երևան, 1932:
- 93 Խոյենի, ժողովրդական ապստամբությունները Հայաստանում արարական տիրապետության դեմ, Երևան, 1939:
- 94 Բ. Առաքելյան, Հայերի ապստամբությունը արարական լժի դեմ 703 թվականին, «Տեղեկագիր», հաս. գիտ., 1941, 5—6, էջ 55—63:
- 95 M. Canard, Recueil des textes relatifs à Sayf al-Daulah, Alger, 1934.
- 96 Djahiz, at-tabassur bi-l-tidjara, Damas, 1932.
- 97 Դ. Տայան, Իպի Մոլասասարի տարեգրությունները Եգիպտոսի երեք հայարաց մասին, Բազմավեպ, 1921, էջ 205—208:

98 Խալիֆան, Վեհայաբ ալ-Այան (անհետացած Երկելիներ), թարգմ. Գ. Մը-  
սերլան, Կահիրե, 1935:

99 E. Honigmann. Die Ostgrenze des byzantinischen Reiches, Bruxelles,  
1935.

100 П. Жузе, Мутагаллибы в Закавказье в IX—XI веках, Тифлис, 1937.

101 «Իրի-ի Բատուտա», թաղեց և թարգմանեց Հ. Անապան, 1940.

102 Գ. Մրցլան, Ականավոր Հայեր Եպիստոփ մեջ, Կահիրե, 1947:

103 В. А. Крачковская, Печать Багратида Ашота с арабской надписью.  
Краткие сообщения института истории материальной культуры, вып. XV,  
1946, стр. 112—117.

104 А. Калантарян, Раннесредневековые буллы Двина, Ереван, 1982, стр.  
31.

105 V. Minorsky, Studies in Caucasian History, London, 1953.

106 Idem, A History of Sharvan and Darband, Cambridge, 1958.

107 Idem, Caucasica in the History of Mayyafarīqīn, Bulletin of the School  
of Oriental and African Studies, XIII, 1949.

108 Idem, Studies in Caucasian History, p. 86—99.

109 „Abu Dulaf Misar Ibn Muhaibill's Travels in Iran (circa AD 950) Ara-  
bic text”, trans., comm., by V. Minorsky, Cairo, 1955.

110 «Вторая записка Абу Дулафа», издание текста, перевод и коммента-  
рии И. Г. Булгакова и А. Б. Халидова, М., 1960.

111 Мухаммад ал-Хамави, ат-Тарих ал-Мансури, издание текста, преди-  
словие и указ. П. А. Грязновича, М., 1960.

112 Ibn al-Athām al-Kūfī, Kitab al-Futūh, I—VIII, Hyderabad, 1965—1975

113 „The History of Khalifah ibn Khayyat”, vol. 1—2, ed. by Akram Diya  
al-Umarī. Imprimerie al-«dabé-Nagav, 1967/1386. Damas-Beyrouth, 1977.

114 Ա. Աղամյան, Պելատանորի Արար պատմագիրը և Հայերը, Թաղմավեպ, 1953,  
էջ 77—82, 130—134:

115 Ա. Աղամյան, Յակովի արար պատմագիր և Հայերը, Թաղմավեպ, 1957, էջ  
153—159, 207—212, 262—266; 1958, էջ 96—104:

116 «Արարական աղյուսները Հայաստանի և Հարսկան Երկրների մասին, Յակով  
ալ-Համավի, Արու-լ-Ֆիդա, Իբր' Շադրադ. Կազմեց Հ. Նալբանդյան, Երևան, 1965:

117 Ա. Տեր Ղևոնյան, Մունաշըմ Բաշիի ԺԱ—ԺԲ դարերի անանոն աղյուսը  
Դմինի և Գանձակի Շադրադյանների մասին, Բանքեր Մատենադարանի, 6, 1962:

118 Ա. Տեր Ղևոնյան, Յարիկի Շնիրկերի պատմությունը (ԺԲ դ.) Հյուսիսա-  
յին Հայաստանի դեպքերի մասին: Մերձավոր և Միջին Արևելքի Երկրներ, Զ, Արարա-  
կան Երկրներ, Երևան, 1974, էջ 195—212:

119 Իբն ալ-Ասիր, Օտար աղյուսները Հայաստանի և Հայերի մասին, 11, Արա-  
րական աղյուսներ, Բ, թարգմանություն, առաջարան և ժանթագրություններ Ա. Տեր  
Ղևոնյանի, Երևան, 1981:

120 M. Canard, Les Hamdanides et l'Arménie, Annales de l'Institut d'études  
orientales. VII, Alger, 1943.

121 Idem, *Histoire de la dynastie des Hamdanides de Jazira et de Syrie*, Paris, 1951.

122 Bibliographie de M. Canard, *Extrait de Byzantion*, t. XLIII (1973, Bruxelles, 1974).

123 Հ. Խոյքանյան, Արարեների հարկային քաղաքականությունը Հայաստանում, «Տեղեկագիր», համ. գիտ., 12, 1956.

124 Խոյնի, Արար ոստիկանները Հայաստանում, «Տեղեկագիր», համ. գիտ., 8, 1958.

125 Ա. Ալպոյանյան, Պատմություն Մալաթիո Հայոց, Պեյրութ, 1961, էջ 176—213.

126 Ա. Sbr Ղևոնյան, Արարական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965. Aram Ter-Ghevondyan, *The Arab Emirates in Bagratid Armenia*, trans. by Nina Garsoian (Calouste Gulbenkian Foundation), Lisbon, 1976.

127 А. Тер-Гевондян, Армения и арабский халифат, Ереван, 1977.

ادیب السید، أرمينية في التاريخ العربي، حلٰ، ۱۹۷۵

129 А. Быков, Дайсам ибн Ибрахим ал-Курди и его монеты, Эпиграфика Востока, XI, 1955.

130 V. Langlois, *Numismatique de l'Arménie au moyen age*, Paris, 1855, p. 55—59.

131 B. Bedoukian, *Coinage of Cilician Armenia*, New York, 1962, p. 51, 84.

132 Պ. Սապովյան, Հեթում Ա-ի Հեթում Զապել և Երկինավան դրամներուն մասին, Հայկապյան Հայագիտական հանդես, Ը, Պեյրութ, 1980, էջ 242—248.

133 Կ. Սիմիլյան, Դասավորություն Ռուբենյան դրամոց, Վիեննա, 1892, Հայել-ված, էջ 19—20.

134 X. Мушегян, Денежное обращение Двина по нумизматическим данным, Ереван, 1962.

135 Խ. Սովոզյան, Արքայան դրամների թողարկումը խալիֆաթի Արմինիա նախում Հ—Ժ դարերում, «Պատմա-բանասիրական հանդես», 4, 1973, էջ 143—156 (Համելված)։

136 Ա. Sbr Ղևոնյան, Արմինիայի ոստիկանների ժամանակագրությունը, «Պատմա-բանասիրական հանդես», 1, 1977։

137 Պ. Սապովյան, Հայ արարական դրամագիտության մի քանի հարցերու շուրջ, Հայկապյան Հայագիտական հանդես, Պեյրութ, Դ, 1974, էջ 161—181, Խոյնի, Դրամագիտական և պատմագիտական առնչություններ արարական շրջանին, նոր ապրիլ պարբերագրը, Հայել, Բ տարի, թիվ 1(4), 1981, էջ 66—71։

138 В. А. Крачковская, Арабская надпись из раскопок Н. Я. Марра, Кр. сооб. инст. ист. мат. куль., вып. XV, 1947, стр. 15—16.

139 А. Д. Папазян, Арабская надпись на гробнице туркменских эмиров в селе Аргаванд, «Ближний и Средний Босток», сборник статей памяти В. Н. Заходера, М., 1961, стр. 68—75. Հ. Փափայան, Օտար տիրապետությունը Ալրարատյան երկրում (ԺԵ դ.), «Տեղեկագիր», համ. գիտ., 7—8, 1960, էջ 23—24։

140 Ա. Sbr Ղևոնյան, Հազրատի արարերեն արձանագրությունը և Բագրատունի թագավորների տիտղոսները, «Լրաբեր», 1979, 1, էջ 73—80։

141 Նույնի, Զաքարիայի և իվանեի արարատառ արձանագրությունը Ամբերդում, «Պատմա-բանասիրական հանդես», 1, 1971:

142 A. Խաչատրյան, Нижнеталинская арабская надпись 570/1174 г. «Պատմա-բանասիրական հանդես», 1979, 4:

143 Его же, Трехъязычная надпись из Елегиса, Кавказ и Византия, вып. 3, Ереван, 1982, стр. 124—134.

144 Հ. Փափազյան, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Բ, Կալվածագրեր (ԺԴ—ԺԶ դդ.), Երևան, 1968:

145 Ա. Տեր Ղևոնյան, Ագաթանգեղոսի արարերեն նոր խմբագրությունը, Երևան, 1968, Նույնի, Ագաթանգեղոսի արարական խմբագրության (Վարք) նորանայտ ամբողջական բնագիրը, «Պատմա-բանասիրական հանդես», 1, 1973:

146. Ибн ал-Факих, Ахбар ал-Булдан, изд. текста, перевод и комментарии А. С. Жамкочяна, Ереван, 1979.

## Հ. ԹՈՓՈՒԶՅԱՆ

### ՏԻՄՈԹԵՈՍ ՍԱՓԲԻԳՅԱՆԻ ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԵԹՈՎՊԻԱՅԻ ԺԲ ԴԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂՋՈՒՐ

Հայ-եթովպական բազմագարյան ավանդական կապերի շնորհիվ եթովպիհայի վերաբերյալ ստեղծվել են հայկական արժեքավոր աղբյուրներ: Դրանցից է Տիմոթեոսի (1822—1909) ուղեգրությունը<sup>1</sup>, որի առանցքը կազմում են այն պատմական իրադարձությունները, որ 1867—1868 թթ. տեղի ունեցան Ամհարայում, եթովպիհայի ներքին գործերին անգլիացիների գինված միջամտության հետևանքով: 1871 թ. ուղեգրությունը, հայերեն բնագրի հետ միաժամանակ, լույս է տեսել ֆրանսերեն, քիչ անց նաև գերմաներեն թարգմանությամբ<sup>2</sup>, սակայն բավարար շափով ուսումնասիրված լինելով, գրեթե չի մտել գիտական շրջանառության մեջ<sup>3</sup>:

Ուղեգրության ճանաշում գտնելուն որոշակի արգելք են հանդիսացել նաև շարադրանքի յուրահատկությունները, առանձին սուբյեկտիվ կողմերը և, որ ամենակարեորն է, 1869—1870 թթ. նրա լույս ընծայվելու նախօրեին արդեն ընթերցողների սեղանին էին Հորմուգդ Ռասամի, Հոլլանդ ու Հոգիրի և մի շարք այլ հեղինակների ուղեգրական բարձրարժեք աշխատությունները, նվիրված անգլիացիների գինված միջամտությանը և եթովպիհայի թեոդորոս Բ թագավորի (1855—1868) եղերական վախճանին: Ստեղծվեց թյուր տպավորություն այն մասին, որ իբր Տիմոթեոսը ոչ մի նոր բան չի հաղորդում, այլ կրկնում է եվրոպական այդ հեղինակներին:

Տիմոթեոսի ուղեգրությունը ժամանակագրական առումով համընկնելով հանդերձ Ռասամի և մյուսների աշխատությունների հետ, նրանցից տարբերվում է աշխարհագրական և դրանով պայմանավորված պատմական ընդգրկումը: Այն դեպքում, երբ Ամհարան դուրս է մնացել վերոհիշյալ հեղինակների տեսադաշտից, Տիմոթեոսը քանի ուղեգրությունում շարադրել ամիս շրջագայել է հենց Ամհարայում և իր ուղեգրությունում շարադրել

ականատեսի վկայություններ անգլիացիների Մագդալա ներխուժելուց  
հետո Ամհարայում ստեղծված իրավիճակի մասին։ Պետք է նկատել,  
որ Եթովպիայի տարրեր գավառներում տարրեր իրադարձություններով  
նշանավորվեց Թեոդորոս Բ-ի պետության կործանումը։

Այսպիսով, բավարար հիմքեր կան Տիմոթեոսի ուղեգրության վե-  
րագնահատման ներկա փորձին ձեռնամուխ լինելու համար։

Պետությունն ու Եկեղեցին այն երկու սյուներն էին, որոնց վրա  
խարսխված էր Եթովպիայի ֆեոդալական հասարակության ամբողջ շեն-  
քը։ Հիերարխիայի գլուխ կանգնած Թեոդորոս Բ-ը Եթովպական պետու-  
թյան ռազմաքաղաքական կենսունակության գրավականը տեսնում էր  
կենտրոնացած ուժեղ թագավորության մեջ։ Նրան հաջողվեց միավորել  
Ամհարայի, Տիգրեի, Շոայի, Գոշամի իշխանապետությունները, կազմել  
մեծաթիվ բանակ և ֆեոդալներին զրկել զորք ունենալու իրավունքից։  
Արգելվեց ստրկավաճառությունը, բարեփոխվեց հարկային դրությունը,  
պակասեցվեց ներքին մաքսատների թիվը, վճռական միջոցներ ձեռ-  
նարկվեցին բանդիտիզմի դեմ և այլն։ Տարրեր մասնագետներ հրա-  
վիրվեցին Եվրոպայից, սկսվեց ճանապարհաշինարարությունը։ Էա-  
կան տեղաշարժեր կատարվեցին նաև Եթովպիայի արտաքին քաղաքա-  
կանության բնագավառում։ Թեոդորոս Բ-ը շեղյալ հայտարարեց Ռաս  
Սլիի և նրա նախորդների ժամանակ Եվրոպական պետություններին  
տրված առհասարակ բոլոր արտոնությունները, սակայն նրան շա-  
շողվեց իրավահավասարության սկզբունքով պայմանագիր կնքել ոչ  
Անգլիայի, ոչ էլ Ֆրանսիայի հետ։ Սուեզի ջրանցքի կառուցումը, բարձ-  
րացնելով Կարմիր ծովի միջազգային առևտրական նշանակությունը,  
խթանում էր այդ պետությունների Եթովպիա ներթափանցման քաղա-  
քականությանը։

Եկեղեցին պետության պաշտոնական գաղափարախոսության կրո-  
ղը լինելուց բացի նաև ֆեոդալական հաստատություն էր, և նրա հզո-  
րության տնտեսական հիմքը հողային սեփականությունն էր։ Երկրի  
տարրեր մասերում գործող բազմաթիվ Եկեղեցիներն ու վանքերը ունե-  
ին հողային ընդարձակ տարածություններ, անհաշիվ գյուղեր, հսկայա-  
կան հարստություն։ Հոգևորականության բազմահազարանոց բանակի  
յուրաքանչյուր անդամ իրավունք ուներ իր աստիճանի և զբաղեցրած  
պաշտոնի համեմատ Եկեղեցապատկան հողեր շահագործելու իր տրն-  
տեսական կարողությամբ Եթովպական Եկեղեցու պատրիարքը՝ արու-  
նա Սալաման ավելի հզոր և հարուստ էր, քան մի քանի աշխարհիկ

ֆեռդալ միասին վերցրած։ Եկեղեցին ներկայացուցիչներ ուներ արքունիքում, գավառային վարչական կենտրոններում և, որ ամենազլիավորն է, թագավորը չէր կարող օրինավոր համարվել մինչև շօժվեր արունայի կողմից։

Պայքարելով ֆեռդալական սեպարատիզմի դեմ, Թեոդորոս Բ-ը փորձեց թուլացնել եկեղեցու ազդեցությունը, եկեղեցու արտոնությունների սահմանափակման և եկեղեցապատկան կալվածքների մի մասի գրավման հետևանքով, հոգորականությունը, արունա Սալամայի գրլխավորությամբ, դուրս եկավ Թեոդորոս Բ-ի դեմ և նույնիսկ գործիք դարձավ նրա ներքին ու արտաքին թշնամիների ձեռքում։

Եթովպական եկեղեցու հակաթիոդորոսյան դիրքավորումը նպաստում էր անգլիական ճնշման ուժեղացմանը։ 1856 թ. Ալեքսանդրիայի դպտի պատրիարքը ժամանեց Եթովպիա և, ակներևորեն անգլիացիների պատվերով, փորձեց ուղիներ հարթել օտարերկրյա ներթափանցման առաջ, սակայն հանդիպելով Թեոդորոս Բ-ի բուռն դիմադրությանը, վերադարձավ ձեռնունայն։ 1858 թ. պատասխանելով Եգիպտոսի փոխարքայի կրկնվող հրավերներին, Թեոդորոս Բ-ը Կահիրե ուղարկեց ասալաֆի Կանդիբայի դեսպանությունը, սակայն բանակցությունները խզվեցին, որովհետև փոխարքայի ներկայացուցիչների բերանով խոսում էին անգլիացիները։ 1859 թ. Թեոդորոս Բ-ը, ոչ առանց հիմքի, կասկածամտությամբ վերաբերվեց Եթովպիա ժամանած եգիպտական դեսպանությանը և նրա ղեկավար Արդու Ռահմանին բռնադատեց միաժամանակ մնալ Մագդալայում։ Ավելի ուշ, Եթովպիա ուղարկված Արկիկոյի Նահիբը շղթայակապ բանտ նետվեց։ 1862 թ. հովհանն Եթովպիա ժամանեց Դումկան Զարլզ Կամերոնը, սակայն Թեոդորոս Բ-ը շնանաշեց նրա անգլիական հյուպատոսի հանգամանքը և ալլն։ Անհնագանդ Թեոդորոս Բ-ին կարգի հրավիրելու նպատակով անգլիացիները ուժեղացրին ճնշումը։ Եգիպտոսը զորքեր կենտրոնացրեց Եթովպիայի հյուսիս-արևմտյան սահմանների մերձակայքում, իսկ անգլիական նավատորմի միավորները պարեկում էին Տիգրեի ջրերում։ 1863 թ. նոյեմբերին փորձ արվեց Ամֆիլայի ծովածոցը և համանուն Կղզին դնելու անգլիական վերահսկողության ներքո։ Անգլիական աքցանի սեղմվելը համարձակություն էր ներշնչում կենտրոնախույս ֆեռդալներին, հակաթեոդորոսյան շարժումներ հրահրում տարրեր գավառներում։

1864 թ. հունվարին Կամերոնը և նրա գործակալները բանտ նետվեցին Եթովպիայի ներքին գործերին միջամտելու մեղադրանքով։ Նրանց արգելափակումը չտեսնված աղմուկ բարձրացրեց ոչ միայն

**Անգիտայում:** Մայրահեղ գործիչները պահանջում էին վճռական միջոցներ, ընդհուպ պատերազմ՝ «նեզքը բռնակալի» դեմ: Ստեղծվել էր եթովպահայի ներքին գործերին դինված միջամտության հարմար պատրվակ, սակայն անգիտական կառավարությունը փութկոտություն հանդես լրեց, այլ հարուցեց մի շարք միջնորդություններ: «Արքիսինիայում արգելափակվածների ազատության ֆոնդի» կողմից եթովպահա ուղարկվեց Ա. Բեկը, որը, սակայն, չկարողանալով հանդիպել Թեոդորոս Բ-ի հետ, վերադարձավ ձեռնունայն: Ապարդյուն անցավ նաև եթովպահայի անգլիական նախկին Հյուպատոս Վոլտեր Պլովդենի եղբոր՝ Տրեվեր Պլովդենի «անձնական դիմումը» Թեոդորոս Բ-ի մարդասիրական զգացումներին:

Բոլորովին այլ բախտ վիճակվեց անգիտական կառավարական պատվիրակությանը, որի կազմում էին Ադենի անգիտական ոեզիդենտի առաջին օգնական Հորմուզդ Ռասամը<sup>4</sup>, թժիշկ Հենրի Բլանկը և զինվորական աստիճանավոր Վ.-Ֆ. Պրիդոն: 1865 թ. դեկտեմբերի 28-ին նրանք Մետեմայից անցան եթովպահայի արևմտյան անուրիկոնք և հատելով Ամհարայի գավառները (Զելգա, Դեմրեա, Տակուսա), 1866 թ. հունվարի 25-ին հասան Դամոտ, որտեղ այն ժամանակ գտնվում էր Թեոդորոս Բ-ի բանակատեղին: Եթովպահայի տիրակալի հետ Վիկտորիա թագուհու անունից սկսված բանակցությունները, սակայն, դրական արդյունքի շնորհեցրին, որովհետև այդ օրերին Շոայում Թեոդորոս Բ-ի զորքերի պարտությունից հետո անգիտացիներն անզիջող էին դարձել և անորոշ խոստումների փոխարեն պահանջում էին ազատ արձակել Հյուպատոս Կամերոնին ու արգելափակված մյուս եվրոպացիներին: Հետևանքն այն եղավ, որ Ռասամը, Բլանկն ու Պրիդոն ձերբակալվեցին և ուղարկվեցին Մագդալայի ամրոցը, որտեղ և մնացին մինչև զինված միջամտության ավարտը:

1867 թ. ապրիլին անգիտական կառավարությունը սկսեց նախապատրաստել զինված ներխուժումը եթովպահա: Նրա ընդհանուր հրամանատար նշանակված Ռոբերտ Նապիրի տրամադրության տակ դրվեց արդիական զենքերով զինված ավելի քան 30.000 սարդ՝ մեծ մասամբ ասիացիներ և աֆրիկացիներ, որոնք նույն թվականի հոկտեմբերին անցան եթովպահայի սահմանը: 1868 թ. ապրիլին Թեոդորոս Բ-ը տանուց տվեց Մագդալայի ճակատամարտը և, շցանկանալով գերի ընկնել, ինքնասպան եղավ: Կողոպատելով Մագդալայի ամրոցի հարստությունները և վերցնելով արգելափակվածներին, նապիրի զորքերը հեռացան եթովպահայից: Որպես զինվորական աստիճանավորներ Հոլլանդը, Հո-

զիրը, Մարիսամը և Բլանտֆորդը ներխուժող զորքերի հետ Զովայի նավահանգստից Ադիշերադ—Դոնգոլա—Գեշեն ուղեգծով իշել էին Հարավ՝ մինչև Մագդալա, այստեղից էլ վերադարձել նույն ճանապարհով։

Այսպիսով, 1850—1860-ական թթ. անգլո-եթովպական հարաբերությունները խիստ սրվել էին անգլիական կառավարության եթովպիա ներթափանցելու համառ փորձերի հետևանքով։ Այդ քաղաքականությունը հանգեցրեց նախ Մասառայի անգլիական հյուպատոս Կամերոնի ու նրա մի շարք աշխատակիցների, հետագայում և Թեոդորոս Բ-ի հետ բանակցող անգլիական պատվիրակության անդամների արգելափակմանը։ Նրանց ազատության հարցը վճռվեց եթովպիայի ներքին գործերին զինված միջամտության միջոցով։

Այդ իրադարձությունների հետ առնչվեց նաև հայոց եկեղեցին։

Տիմոթեոսի ուղևորության վերաբերյալ հաղորդումներում խոսքը գնում է Կամերոնին և արգելափակված մյուս եվրոպացիներին աղաւելու համար հայոց եկեղեցու միջնորդության մասին։ Ըստ Երուսաղեմի հայոց պատրիարքարանի պաշտոնաթերթի, Հորմուզդ Ռասամի առաքելության տապալումից հետո «Անգղիո դահլիճը վերջին փորձ մի ուղելով ընել», դիմել է հայոց եկեղեցու միջնորդությանը։ Թվում է դրանում համոզված է նաև ինքը Տիմոթեոսը, երբ գրում է. «Կոստանդնուպոլսու անգղիական դեսպան վսեմափալլ լորդ Լայնզ, իմանալով թե սուլթ Երուսաղեմ բնակող հապեշները հայոց պատրիարքի իրավասության տակ կդտնվին, [Կոստանդնուլ]պուսի [հայոց] ազգային վարչության և պատրիարքարանի միջոցով կինդրե ամենապատիվ ծասայի պատրիարքեն, որ յուր կողմեն պատգամավորություն մը յուղարկե առ Թեոդորոս, և անկե խնդրե Անգղիո հյուպատոսին և անոր ընկերաց ազատությունը»։ Սակայն փաստերի վերլուծությունը ցուց է տալիս, որ անգղիացիները միջնորդության ցուցանակի ներքո ձգտում էին հաւնել այլ նպատակների։

Հորմուզդ Ռասամի պատվիրակության ձախողումից հետո անգղիացիները հագիվ թե հուզսեր կապեին հայ եկեղեցու միջնորդությանը։ Եվ, իրոք, կոնդոնում արդեն որոշվել էր ողենքի միջոցով հաղթահարել «Արքահինիայի դժվարությունները»։ 1867 թ. ապրիլին, երբ Տիմոթեոսը տակավին Կահիրենում էր գտնվում, սկսվեց զինված միջամտության նախապատրաստումը։ Անգղիացիները զինված ներխուժման հաջողության նախապայման էին համարում Թեոդորոս Բ-ի մեկուսացումը, և հնարավոր ամեն միջոց գործադրում էին, որպեսզի խորացնեն կամ առնը-

վազն պահպանեն այն թշնամական հարաբերությունները, որ գոյություն ունեին նրա և աշխարհիկ ու հոգևոր ֆեռաների միջև։ Այդ կարգի առաքելությամբ Եթովպիտիա ուղարկվեց գնդապետ Մերևեթերը, որը, հաստատվելով Սենաֆեռամ, կապեր ստեղծեց նոր ոեժիմից դժոգհ ֆեռաների հետ և շանում էր նրանց համոզել, որ պրիտանական ուժերը գալիս են պատերազմելու միայն Թեոդորոսի դեմ<sup>8</sup>։ Թեոդորոս Բ-ի մեկուսացման գործում անգլիացիները որոշակի գեր էին վերապահել նաև Եթովպիտիայի հետ դարավոր առնչություններ ունեցող զբարական և Հայկական դավանակից եկեղեցիներին։

Եթովպիտիայում մեծ հեղինակություն ուներ Ալեքսանդրիայի ղպտի պատրիարքը։ Նա էր նշանակում Եթովպական եկեղեցու գլուխ արունային, ընդ որում արունան, որպես կանոն, պետք է լիներ ղպտի եկեղեցականներից։ Դարերի խորքից եկող այդ իրավունքը ղպտի հոգևորականությանը հնարավորություն էր տվել ամուր կովաններ ստեղծելու Եթովպիտիայում, և Ալեքսանդրիայի պատրիարքը հաճախ միջամբ ստում էր ոչ միայն Եթովպական եկեղեցու, այլև արքունիքի գործերին։ Եգիպտոսում անգլիական ազդեցության ուժեղացմանն զուգընթաց Ալեքսանդրիայի պատրիարքարանն ավելի ու ավելի էր ընդառաջում անգլիացիներին և երբեմն էլ նպաստում նրանց Եթովպիտիա ներթափանցելու փորձերին։ Եթովպական եկեղեցու կալվածների գրավումից և հատկապես արունա Սալամայի արգելափակումից հետո ղպտի բարձրաստիճան հոգևորականությունն անվերապահորեն անցել էր Թեոդորոս Բ-ի թշնամիների կողմը։ Ինչ վերաբերում է Հայոց եկեղեցուն, ապա անգլիացիները բավականաշափ հստակ չէին պատկերացնում նրա քաղաքական նախասիրությունները՝ անգլո-Եթովպական հակասությունների կապակցությամբ։

Հայ-Եթովպական եկեղեցական հարաբերությունները դարբնվել են Հակաքաղեգունական համատեղ պայքարի բովում և այնուհետև շրունակվել համարյա առանց ընդմիջման։ Ժե դարից Օսմանյան կայսրության միաբնակները, այդ թվում Եթովպացիները, գտնվում էին Կոստանդնուպոլիսի հայոց պատրիարքի իրավասության ներքո<sup>9</sup>։ Ընդ որում պատրիարքն իրավունք ուներ դատել, պատժել, նույնիսկ աքսորել անհնազանդ կամ եկեղեցական կանոնների դեմ մեղանշող միաբնակներին։ Ժթ դարի կեսերից այլազգի միաբնակները, բաժանվելով հայոց եկեղեցուց, կազմեցին ինքնուրույն համայնքներ, սակայն Կոստանդնուպոլիսի և Երուսաղեմի հայոց պատրիարքները շարունակում էին բարեկամական սերտ կապեր պահպանել Եթովպական եկեղեցու և

արքոմիքի հետ<sup>10</sup>, Ուստի հայոց եկեղեցին կարող էր որոշակի դեր կատարել Թեոդորոս Բ-ի մեկուսացման գործում:

Անգլիացիները, հայոց եկեղեցուն մոտենալով հնարավոր զգուշավորությամբ, ոչ Կոստանդնուպոլիսի, ոչ էլ Երուսաղեմի հայոց պատրիարքի առաջ Եթովպիա պատվիրակություն ուղարկելու հարց լին դրել, այլ պարզապես նրանց խնդրել են, որ «Գիր մի գրեն առ Թեոդորոս կայսեր», հայցելով արգելափակվածների ազատությունը<sup>11</sup>: Հավանական է, որ անգլիական դեսպան լայնդի ձեռքում եղել է հնդկահայերի մեջ անհայտ մի նամակ-հանձնարարականը ուղղված Կոստանդնուպոլիսի Պողոս պատրիարքին, ինչպես դժվար չէ կոահել «Սիոնի» այն հաղորդումից, որտեղ ասված է. «Վեհափառ թագուհվո կողմեն այսպիսի խնդր մի առ հայոց ազգն ընելու ուշադրությունը շարժած են անշուշտ հնդկարնակ ազգայինք<sup>12</sup>: Առանց հնդկահայերի հեղինակավոր աղդեցության հազիվ թե անգլիական դեսպանին հաջողվեր պատրիարքից ստանալ այնպիսի կարևոր թղթեր, ինչպիսիք են «աղերսանաց գիրն առ Թեոդորոս» և Երուսաղեմի ծասի պատրիարքին ուղղված հանձնարարական նամակը, որով անգլիացիների առաջ բացվեցին Երուսաղեմի հայոց պատրիարքարանի դռները: Նկատի ունենալով մի շարք հանգամանքներ, ինչպես կնշվի քիչ հետո, ծասի պատրիարքը նպատակահարմար է գտել նախաձեռնությունը վերցնել իր ձեռքը և, մի կողմ դնելով Կոստանդնուպոլսում պատրաստված, Պողոս պատրիարքի կնիքը կրող «աղերսանաց գիրը», գրել է Թեոդորոս Բ-ին ուղղված երկու՝ «օրհնության» և «աղերսանաց կոնդակներ», որոնք ժանվտանգ անոր ձեռքը հասցնելու և աղերսագրույն ավելի կարևորություն տառա դիտավորությամբ, Եթովպիա է ուղարկել «հատուկ պատվիրակության մը ձեռքովը<sup>13</sup>:

Որ Տիմոթեոսի ուղևորությունը չի կատարվել անգլիացիների պատվերով, վկայում է նաև Երուսաղեմի հայոց պատրիարքարանի դիվանապետը, որը մասնակցել է ուղևորության նախապատրաստմանը: Նա գրում է. «Անիկա (ծասի պատրիարքը—Հ. Թ.) բավական շհամարելով նամակով միայն միշնորդել, ինչպես առաջարկած էր Անգլիո տերությունը, այլ ի պատիվ հայ ազգին, ծառայություն մը մատուցանելու համար բրիտանական մեծազոր տերության, հանձն կառնէ վտանգի ենթարկել իր երկու միաբաններուն կյանքը»<sup>14</sup>: Ծասի պատրիարքի ծառայասիրությունը բացատրվում է այն ոտնձգություններից պաշտպանվելու մտահոգությամբ, որ այդ տարիներին լատին և հունկերը փորձում էին սուրբ տեղերում հայոց վանքի դարավոր իրավունք-

ների դեմ: Պատրիարքը հույս ուներ անգլիացիներին մատուցված ծառայությունների փոխարեն հնարավորություն ձեռք բերել նրանց պաշտպանությանն ապավիճնելու: Պատասխանելով Անգլիայի արտաքին դրծերի պետական քարտուղար Կլարենդոնի՝ Տիմոթեոսի եթովպահայից վերադարձը ողջունող նամակին, նա գրել է . «Երանի թե օգոստափայլ վեհապետն ու անգլիական ազգը կարևոր պարագաներու մեջ մանավանդ հիշեին հայոց ազգն ու անոր հովիվը, որ իր հարգալից անձնվիրության մեջ լիներացավ բնավ և պիտի լիներանա այսուհետև աւ, ինչպես կհավատանք որ Մեծն Բրիտանիո մարդասիրությունը և հզոր պաշտպանությունն ու խնամքը պիտի զգացվի մեզմե երեք»<sup>15</sup>:

Անգլիացիները հայոց եկեղեցուց ստացել էին շատ ավելի, քան ակնկալում էին: Բարձր գնահատելով եսայի պատրիարքի ծառայությունը, Ֆորեն Օֆիսը երուսաղեմի անգլիական հյուպատոսին հանձնարարում էր. «Հայտնեցեք պատրիարքին այն վսեմ գաղափարը, զոր բրիտանական վեհափառության կառավարությունը ունեցավ նորին բարձրապատվության անհապաղ ի գործ դրած բարեկամական եղանակին վերա, ի մասին կարգադրության՝ հազարություն անգլիացի բանտարկելոց ի Հապեշստան»<sup>16</sup>: Անգլիայի պաշտպանությունը որոնող պատրիարքն արդեն ներքաշվել էր անգլիական դիվանագիտության ջրապատուտի մեջ, և նրան սպասում էին տակավին այլ փորձություններ:

1867 թ. հոմիսի վերջերին եսայի պատրիարքը հրավիրվեց Եգիպտոս, որտեղ նրան ընդունեցին կառավարական պատիվներով<sup>17</sup>: Կահիրեայի անգլիացիները նրանից կորզեցին երրորդ կոնդակը<sup>18</sup>, որը խոդիվ իսմայիլի նույնիմաստ մի նամակի հետ միասին ուղարկվեց Եթովպիա՝ Եգիպտոսի անգլիական հյուպատոսի միջոցներով<sup>19</sup>: Այդ անհրաժեշտ էր, որպեսզի Թեոդորոս Բ-ին գրկեն մեկուսացումից գոնեմասմբ դուրս գալու վերջին հնարավորությունից, որը ստեղծվել էր հենց ներխուժման նախօրեին: Սեպտեմբերին թուրքական սովորական և Եգիպտոսի խոդիվը համաձայնվել էին, որ ներխուժումը Եթովպիա կատարվի եգիպտական տերիտորիայից՝ Եգիպտական զորքերի մասնակցությամբ: Հոկտեմբերի սկզբին Մասսաւայում և Սուակինում 10.000 եգիպտական զինվորներ, Արդ-ալ-Կադեր փաշայի հրամանատարության ներքո, սպասում էին ներխուժման հրամանի<sup>20</sup>: Սակայն ներխուժումը ստանալով հակաքրիստոնեական-մուսուլմանական երանգ, կարող էր երկուղ առաջացնել քրիստոնյա ֆեռդալների շրջանում, նրանց մղել լեզու գտնելու Թեոդորոս Բ-ի հետ<sup>21</sup>: Ուստի, նպատակահարմար նկատվեց Եգիպտական զորքերը ետ քաշել Եթովպիայի սահմանամերձ վայ-

բերից և ներխուժումը սկսել ոչ եգիպտական Զուլլա նավահանգստից: Եսայի պատրիարքի կոնդակը կոշված էր հանգստացնելու Թեղողրոս թ-ի թշնամիներին: Նրանց հավաստիացնելով, որ Եթովպիա է ներխուժում ոչ թե մուտքմանական Եգիպտոսը, այլ քրիստոնյա Անգլիան:

Եսայի պատրիարքը դժվարությամբ է ստորագրել այդ կոնդակը, ինչպես երեսում է Երուսաղեմի պատրիարքարանի մի հայտարարությունից, որտեղ ասված է. «Երանի, թե անգլիական կառավարությունը փոքր մի ևս երկայնամտեր և հայ նվիրակության միջնորդության վախճանին սպասեր նախքան պատերազմի դործողությանց ձեռք զարնելը, որոյ վերա իրավամբ յուր դժգոհությունն հիայտնն ն[որին] ամենապատիվ սրբազնությունը»<sup>22</sup>: Եսայի պատրիարքը հավանաբար հակացել էր, որ անգլիացիները հայոց եկեղեցու այսպես կոշված միջնորդության պետք ունեին ոչ թե արգելափակվածների ազատության, այլ զինված ներխուժումը իրականացնելու համար: Դրանում նա համոզվեց հոկտեմբերին, երբ անգլիացիները ներխուժեցին Եթովպիա, սակայն զարմանալի է, որ շարունակել է մինչև տարեկերջ մնալ Կահիրեաւ: Այն ժամանակ խիստ փոքրաթիվ եգիպտահայ համայնքը չէր կարող նրան շուրջ վեց ամիս հեռու պահել Երուսաղեմից: Չի բացառվում, որ անգլիացիներն արգելակել են նրա վերադարձը, սպասելով զինված ներխուժման բախտը կանխորոշող գործողությունների ավարտին:

Այսպիսով, Հորմուզդ Ռասամի առաքելության տապալումից հետո, երբ արդեն որոշվել էր Եթովպիա ներխուժել, անգլիացիներն ամուր կառշեցին հայոց եկեղեցուն և լիովին օգտվեցին Անգլիայի «Հոգոր պաշտպանությունը» որոնող Եսայի պատրիարքի ծառայություններից: Եթովպիայում անառարկելի հեղինակություն վայելող Երուսաղեմի հայոց պատրիարքարանի միջնորդությունն անգլիացիներին պետք էր ոչ թե Մագդալայում արգելափակվածների ազատությունը ձեռք բերելու, այլ Եթովպիայի հոգևոր ու աշխարհիկ ֆեոդալներին հանգստացնելու և ներխուժման ժամանակ Թեղողրոս թ-ին նրանց հնարավոր աջակցությունից զրկելու համար:

Երուսաղեմի հայոց պատրիարքի նվիրակների՝ Խսահակ եպիսկոպոս Աստվածատուրյանի և Տիմոթեոս վարդապետ Սափրիշյանի մասին պահպանվել են խիստ սակավ կենսագրական տեղեկություններ: Տիմոթեոսը ծնվել է 1822 թ. Կոստանդնուպոլիսում, կրթությունը ստացել է Երուսաղեմի ս. Հակոբի դպրությանքում: Նա բավական ընդունակ անձնավորություն էր, հայերենից բացի գիտեր մի քանի լեզուներ, կարդում

էր եվրոպական գրականություն, թերթեր<sup>23</sup>: Տարբեր ժամանակներում վարել է Երուսաղեմի հայոց վանքի գանձապետի, մատակարարի և Ալեքսանդրիայի վանքապատկան կալվածների տեսուչի պաշտոնները: Մի առ ժամանակ էլ անդամակցել է ս. Հակոբի միաբանության տնօրեն խորհրդին: Կյանքի վերջին տարիներին գործել է Երուսաղեմից հեռու, ստանձնելով թեմակալ առաջնորդի պաշտոններ: Վախճանվել է 1909 թ. Կոստանդնուպոլիսում «ալևորյալ» հասակով<sup>24</sup>:

Խսհակը ծնվել է (թվականն անհայտ է) Թուրքիայում: Սովորել է ս. Հակոբի դպրեվանքում: 1858—1864 թթ. նշանակվել է Երուսաղեմի պատրիարքարանի ներկայացուցիչ Կոստանդնուպոլիսում, 1865 թ.՝ Եգիպտոսում վանքապատկան կալվածների տեսուչ, Եթովպիայից վերադարձին՝ ս. Հակոբի լուսարարապետ: Վախճանվել է 1883 թ. Երուսաղեմում<sup>25</sup>:

Երուսաղեմի նվիրակները, ինչպես նշվեց, դինված էին Ծասայի պատրիարքի զույգ կոնդակներով: Առաջինում՝ «օրհնություն» կոնդակում ոգեկոշելով Հայ-Եթովպական բարեկամությունը, պատրիարքը Թեոդորոս Բ-ին խնդրում էր «ի մասնավորի» ոմկնդրություն շնորհել նվիրակներին, երկրորդում, որ կոշվում է «աղերսանաց» կոնդակ՝ «շնորհս առնել Հյուպատոսին Անգլիո եւ ընկերաց նորին, եւ ներել ամենայն հանցանաց զորս գործյալ իցէ նոցա երբեք»: Հնարավոր չի եղել կոնդակները թարգմանել եթովպերեն, և դրանց գրաբար բնագրին կցվել է արաբերեն թարգմանությունը: Անհրաժեշտ է Համարվել կոնդակները թարգմանել նաև ֆրանսերեն «ի տեղեկություն եվրոպացի բաժանորդաց», այսինքն՝ եվրոպական թերթերին: Նվիրակները բավական տարատեսակ ուղնաներեն ի զատո Թեոդորոս Բ-ին տանում էին նաև մի ականակուռ խաչ, որը պարփակում էր նվիրական մի մասունք՝ ռկենաց խաչափայտեն մաս մը» և այլն:

Անգլիայի արտաքին գործերի պետական քարտուղարի կարգադրությամբ Կոստանդնուպոլիսի անգլիական գեսապանը պարտավորվել է նվիրակներին ցույց տալ Հնարավոր ամեն օգնություն: Մեկնումի նախօրեին Երուսաղեմում նրանց է հանձնվել դեսպանի «հանձնվել գանձապահական գործադրություն» պատճենը և հանձնվել է Եգիպտոսում անգլիական գործադրությունը: Մինչև Եթովպիայի սահմանը նվիրակների սուլեկորության հարկավոր դյուրությանց և հոգատարության վրա մտածելն ու տնօրինելը՝ հանձնարարվել է Եգիպտոսի անգլիական ընդհանուր հյուպատոս գրնդապետ Ստանտոնին: Վերջինս նվիրակներին հանձնել է Սուեզի և Զիդդայի անգլիական հյուպատոսաց տրվելիք հանձնարարական թղթե-

բը»: Զիդդայի անգիտական հյուպատոսի տեղակալ Ալֆրեդ Սանդիսը կազմակերպել է նրանց ուղարությունը դեպի Սուակին, Կասալա, Գեդարեֆ և Մեդամմա, որտեղից էլ նրանք նույն տարվա հունիսի 9-ին մտել են Եթովպակիա:

Նվիրակներն անցնելով Վոհնիի գյուղերից ականատես եղան Տեսու Գորազեի կատարած ավերածություններին: Նրանց հաջորդ հանգրվանը Ճիրանայի Գարրե Մարիամ գյուղն էր, այնուհետև՝ Բիթանիա-Եսուս, Վոլտակե կամ Մելքոնդ ավանները, և, վերջապես, Ավիսա գյուղը, որտեղից էլ հունիսի 24-ին հասան Զար-ամբաւ: Տիմոթեոսը նշել է, «Բոլորովին ուժաթափ եղած լեռան գլխույն մոտ հասեր էինք, երբ մեզ դիմավորեց Զելգայի գավառին կուսակալ և Զար-ամբայի պահապան Տասամմա իշխանը հարցուրի շափ զորբով»:

Նվիրակներին չի հաջողվել ուղևորությունը շարունակել մինչև Դերրա Տարոր, որտեղ այն ժամանակ գտնվում էր Թեոդորոս Բ-ը և բավական երկար կանգ են առել Զար-ամբայում: Սեպտեմբերի 9-ին Զարամբայի իշխան Տասամման նրանց ժամանման մասին տեղեկացրել է Թեոդորոս Բ-ին, որը պատասխանել է. «Աստուծով, մոտ օրերս կամ ես անձամբ կուգամ, կամ զորքերս խրկելով քովս կընդունիմ դիրենք»: Հոկտեմբերի 11-ին նվիրակները Թեոդորոս Բ-ին ուղարկում են «արարերեն գիր մը» հատուկ սուրբհանդակի միջոցով: Թվում էր, շուտով կկայանա նրանց հանդիպումը, սակայն անգիտացիների հարձակման հետևանքով Թեոդորոս Բ-ը քաշվեց Մագդալա, և Տիմոթեոսը հնրավորություն շունեցավ հանդիպելու նրան:

1868 թ. հունվարին Տեսու Գորազեն, գրավելով համարյա անպաշտպան մնացած Զար-ամբան, գերի է վերցնում հայ եկեղեցականներին և տանում Զոգի (Վոգերայում), իսկ փետրվարին ուղարկում Զարդոգա, որտեղ նրանք մնում են մինչև Տեսու Գորազեին պարտության մատնած Վագզում Գորազեն նրանց նախ տեղափոխում է Կիդանա-Մերետ բնակավայրը, իսկ հունիսի սկզբներին՝ Թելեսա: Այստեղ նրանք ընկնում են հետին թշվառության մեջ: Տիմոթեոսը գրում է. «Մենք ձեռք հագուստե ի զատ ուրիշ չըր մնացեր... այն էլ կարկատան կարկատանի վրա...: Ոտքերնուս մուճակներն ալ հինացած ըլլալով, փոկերով տրեխներ շինեցինք»: Նրանց ապրուատի աղբյուրն էր «հոգևոր ու մարմնավոր» բժշկությունը, որի «ձայնը բոլոր թելեսայու մեջ տարածվեցավ և հեռավոր տեղերի ալ սկսան հիվանդներ բերելու»:

Ուշագրավ է, որ անգիտացիները նվիրակների ճակատագրով շեն հետաքրքրվել մինչև 1869 թ. կեսերը, երբ Եսայի պատրիարքը սկսեց

ցուց տալ լուրջ անհանգստության նշաններ: Ի պատասխան նրա դիմումների, Ֆորեյն Օֆիսը կարգադրում է, որպեսզի Եգիպտոսի ընդհանուր հյուպատոսը ռինչ որ հարկ է ի գործ դնեա նվիրակների վերադարձի համար: Այդ կարգադրությունից հետո Եգիպտոսի ընդհանուր հյուպատոսի տեղակալ Ստանլեյը նվիրակներին գրում է. «Վեհափառ թագուհին կառավարութենեն հատուկ հրամանագիր ստացած ձեր վերադարձը դյուրացնելու համար...: Ուստի այժմ վեհափառ թագուհին կողմեն գիր մի կուղենք նորին բարձրության Գորազի իշխանին, խնդրելով իրմե որ դյուրացնե ձեր վերադարձը և անվտանգ հասցնե զձեղ մինչև Մեղամմա, ուր բարձրապատիվ փոխարքայն ի պատիվ նորին վեհափառություն թագուհին և ձեր կրած սուրբ պաշտոնին հատուկ հրամաններ խրկած է զձեղ ամենայն սիրով ընդունելու և մինչև ի Կահիրե անվտանգ հասցնելու: (Սակայն այդ նամակը հապաղել է, և նրանք այդ կարգադրությունների մասին տեղեկացել են միայն վերադարձից հետո՝ Եգիպտոսի պատուական պաշտոնին):

Ընդառաջելով անգլիացիներին, Տեկլա Գիորգիս վերանվանված Վագշում Գորազեն նվիրակներին գրավոր հայտնել է. «Եթովպի Տեկլա Գիորգիս թագավորը սույն նամակը կուղարկե առ արօնա իսահակ և առ արոնա Տիմոթեոս: Ինչպե՞ս էք, շա՞տ լավ էք: Առաջ ճամրա լըլլալով սպասեցիք: Հիմա ձեր թագավորեն նամակ եկավ մեզի, գացեք երկիրնիու Երկուքնուդ համար դեմազմալ Անինենն երկու զորի ընդունեցեք: Ինչ որ ունիք առեք հետերնիդ տարեք ձեր երկիրը: Զեր վերադարձ լացուց մեզի»: 1869 թ. ապրիլի 16-ին Տիմոթեոսն ու իսահակը դուրս են գալիս Թելիսայից զինված մարդկանց ուղեկցությամբ և, կտրել-անցնելով Ագառի երկիրը, մայիսի 27-ին ոտք են դնում Տիգրեի սահմանագլխի Ֆենարոս գյուղաքաղաքը: Առաջնորդվում են նախ Աղուա, ապա Աքսում, որտեղ Տիգրեի մեծ իշխան Կասան (ապագա Յոհաննես թագավորը, 1871—1889) նրանց ընդունում է պատիվներով: Հունիսի 4-ին նրանք շարումակում են ճանապարհը դեպի Ասմարա, ապա Մասաուա, Զիդդա, Կահիրե:

Կահիրեում նվիրակներն արժանացել են բավական չերմ ընդունելության: Վիկտորյա թագուհին, արտաքին գործերի պետական քարտուղար Կլարենդոնը, Եգիպտոսի խորհիվ իսմայիլ փաշան, անգլիական հյուպատոսներ և այլ պաշտոնական անձինք ըստ արժանվույն բանավոր և գրավոր շնորհակալություն են հայտնել նրանց: Տեղեկանալով նվիրակների վերադարձի մասին, Կլարենդոնը Եսայի պատրիարքին գրել է. «Սույն լուրը մեծ ուրախությամբ ստացավ նորին վեհա-

փառությունը, և հրաման ըրավ ինձ, որ իմացնեմ ձեր ամենապատվության, թե որքան մեծ արժեք աված է այն սիրելի օգնության, որը ձեր տերությունը փոփաց շնորհել Հապեցստանի մեջ եղող յուր ծառաներուն միխթարության համար»<sup>26</sup>: Այդ առթիվ թագուհին բարեհաճել է նաև Երուսաղեմի պատրիարքարանին նվիրել «յուր իշխան ամուսնույն և Գալլայի իշխանին կենդանագիր պատկերները», Անգլիացիները դրամական որոշ օգնություն՝ 1025 օսմանյան ոսկի են առաջարկել Երուսաղեմի հայոց վանքին, սակայն, ինչպես նշել է Սավալանյանը, Եսայի պատրիարքը չի ընդունել, քանի որ ոնցութական օգնութենե ավելի բարոյական պաշտպանության կարոտ կհամարեր իր ազգը և Ս. Աթոռը»<sup>27</sup>:

Այսպիսով, անգլիացիները կազմակերպեցին Երուսաղեմի հայոց պատրիարքի նվիրակների ուղևորությունը մինչև Եթովպիայի սահմանագլուխը: Ընկնելով ապստամբությունների կրակի մեջ, նրանք չկարողացան ճանապարհը շարունակել մինչև Թեոդորոս Բ-ի բանակատեղին, և շուրջ քսաններկու ամիս թափառեցին Ամհարայի տարրեր շըրջաններում:

Այդ անսովոր թվացող աշխարհում Տիմոթեոսը կուտակել է ամենատարրեր բնույթի նյութեր, որոնք շարադրված են նրա ուղեգրության մեջ:

\* \* \*

ԺՈ դարի երկրորդ կեսին սկսվեց Եթովպիայի համակողմանի հետազոտության ժամանակաշրջանը: Եթովպիա ժամանող գիտական արշավախմբերը, ճանապարհորդները, քաղաքական ու կրոնական գործիչները, տուրք տալով հանդերձ Անգլիայի և Ֆրանսիայի գաղութատիրական շահախնդրություններին, կուտակել են ճանաշողական խոշոր նշանակություն ունեցող բազմահարուստ նյութեր: 1769—1772 թթ. շոտլանդացի ականավոր ճանապարհորդ Ջեյմս Բրյուսի գիտական արշավախումբը, հետազոտելով հյուսիսային Եթովպիան, Աքսում և Գոնդար քաղաքները, Տանա լճի հարավային շրջանները, կուտակել է աշխարհագրական, պատմագրական, աղքագրական, լեզվագրական և այլ բնույթի հսկայական նյութեր: 1805 և 1809 թթ. Հենրի Սալտը ուսումնասիրել է հյուսիսային Եթովպիայի աշխարհագրությունը և առևտուրը, պատրաստել պատմական հուշարձանների գծագրեր, կազմել ամհարինյա, տիգրինյա, ագաու, գալլա, սոմալի լեզուների առաջին արմատական բառացանկը: Ռոշե գ'Հերիկուրը ուսումնասիրել է հարավային Եթովպիայի տեղա-

գրությունը և երկրաբանությունը, լեֆերովը՝ եթովպական բարձրավանդակի ժողովուրդների պատմությունը և ազգագրությունը, Ֆերի և Գալինինի ժողովայի և Գոնդարի երկրաբանական ու օդերևութաբանական պրոբլեմները, Անտ. Դ'Արադին՝ եթովպակայի քաղաքների, կենդանի ու մեռած լեզուների, Լալիբալայի ժայռափոր եկեղեցիների, մանրանկարչության ու գրչության արվեստի, տարրեր գիտությունների պատմությունը, Էդ. Ռուպակելը պատրաստել է Եթովպակայի ֆիզիկական և քաղաքական աշխարհագրության բավական ճշգրիտ քարտեզը, կազմել է բուսական ու կենդանական աշխարհի նմուշների հարուստ հավաքածու և, կատարելով օդերևութաբանական առաջին դիտարկումները, հայտնաբերել է կլիմայական մի շարք օրինաշափությունները. Ս. Դոբատը, Ժ. Լ. Կրապֆը, Կ. Վ. Նզենբերգը հետազոտել են եթովպական բարձրավանդակի ժողովուրդների լեզուները, Կ. Տ. Թեկը կազմել է Եթովպակայի լեզվագրական քարտեզը և այլն:

Ժթ դարի կեսերից Եթովպական ուսումնասիրողները, կատարելով այս կամ այն եվրոպական մեծ պետության կառավարող շրջանների պատվերները, հակվում էին հիմնականում արդիական նշանակություն ունեցող պրոբլեմների վրա: Անգլիական հյուպատոս Վոլտեր Պլովդինը արժեքավոր նյութեր է հավաքել Եթովպական քաղաքների, քաղաքային դասերի, ֆեոդալական հիերարխիայի, գյուղացիության և ցեղերի, ներքին ու արտաքին առևտուրի, եկեղեցու ու եկեղեցականության և այլ հարցերի վերաբերյալ: Մասառայի ֆրանսիական հյուպատոս Գիյոմ Լեժանը ուսումնասիրել է Եթովպակայի առևտուրատնտեսական նշանակությունը, ներքաղաքական իրավիճակը, ֆրանս-Եթովպական հարաբերությունները, Եթովպակայի շուրջը ծավալվող անգլո-ֆրանսիական մըրցակցությունը, Ֆրանսիայի կարմիրծովյան շահերի հետ կապված դժվարությունները և այլն: Աֆրիկա ուղևորվող ոռական առաջին գիտական արշավախմբի ղեկավար Ե. Պ. Կովալեսկին հետազոտել է ներքին Եթովպական և Սպիտակ Նեղոսի ակունքների տեղագրությունը: Եթովպակափետ Առն. Դ'Արադին, ճանապարհորդ Հենրի Դուֆտոնը, միսիոներ Հենրի Շտերնը և ուրիշներ արժեքավոր նյութեր են հավաքել Եթովպակայի սոցիալական, տնտեսական ու քաղաքական կյանքի, կառավարման ձևերի, կրոնների և այն վերափոխումների մասին, որ Եթովպակայում կատարվեցին թեոդորոս Բ թագավորի գահակալության առաջին տարիներին:

Աղբյուրների հաջորդ խումբը, որին պատկանում է նաև Տիմոֆեոսի ուղեգրությունը, բացառիկ կարևոր նշանակություն ունի Եթովպակայի

1850—1860-ական թթ. պատմության հարցերի լուսաբանման համար Հորմուզդ Ռասամի ծավալով աշխատությունում<sup>28</sup> հարուստ նյութեր են բերվում անգո-եթովպական ճգնաժամի, հակաթեռողորոսյան ապստամ-բությունների, անգլիացիների և ֆեոդալ-իշխանների կապերի, անգլիա-ցիների Եթովպական ներխուժման, Մագդալայի անկման, Թեոդորոս Բ-ի ինքնասպանության և այլ պատմական իրադարձությունների վերաբեր-յալ: Հենրի Բլանկը<sup>29</sup> հիմնականում անդրադառնում է Ռասամի նկա-րագրած իրադարձություններին, սակայն միաժամանակ հաղորդում է լրացուցիչ արժեքավոր տեղեկություններ, երբեմն էլ նոր նյութերով հարստացնում նրա հաղորդումները: Այդ առումով ուշագրավ են Մա-սառայից Դամոտ, այստեղից էլ Մագդալա տեղանքի և բնակավայրերի նկարագրությունը, ինչպես և այն նյութերի գգալի մասը, որ վերաբե-րում են հակաթեռորոսյան ապստամբություններին: Տարիներ անց, Պրիդոն շարադրել է Ռասամի գլխավորած առաքելության համառոտ պատմությունը, որը սակայն պատմագիտական լուրջ արժեք չի ներ-կայացնում: Կամերոնի հետ բանտարյին կյանքի դառնությունները ճա-շակած Կ. Տ. Բեկը և ուղիղներ հրատարակել են հետաքրքրական հուշա-գրություններ և այլն:

Հողանդ ու Հոգիրի երկհատոր աշխատությունը<sup>30</sup> նվիրված է ան-գլիացիների զինված միջամտության պատմությանը: Նրանում մանրա-ման նկարագրված է Եթովպական ներխուժող բանակի կազմը, զորքերի ափհանումը Զովլա, նրանց ծավալած ուազմական և հետախուզական գործողությունները, Մագդալայի ճակատամարտը և այլն: Աշխարհա-գրագետ սպա Մարիսամի աշխատության<sup>31</sup> հիմնական բովանդակու-թյունը կաղմում է ներխուժող զորքերի գործողությունները և Զովլայից մինչև Մագդալա ձգվող երկրամասի նկարագրությունը<sup>32</sup>: Բլանֆորդը ուսումնասիրել է այդ երկրամասի ընդերքը և բուսական աշխարհը:

Տիմոթեոսի ուղեգրությունը բաղկացած է երկու բաժնից. առա-շինը վերնագրված է «Երկամեայ պանդխտութիւն ի Հապեշտան», որ-տեղ ժամանակագրական հաջորդականությամբ նկարագրված է նրա ուղևորությունը: Գրանցելով այն ամենը, ինչ տեսել ու լսել է, Տիմո-թեոսը նյութեր է կուտակել Ամհարայի քաղաքների ու գյուղերի, գյու-ղացիության վիճակի, հակաթեռորոսյան ապստամբությունների և այն իրադարձությունների վերաբերյալ, որոնք կապված են Տեսու Գորազեի, Վագշում Գորազեի, Տիգրեի մեծ իշխան Կասայի հետ և այլն: Երկրորդ բաժինը, որ վերնագրված է ռնկարագրի բարոյական, կրոնական և քա-ղաքական կենաց հապեշից», ունի երեք ենթարաժին, «Հապեշներուն

բնավլորության նկարագիրը», «Հապեշներում կրոնական նկարագիրը», «Հապեշստանի ներկա պատմությունն ու քաղաքական անցքերը», որոնց յում ի մի են բերված բազմազան նյութեր Ամհարայի վերաբերյալ: Առաջին ենթարաժնում նկարագրված են Ամհարայի բնակիչների առօրյա կյանքը, սովորությունները, բարքերը, նիստ ու կացը, ընտանեկան կյանքը: Երկրորդ ենթարաժնում ամբողջովին նվիրված է եթովպական եկեղեցուն և հոգևորականությանը: Երրորդ ենթարաժնում նյութեր են բերվում եթովպահայի «նախնական պատմության», Թեոդորոս Բ-ի և եկեղեցու հակամարտությունների, Եթովպահայի ժողովուրդների ու ցեղերի, նրանց լեզուների, հավատալիքների վերաբերյալ:

Հորմուզդ Ռասամի, Հոլլանդ ու Հոգիրի և մյուս հեղինակների հաղորդումների միջովկը կազմում են հյուսիս-արևելյան և հարավ-արևելյան եթովպահայում ժավալված իրադարձությունները, իսկ Տիմոթեոսը հաղորդում է Ամհարայում տիրող իրավիճակի վերաբերյալ: Նա համարյա չի խոսում կամ էլ երբեմն անցողակի հիշատակում է Ամհարայից դուրս տեղի ունեցած եղելությունների մասին:

Ինչպես Տիմոթեոսի, այնպես էլ այդ հեղինակների հաղորդումները կառուցված են բանավոր (նրանց տեսածներն ու լսածները) և գրավոր աղբյուրների հիման վրա: Հորմուզդ Ռասամը և Հենրի թլանկը լայնորեն օգտագործել են անգլիական հետախուզության նյութերը, Թեոդորոս Բ-ի հետ բանակցությունների արձանագրությունները, կողմերի միջև փոխանակված նամակները, արումա Սալամայի հաղորդումները, Հոլլանդ ու Հոգիրը և Մարիսամը՝ Անգլիայի և Հնդկաստանի արխիվներում պահպանվող նյութերը, ներխուժման մասնակցած տարբեր գնդերի օրագրերը, սպաների զեկուցագրերը, գրառումները: Տիմոթեոսի ուղեգրությունը շարադրված է գերազանցապես բանավոր, մասամբ էլ գրավոր աղբյուրների նյութերի հիման վրա:

Գրավոր աղբյուրներ օգտագործելու անհրաժեշտությունը ծագել է նրանից, որ Տիմոթեոսը ցանկացել է եթովպահիտական ուսումնասիրության տեսք տալ ուղեգրությանը: Նա, ինչպես ինքն է ասում, փորձել է ոչ միայն նկարագրել իր ուղևորությունը, այլև «գրի առնուլ... երկրին բարոյական, կրոնական և քաղաքական պատմությունը»: Այդ ժրագիրը, սակայն, չէր կարող նույնիսկ մոտավոր շափով հրագործվել միայն նրա տեսածի ու լսածի հիման վրա: Նա գրավոր աղբյուրներից փոխառությունները ծառայեցրել է սեփական դիտարկումների ամրապնդմանը և շարադրանքի հենքում նկատված բացերի վերացմանը:

Դրանք սակայն որպակ չեն կազմում և թեկուղ նվազագույն շափով չեն մթագնում Տիմոթեոսու-ուղեգրողի դեմքը:

Տիմոթեոսը շորս անգամ վկայակուել է ԺՈ դարավերջի հայ աշխարհագրագետ Ստեփաննոս-Գյումիկը Ագոնցի<sup>33</sup> Աշխարհագրությունը՝ ուղեգրության համար համարյա կարևորություն կամ նշանակություն չունեցող հարցերի (Եթովպիայում տարածված որդախտի, սողոմույան թագավորության ծագման, Տանա լճի և այլն) կապակցությամբ: Ուղեգրությունում օգտագործված են մի շարք փաստաթղթեր (Եսայի պատրիարքի կոնդակները, պետական քարտուղար Կալաբենդոնի, Եղիածոսի անգլիական հյուպատոսի տեղակալ Ստանլեյի և այլոց նամակները), որոնք լուս են սփռում Տիմոթեոսի ուղենորության հետ կապված այս կամ այն հարցի վրա: Տիմոթեոսը դիմել է նաև Աստվածաշնչին, մանավանդ այն դեպքերում, երբ խոսքը եթովպական եկեղեցու դավանության, ծեսերի և հոգևորականության մասին է: Դրանով էլ սպառվում է վկայակումած գրավոր աղբյուրների շարքը:

Հիմքեր կան կարծելու, որ Տիմոթեոսը ձեռքի տակ ունեցել և առանց համապատասխան տողատակի ծանոթագրության օգտագործել է նաև մի շարք այլ գրավոր աղբյուրներ: Պատմելով բուդդաների մասին նա ասում է. «Ճարմանալի է, որ... այսլավի եկող գնացող եվրոպացիք ... մինչև ցայսօր և ոչ մեկը խոսած ու գրած (բուդդայության մասին) է յուր ուղեգրության մեջ: Նա հազիվ թե այդ կարգի դիտողություն աներ, եթե ծանոթ լիներ որոշ եվրոպական աղբյուրների: Հավանական է, որ նրան անծանոթ չեն եղել Զեյմս Բրյուսի, Հենրի Սալտի այն ժամանակ լայնորեն տարածված աշխատությունները, սակայն դրանք, ավելի քան կեսդարյա հնություն ունենալով, չէին կարող, բացի ընդհանուր ընույթի տեղեկություններից, քիչ թե շատ կոնկրետ նյութեր մատակարարել ուղեգրությանը: Չի բացառվում, որ Տիմոթեոսն օգտվել է եվրոպական մամուլի այն հաղորդումներից, որ վերաբերում են Կամերոնի և մյուս եվրոպացիների արգելափակմանը: Ավարտելով ռԱնգլիացի հյուպատոսն ու անոր բանտարկությունը՝ ենթագլուխը, Տիմոթեոսը նշել է. «Այս լուրերը մենք երուսաղեմ եղած ժամանակնիս լրագիրներու մեջ կկարդայինք ստույգն անստուգին հետ, և երբեմն հանդերձ շափազանցություններով»: Հավանաբար վերոհիշյալ ենթագլխի հիմքում ընկած են լրագրային ստույգ համարված ամփոփագրերից քաղվածքներ:

Այն դեպքում, երբ գրավոր աղբյուրները ուղեգրությանը տվել են այս կամ այն շափով լրացուցիչ, օժանդակ նյութեր, բանավոր աղբյուրների նյութերը՝ Տիմոթեոսի տեսածներն ու լսածները (անձնական տպա-

Վորություններ, ականատեսների ու ականջալուրների պատմածներ, ժողովրդական զրուցներ ու առասպելներ և այլն) կազմում են նրա Հությունը:

Տիմոթեոսի ուղեգրության նյութերի գլխավոր աղբյուրը հասարակ ժողովրդն է: Ի տարբերություն «Եվրոպացի բարձրաստիճան» ճանապարհորդների, նշել է Տիմոթեոսը, «մեր դիրքն ավելի ժողովրդային ըլլալով, դյուրամերձ էինք ամենուն... և իրու բում տեղացի ծանոթացնք անոնց [եթովպացիների] ամեն բնավորությանց»: Ուղեգրությունում բերված են հասարակ մարդկանց հետ հանդիպումների, զրուցների վերաբերյալ բազմաթիվ փաստեր. Վոգերայում «երրեմն հարյուր, երրեմն ավելի անձինք» հատկապես կրօնավորներ, զրուցի էին նստում. Տիմոթեոսի հետ, թեևսայում, որտեղ նա զբաղվում էր «հոգեոր ու մարմնավոր բժշկությամբ», նրա մոտ հիվանդներ էին գալիս նույնիսկ հեռավոր վայրերից և այլն, և այլն: Ուղեգրությունը զգալի չափով պարտական է նաև Տիմոթեոսի հանդիպումներին ու զրուցներին Տեսութորազեի, Վագզում Գորազեի, Տիգրեի մեծ իշխան Կասայի, Զարամայի իշխանների, ու Հակոբի նախկին սան Միքայել վարդապետի և այլ աշխարհիկ ու եկեղեցական գործիչների հետ:

Թե ինչպիսի լրջությամբ և բարեխղճությամբ է Տիմոթեոսը վերաբերվում հաղորդած նյութերի հավաստիությանը, երևում է հետևյալ փաստերից. նա լսածը տեսածից տարբերում է նշելով. «Կ'ըսեն», «Կ'ըսուի», «Ինչպես իրենք Կ'ըսեն», «Ազ պատմեն թե», «Ինչպես որ կը զրուցվի», «Ինչ որ լսեցինք», «Ժողովրդական վկայություն է» և այլն: Նա լսածի հավաստիությունը կասկածի է ենթարկում կամ պատասխանատվությունն իրենից հեռացնում հետևյալ խոսքերով. «առանց երաշխավոր ըլլալու ճշտության», «կա ըսին իրենք, բայց մենք շտեսանք», «թեպետ առասպել մը պիտի թվի», «պահ մը կասկածի կը տանի», «թեպետ մենք լենք հավատացած», «դատողությունն ընթերցողաց կը թողումք», «հայտնի առասպել մը ըլլալուն ամենկին տարակույս չկա», և այլն:

Տիմոթեոսը հավաստում է, որ զանացել է «Ճիշտ տեղեկություններ», հաղորդել և հնարավորության սահմաններում ստուգել է ուրիշներից լսածները: Նա ասում է. «Մեր ծանոթություններն Ամհարա երկրին մեջ թափառած ժամանակնիս ստացած և շատերու համաձայն վկայությամբ և մեր հետաքրքիր հետազոտությամբ ստուգած, և պատմածնուս մեծ մասն ալ մեր անձին փորձով իմացած և այնպես ի գիր արձանացուցած ենք»: Նա մինչև անգամ լսածներից զանց է առել «շատ բաներ ու

դեպքեր», որոնք «բացակա ժողովրդոց վրայոք» էին և «ստուգիլը դըմ-վար էր»: Այնուամենայնիվ ուղեգրությունում կարելի է երբեմն հանդիպել այնպիսի անհեթեթությունների, ինչպիսին է Եթովպիայի «մարդաշուն» բնակիչներին վերաբերող տեղեկությունը: Տիմոթեոսն ինքն էլ, կարծես, որոշ շափով հավատացել է լսածին, որ տղամարդիկ «կես մարդ, կես շուն» են հարավյային Եթովպիայում:

Թանալոր աղբյուրների տարրեր բնույթի մեծաքանակ նյութերի անկաշկանդ օգտագործումը խոր կնիք է թողել Տիմոթեոսի ուղեգրության վրա: Նրանում կողք կողքի առկա են իրական-պատմական և ժողովրդական-վիպական տարրերը:

Տիմոթեոսը ձգտում է նմանվել միջնադարյան հայ մատենագիրներին, որոնք պատմական իրադարձությունները, նույնիսկ գիտական հարցերը շարադրել են գեղեցիկ ու պատկերավոր, բանարվեստի այն կանոնների համաձայն, որ մշակված էին վանական կրթության օջախներում: Նրանց երկերում հաճախ իրար հաջորդում են պատմականն ու ոչ պատմականը, իրականն ու առասպելականը: Միջնադարյան հայ մատենագրության ավանդույթներին հետևելու ձգտումից ժագում է ուղեգրության շարադրանքի գլխավոր յուրահատկությունը՝ իրադարձությունները ներկայացնելիս միահյուսել իրական-պատմական և ժողովրդական-վիպական տարրերը: Ուղեգրության այն հատվածները, որտեղ Տիմոթեոսը հաղորդում է սեփական աշխերով տեսածները, սեփական տպավորությունները հիմնականում իրական-պատմական են, իսկ ականջալուր իրադարձությունների և անցյալի մասին հաղորդումներում գերակշռում են ժողովրդական-վիպական տարրերը: Կան նաև այնպիսի հաղորդումներ, որոնցում առասպելները իմաստավորվում են ոբակս անցյալում կատարված եղելությունների իսկական պատմություն:

Այդ առումով բնութագրական է Եթովպիայի «Հրեշավոր թաղավորաց» պատմությունը, որի ներածականում Տիմոթեոսն ասում է. «Հապեշից ներկա քաղաքական պատմության ձեռք շղարկած, որ թեռդորոսի իշխանության ժամանակեն կսկսի, ավելորդ շեմ համարիր համառոտ տեղեկություն մը տալ հապեշից ազգային հին ավանդության մը վրա, որ իրենց նախնական պատմության կարևոր մեկ մասը համարված է. այն է Զանդո և Գրայն թագավորաց տիրապետությունը»: Ապա ավելացնում է, որ Եթովպացիները «Գրայնն հետո երրորդ հրեշավոր թագավոր կհամարին» Թեռդորոս Բ-ին: Իհարկե, անհեթեթ է

Զանդո-Գրայն-Թեոդորոս զուգորդումը, սակայն, այդ գլուխների ներքո մատուցվում են արժեքավոր նյութեր:

Զանդոյի առասպելը եթովպական բանավոր բանահյուսության հնագույն նմուշներից է<sup>34</sup>: Տիմոթեոսը, թեև իմացել է, որ այդ առասպելն առկա է նաև գրավոր աղբյուրներում (Զանդոյի «Վրայոք երկար պարագաներով գրվածք կան իրենց ազգային պատմության մեջ, ինչպես կըսեն իրենք»), սակայն գերադասել է գրի առնել ժողովրդի բերնից լսածը, և, հավանաբար, նրա վերապատմածն առասպելի ամհարական տարրերակն է: Դժվար է ստուգությամբ որոշել, թե ինչ շափով են պահպանված ավանդական բանահյուսության տարրերը, սակայն այն գաղափարական ընդհանուր բովանդակությամբ եթովպագետ Բուշի տարրերակին նմանվելով հանդերձ, նրանից տարրերվում է արտաքին որոշակի հատկանիշներով: Բուշի տարրերակում<sup>35</sup> շար ուժերի հավաքական կերպար վիշապ-օձը կողվում է Վայնաբա, իսկ բարի ուժերի մարդակերպ մարմնացումը՝ Անգարո, որը հանդես է գալիս որպես Սարա թագուհու հայրը և նրա նախորդն եթովպական գահի վրա: Վայնաբա վիշապ-օձն ապրում էր Աքսումի հարավակողմը գտնվող Տոմբեն գավառում, և երբ հայտնի է դառնում, որ այն դեպի Աքսում է շարժվում, Անգարոն քաղաքի բնակիչներին խոստանում է հրեշին սպանել, պայմանով, որ իրեն բարձրացնեն գահ: Նրանք համաձայնվում են: Անգարոն կախարդում է Աքսումի ճանապարհը, և այնտեղ թաղում երկաթի գործիքի կամ զենքի ձև ունեցող մի առարկա, որը կրակ է ժայթում վիշապի վրա: Վայնաբան բոցերի միջից անցնելով հասնում է Աքսում, սակայն այնտեղ էլ մահանում է ստացած վերքերից<sup>36</sup>:

Ժողովրդական ստեղծագործություն է Գրայնի առասպելը, որի պատմական հիմքը եթովպական ժողովուրդների պայքարն է Գրայն կամ Զախլիկ վերանվանված իմամ Ահմեդ ալ-Ղազիի հրոսակների դեմ: 1527—1549 թթ. ալ-Ղազին, հենվելով Կարմիր ծովի աֆրիկյան ափերում հաստաված թուրքական նվաճողների վրա, ոչնչացրել է այն տնտեսական ու մշակութային արժեքների զգալի մասը, որ Եթովպիայի ժողովուրդները ստեղծել էին դարերի ընթացքում: Նրա հռչակած սուլդր պատերազմից տարիներին կողոպտվեցին ու այրվեցին Դեբրա-Լիբանոսի, Լալիբելայի նշանավոր վանքերը, կոտորվեցին կամ բռնի կրոնափոխվեցին Հակիկ լճից մինչև Աքսում, Դեմքեա ընկած քաղաքների ու գյուղերի բնակիչները: Եթովպացիներին օգնության հասած «Ճերմակ մարդիկ» (ի դեպ պորտուգալացիներ, ոչ թե հույներ) բազմայա մարտերից հետո վերջ տվեցին ալ-Ղազիի ասպատակություններին: Այդ

պատմական եղելությունները, և նթարկվելով ավանդական վեպի համար սովորական փոխությունների և առասպելականացման, ծնունդ են տվել Գրայնի առասպելին, որի բազմաթիվ տարբերակներից մեկն է Տիմոթեոսի վերապատմածը:

Մինչ առասպելներն ունեն դիցաբանական նկարագիր և պարունակում են զգալի փոխառություններ, ժողովրդական վեպն ընդհանուր առմամբ ազգային ինքնուրույն ստեղծագործություն է, որի նյութը նշանավոր անձանց ու եղելությունների պատմությունն է: Այդպիսին է «Երրորդ հրեշտակոր թագավորի» կամ Կասա-Թեոդորոսի վեպը, որի միշտ շարք դրվագներն առկա են Տիմոթեոսի ուղեգործության մեջ:

Եթովպական ժողովուրդը, ինչպես նշել է Տիմոթեոսը, Թեոդորոս Բ-ին ռանմահ և յուր անձը և մարմինը գերբնական զորության տեր կհամարեր, որում համար կըսեին, թե ոչ սուր կրանի վրան, և ոչ գընտակ կդիպչի», և «Հավանական է որ քանի մը դար անցնելեն հետո առասպելյալ դյուցազուններու կարգն անցնի Թեոդորոսն ալ յուր քաջագործություններով»: Արդեն բերներերան շրջում էին նրա սիրագործությունները գովերգող երգեր ու պատումներ: Ժողովրդական վիպասանները տարբերություն չէին դնում իրականի և երևակայականի միջև, իսկ առասպելականն ու հրեշտակին դուր էին գալիս ինչպես վիպողին, այնպես էլ նրա ունկնդիրներին: Դժվար է ասել՝ Կասա-Թեոդորոսի մասին իրարից անջատ ստեղծված երգերի ու պատումների հարակցումով մի ամբողջական, միասնական վեպ գոյացել էր, թե ոչ Հավանարար ոչ, քանի որ դրանում որոշիչ դերը պատկանում է ժամանակին: Սակայն այն, ինչ Տիմոթեոսն է վերապատմել («Թեոդորոսի թագավորությունը», «Թեոդորոսի գովելի հատկությունները», «Թեոդորոսի բռնությունները» և այլն), մի բավական ամբողջական պատում է, որն ունի սկիզբ, զարգանում է և ավարտվում գլխավոր հերոսի՝ Թեոդորոս Բ-ի ինքնասպանությամբ: Ունեցել է Տիմոթեոսն արդյոք որևէ գրավոր աղբյուր Կասա-Թեոդորոսի վեպի համար, մեզ հայտնի չէ: Սակայն վեպի մի քանի դրվագները տարբեր ծավալով և տարբեր խմբագրությամբ գրի են առել նաև Վալդե-Մարիամը, Հենրի Բլանկը և ուրիշներ<sup>37</sup>, իսկ նույն դրվագի տարբերակների առկայությունը խոսում է այն մասին, որ Կասա-Թեոդորոսի վեպն ապրել, զարգացել է բերանացի և ինչպես այդ հեղինակները, այնպես էլ Տիմոթեոսն օգտվել են եթովպական բանավոր ստեղծագործության միանգամայն տարբեր ակումքներից:

Կասա-Թեոդորոսի վեպը, Եթովպակայի ֆեոդալական անցյալից ուազմաարկածախնդրական մի սովորական դրվագ հիշեցնելով հան-

դերձ, ոմի պատմական հիմք և գաղափարական նպատակասլացություն Նրա միջավայրը պատմական է (Ծթովպիայի ֆեռդալական հասարակությունը), պատմական են Նրա գործող անձերը (Կասա-Թեոդորոս, Ռաս Ալի, Վազգարո Մանան, արունա Սալամա, Կամերոն և այլն), և պատմաքաղաքական է նրա բովանդակությունը (սկզբում՝ պարբար գալլա ֆեռդալների կեղեքիլ լժի, հետագայում՝ օտար զավթիչների ներթափանցման դեմ): Վեպի հերոսներից յուրաքանչյուրը հավաքական կերպար է (Ռաս Ալին՝ գալլա ֆեռդալների, արունա Սալաման՝ կղերի, Կամերոնը՝ օտար զավթիչների և այլն) և, ինչպես յուրաքանչյուր ժողովրդական ստեղծագործության մեջ, նրանց գաղափարականացումը տրված է արարքների շափաղանցումով՝ Վեպում տեղ է տրված և Ամհարայի կեղեքված, ճնշված գյուղացիությանը, որը, համախմբվելով Կասա-Թեոդորոսի շուրջը, պարբարում է գալլա ֆեռդալների լժից ազատագրվելու համար:

Տիմոթեոսի ուղեգրությունում կան բազմաթիվ մանրապատումներ, զրույցների, առասպեկների բեկորներ (գուշակություններ Կասա-Թեոդորոսի և Վագզում Գորազեի մասին, Տեսու Գորազեի և Վագզում Գորազեի մենամարտը և այլն), հեթանոսական անցյալից ժառանգված հավատալիքներ և այլ ժողովրդական-վիպական նյութեր:

Տիմոթեոսի ուղեգրության իրական-պատմական նյութերը հիմնականում վերաբերում են սոցիալական, տնտեսական և քաղաքական այն իրավիճակին, որ 1867—1869 թթ. տիրում էր Ամհարայում: Սակայն շտիրապետելով պատմություն հորինելու վարպետությանը, նա արժեքավոր այդ նյութերը մատուցել է բավական խառը և համարյա անսիստեմ: Նա հաճախ պատմում է թոփշներով՝ մեկ անցյալի մասին, մեկ ներկայի, մեկ գյուղացիների, մեկ եկեղեցական գործերի, հարկերի մասին խոսքը շավարտած վերադառնում է կիսատ թողած մի այլ հարցի, երբեմն էլ այլ բառերով կրկնում է այն, ինչ արդեն ասվել էր: Այդ կարգի ցրվածությունը խլացնում է նյութի հնչեղությունը, դժվարացնելով ուղեգրության օգտագործումը: Նրա նյութերի տեսակարար կշիռը ցույց տալու համար անհրաժեշտ է դրանք համախմբել և իմաստավորել համապատասխան հարցերի շրջանակներում:

Ուղեգրության տարրեր մասերում ցրված են զգալի քանակությամբ նյութեր, որոնք հարստացնում են մեր պատմագիտական իմացություններն ու փաստական գիտելիքներն ամհարական գյուղի ու քաղաքի, քաղաքային բնակիչների ու գյուղացիության և այլ բազմաթիվ հարցերի վերաբերյալ:

Ամհարայի առավել գարգացած շրջաններում վաղուց սկսվել էր աշխատանքի հասարակական բաժանումը Առևտուրը և արհեստները, անշատվելով գյուղատնտեսությունից, կենտրոնանում էին նոր ձևավորվող քաղաքներում, որտեղ հանգրվանում էին առևտրական քարավանները, կազմակերպվում էին տոնավաճառները և այլն։ Սակայն ապստամբությունները, ներքին պատերազմները, գերեվարությունները, ասսպատակությունները բացասարար էին անդրադառնում ֆեոդալական հասրակության առաջընթացի, արտադրողական ուժերի զարգացման վրա։ Տիմոթեոսի նյութերը խոսում են այն մասին, որ Ամհարայի քաղաքները, բացառությամբ մի քանիսի, թույլ դարձացած տնտեսական կենտրոններ էին, նրանց բնակչության զրադարձը մեջ գերակշիռ տեղ էր գրավում երկրագործությունը, գենևս սուր հակադրություն շկար քաղաքի և գյուղի միջև։ Սակայն բնակչության կազմով, արտադրական և փոխանակային հարաբերություններով, Ամհարայի ֆեոդալական քաղաքը հանդիսանում էր ավելի բարդ սոցիալական կառուցվածք ունեցող և նոր ներհակություններ պարփակող մի ամբողջություն։

Ուղեգրությունում առանձնապես լայն տեղ են գրավում այն նյութերը, որոնք բնութագրում են Ամհարայի բնակչության ճնշող մեծամասնությունը կազմող աշխատավոր գյուղացիության վիճակը։ Գյուղերը տեղադրված էին դժվարամատչելի վայրերում՝ խոր ձորերում կամ բարձրադիր լեռնադաշտերում, ռվախնալով ապստամբներեն և գողերեն։ Որոշ վայրերում տարին երեք անգամ վարուցանք էր արվում, սակայն գյուղացիներն ապրում էին հետին թշվառության մեջ։ Նրանց քրտնաշան աշխատանքի արդյունքը գնում-հաշում էր հարկերի ու պարհակների, կողոպուտի ու թալանի կաթսայում։ Դյուլացիության հաշվին էին ապրում ոչ միայն իշխանները, ֆեոդալ-կալվածատերերը, պետական զանազան մակարույծները, այլև թեոդորոս Բ-ի մեծաթիվ բանակը։

Տիմոթեոսը հետաքրքրական տեղեկություններ է հաղորդում դրամով ու մթերքով գանձվող հարկերի շափերի, հարկադրման ու հարկագնաման միջոցների, հարկը շվճարող գյուղացիների նկատմամբ գործադրվող պատժամիջոցների և, վերջապես, ամհարական գյուղը քայլայող կեղեգման ու ճնշման այլ ձևերի մասին։ Թշվառության մատնելված գյուղացիներն ամբողջ ընտանիքով ծառայության էին մտնում բանակում, տղամարդիկ կովում էին, իսկ ուկանալը անոնց հացն ու կերակուրն» էին պատրաստում, «տղայք ալ զենքերն ու վահաննն» էին կրում կամ կեր հավաքում գրաստների համար։ Սակայն վերջին տարիներին գյուղերում այնքան քիչ էին վարուցանք անում, որ զինվորները ուտելու

բան չէին գտնում և խոշոր խմբերով անցնում էին Թեղողորս թ-ի թըշ-նամիների կողմը:

Ամհարայի քաղաքային բնակչության հիմնական զանգվածը կազմում էր ստորին խավը: Մեծ թվով քաղաքացիներ զբաղվում էին հողագործությամբ՝ մշակում էին քաղաքում կամ նրա մերձակայքում գտնվող արտերը, այդիները, պարտեղները: Նրանք վերամշակում էին երկրագործական մթերքները, մեղրից ստանում էին մեղրագինի, որոշ բուլսերից՝ ձեթ, օճառ, դեղամիջոցներ, կորեկից՝ օղի, կաթից՝ մածում, սակայն չգիտեին պանիր պատրաստելու ձեզ: Արհեստագորների (սակերիշ, դերձակ, բրուտագործ, աղեղագործ և այլն) զգալի մասը կիսով շափ երկրագործ, անասնապահ կամ որսորդ էր, արհեստով զբաղվում էր տարվա որոշ ամիսներին, կատարելով սեզոնային պատվիրատուի կամ պատահական գնորդի պահանջարկը: Խոշոր թիվ էին կազմում նաև մանր առևտունականները, որոնք զբաղվում էին սննդամթերքի, մրգեղենի, բանջարեղենի, խմիչքեղենի և երկրագործական ու անասնապահական այլ ապրանքների մանրածախ առևտուվ:

Անհամեմատ ավելի ստվարաթիվ էին և մշտապես կարիքի մեջ էին գտնվում օրավարձով աշխատող սեագործ բանվորները, որոնց ծառայությունից օգտվում էին ինչպես ֆեռդալները, այնպես էլ բարեկեցիկ քաղաքացիները: Այդ ընշագուրկ զանգվածն այնքան մեծ էր և աշխատավարձն այնքան ցածր, որ յուրաքանչյուր քիչ թե շատ ոմնեոր քաղաքացի պահում էր երկու սեռի տասնյակ ծառայողներ: Քաղաքային բնակչության ամենազբար մասը, զուրկ լինելով ամեն ինչից, անգամ տուն ու տեղից և պատահական աշխատանքից, զբաղվում էր մուրացկանությամբ:

Տիմոթեոսը ճանաշողական նշանակություն ունեցող նյութեր ու տեղեկություններ է հաղորդում քաղաքների բնակչության սոցիալական սանդուղքի վերին աստիճանները կազմող իշխանների, ֆեռդալ-կալվածատերերի, վիճականության և, հատկապես, հոգեորականության մասին, դասեր, որոնց ճոխ ու փարթամ կյանքի աղբյուրը հողային սեփականությունը, հարկերը և թալանն էին:

Տիմոթեոսի մի շարք հաղորդումներից երեսում է, որ Ամհարայում օտար չի եղել քաղաքային դասերի պայքարը հանուն ինքնավարության՝ ֆեռդալական վերնախավի իշխանության դեմ և, որ նշանակալից է, քաղաքացիները որոշ տեղերում ձեռք էին բերել հարկային, դատական և ինքնավարական այլ ֆունկցիաներ:

Ամհարական քաղաքները, գտնվելով պետական ենթակայության

ներքո, կառավարվում էին արքոնիքից նշանակված կառավարիլ-իշ-խանների («գլխավորի») կողմից: Կառավարիլը նշանակվում էր, ինչպես նշել է Տիմոթեոսը, «ամապատասխան քաղաքի «բնակչաց խընդ-րանոք», ըստ որում նրանք իրավունք ունեին ընդունել կամ մերժել առաջարկվող թեկնածությունը: Հաճախ քաղաքացիները, «երկու կողմի» բաժանվելով, պաշտպանում էին երկու տարրեր թեկնածուներ, երբեմն էլ որուրը մեկանց միաբանելով նոր նշանակված կառավարչին կամ ոզգողությանց ու գեղությանց» պատճառ դարձած նախկին կառավարչին հալածում էին «երկիրեն դուրս»: Անկասկած, կառավարչի նշանակման հարցում որոշակի դեր էր կատարում ցեղակցության ազդակը: Ցեղային ավագանու ներկայացուցիչների մասնակցությունը քաղաքի վարչատնտեսական կառավարմանը պայմանավորված էր քաղաքային դասերի տնտեսական դերի աճով:

Ամենարական քաղաքի ինքնավարության գործում կարևոր դեր ուներ ծերերի խորհուրդը: Նրա անդամները նշանակվում էին ազդեցիկ ու բարեկեցիկ հասուն տարիքի քաղաքացիներից և, որ ամենազլխավորն է, նրանց նշանակումը կատարվում էր ոչ թե պետական իշխանությունների, այլ քաղաքացիների կողմից: Ծերերի խորհուրդները զբաղվում էին համաքաղաքացիների միջև ծագած ամենատարրեր վեճերի կարգավորումով, «այն բոլոր դատական գործերով», որոնցում չկարարյան հարց<sup>38</sup>: Սակայն ծերերի խորհուրդները հաշտարար դատավորի գերից բացի կատարում էին նաև այլ ֆունկցիաներ, որոնց մասին Տիմոթեոսը հաղորդում է արժեքավոր տեղեկություններ: Նա հավաստում է, որ խորհուրդները կարևոր դեր էին կատարում պետական հարկերը հավաքելու վերաբերյալ թագավորական հրամանի կատարման գործում<sup>39</sup>, իսկ պատերազմի ժամանակ նրանք էին բանակցում թշնամու հետ, նրանց որոշումով էր քաղաքն անձնատուր լինում կամ շարունակում կոփվը և այլն<sup>40</sup>:

Քաղաքային ինքնավարության ցուցանիշ էր նաև քաղաքացիական դատարանի առկայությունը: Դատերը լսվում էին հրապարակով, ներկա էին լինում ամբաստանյալը, ամբաստանողը, դատավորը կամ դանիան և քաղաքացիները: Եթե դատավորը, որն ընտրվում էր տեղում հավաքած բազմության միջից, չէր կարողանում «կողմերն իրավախոհ ընել», հաշտեցնել, ապա դատը հղվում էր «մեծ իշխանին կամ թագավորին ատյանը»: Իհարկե, քաղաքացիական դատարանը ծառայում էր իշխող դասերի շահերին, սակայն քաղաքի զարգացմանն համընթաց հաշվի էին առնվում նաև քաղաքային վերնախավի շահերը, և մասմար

սահման էր դրվում իշխողների կամայականություններին բնակչության ստորին խավերի նկատմամբ։ Ամհարայում ներքին մաքսատների առկայությունը ևս խոսում է քաղաքային ինքնավարության մասին։

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում ուղեգրության այն նյութերը, որ պատմում են 1867—1868 թթ. Ամհարայում տեղի ունեցած հակաթեոդրոսյան ապստամբությունների, այդ շարժումների ղեկավար Տեսու Գորազեի, Վագշում Գորազեի և այլ պատմական դեմքերի մասին։

Թեոդրոս Բ-ի հզորության թուլացմանն զուգընթաց ապստամբ իշխանները բաժան-բաժան էին արել Ամհարան։ Տեսու Գորազեն տիրում էր Վոլկահիդում և Վոգերայում, Վագշում Գորազեն՝ Լաստայում, Դաճազմալ Էնինեն՝ Թելեսայում և այլն։ Անգլիացիների ներխուժումից հետո, երբ թեոդրոս Բ-ը ստիպված Մագդալա քաշվեց, ապստամբ իշխանները զենքերը դարձրին միմյանց դեմ։ Վագշում Գորազեն հաղթեց նախ Էնինեին, ապա Տեսու Գորազեին և, տիրելով ամբողջ Ամհարային, իրեն հոշակեց Եթովպիայի թագավոր Տեկլա Գիորգիս (1868—1871) անվանումով։

Այդ պատմական դեմքերի և իրադարձությունների վերաբերյալ Տիմոթեոսը հաղորդում է մեծ մասամբ ականատեսի վկայություններ։ Առանձնապես հետաքրքրական են նրա հաղորդումները Զելգայի գավառի և Զար-ամբայի շուրջը ծավալված ուազմական գործողությունների մասին։ Նա բավական մանրամասն նկարագրել (հավանաբար միակ նկարագրությունը) է Զար-ամբայի տեղագրությունը, նրա ռազմական նշանակությունն ու պաշտպանական միջոցները, ներքին կյանքն ու Շառավարության եղանակը, պաշտպանման ու Տեսու Գորազեի զորքերի ներխուժումը, վերջինիս հանդիսավոր մուտքը Զար-ամբա և այլն։ Տիմոթեոսը գրի է առել Տեսու Գորազեի հետ ունեցած բազմաթիվ հանդիպումներն ու զրույցները, նրա նվաճումներն ու հերոսական վախճանը։

Տիմոթեոսը, գտնվելով Վագշում Գորազեի զորակայանում, հանդիպումներ ու զրույցներ է ունեցել ոլ միայն նրա, այլև նրա մերձավորների հետ, և կուտակել է բավական հարուստ նյութ։ Նա նկարագրել է Վագշում Գորազեին («նիհար և ճողած մարդ մըն էր, բայց մտոք զորավոր, հնարագետ և սրտով արի»), նրա զորքերին («միհստ քաշ, ճարպիկ ու պատերազմասեր» համաերկրացիներին), տեղեկություններ հաղորդել նրա մղած կոփկների ու նվաճումների, եկեղեցականության հետ ունեցած դժվարությունների մասին, բնութագրել նրա հարկային քաղաքականությունը, արտաքին կապերը, քաղաքական նա-

իսակրությունները։ Տիմոթեոսը վկայում է, որ նա սկզբում օգնել է անգլիացիներին, սակայն թագավոր հոչակվելուց հետո հրաժարվել է գործիք դառնալ նրանց ձեռքում և, ձգտելով պաշտպանել Թեոդորոս թշու ստեղծած պետությունը, զենքերը դարձել է կենտրոնախույս ֆեոդալների դեմ։ Այդ վկայությունները կարող են նոր լույս սփռել Վագջում Գորազի կամ Տեկլա Գիորգիսի կենսագրության վրա, որի մասին մեզ հասել են շատ հակասական կարծիքներ։

Ուղեգրությունում կան նաև Տիգրեհ մեծ իշխան Կասայի կամ Եթովպիհայի ապագա Յոհաննես Դ թագավորի (1871—1889) անձի, գործի և անգլիացիների հետ նրա կապերի, Եթովպական արքունիքի և Եկեղեցու հակամարտությունների, աշխարհիկ ու հոգևոր ականավոր ֆեոդալների վարքագծի, Եթովպիհայի ֆեոդալական միջավայրի, սոցիալական հարաբերությունների, տնտեսական կյանքի և այլ բազմաթիվ հարցերի վերաբերյալ իրական-պատմական նյութերով կառուցված հաղորդումներ։

Այսպիսով, իրական-պատմական և ժողովրդական-վիպական նյութերի առկայության պայմաններում, Տիմոթեոսի ուղեգրությունը ներկայացնում է և պատմագիտական, և գրական արժեքը Նրա գրական ամենապիշտավոր արժեքը կայանում է նրանում, որ Տիմոթեոսը լայնորեն օգտվել է ամհարական բանավոր բանահյուսությունից, գրի առել ժողովրդական ստեղծագործության նմուշներ։ Ուղեգրության պատմագիտական արժեքը պայմանավորված է այն խորքով ու լայնքով, որով ընկալվում է Ամհարայում տիրող սոցիալական, տնտեսական և քաղաքական իրավիճակը՝ Թեոդորոս Բ-ի վերջին տարիներին։

Տիմոթեոսը, որպես մտածող, հոգևոր դասի ներկայացուցիչ է, և դա որոշում է նրա պատմագիլիսոփայությունը։ Նրա աշխարհայեցողության հիմքը կազմում է «բանն» (logos) աստվածային նախախնամությունը («Ի սկզբանէ էր բանն եւ Աստուած էր բանն»)։ Աշխարհը ստեղծվել է աստծու կողմից և ամեն ինչ ենթարկվում է նրա գերբնական զորությանը։ Աստծու կամքով են կատարվում բնական երեվույթները՝ երկրաշարժ, կայծակ, մահ, սով, առատություն և այլն, և աստվածային կամ «վերին նախախնամությունն» է շարժում մարդկային հասարակության պատմության անիվը, հասարակական կյանքում պահպանում կամ խանգարում կարգ ու կանոնը, բռնկում կամ հանգնում պատերազմները, գահ բարձրացնում կամ գահընկեց անում արքաներին, վարձատրում կամ պատժում մարդկանց և այլն։ Մարդկային

կյանքը լոկ նախադուռն է դեպի ոչ երկրային, նլութական աշխարհից վեր գտնվող «Հանդերձյալ աշխարհին», որի հավիտենական երանությանը կարող են արժանի լինել միայն «ճշմարիտ քրիստոնյաները»։ Սակայն պետք է միաժամանակ նկատել, որ Տիմոթեոսը հոգմորականության այն ներկայացուցիչներից էր, որոնք արդեն համարյա տեսնում էին, որ գիտության զարգացման շնորհիվ այդ կրոնական դոգմաներն աստիճանաբար կորցնում են միջնադարյան վառ գույները, և որ հասարակական միտքը ձգտում է ավելի ու ավելի խորամուխ լինել ոեալ աշխարհի ու մարդկային հարաբերությունների մեջ։

Տիմոթեոսը թեև կույր հավատով լի ընդունում դոգմաները և, որ առավել կարեոր է, դրանց նկատմամբ հաճախ ցուցաբերում է կասկածու անվտահություն<sup>41</sup>, սակայն հիմնականում հավատարիմ է կրոնական աշխարհայեցողությանը և քրիստոնեական բարոյականության ըսկը զրոյնքներին, որոնցով էլ պայմանավորված են նրա սուբյեկտիվ գնահատականները եթովպական ժողովուրդների բարոյական վարքագծից Անգլիայի գաղութային քաղաքականության և այլ հարցերի վերաբերյալ։

Տիմոթեոսը գտնում է, որ Եթովպահայում քրիստոնեությունն աղճատվել է, և եկեղեցին այլևս ի վիճակի չէ կատարելու իր քրիստոնեական առաքելությունը (այդ մտքերը կարմիր թելի նման անցնում են ամրող ուղեգրության միջով): Եթովպական եկեղեցու գլուխը՝ ամունա Սալաման ընշաքաղց է, խարդախ և դավադիր, նրա ստորադասները տղետ են, ծուլ, անառակ և սիրենց անարժան վարքով ու ընթացքով անպատիվ եղած են ժողովրդոց առջև։ Գողովթյունը, ստախոսությունը և խարերայությունը» նրանց «երկրորդ բնությունն» է; Ինչպես եկեղեցականները, այնպես էլ աշխարհականները՝ «մեծամեծներից» մինչև հասարակ մարդիկ չեն հնազանդվում «քրիստոնեական օրինաց», անձնատուր են եղել անցավոր աշխարհի վայելքներին և ապրում են զեխ ու անբարոյական կյանքով։ Տիմոթեոսն ասում է. «Եթե կուզե մեկը շրջեղեղեն առաջ մարդկային ցեղի բարուց ապականյալ վիճակը երևակայիլ իբր ի պատկերի, թող հապեցից երկիրը երթա, ուր կարծես թե քրիստոնեության անունը ի նախտինս սուրբ ավետարանին կհիշվի»։

Սոցիալական աղետների պատճառը որոնելով մարդկանց հոգեկան պայմանների, մոլորությունների և բարոյական արատների մեջ, Տիմոթեոսը բավական երկար կանգ է առել բարքերի անկման (անհյուրընկալություն, ապերախտություն, գողովթյուն, շնություն, պոռնկություն, մարդասպանություն և այլն) նկարագրության վրա, սակայն ամենազարմանալին այն է, որ նա լրջորեն փորձում է ցույց տալ, որ այդ

արատներով տառապում է Եթովպիայի ողջ քրիստոնյա բնակչությունը, և «քրիստոնեական օրինաց» ճանապարհից խոտորելու հետևանք են մեկը մյուսին հաջորդող ապստամբությունները, Տիմոթեոսի ասելով, ժողովուրդը փոխանակ Թեոդորոս Բ-ին ճնազանդելու և «օրհնություններով ու զոհողություններով» իր երախտագիտությունը հայտնելու նրան ինչպես որդին հորը, ձգտում է «աթոռեն վար առնուլ ոինքը», իսկ վերջինս ստիպված է «ակամա բռնություն ձեռք առնուլ և անոնց հետ ոչ ևս իրրե հայր, այլ իրրե անաշառ դատավոր և իրրե դահին վարվիլ»: Նրա գյուղացիները շտոկալով ծանր հարկերին ու կեղեքուններին ապստամբություն են բարձրացնում, ապա դա Թեոդորոս Բ-ի նկատմամբ նրանց «ապերախտության» արտահայտությունն է: Հանուն «քրիստոնեական օրինաց», Տիմոթեոսն արդարացնում է ոչ միայն Թեոդորոս Բ-ի բռնությունները, այլև Անգլիայի ներխուժումը Եթովպիա:

Տիմոթեոսն Անգլիան համարում է «կրոնական ազատության ախոյան» և պաշտպանում է նրա գաղութատիրական շահախնդրությունները, դրանցում պարզամտորեն տեսնելով քրիստոնեության գոյատեման երաշխիքը Եթովպիայում: Նա հավատացած է, որ այլակրոն ու անկրոն ժողովուրդների օվկիանոսում որպես միայնակ կղզի ընկած Եթովպիայում կործանման օրհասական վտանգ է սպառնում քրիստոնեությանը, իսկ Եթովպական եկեղեցին այնքան է հեղինակադրկվել, որ անընդունակ է որևէ դեր կատարել այդ վտանգը հեռացնելու գործում: Անզոր է նաև թագավորը, որը խճճվել է ապստամբությունների մեջ: Այդ դեպքում ո՞ւմ օգնությանը ապավինել երկիրը քառսային վիճակից դուրս բերելու և «քրիստոնեական օրինաց» համեմատ կառավարելու համար: Տիմոթեոսը որպես փրկության լաստ մատնացուց է անում Անգլիային, և շանք լի խնայում նրան առաքինության բոլոր գույներով զարդարելու համար: Նա հավատացած է, որ «անգլիացիները հավատու դեմ բնավ շեն պատերազմիր, իրենց կրոնական սկրդրումն է ազատությունը, վասն որո շեն հաճիր բնավ որևէ ազգի մը կրոնքը բռնաբարել և այլն: Մոռանալով անգլիական ոինքամբ միջամբառությունը և դրա ծանր հետևանքները, Տիմոթեոսն ասում է, որ անգլիական Շտերությունը բռնությամբ գործ տեսնել շուգեր, այլ ինչ որ կընե սիրով և իմաստությամբ է»: Նրա կարծիքով, անգլիացիներն Եթովպիա են մտել ռառանց աշխարհակալություն ընելու մտօքա և նրանց «անշահասէր ընթացքը» կարող է նպաստել երկրի բարդավաճմանը:

Եզրակացնենք. Միմոթեսի ուղեգրությունը ուրույն տեղ է գրավում եթովպիշիայի նոր պատմության օտար աղբյուրների ընտանիքում։ Նրա Հաղորդումներն էապես վերաբերում են Հորմուգդ Ռասամի, Հենրի Բլանկի, Հոլլանդ ու Հոգիրի և մյուս հեղինակների տեսադաշտից համարյա ամբողջովին դուրս մնացած Ամհարայի ներքին կյանքին և, որ ամենակարևորն է, նոր փաստերով, երբեմն էլ արդին հայտնի փաստերի նոր մեկնարանությամբ հարստացնում են մեր պատկերացումն այն պատմական իրադարձությունների մասին, որոնցով նշանավորվեց անգլիացիների եթովպիշա ներխուժումը և Թեոդորոս Բ-ի պետության կործանումը Ամհարայում։ Եթովպիշայի 1860-ական թվականների պատմության հարցերն ուսումնասիրողները շնորհանդես անցնել Տիմոթեսի ուղեգրության կողքով։

## О. ТОПУЗЯН

### ПУТЕВЫЕ ЗАМЕТКИ ТИМОТЕОСА САПРИЧЯНА КАК ИСТОЧНИК ПО ИСТОРИИ ЭФИОПИИ XIX В.

#### Резюме

Благодаря многовековым армяно-эфиопским традиционным связям возникли ценные армянские источники об Эфиопии, которые, однако, в силу своей недостаточной изученности еще мало используются в науке. Один из таких источников—пространные путевые записи Тимотеоса (Тимофея) Сапричяна (1822—1909 гг.) «Двухлетнее странствие по Абисинии». Записи Тимотеоса представляют огромный интерес для эфиопистики. Однако имеющиеся переводы этого произведения на французский и немецкий языки не привлекли к себе внимание ученых; их заслонили путевые записи таких авторов, как Ормузд Рассам, Генри Бланк, Холанд и Хозиер, изданные одновременно с переводами работы Тимотеоса. Между тем труд Тимотеоса выгодно отличается от трудов названных авторов более широким хронологическим и географическим охватом материала. В центре сообщений Тимотеоса—описание исторических событий, ознаменовавших падение государства, созданного царем Эфиопии Теодоросом II. Посещение Тимотеосом Эфиопии совпало с периодом английской экспансии в эту страну в 1867—1868 гг. Ему было поручено вручить Теодоросу II (1855—1868 гг.) послание—ходатайство армянского патриарха в Иерусалиме Исаи (оно было написано по предложению

английского Форин Офиса) об освобождении задержанного в Магдале английского консула Камерона и некоторых его сотрудников. Попав в плен к восставшим феодалам, Тимотеос почти два года (1867—1869 гг.) жил в Амхаре. Он собрал самые различные по характеру сведения об этом kraе, которые и составляют содержание его путевых записей.

Отличительной их чертой является то, что в них сочетаются реально-исторические и народно-эпические материалы. Исторически достоверно написаны те разделы, где автор выступает в качестве очевидца и излагает личные впечатления. В сведениях о минувших событиях и деятелях доминируют народные предания. Характер изложения порой напоминает исторический роман. В силу этого труд Тимотеоса наряду с историографической представляет также литературную ценность.

Его литературное достоинство заключается в том, что Тимотеос широко использовал устное народное творчество Эфиопии. Ценны его записи легенды о Зандо, Гране и, особенно, эпизодов из народного сказания о Касе-Теодоросе, отдельные части которого в других редакциях приводятся в хрониках Уольде-Марьяма, Зэннэбэ. Неизвестно, имел ли Тимотеос под рукой письменные источники об этом сказании. Однако существование различных вариантов одного и того же сюжета свидетельствует о том, что сказание о Касе-Теодоросе бытовало в устной форме и авторы пользовались разными источниками. Однако главное достоинство записей Тимотеоса, безусловно, заключается в сведениях исторического характера. Его сообщения о неизвестных ранее исторических событиях или новое толкование уже известных ранее событий обогащают наши знания о последних годах правления Теодороса II в Амхаре. Особую ценность представляют описания исторических событий, связанных с Тасоу Гобэзэ, Вагшумом Гобэзэ, ставшим впоследствии императором Тэкле Гийоргисом, данные о Касе, будущем императоре Иоханнесе IV.

В записях Тимотеоса, слабо владевшего искусством изложения истории, отсутствует систематизация материала, полнота охвата. Такие важные стороны жизни, как налоговое обложение, деятельность советов старейшин, борьба городских сословий против феодалов и другие, почти совсем не затронуты. Тимотеос принадлежал к духовному сословию. Однако, будучи довольно способным и развитым человеком (знал несколько языков, в их числе древнеэфиопский, читал европейскую литературу и пр.), он не всегда принимал религиозные догмы, часто выражал свое сомнение и недоверие к ним. Вместе с тем он оставался верным религиозному мировоззрению и тем нормам морали и права, на которых зиждилось феодальное общество.

1. «Երկամեայ պանդիտութիւն ի Հապէշստան, կամ բարոյական, քաղաքական և կրօնական վարք Հապէշից», յօրինեց Տիմոթէոս Սափրիշեան Կոստանդնուպոլիսեցի, ի միաբանութենէ ո. Երուաղէմի, առաջին և երկրորդ գիրք, Երուաղէմ, ի տպարանէ առաքելական Աթոռոյ ո. Յակովը Երանց, 1871:

2 Deux ans de séjour en Abyssinie ou vie morale, politique et religieuse des Abyssintens par le R. P. Dimothéos, légat de sa Béatitude le patriarche arménien auprès de Théodore roi d'Abyssinie, traduit par ordre de sa Béatitude Monseigneur Issale, patriarche arménien de Jérusalem. Typographie arménienne du couvent de Saint-Jacques, Jérusalem, 1871.

Zwei Jahre in Abyssinien oder Schilderung der Sitten und des staatlichen und religiösen Lebens der Abyssinter von Sr. Hochw. Pater Timotheus, Legat Sr. Eminenz der Armenischen Patriarchen bei König Theodor von Abyssinien. Armenische Bibliothek. Herausgegeben von Abgar Joannissiany, Leipzig.

Ուղեգործյան անգերեն թարգմանությունը, որը նվեր է ուղարկվել Անգլիայի Վիկարյա թագուհուն, մնացել է անտիպալ:

3 Մի շարք հեղինակներ անգրադաձել են Տիմոթեոսի ոչ թե ուղեգործյանը, այլ նրա ուղեւորությանը: Նրանք պարզապես վերաշարադրել են ուղեգործյան այն մասերը, որ նրանց թվացել է կարմոր Հայ-Եթովպական Հարաբերությունների տեսանկյունից: Դրանք են 3. Հ. Մաթեոսը («Ֆերիսապատի» Խաչակ եպիսկոպոսի եւ արքանապատի) Տիմոթէոս Վարդապետի Հապէշստան ուղեւորութեան պատմութիւնը, տե՛ս, «Մասիս», 4. Պոլիս, 1869, № 182, 1870, № 407: Որոշ հապավումներով պրտառպվել է էջմիածնի «Արարատ» ամսագրում, տե՛ս 1869, № 6, էջ 148—149, 1870, № 9, էջ 183—185): Մինաս Խուրիզանը (Ժամանակակից պատմութիւն 1866—1878, հատոր 9, Վենետիկ, 1907, էջ 46): Մաղամիա Օրմանյանը (Ազգապատում, մասն երրորդ, 1808 տարին մինչև 1909, տպարան սրբոյ Հակոբյանց՝ Երուաղեմ, 1927, էջ 4123—4128): Տ. Հ. Թ. Մաթալանյանը (Պատմություն Երուաղեմի, երրորդ հատոր, տպարան սրբոյ Հակոբյանց, Երուաղեմ, 1931, էջ 1122—1155): Բյուզանդ Եղիշյանը (Հայ կաթոլիկ և պահտարանական Հարանվանությանց բաժանումը Ժի դարուն, Անթիլիաս—Լիբանան, 1971, էջ 303—304) և ուրիշներ:

4 Հորմուգդ Ռասամը ծագումով հայ էր («Սիոն», Երուաղեմ, 1867, № 4, էջ 49): Այդ հանգամանքը հավանաբար ոլ անկարենոր գեր է կատարել Եթովպիա ուղարկվող այց պատվիրակության գուփն նշանակվելու գործում: Լինելով ոչ միայն քաղաքական գործիւ, այլև գիտնական, Ռասամը 1897 թ. Թոփրաք-Կալեսմ (Վան) հնագիտական պեղումներ է կատարել անգլիական հյուպատոս Կլեյտոնի և ամերիկյան միսիոններ Ռեյնոլդսի հետ: Նրա գրչին են պատկանում մի շարք գիտական աշխատություններ:

5 Տիմոթեոսի ուղեւորությունը մեծ հետաքրքրություն է առաջացրել ինչպես հայ, այնպես էլ օտար քաջաններում: Երուաղեմի Հայոց վանքի պաշտոնաթիրք «Սիոն» ամսագրում նրա ուղեւորության վերաբերյալ հրապարակված յուրաքանչյուր նյութ անհապաղ արձագանք էր գտնում զրեթե բոլոր հայկական կարենոր թերթերում: Ստորև դրանցից մի քանիսը. 1. «Ֆեր 〔ապատի〕» Խաչակ սրբազն արքեպիսկոպոսի եւ արքանապատի] Տիմոթէոս Վարդապետի ուղեւորությունն դէպ ի Հապէշստան («Սիոն», 1867, № 4, էջ 49—54): 2. «Ֆեր 〔ապատի〕» Խաչակ սրբազն արքեպիսկոպոսի եւ իւր

ուղեկցաց ի Սուէդ Հասնիլը» («Սիրն», 1867, № 3, էջ 72—74): 3. «Երկրորդ նամակ գերլապատի» Խսաճակ սրբազն արքեպիսկոպոսի ի Զիգդայէ» («Սիրն», 1867, № 6, էջ 89—90): 4. «Երրորդ նամակ գերլապատի» Խսաճակ սրբազն արքեպիսկոպոսի ի Սուէդինէ» («Սիրն», 1867, № 8, էջ 121—122): «Սիրնը հրապարակել է նաև այն նամակները,որ Վիկտորյա թագուհու «հրամանաւա Անգլիայի արտաքին գործերի մինիստրությունը հղել է Խոայի պատրիարքին Տիմոթիոսի ուղևորության կապակցությամբ» («Սիրն», 1870, № 5, էջ 70 և 1872, № 7, էջ 156):

6 «Սիրն», 1867, № 4, էջ 49:

7 Record of the Expedition, vol. I, p. 51.

8 Նույն տեղում, էջ 330—331:

9 Մ. Օրմանյան, Հայոց եկեղեցի, էջ 102—103:

10 Տարբեր ժամանակներում մի շաբթ բարձրաստիճան հայ եկեղեցականներ, այդ թվում Կոստանդնուպոլիսի Հայոց պատրիարք Մ. Օրմանյանը պարզեարվել են եթովական շրանշաններով:

11 «Սիրն», 1867, № 4, էջ 49:

12 Նույն տեղում:

13 Նույն տեղում:

14 Տիգրան Հ. Խ. Սավալանյանց, Պատմություն Երուսաղեմի, հ. 2, էջ 1152—1153:

15 Նույն տեղում, էջ 1154:

16 «Սիրն», 1867, № 4, էջ 49:

17 Հաստ Երուսաղեմի պատրիարքարանի պաշտոնաթերթի, պատրիարքը Եգիպտոս է գնացել Հայկական «եկեղեցյաց այցելություն ընելու նպատակով»: Ի՞նչորքե, այդ այդպես չէր: Ակեբսանդրիայում պատրիարքը շոգենավից նավամատուց է հասել «կառավարության կողմն խրկված ութ գույզ թիվով նաև նստած և ուրիշ տասնի շափ նավակներու ուղեկցությամբ»: Այնտեղից «Պարծյալ կառավարության կողմն պատրաստված քառաձի կառքն նստելով և ուրիշ քսանի շափ կառքերու ընկերակցությամբ» առաջնորդվել է եկեղեցի: Նրա կառքի առշնից գնում էին «30-ի շափ ոտնավոր և 60-ի շափ ձիավոր զինվորք» և այլն («Սիրն», 1867, № 7, էջ 105—106):

18 Այդ կոնդակում Եգիպտոսի խոփիզ ներկայացված է որպես մի գործիչ, որը թեոգորոս II-ի նկատմամբ տածում է բարեկամական սրտարություն սիրո գդացումներ և ցանկանում նթովպիտիան տեսնել խաղաղ ու բարգավաճ վիճակում: Իր նրան «ցավ մի» է, որ Անգլիան «պատերազմ հրատարակեց, և նթովպիտիի դևմ մեծ արշավանք ու բազմաձեռն բանակ մի խրկեց» ու թեոգորոսը «պիտի ստիպվի պատերազմելու, արյուն թափելու»: Ճիշտ է, Յթովպիտիան ունի գորություն և մեծ կարողություն օտար հարձակման դեմք, սակայն լի կարող վերջնական հաղթանակ հռուսալ, քանի որ Անգլիան, «մյուս բրիտոնյա մեծ տերությանց հետ բարեկամական հարաբերություններ ունենալով, կրնա օգնություն գտնելու և այլն» Վերջում պատրիարքը խորհուրդ է տալիս ազատ արձակել կալանավորներին և մեծ արշավանքի գեղ հետևանաց առաջքն առնելու»: Համար:

19 Record of the Expedition, vol. I, p. 42.

20 Նույն տեղում, էջ 44:

21 Նույն տեղում, էջ 44—45:

22 «Սիրն», 1867, № 12, էջ 189:

23 Տիմոթիոսն ազատ օգտվում էր Թուրքերն, արաբերեն, ֆրանսերեն, անգլերեն լեզուներից, մասսամբ էլ ամհարերենից: Վերջինին մասին նա բազմից հիշատակել է

Հաղեղրության մեջ: Մի տեղ՝ նա ասում է. «Ես... կըսի Ամհարայի լեզվով,—Զեր իշխաններին համբերություն ստվորեցեք, տեսեք, ինչպես հանդարտ կզիտենք և այլն: Մի այլ տեղ՝ նա նշել է, որ ինքը եթովպացի կրօնավորների հետ գրույցներ էր ունենաւմ և խոսելով հետերին իրենց լեզվով: Տիմոթեոսն ամհարերին ոչ միայն խոսում, այլև ինչ-որ շափով գրում էր: Նա ասում է. «Ես քիչ-շատ հապեշերին տառերը ճանշալուա մեկուն հեղել կուտայի գրվելիք տառերը, և ես կնշանակեի մեքենայարար, բայց կարողաց իմացնել անով (նամակով—Հ. Բ.): Ճեր ով և ուր ըլլալնիսա:

24 Մ. Աղավենոնի, Միարանք և այցելուք, էջ 509:

25 Նույն տեղում, էջ 441:

26 Տիգրան Հ. Բ. Սալահանյանց, Պատմություն Երրուսաղեմի, հ. 2, էջ 1154:

27 Նույն տեղում, էջ 1155:

28 Narrative of the British Mission to Theodore, King of Abyssinia, with notices of the countries traversed from Massowah, through the Soudan, the Amhare, and back to Annesley Bay, from Magdalæ, by Hormuzd Rassam, in two volumes. London, 1869.

29 Ma captivité en Abyssinie, avec des détails sur l'empereur Théodoros, sa vie, ses moeurs, son peuple, son pays, par le Dr. H. Blanc, traduit par Arbousse-Bastide, Paris, 1870.

30 Record of the Expedition to Abyssinia, compiled by order of the secretary of state for war, by Major Treveren J. Holland, C. B. Bombay staff corps and captain Henry M. Hozier, 3rd Dragoon guards, under the direction of colonel sir Henry James..., 1870, vol. I and II.

31 A History of the Abyssinian Expedition, by Clemand R. Markham, with a chapter containing an account of the mission and captivity of Mr. Rassam and his companions by Lieutenant W.-F. Pridgeaux, Bombay, staff corps 1889.

32 Այս ժամանակաշրջանի վերաբերյալ կան նաև մի շարք եթովպական աղբյուրներ, որոնցից հատկապես պետք է նշել Զաների ամհարերին բնագիրը (E. Littman, The Chronicle of King Theodore, New York and Leipzig, 1902. իտալերեն թարգմանությունը Martino Mozeno, La cronaca di tre Teodoro. Attribuita al d'abtara Zaneb\*, Rassegna di studi Etiopici, II, 1942). Վալդե Մարիամ (C. Mondon-Vidallet, Chronique de Theodore II, Paris, 1905), Անանունի (Luigi Fasella, La cronaca dell'Imperatore Teodoro II di Etiopico in un manoscritto Amarico. Annali dell'Istituto orientale di Napoli, VI—VIII, 1957—1959) ժամանակաղությունները: Տիմոթեոսի ուղեգործությունից քսան-երեսը տարի հետո միայն խմբագրված այդ աղբյուրների քննարկումը լի մտնում մեր խնդրի մեջ, թեև, ենթակա շարադրվող հարցերի պահանջներից, գրանց հաղորդումներին ևս անդրադարձել ենք այս կամ այն շափով:

33 Ս. Գ. Ազգոնց, Աշխարհագրություն Հորից մասանց աշխարհի, Ափրիկե, Վենետիկ, 1802:

34 Զանդոյի առասպելը ծագել է տոտեմիզմի դարաշրջանում, երբ վիշապ-օձերը համարվում էին տոտեմներ: Սակայն երկրագործության և անասնապահության զարգացման շնորհիվ այս հասկացությունը տրոհվել է, և բարի ուժերին գուգահեռ ստեղծվել է ընդհանուր թշնամի ուժերի մի հավաքական կերպար՝ վիշապ-օձերի ու գների կերպարանքով: Զանդո վիշապը հավաքական, ընդհանուր հասկացողություն է, մարմ-

նավորում է հասարակական, շար, ճնշազ, թշնամի ուժերը, եթովպական ժողովրդի թշնամիների գաղափարը: Այդ վիշապամարտի դիցարանական առասպելը վերամշակվելով նպաստել է քրիստոնեության տարածմանը եթովպիայում: Զանգոյի առասպելից երեսմ է, որ եթովպիայում գոյություն է ունեցել վիշապ-օձերի և կախարդ-հմայիլների պաշտամունքը: Դա նշանակում է, որ եթովպիայի հնագույն բնակիչները կուպաշտ էին, և հիմքից զուրկ են պնդումները այն մասին, որ իր նրանք հնագույն ժամանակներում մի աստված են պաշտել: Այդ թուր հետևողունն արկել է եթովպիայում տարածված մի առասպելից, որի համաձայն եթովպացիները սերել են նոյն առապելի երկրորդ որդուց՝ Գամլից, որու որդիներից էլ՝ կուշերը (նուրիացիները): Մեր կարծիքով նոյնից սերեկու առասպելը ծագել է քրիստոնեությունը եթովպիա մուտք գործելու ժամանակներում՝ որպիս պայտարի միջոց կուպաշտության դեմ:

35 E. A. W. Budge, A History of Ethiopia, London, 1928, vol. I, p. 142.

36 Զանգո-Վայեարայի առասպելը հիշեցնող մի պատում էլ կա հգիպտական գիշարանության մեջ: Արեկ աստվածունի Խսիրը ցանկանում է իմանալ արեկի Ռա աստծու գաղտնարանի անունը, սակայն վերջինս մերժում է բանալ իր գաղտնիքը: Խսիրը ստեղծում է տեղի ձևով մի վիշապ և այն կախարդելով, խրում է Ռա աստծու նաև պարհին: Տեղանք վիշապն արեկ աստծուն հարվածում է այնքան ժամանակ, մինչև նա հայտնում է իր գաղտնիքը և մահանում: Այդ առասպելի վերապրուկները մինչև օրս էլ պահպանվել են աֆրիկյան տարրեր ծաղովուրդների մոտ: Ոմիորոներն, օրինակ, գոմեցը սպանում են մոտավորապես այնպես, ինչպես Խսիրի վիշապը՝ Ռա աստծու:

37 Վալդե-Մարիամը, օրինակ Կասա-Թեոդորոսի ըմբոստրության դրվագը վերապատմել է այսպես. «Վալդարո Տավարայի հետ ամուսնալու շնորհիվ լինելով Ռառ Ալիի փեսան, Կասան մնաց աներոշ տանը, բայց մի օր, երբ նա որդագել էր ընդունել և խնդրել էր, որ իր ճաշը ուղարկեն, նրան որպես մսեղեն ճաշատեսակ մատուցեցին կենդանու առջնի ուռեքերը: Նա դրանք ետ ուղարկեց գոռալով. Լեշ Կասան այդ մսից չի ուտում, ինչ է, ինձ ջրկիր կնոշ տե՞ղ են դրել նրա կինը՝ Վալդարո Տավարայն ասաց. Դու ոչ մի կտոր հող չունե՞ս: Լավագույն դեպքում մեղ մնում է պատրաստմել այստեղից հեռանալու համար: — Ինչպես թե հող չունեմ, գոռաց Կասան, — զեր կտեսնենք: Դրանից հետո նա Կվարա իշավ կնոշ հետ միասին» (տե՛ս Mondon-Vidaillet, Chronique de Théodore II, pp. 2—3).

Բլանկն այդ նույն դրվագը վերապատմում է հետևյալ ձևով. Կասան, որ վիրավորվել էր թուրքների ղեմ կովում, սատիպվեց կանգ առնել Դեմքեայի սահմանի վրա: Նա բանակատեղից զոքանշին լուր ուղարկեց իր վիճակի մասին, խնդրելով մի կով՝ արիսինիացի բժիշկների պահնաջած վարձը: Վալդարո Մանանը, որ միշտ ատել էր Կասային, փութաշանորեն օգտագործեց առիթը ... որպեսզի կոտրի նրա հպարտությունը և նրան ուղարկեց կովի փոխարեն մի կտոր միս, վիրավորական մի նամակի հետ միասին: Վիրավոր պետի մահին մոտ էր նրա կինը, նրա դժբախտությունները բաժանող բաշարի ընկերը, որին նա սիրում էր: Ականջ զնելով թագուհու հեգնական նամակին, նա խոր նվաստություն զգաց, և նրա՝ գալլացու նուացող արյունը բոցավառվեց: Նա ոտքի կանգնեց և Կասային ասաց, որ ինքը սիրում է քաշերին, ատում վախկոտներին, և նրան կլրի, եթե նա արյամբ վրեժինդիր լինի այդ վիրավորանքի համար: ... Եվ վրեժինդրության ծարավը ներթափանցեց Կասայի սիրտը: Ումերը բավականաշատ վե-

բագտնելուց հետո նա վերադարձակ Կվարա և իրեն անկախ հռչակեց բացահայտ կերպով (H. 11ուc, Ma captivitè, pp. 2—4),

Ահա և Տիմոթեոսի տարրերակը. «Այն ատենները թեոդորոս, որ Կասա կըսվեր, կուգա Ռաս Ալիին քով զինվորության կմանե, և յուր ցույց տված քաջություններով սիրելի կըլլա անոր աշքին մինչև կփեսայանա՝ անոր աղջիկը առնելով: Սր մը անիկա որդաղեղ (կոսո) խմած ըլլալով աներօշմեն կով մը կինդրե, աներոշ մայրն ալ, որ դեռ կենդանի էր, նախատելով մը հրաման կընե սպասավորաց, ասելով,—Պրդաղեղ ձախողին աղօս կտօր մը միս տվեք որ երթաւ: Այս խոսքը խիստ ժանր կուգա Կասային, կդայրանա ու կրակ կդառնա կնկա մը բերնեն այնպես նախատինք ընդունելուն: Յուր կինը կիմանա այս բանը, ու կդառնա կըս Կասային.—Գատիդ կապե շուտով, ով Կասա, ի՞նչ ես կեցեր մնացեր կնկա մը պես: Ըսել կուզե կտրիճ եղիր ու ապստամբի: Կնկան խոսքերն ավելի իրախուսվելով ու զրգովելով, վասան հետը կառնու զինքն ալ ու կիսախի յուր հայրենի երկիրը՝ Կվարա, և քիլ ժամանակի մեջ հհաջողի անոր տիրել և ալն:

38 Abyssinia and his people or Life in the Land of Prester John (Consul, Plowden's description of Abyssinia 1852—5) Edited by J. C. Hotten, London 1868; p. 187—188.

39 Տիմոթեոս հաղորդում է. «Թե որ թագավորը դրամ, պարեն կամ ուրիշ որնէ բան մը խնդրելու ըլլա տեղաց մը, նույն տեղվուն կառավարիլ իշխանը լուր կուտայուր մարդոց և գյուղացվոց ծերերուն հհայտն անոնց թագավորին պահանջը և անոնց հաճությամբ ընդունելուն կրամնե խնդրածք յուրաքանչյուր գյուղի վրա, դարձալ անոնց ձեռքով ամեն մեկ գյուղին յուր կարողության համեմատ, և դարձալ յուրաքանչյուր գյուղի ընկած բաժինը նույն կերպով կրամնե ամեն մեկի տան վրա»:

40 Հաս Տիմոթեոսի, ծերերի խորհուրդը իրավունք ուներ վճռելու քաղաքի և քաղաքցիների տարրեր հարցեր, ընդունելու կամ մերժելու կոմի ելած իշխաններին օգնություն ցույց տալու առաջարկը և այլն: Թերենք երկու օրինակ. Գարբե Մարիամ իշխանը, հուսալով օգնական ուժեր ստանալ Բելսայից, «Եւր կիրկի թելսայու ծերերին», հայտնելով. «Ես ձեր ստացվածքը հափշտակելու լիմ եկած, այլ միայն պատերազմող մարդիկ կուզեմ ձեզմեա: Սերերը պատասխանեցին. ուրբան պատերազմող մարդիկ ունենք թագավորին քոյլ կզանվին: այդ խնդրենիդ անհնար է, իսկ թե որ արմտիք, պաշար կուզեք, տանք ձեզին: Կամ «զեմբեացիք, որ առանց իշխանի էին, երկու կողմի բաժանվելով, մեկ կողմը Տեսու Գորազի զորավոր ապստամբի իշխանության ներք կմտնեն, և մյուս մասը, իրենց ծերունյաց հաճությամբ Զելգայի կուսակալներուն անձնատուր կըլլան»:

41 Օրինակ. Ազառ երկում չշրի մեծ ցամաքություն էր, պատմում է Տիմոթեոսը «գյուղացիք կուգային և, իմանալով մեր եկեղեցական ըլլալը, կաղալեին որ աղոթք թիճներ, որ աստված անձրւ տա իրենց ... խալահանգիստ ըրինք և աղոթք ընելով, աստծո ողորմությունը խնդրեցինք: Չենք գիտեր թե արդյոք մեր աղոթքը լսելի եղավ, թե աստված ծողովրդոց և մեր երեսին ողորմեցավ. երկու անգամ այնքան հորդ անձներ իշան, մինչև հեղեղներ կապեցին ու գետեր հորդեցան ...»: Գյուղացիները հավատում են, որ անձրւ տեղում է աստծու կամեցողությամբ, իսկ Տիմոթեոսը վստահ չէ («չինք գիտեր»), թե ինչպես պատահեց որ անձրւ տեղաց Ազառ երկում, Ուղեգրությունում կան այդ կարգի նաև այլ փաստեր:

ԱՆԻ ԵՎ ԴՎԻՆ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ ԳՏՏՎԱԾ ԴՐԱՄՆԵՐԸ  
ԵՎ ՆՐԱՆՑ ՀԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Միջնադարյան Հայաստանի երկու խոշոր քաղաքներում՝ Անիում և Դվինում գտնված դրամագիտական նյութերը հնարավլորություն են ընձեռում դատելու ոչ միայն ընդհանրությունների, այլև այն տարրերությունների մասին, որոնք բնորոշ են եղել նրանցից յուրաքանչյուրի դրամական շրջանառության ներքին ոլորտին։ Շատերը չէ, որ ծանոթ են Անի քաղաքում գտնված դրամագիտական նյութերի ծագմանը վերաբերող ժամանակագրական և դինաստիական պատկաննելության տրվյալներին։ Ի տարրերություն հնագիտական բնույթի շատ նյութերի, որոնց քննությունները կատարվել են դեռևս հանգույցալ ակադեմիկոս Ն. Յ. Մառի ղեկավարությամբ, Անիում գտնված դրամագիտական նյութերը մինչև վերջերս մնացել էին անորոշ միջակում։ Հնագետների կողմից հիշատակվել են, որ հնամյա Անի քաղաքում և նրա շրջակարգում հին ու միջնադարյան մետաղե շատ դրամներ են գտնվել, սակայն այդ դրամների վրա եղած պատկերների ու գրությունների, նրանց պետական պատկանելության, ինչպես նաև ժամանակագրության մասին որոշակի տեղեկություններ կամ դասակարգված ցուցակներ չեն հրապարակվել։

Ավարտելով Դվին քաղաքի տարածքի վրա գտնված դրամների ու դրամական գանձերի քննությունը, որոնց արդյունքների առաջին մասը հրատարակված է<sup>1</sup>, մենք ձեռնամուխ եղանք Անիում և նրա շրջակարգում գտնված դրամագիտական նյութերի ուսումնասիրությանը։ Դրանք ներկայումս պահպամ են Հայաստանի պատմության պետական թանգարանում<sup>2</sup>։ Սակայն մինչ այդ նյութերի հիմնական խմբերին անդրադառնալը, նշենք, որ առաջին հաղորդումը Շիրակի Բագրատունյաց մայրաքաղաքի պեղումներից ի հայտ եկած դրամների մասին տվել է Ն. Յ. Մառը։ Նրա հաղորդագրության մեջ ասված է, որ Անիում գտնվել են առավելապես պղնձե և շատ քիչ արծաթե դրամներ<sup>3</sup>։

Քննությունները պարզեցին, որ իրոք Անիի դրամագիտական հավաքածում բաղկացած է գերազանցապես պղնձե դրամներից: Սակայն միայն այդքանը, ուրիշ տեղեկություններ դրամների վերաբերյալ ն. Յ. Մառը չի տվել: Այնուհետև Անիում գտնված դրամագիտական նյութերին անդրադարձել է հանգուցյալ ակադեմիկոս Հովսեփ Օրբելին՝ ավելացնելով մի քանի էական տվյալներ, որոնք բացակայում էին նախորդ հաղորդման մեջ: Ըստ Հ. Օրբելու՝ Անիում գտնված դրամները եղել են բյուզանդական պղնձե դրամներ և մասամբ մահմեդական ու վրացական<sup>4</sup>: Հիրավի, Անիում գտնված դրամագիտական նյութերի մեջ մեծ մասը Բյուզանդական կայսրության պղնձե դրամներ են, հետո միայն՝ առանձին օրինակներով, մահմեդական տարրեր իշխանությունների և վրաց Բագրատունյաց թագավորության պղնձե դրամներ: Տարիներ առաջ Պետական էրմիտաժի դրամագիտության բաժնում (1951թ.) ակադեմիկոս Հովսեփ Օրբելին մեղ հաղորդեց իր տպավորությունները Անիում գտնված մի շարք հուլաղույան պղնձե դրամների մասին, որոնց վրա դրոշմված էին հայերեն գրերին նմանվող, բայց անորոշ նշաններ: Դրանք թողարկվել են Անի քաղաքում, Հուլաղույան վերջին խաններից Սուլեյմանի (1339—1344) և Նուշիրվանի (1344—1354) տարիներին, նրանց անունների ուլղուրերեն արծանագրություններով: Թանգարանում պահպանվող արխիվային նյութերի ներկայիս վիճակից ելնելով, կարելի է ասել, որ մենք պարտական ենք Հովսեփ Օրբելու հիշատակություններին Անիում գտնված դրամական գանձերի, մասնավորապես 1906 թ. Գագկաշեն եկեղեցու մոտ, 1908 թ. միջնաբերդի բազիլիկ դահլիճի նկուղում և 1909 թ. Մասի անվան փողոցի պեղումներից ի հայտ եկած գանձերի տեղանքին վերաբերող մանրամասնությունների համար: Սակայն մինչև 1982 թ. դեռևս չէր ստեղծվել մի ամփոփ ցուցակ Անի քաղաքում և նրա շրջակայքում գտնված դրամների մասին: Հիմք ընդունելով Անի քաղաքից երևան փոխադրված բոլոր այն հին ու միջնադարյան դրամները, որոնք ներկայումս պահպանվում են Հայաստանի պատմության պետական թանգարանում<sup>5</sup>, մենք քննեցինք նրանցից յուրաքանչյուրի ծագմանը վերաբերող տվյալները, որոնք ներկայացնում ենք հետեւյալ հաջորդականությամբ:

1. Մակեդոնիայի թագավոր Փիլիպոս Արիդայոսի գահակալության տարիներին (323—316) թողարկված արծաթե դրամներ . . . . . 2 հատ
2. Փյունիկիայի Տյուրոս քաղաքում, մ. թ. ա. Ա. դ. թողարկված արծաթե տետրադրախմ . . . . . 1 հատ

3. Հայաստանի Արտաշեսյան թագավորության Տիգրան Մեծի (95—55) պատկերով և նրա տիտղոսի՝ «արքայից արքա» հոմարեն գրությամբ, Տիգրանակերտում թողարկված արծաթե դրամ . . . . . 1 հատ
4. Պարթևական թագավորության, Օրողես Բ արքայի (57—38) պատկերով և նրա տիտղոսների հոմարեն արձանագրություններով արծաթե դրամ . . . . . 1 հատ
5. Հռոմի Հանրապետության մ.թ.ա. Ա դ. վերջին թողարկված արծաթե դրամներ . . . . . 2 հատ
6. Հռոմի կայսր Վեսպասիանոսի գահակալության տարիներին (69—79) թողարկված արծաթե դրամ . . . . . 1 հատ
7. Բյուզանդական արծաթե դրամներ՝ թողարկված Թեոդոսիոս Բ կայսեր գահակալության տարիներին (408—450) . . . . . 3 հատ
8. Բյուզանդական արծաթե դրամներ՝ թողարկված Անաստասիոս կայսեր գահակալության տարիներին (491—518) . . . . . 2 հատ
9. Իրանի Սասանյան թագավորության Որմիզդ Դ (579—590) և Խոսրով Բ (590—628) արքաների պատկերներով արծաթե դրամներ . . . . . 4 հատ
10. Բյուզանդական Հերակլես կայսեր և նրա հաջորդների գահակալության տարիներին՝ Է—ԺԲ դդ. թողարկված արծաթե դրամ պղնձե դրամներ . . . . . 1274 հատ
11. Արարական Խալիֆայության Օմայան հարստության Արմինիա նահանգի, անտարեթիվ (Է—Լ դդ.) պղնձե դրամներ . . . . . 2 հատ
12. Արարական խալիֆայության Աբբասյան ալ-Մանսուր խալիֆայի գահակալության տարիներին (754—775) ալ-Քուֆա քաղաքում թողարկված արծաթե դրամ պղնձե դրամ . . . . . 1 հատ
13. Բուվեհյան տիրապետության Բաղդադում թողարկված՝ Ժ դ. արծաթե դրամ . . . . . 1 հատ
14. Օրտոկյան (Մարգինի) Նուր աղ-Դինի անոնով (1146—1173) պղնձե դրամ . . . . . 1 հատ
15. Սելջուկյան (Խումի), արծաթե դրամներ պղնձե դրամներ . . . . . 6 հատ
16. Իլղեգիզյան (Աղբեկանի) աթարեկների, ԺԲ—ԺԳ դդ. պղնձե դրամներ . . . . . 37 հատ
17. Խորեզմի շահ Ջալալ աղ-Դինի, 1226 թ., պղնձե դրամ . . . . . 1 հատ

18. Վրացական թագրատոմյաց, ԺԲ—ԺԴ դդ., պղնձե դրամներ 52 հատ
19. Եղեսիալի խաչակիր ասպետների, ԺԲ դ., պղնձե դրամներ . 24 հատ
20. Մոնղոլական տիրակալության, Զինգիզյան Մենգու խանի  
(1251—1260) արծաթե դրամներ . . . . . 2 հատ
- պղնձե դրամներ . . . . . 18 հատ
21. Մոնղոլական տիրակալության, Հովհանովյան խաների,  
ԺԴ—ԺԴ դդ. արծաթե դրամներ . . . . . 15 հատ
- պղնձե դրամներ . . . . . 49 հատ
22. Իրանի քաղաքային թողարկման, ԺԷ—ԺԸ դդ., պղնձե  
դրամներ . . . . . 25 հատ
23. Օսմանյան կայսրության, մաշված արձանագրություններով  
ԺԹ դ., պղնձե դրամներ . . . . . 5 հատ
24. Ռուսական կայսրության, մաշված արձանագրություններով  
պղնձե դրամներ . . . . . 2 հատ
25. Անորոշ, խիստ մաշված արձանագրություններով, պղնձե  
դրամներ . . . . . 57 հատ

Այսպիսով, մեր առաջ ներկայանում են Անի քաղաքի տարածքում  
գտնված 37 արծաթե և 1756 պղնձե, ընդամենը 1793 մետաղյա դրամ-  
ներ, որոնց ծագման ժամանակագրական և դինաստիական վերոհիշ-  
յալ ցուցակը տակավին առաջին անգամ է հրատարակվում:

Ինչ վերաբերում է Դվինում գտնված դրամներին, ապա դրանք  
իրենց ծագման տվյալներով ստորաբաժանվում են հետևյալ հաջորդա-  
կանությամբ.

1. Մակեդոնական թագավորության Փիլիպոս Արիդայոսի գա-  
հակալության տարիներին (323—316) թողարկված արծա-  
թե տետրադրախմ . . . . . 1 հատ
2. Հայոց Արտաշեսյան թագավորության Մեծն Տիգրանի գա-  
հակալության տարիներին (95—55), նրա ռարքայից ար-  
քայ տիտղոսի հոմարեն արձանագրությամբ, Տիգրանա-  
կերտում թողարկված արծաթե դրամ . . . . . 1 հատ
3. Հոռմեական կայսրության Օգոստոս Օկտավիանոսի և Դո-  
միցիանոսի (81—96) տարիներին թողարկված . . . . . 1 հատ
4. Բուֆորի թագավորության Ռիսկուպարիդ Բ (68—92) և  
Ռիսկուպարիդ Զ (318—332) թագավորների պղնձե դրամ-  
ներ . . . . . 2 հատ

5.	Իրանի Սասանյան թագավորության ե—է դդ. արծաթե դրամներ, թողարկված Կավատ Ա (488—531), Խոսրով Ա (531—579), Որմիզդ Դ (579—590), Խոսրով Բ (590—628) և Արտաշիր Դ (628—630) արքաների գահակալության տարիներին	212 հատ
6.	Բյուզանդական կայսրության ե—ժԱ դդ. ոսկե դրամներ արծաթե դրամներ պղնձե դրամներ Բնդամենը՝ 313 դրամ <sup>6</sup>	44 հատ 229 հատ 50 հատ
7.	Արաբական խալիֆայության, Օմայան հարստության, Բ դ. արծաթե դրամներ պղնձե դրամներ Բնդամենը՝ 35 դրամ <sup>7</sup>	5 հատ 30 հատ
8.	Արաբական խալիֆայության, Արրասյան հարստության Բ—Ժ դդ. արծաթե դրամներ պղնձե դրամներ Բնդամենը՝ 395 դրամ <sup>7</sup>	28 հատ 367 հատ
9.	Թաքարիստանի արարա-սասանյան պատկերագրության, Բ դ. արծաթե դրամներ	4 հատ
10.	Սաշյան ամիրայության Յուսուֆ իրն Դիվադի անոնով Արմինիայում (Դիլին) հիշքայի 319, այսինքն մ.թ. 931 թ. թողարկված արծաթե դրամ	1 հատ
11.	Շեղդացյան ամիրայության, մաշված արծանագրություններով, ԺԱ դ. արծաթե դրամներ	2 հատ
12.	Իրաքի սելջուկյան, մաշված արծանագրություններով, ԺԲ դ. պղնձե դրամներ	2 հատ
13.	Աղորեղանի Լղեզիզյան հարստության, աթարեկներ՝ Լղեզիզի (1137—1176), Փահլակն Մուհամմեդի (1176—1187), Կիզիլ-Արուլանի (1187—1191) և Արու-Բեկրի (1191—1210) անոնմներով պղնձե դրամներ	881 հատ
14.	Օրտոկյան հարստության Հիսն Քայքայի և Մարդինի տիրակալների, ԺԲ դ. պղնձե դրամներ	5 հատ
15.	Զանգյան հարստության Մոսովզի և Հալեպի տիրակալների, ԺԲ—ԺԳ դդ. պղնձե դրամներ	3 հատ
16.	Մենգուչակյան հարստության Երզնկայի տիրակալ Բահրամ շահի (1155—1218) պղնձե դրամ	1 հատ

17. Փոքր Ասիայի սելջուկյան, ԺԲ—ԺԴ դդ. արծաթե դրամներ 5 հատ  
պղնձե դրամներ . . . . . 26 հատ  
Հնդամենը՝ 31 դրամ:
18. Խորեզմի շահ Զալալ ադ-Դին Մանգրուրումու անոնով (617—628) պղնձե դրամ . . . . . 1 հատ
19. Վրաց Բագրատոնյաց թագավորության, առաջիւապես  
թամար (1184—1212) և Ռուսութան (1223—1247) թագու-  
հիների անոններով վրացերեն և արաբերեն արծանագրու-  
թյուններով պղնձե դրամներ . . . . . 115 հատ
20. Մոնղոլական տիրապետության Չինգիզյան, Հուլաղույան  
և Զուչյան խանների անոններով ԺԴ—ԺԴ դդ. արծաթե  
դրամներ . . . . . 3 հատ  
պղնձե դրամներ . . . . . 7 հատ  
Հնդհանուր թվով 10 դրամ:
21. Իրանի Սեֆյան շահ Աբբասի (1587—1629) անոնով, Խեշտ  
քաղաքում թողարկված արծաթե դրամ (աբբասի) . . . . . 1 հատ
22. Իրանական տիրապետության, ԺԷ—ԺԷ դդ. քաղաքային  
պղնձե դրամներ . . . . . 16 հատ
23. Հնդկաստանի Բարուրյան հարստության, Նասիր ադ-Դին  
Մուհամմեդի (1718—1748) անոնով, Շահզահանարադ  
քաղաքում, Հիջրայի 1151 թ.՝ մ.թ. 1738—1739 թթ. թո-  
ղարկված արծաթե դրամ (ոռոփի) . . . . . 1 հատ
24. Օսմանյան կայսրության Մուհամմեդ Դ (1648—1687) և  
Արդ ալ-Խեզիդ (1839—1861) սուլթանների անոններով  
արծաթե դրամներ . . . . . 2 հատ  
Արդ ալ-Ազիդի անոնով (1860—1876) պղնձե դրամ . . . . . 1 հատ  
Հնդամենը՝ Օսմանյան 3 դրամ:
25. Ռուսական կայսրության Նիկոլայ Ա ցարի (1825—1855)  
անոնով պղնձե դրամներ . . . . . 2 հատ
26. Խիստ մաշված, անորոշ արծաթե դրամներ . . . . . 6 հատ  
պղնձե դրամներ . . . . . 189 հատ  
Հնդամենը՝ 195 դրամ:

Ի մի բերելով կարող ենք նշել, որ Դվինում գտնված դրամագիտա-  
կան նյութերը (ոսկե՝ 44, արծաթե՝ 506 և պղնձե՝ 1700 դրամներ) գրե-  
թե նույն համամասնությամբ, ինչպես Անիում գտնվածները, իրենց  
ծագմամբ երկու տասնյակից ավելի պետությունների դրամական միա-  
վորներ են՝ թողարկված տիպային տարբեր տվյալներով։ Հիշյալ նյու-

**Քերից Դվինի դրամական տնտեսության համար բնորոշ են, այսինքն լայն տարածում են ունեցել հետևյալ դրամական խմբերը.**

**ա) Սասանյան և բյուզանդական Ե—է դդ. արծաթի դրամները:**

**բ) Արաբական խալիֆայության (Օմայան և Աբբասյան) Է—ժ դդ. արծաթի ու պղնձե դրամները:**

**գ) Թուրք սելջուկյան ԺԱ—ԺԲ դդ. պղնձե դրամները:**

Այս երեք խմբերի դրամները վերաբերում են Դվինի քաղաքային կյանքի հիմնական փուլերին: Մնացյալները կամ վաղ, կամ ուշ ժամանակների են, երբ Դվինը, իբրև քաղաք դեռ չէր ձևավորվել, կամ կորցրել էր իր երրեմնի խոշոր քաղաքի նշանակությունը:

Ինչ վերաբերում է Անի քաղաքին, ապա վերջինիս դրամական տնտեսության համար բնորոշ են եղել հետևյալ դրամական խմբերը:

**ա) Բյուզանդական կայսրության Ժ—ԺԳ դդ. դրամները:**

**բ) Թուրք-սելջուկյան տիրապետության ԺԱ—ԺԳ դդ. դրամները:**

**գ) Մոնղոլական տիրապետության ԺԳ—ԺԵ դդ. դրամները:**

Մնացածները պատահականություններ լլինելով հանդերձ, Անիում լայն տարածում և տևական շրջանառություն չեն ունեցել: Անիում ևս, ինչպես Դվինում, մակեղոնական, փյունիկյան, հին հայկական (արտաշեսյան), հռոմեական և այլ, առավելապես ուշ միջնադարյան դրամները վերաբերում են Անիի մասամբ նախաքաղաքային, ինչպիս նաև հետքաղաքային ժամանակներին:

Հայտնի է, որ մինչև Ժ դ. Անին ամրոց էր: Նրա քաղաքային կյանքի զարգացումը ծավալվել է Շիրակի Բագրատունյաց թագավորության հզորության ժամանակներում՝ Ժ դ. սկզբից մինչև ԺԱ դ. առաջին կեսը: Մինչդեռ Դվինը սասանյան և արաբական տիրապետությունների ժամանակ տնտեսական, քաղաքական ու մշակութային խոշոր կենտրոն էր Հայաստանում, ուր թողարկվում էին սասանյան և արաբական դրամներ: Արտաքին առևտուրը դրսից ևս բերում էր դրամներ:

Նյութերի համադրությունը ցույց է տալիս, որ Անիում սասանյան, օմայան և աբբասյան դրամներ գտնվել են հատուկենտ նմուշներով, լայն տարածում այստեղ չեն ունեցել և բնորոշ չեն տեղական շուկայի համար: Այս որոշակի տարբերությունը՝ սասանյան և արաբական դրամների տարածված լինելը Դվինում, իսկ Անիում՝ գրեթե լրիվ բացակայությունը պատահականություն չէ: Այն հաստատում է գրավոր աղբյուրների հաղորդած ժամանակագրական տվյալները Դվին և Անի քաղաքների վերաբերյալ:

Այդ երկու քաղաքների դրամագիտական նյութերի համադրությունը բացահայտում է նաև մեկ ուրիշ տարբերություն՝ բյուզանդական ժամանական ժամանակակից պատճենների առատությունը Անիում և դրանց համեմատաբար սակավությունը Դվինում։ Այլ կերպ ասած, բյուզանդական ծագում ունեցող պղնձեր դրամները ժամանակակից պատճեններից պատճենների առամեմատաբար աննշան են եղել։ Բյուզանդական պղնձեր դրամներից Անիում տարածված են եղել առավելապես Հովհաննես Զմշկիկ (969—976), Վասիլ Բ և Կոստանդին Ը կայսրերի համատեղ գահակալության (976—1025), Միքայել Դ (1034—1041), Թեոդորա կայսրուհու (1055—1056), ինչպես նաև Կոստանդին Ժ Դուկասի և կայսրուհի Եվդոկիայի (1059—1067) ֆուլիսները։

Անի-Դվին դրամագիտական նյութերի համադրությունը ցույց է տալիս նաև մեկ այլ ուշագրավ տարբերություն։ Դա եղեսիա քաղաքում, ժթ. իշխած խաչակիր ասպետների թողարկած պղնձեր դրամների առկայությունն է Անիում (24 ֆուլիսներ) և նրանց բացակայությունը Դվինում։ Այդ դրամները Միջագետքից Շիրակ են թափանցել հավանաբար ոչ ուղղակիորեն՝ եղեսիա-Անի գծով, այլ, հավանաբար, Անտիոքում և Կ. Պոլսում թողարկված բյուզանդական դրամների հետ միասին, որոնք այնքան տարածված էին Մերձավոր արևելքի երկրներում։ Նկատենք, որ Անիում գտնված բյուզանդական դրամներն առավելապես Կ. Պոլսում և Անտիոքում թողարկված դրամներից են։ Կոստանդիոպլատոնը և Անտիոքը միջազգային լայն կապեր ունեցող վաճառաշահ քաղաքներ էին, որոնց առնչությունները հայկական շուկաների հետ Բագրատունիների օրորդ, ինչպես և նախարարական ժամանակներում սերտ էին դարձել։ Բացառված չէ, որ Միրիա-Պաղեստինյան շրջաններում տարածված բյուզանդական դրամների հետ Հայաստան են թափանցել նաև հիշյալ խաչակիր ասպետների դրամները, որոնց հայտնությունները Անիում պատահականություններ չեն, այլ անցյալից մնացած հիշատակություններ այն կապերի մասին, որ ունեցել է Շիրակի հայոց մայրաքաղաքը ժթ. դ. Լեանտի հետ։ Անիում և Դվինում գտնված դրամագիտական նյութերի համադրությունը ներկայացնում է այդ երկու քաղաքների դրամական տնտեսությունների միջև եղած շորրորդ տարբերությունը։

Հայտնի է, որ ժթ. դ. վերջից մինչև մոնղոլական տիրակալության հաստատումը, այսինքն մինչև ժթ. դ. երեսունական թվականների ավարտը, թե Անիում և թե Դվինում տարածված են եղել վրաց Բագ-

բատունյաց թագավորության դրամները։ Վերջիններս թողարկվել են բացառապես պղնձից, և դրանց մի մասը ունեցել է վարկային նշանակություն ներքին շուկայում բացակայող արծաթե դրամներին փոխարինելու համար։ Դրանց վրա դրոշմված են եղել թամար և Ռուսական թագուհիների անունները վրացերեն համառոտագրված և արաբերեն ընդարձակ արձանագրություններով։ Այդ դրամները թողարկվել են երկու «կանոնավոր» և «անկանոն» տեսակներով։ Անիում տարածված են եղել թե «կանոնավոր» և թե «անկանոն» կերտվածքով վրացական ժողովուն դդ. պղնձե դրամները։ Մինչդեռ Դվինում տարածված են եղել միայն «կանոնավոր» կերտվածք և համեմատարար կայուն կշռային շափեր ունեցող վրացական պղնձե դրամները։ Այդ տարբերությունը պահանջում է առաջիկայում քննության առնել դրանց գործառական նշանակության հարցերը՝ կապված Մերձավոր արևելքում «արծաթի ճգնաժամի» ժակալման փուլերի հետ։ Դա քաղաքատնտեսական բնույթի պատմական երեսով էր, որ դիտվում է Անդրկովկասում ողջ ժք և ժողովուն դդ. սկզբում։ Այդ երեսով էր՝ այսպես կոչված «արծաթի ճգնաժամի» մասին գրավոր տեղեկություններ չեն պահպանվել, իսկ նրա ծագման պատճառները պատմագիտության մեջ մնացել է անորոշ, չնայած առանձին մասնագետներ շուրջ երկու հարյուր տարի տեսող (ԺԱ. ժող.) արծաթե դրամների բացակայությունը Մերձավոր արևելքի երկրներում կապում են սեղուկյան ավերիչ արշավանքների կամ տնտեսական բնույթի տարրեր հարցերի հետ, որոնք լիակատար պարզաբանության կարգ ունեն։ «Արծաթի ճգնաժամի» հարցը կոմպլեքսային քննության թեմա է։ Մեր նյութերի սույն քննության սահմաններից այն դուրս է։

Արդեն մոնղոլական տիրապետության ժամանակներում վերացել էր «արծաթի ճգնաժամը» և Արևելքում ամենուրեք թողարկվում էին արծաթե դրամներ, որոնք թափանցել էին արտաքին առևտության շրջանառության ոլորտները։ Սակայն մինչ այդ Անիում և Դվինում վրացական դրամների տարածումը պատճականություն չէր, այլ պայմանավորված էր Զաքարյանների իշխանության ներքո զարգացող հայվրացական տնտեսական ու քաղաքական սերտ հարաբերություններով ընդգեմ թուրք-սեղուկյան զավթիչների։

ԺԴ. դ. կեսից, դժբախտարար, խղվում է Անի և Դվին քաղաքների դրամական տնտեսության մեջ մինչ այդ նկատվող ընդհանուր կապը։ Անիում լայն տարածում են ստանում մոնղոլական տիրակալության դրամները, իսկ Դվինում ընդհանրապես դրամական շրջանառությունը գրեթե զարգարում է։ Դվինում ժԴ. դդ. դրամներ հազվագյուտ են

Հանդիպում: Եվ դա պատահական չէ: Խորեզմի շահ Զալալ ադ-Դինի և այնուհետև մոնղոլական զորքերի կողմից ավերված Դվինը ժԴ դ. վերջին կորցրել էր իր քաղաքային կյանքի մեծ կենտրոնի նշանակությունը:

Ի տարրերություն Դվինի, Անիում շրջանառության մեջ էին մտել ոչ միայն մոնղոլական, մասնավորապես Չինգիզյան Մանգու խանի, Հովհաննական Արղում, Ղազան Մահմուդ, Մուհամմեդ Խուդաբենդա, Արու-Սայիդ, Սուլեյման և Նուշիրվան խաների դրամները, այլև հենց Անիում այդ խաները թողարկում էին իրենց դրամները: Եթե հաշվի առնենք թանգարաններում ներկայումս պահպող Անի քաղաքում թողարկված մոնղոլական դրամները և կազմենք նրանց ժամանակագրությունը, ապա կարող ենք նշել, որ 1300—1301 թթ. մինչև 1377—1378 թթ.՝ ավելի քան 77 տարի անընդմեջ Անին արծաթե դրամներ է թողարկել ոչ միայն նրան տիրած Հովհաննական, այլև վերջիններիս հաջորդած Զելայիրյան խաների անուններով<sup>10</sup>:

Արծաթե դրամներից բացի, որոնք թողարկվում էին մասսայաբար, Անիում երբեմն թողարկվում էին նաև ոսկե ու պղնձե դրամներ: Պահպանվել են Արու-Սայիդ խանի՝ հիշրայի 717, մ.թ. 1317—1318 թթ. Անիում կտրված ոսկե դրամներից, ինչպես նաև վերջին Հովհաննական-ներից Սուլեյման խանի անունով հիշրայի 742—743 թթ., մ.թ. 1341—1342 թթ. պղնձե դրամներից առանձին նմուշներ: Այդ դրամները սպասարկում էին քաղաքի և նրա շրջակայքի ներքին առևտորի պահանջները, ըստ որում իրենց վրա ունեցած պատկերների ու գրությունների նշանակությամբ դրանք կազմում են մի յուրատիպ խումբ արևելյան դրամների հոծ զանգվածում: Անի քաղաքի վերջին դրամագիտական վկայությունը ժԵ դրվագված ոսկե դրամն է, որի մասին հիշատակում է ակադեմիկոս Հովսեփ Օրբելին<sup>11</sup>: Անիում դրվագված ոսկե այդ դրամը վերաբերում է 1407—1420 թթ. և, ինչպես ցուց են տվել վերջին քննությունները, կրում է իր վրա Կարա-Կոյունլի Արու-Նասր Կառա Յուսուֆ Նուլյան իրն Մուհամմեդի (հիշրայի 790—810 թթ.=մ.թ. 1389—1406 թթ.) և նրա գահաժառանգ որդու՝ Պիր Բուղադի (1407—1420 թթ.), անունները<sup>12</sup>:

Անի քաղաքի պատմության հետ առնշվող դրամներից առանձին նմուշներ մեզ հայտնի են նաև Հայկական ՍՍՀ Արթիկի շրջանի Հառիճ, Փանիկ ու Մեծ Մանթաշ գյուղերի դպրոցական թանգարաններից և Լենինական քաղաքում կազմված հավաքածուներից<sup>13</sup>: Այդ ամենը լրացնելով Անի քաղաքի պեղածո դրամների շարքը, միաժամանակ հաս-

տառում է մեր եղբահանգումները նրանց հիմնական խմբերի տարածման վերաբերյալ<sup>14</sup>:

Բացի զուտ դրամական բնույթի հարցերից, Անիում և Դիլինում գտնված մետաղե դրամները իրենց պատկերագրության տվյալներով համապատասխանարար արտացոլում են այդ երկու քաղաքների պատմության գլխավոր փուլերը, ինչպես նաև հիշատակում նրանց կապերը միջնադարյան տարրեր երկրների հետ:

## Х. МУШЕГЯН

### МОНЕТЫ, НАЙДЕННЫЕ В ГОРОДАХ АНИ И ДВИНЕ И ДАННЫЕ ИХ СОПОСТАВЛЕНИЯ

#### Р е з и ю м е

В статье впервые представлена хронология и династическая принадлежность основных групп восточных монет, найденных в двух крупнейших городах средневековой Армении—в Ани и в Двине. Соответствующие коллекции монет ныне хранятся в отделе нумизматики Государственного музея истории Армении (г. Ереван). Их данные позволяют судить об особенностях денежного хозяйства упомянутых армянских центров ремесла и торговли, а также об их связях с внешним миром. Найдки показывают, что для денежного обращения в городе Ани характерными были, в основном, византийские, сельджукские и монгольские монеты, отражающие соответствующие периоды политической истории города. В Двине же широкое распространение имели другие группы монет, а именно—сасанидские, арабские (омайадские и аббасидские), а также монеты сельджукидов и аatabеков. В массе византийских монет в Ани часто встречаются фолисы Иоанна Цимисхия (969—976), Василия II и Константина VIII (976—1025), Михаила IV (1034—1041), Теодоры (1055—1056), а также Константина X с Евдокией (1059—1067). Монетная медь Византии X—XI вв. в Двине не имела широкого распространения. Кроме византийских монет, в Ани обращались также медные монеты крестоносцев Эдессы XII в. В материалах Двина они отсутствуют. Медные монеты XII в. из Эдессы, обнаруженные в Ани, позволяют судить о связях населения армянского города с экономическими центрами Леванта. Следует полагать, что эти связи развивались в пределах сферы торговли с Византией, золотые монеты которой имели широкое распространение не только в Армении, но и в соседних с ней странах Закавказья.

С конца XII в. наблюдаются связи городов Ани и Двин с грузинским царством Багратидов. Грузинские медные монеты XII—XIII вв. проникали в сферу внутренней торговли городов Северной Армении. С конца двадцатых годов XIII в. данные о денежном обращении в городе Двине прекращаются. Разрушенный войсками хорезм-шаха Джалал ад-дина, а также монгольскими полчищами, некогда многолюдный Двин безвозвратно теряет свое былое значение. В дальнейшем крупным центром денежного обращения в Северной Армении остается бывшая столица Багратидов—оккупированный монголами город Ани. Находки свидетельствуют о том, что в Ани обращались монгольские монеты, в частности, дирхемы и фельсы Чингизида Менгю Хана, Хулагуидов-Аргун, Махмуд Газан, Мухаммед Худабанда Улджайту, Абу-Саид, Сулейман и Нуширван ханов. Более того, в самом г. Ани с 1300—1301 гг. по 1377—1378 гг. чеканились хулагуидские и джалаиридские монеты. Последний нумизматический памятник анийского выпуска относится к 1407—1420 годам. Это золотая монета с надписями имен Кара-Иусуфа (1389—1406) гг. и его наследника Пир Будаха (1407—1420) гг. из племени Карапоюнлу.

#### ՍԱՆՈՒԱԳՐՈՒԹՅՈՒՆԵՐ

1 X. A. Мушегян, Денежное обращение Двина по нумизматическим данным, Ереван, 1962.

2 Ч. Ղաֆարյան, Անի, «Հայկական սովետական հանրապետարան», Հատ. II, Երևան, 1974, էջ 407—411:

3 H. Mapp, Реестр предметов древности из VI (1907) археологической кампании в Ани, СПб., 1908, стр. 27—29.

4 И. А. Орбели, Избранные труды, Ереван, 1963, стр. 89, Анийская серия, № 3, СПб., 1910.

5 Անի քաղաքի թանգարանային նյութերը և դրամները կորստից փրկելու և պահպանության գործում իր երախտիքն ունի նիկողայու Մատի աշակերտ Աշխարհբեկ Քալանթարը, 1918 թ. մի խամր լուսեցի հայրենասերների շամքերով Աշխարհբեկ Քալանթարը կարողացել է թուրք զորքերի Անի մտնելու միջոցին գլուխ բերել Անիի հնադարանից թանգարանային նյութերը և դրանք փոխադրել Երևան: Այդ մասին տես՝ «Հայկական սովետական հանրապետարան», Հատ. II, 1974, էջ 407—411:

6 Դմիենի կենտրոնական թաղամասից ոչ հեռու՝ նորաշեն գյուղի մոտ գտնված ԺԱ դ. բյուզանդական սուկն դրամական զանձի պարունակությունը (3539 սոլիդներ) ենթակա է առանձին քննության:

7 Հիշալ քանակությունից բացի Դմիենում գտնվել են արծաթե, առավելապես արարատյան դրամների բեկորներ՝ 773,97 դրամ ընդհանուր քաշով, որոնք Հայաստանի դրամական տնտեսությանը բնորոշ լեն և վերապահված են առանձին քննության համար:

8 Я. А. Манандян, О торговле в городах Армении в связи с мировой торговлей древних времен, 1954, стр. 214. Թ. Ապահելան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ., Ա. Երևան, 1958, էջ 75:

9 В. В. Бартольд, История культурной жизни Туркестана, Л., 1927, стр. 82; А. Ю. Якубовский, Феодализм на Востоке, Государственный Эрмитаж, Л., 1932, стр. 27; Е. А. Пахомов, Монеты Грузии, Тбилиси, 1970, стр. 73.

10 Խ. Ա. Մուշեղյան, Դրամական շրջանառությունը Հայաստանում, Համ. Ա. Երևան, 1983, էջ 227—233:

11 И. А. Орбели, Избранные труды, Ереван, 1963, стр. 10.

12 Իրանի մոնղոլական խաների և նրանց հաշորդների կազմից Անիում թողարկված գրամների պատկերագրության հարցերին անդրադառն է վաստակաշատ դրամագիտական համար ե. Ա. Պախովովի Կովկասյան գրամագյուտերի իր կազմած ցուցակում 1926 թ. հիշատակի է Անիում գտնված բյուզանդական ԺԱ—ԺԲ դդ. 608 դրամներից բաղկացած գանձը՝ հիմք բնումնելով ն. Յ. Մայի զեկուցագրերը: Ե. Ա. Պախովովը բննության է առել Անիում գտնված վրաց թամար և Խուսուղան թագուհիների ԺԲ—ԺԴ դդ. պղնձե գրամները, ինչպես նաև քրիստոնեական խաչով և «Ճանուն Հօր և որդու» և «Պատուայ միակ» բանաձեռի արարերեն արձանագրությամբ մոնղոլական գրամները: Е. А. Пахомов, Монетные клады Азербайджана, I, 1926, № 130, № 148, вып. I, № 411, 467, вып. VII, № 1895.

13 Խ. Ա. Մուշեղյան, Դրամագիտական հավաքածու Շիրակից, «ՀՍՍՀ ԳԱ Լրաբան», Համ. գիտ., 1979, № 7, էջ 83—111:

14 Սույն հոդվածով առաջին անգամ հրատարակվում է Անի քաղաքում գտնված գրամների մեր կազմած ցուցակը, որի մեջ մտել են թե առանձին օրինակներով հայտնարկված և թե գանձերի մեջ պահպանված գրամները: Ինչ վերաբերում է Դվինի քաղաքի պեղումներից և շրջակայրից պատահականորեն գտնված դրամագիտական նյութերին, առաջ դրանք ներկայացված են ինչպես հրատարակված, այնպես էլ անտիպ. բայց վերջին քսան տարիների ընթացքում (1962—1982) մեր որոշմանը հանձնված բոլոր դրամներն ու գրամական գանձերը, որոնց ամբողջական ցուցակը նույնպես առաջին անգամ է հրատարակվում:

## Հ. ԱՏԵՓԱՆՅԱՆ

ՆՄՈՒՇՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆ ԹՈՒՐՔԵՐԵՆ ԶԱՓԱԾՈ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Ճակատագրի բերումով հայկական ձեռագրերը ցրված են աշխարհով մեկ: Մատենադարանների և մասնավոր հավաքածուների մեզ հայտնի ձեռագրացուցակներում հայտառ թուրքերեն ձեռագրերը դգալի թիվ են կազմում: Մեզ հետաքրքրող ձեռագրերի գերակշռող մասը գտնվում է երեանում՝ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում (շուրջ 300 գրչագիր ու պատառիկ): Այն իրենից ներկայացնում է բանահյուսական, պատմագրական, կրոնաբարոյախոսական, աստվածաբանական, բնական գիտություններին վերաբերող ձեռագրական հարուստ ժառանգություն և ընդգրկում է 600 ամյա մի ժամանակաշրջան: Այս ձեռագրերը գրի են առնվել կամ ընդօրինակվել են Կուտանընուպալուսում, Տիգրանակերտում, Կտուց աննապատում, Բայազետի բերդում, Աղրիանապոլսում, Եվդոկիայում, Կարինում, Վանում, Անկյուրիայում, Ջերիթունում, Պրուայում, Կյումուշխանեում, Մերաստիայում, Պետերբուրգում, Էստրախանում, Ղրիմում, Կալկաթայում և այլուր:

Բազմադարյան մշակույթ ունեցող հայ ժողովրդի մտքի, իմաստության, փորձի, ուրախության, սրամտության, վշտի ու տառապանքների, ներազների ու ցանկությունների արտահայտությունները Օսմանյան կայսրության թրքախոս գավառներում հնչել են թուրքերեն և գրի են առնվել հայատառ թուրքերենով: Ուստի զարմանալի չէ, որ մեզ չեն հասել որոշ գավառների բանահյուսության և ոչ մի հայերեն նմուշ: Այս հանգամանքն այսօր այնքան հմտորեն օգտագործում են թուրքիտնականները, ի թիվս այլ երեսութների՝ հայ բանահյուսության շատ նմուշներ՝ ներկայացնելով որպես իրենց սեփականությունը: Թուրքերեն լեզվով լինելու ցավագին այս հանգամանքը, այնուամենայնիվ նպաստել է, որպեսզի ավելի արագ ու դյուրին տարածվեն այս ստեղծագործությունները Օսմանյան միապետության բազմազգ ժողովուրդնե-

ըի շրջանում, ազգեն թրքախոս ստեղծագործական մտքի վրա, նաև ազգվեն նրանից:

Աշուղական գրականությանը, բանահյուսությանն է վերաբերում հայատառ թուրքերին ձեռագրերի գերակշռող մասը<sup>1</sup>:

Հայ աշուղական, գուսանական արվեստի արմատները դարերի խորքից են գալիս, երբ դեռ չէր կազմավորվել թուրքական պետությունը: Վաղ և միջնադարյան հայ գուսանական, աշուղական գրականության ուսումնասիրությանն են նվիրված Մ. Թաղիադյանի, Դ. Ալիշանի, Մ. Էմինի, Ստ. Պալասանյանի, Հ. Գաթրճյանի, Գ. Զարքհանալյանի, Մ. Արեգյանի, Ա. Չոպանյանի, Ստ. Մալխասյանի, Լևոն Մեսրպի, Հ. Բերբերյանի, Գ. Թարվերդյանի, Գ. Լևոնյանի, Ա. Մնացականյանի, Հ. Սահակյանի, Ծ. Գրիգորյանի, Ա. Շահումվարյանի և ուրիշների բազմաթիվ աշխատություններ, հայ տաղերգուների երկերի գիտական հրատարակություններ, որոնք թույլ են տալիս ճիշտ ըմբռնելու մեղ հետաքրքրող հայատառ թուրքերն տաղերն իրենց տարբերակներով: Բանասեր Գ. Լևոնյանը հաշվում է ավելի քան 400 աշուղներ, որոնք ժեկ-ժթ գարերում ստեղծագործել են միհաժամանակ հայրեն և թուրքերն լեզուներով<sup>2</sup>: Ընդունված է եղել զանազանել երկու կարգի աշուղներ. աշուղներ, որոնք հանպատրաստից են հորինել ու կատարել իրենց երգերը որևէ գործիքի նվազակցությամբ (մեյտան շուարաս), և աշուղներ, որոնք նախապես գրավոր ունեցել կամ պատրաստել են իրենց տաղերը (քալեմ շուարասը)<sup>3</sup>: Այնուամենայնիվ դժվար է դանաղանել այս աշուղներին, քանզի երկրորդները ևս շատ հաճախ հանպատրաստից էլ են կատարել:

Հաճախ, հոգևոր հայրերը գայթակղվելով աշխարհիկ, ժողովրդական թևմաներով գրված այս տաղերով, ոչ միայն մշակել են և վերափոխել գրանք հոգևոր տաղերի, այլև իրենք էլ ստեղծել են աշխարհիկ բովանդակության երգեր՝ կրոնական նույր քողի տակ, գրի են առել ժողովրդի արդ գանձերը, որոնց մի մասն էլ այսօր մեղ է հասել Ավելին՝ ընդունելով ժողովրդական երգերի ավանդույթները՝ գրել են ժողովրդական, խոսակցական լեզվով, որը հիմնովին տարբերվում էր եկեղեցական լեզու դարձած հին հայերենից՝ գրաբարից: Թրքախոս գալառներում հոգևոր հայրերը երբեմն ստեղծագործել են նաև թուրքերեն, և այդ տաղերը ևս գրի են առնվել հայատառ թուրքերենով: Հաճախ էլ, հայտնի թուրքերեն երգի նույն սիրված մեղեղու համար գրել են հայրեն նոր բառեր՝ նպատակ ունենալով զարկ տալու հայերեն լեզվով երգերի տարածմանը: Մեղ են հասել Հովհաննես Երզնկացու, Հովհաննես

թլկուրանցու, թաղեռս թոյսաթեցու, նահապետ թուշակի, Գրիգորիս Ալլիթամարցու, նաղաջ Հովնաթանի, Պաղտասար Դպիրի և ուզիշների հայատառ թուրքերեն տաղերը: Զեռագրերը, ուր ամբարված են բաղմաթիվ հայատառ թուրքերեն շափածո ստեղծագործություններ՝ թուլլ են տալիս միաժամանակ որոշ պատկերացում կազմելու թուրքական շափածո գրականության մասին և հետևել դասական ու ժողովրդական գրականության զարգացմանը:

Թուրքական դասական գրականությունը, ընդորինակելով արաբապարսկական միստիկ բովանդակությամբ հագեցված ծեքծեքում, վերամբարձ ոճը՝ ստեղծվել ու զարգացել է պալատներում, միշտ հեռու, օտար մնալով ժողովրդին: Պալատական գրականությունը չի արտահայտել իր ժամանակի բնորոշ գծերը, սոցիալ-տնտեսական իրավիճակը: Ավանդական կառուցվածքային ֆորմուլներից դուրս չեկող ստեղծագործություններում չեք գտնի հեղինակի ժամանակակցին: Այս բանաստեղծներից միայն մի քանիսն են, որ վայելել են ժողովրդի սերը:

Աշխարհի բոլոր տիրակալները, թագավորներն ու սուլթանները, ոնեցել են իրենց կողքին երգիչներ, որոնց հովանավորել են, սիրել, երբեմն էլ զգուշացել նրանց սուր խոսքերից: Այս երգիչներից ոմանք, ապրելով ճոխ պալատներում, շքեղության մեջ՝ ձգտել են դեպի ժողովուրդը, բնությունը և այնտեղ գտել իրենց հոգեկան հանգստությունը, ազատությունը՝ զերծ կաշկանդումներից: Նրանք դուրս են եկել սոսկ դասական ավանդույթներով ստեղծագործող պալատական երգի սահմաններից, երգել են երկրային սեր, ժողովրդի հոգսերն ու ուրախությունները, երբեմն էլ ապստամբել են պալատի դեմ, սպառնացել, որի համար այնքան խստորեն պատժվել են:

Թուրք իրականության մեջ, պալատական թուրք երգիչների կողքին ստեղծագործել են շատ սիրված ու գնահատված հայազգի երգիշներ, ինչպես՝ Արգու Մեշիդ սուլթանի երգի Թեշիշօղլին, սուլթան Մահմադի երգի Խոփեթին և ուրիշներ:

Հայատառ թուրքերեն ձեռագիր տաղարաններում հանդիպում ենք անունների, որոնք թուրք գրականության պատմության մեջ համարվում են դասական գրականության ներկայացուցիչներ, որոնցից մի քանիսի լեզուն, հայկական մտածողության առկայությունը, բովանդակությունը, առաղաշափական կառուցվածքը թուլլ են տալիս ենթադրելու դրանց հեղինակների հայ լինելու հանգամանքը: Նույն այս հեղինակների անունները գտնում ենք համապատասխան շրջանի թուրք գրականության մասին աշխատություններում՝ ներկայացված որպես թուրք աշուղներ՝

Համապատասխան կենսագրություններով։ Այդպիսին են Կաբակլու Ահմեղի<sup>4</sup>, Վասփի Մահիր Թոջաթուպքի<sup>5</sup> աշխատությունները, որտեղ գրտնում ենք մեզ հետաքրքրող աշուղների մասին ոչ միայն գրականագիտական տեղեկություններ, այլև, որքան էլ որ զարմանալի է, նրանց նկարները թուրքական հագուստներով։

Զեռագրերում ամբարված հայատառ թուրքերն աշուղական տաղերի գիտական, քննական հրատարակությունները ոչ միայն ճշտումներ կմտցնեն նրանց հեղինակների աղջային պատկանելության հարցում, այլև որոշ վերագնահատումների կմզենու Պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ աշուղների մեծ մասը կրել են պարսկական անուններ։ Երկրորդ՝ նույն անունը կարող էին կրել մի քանի աշուղներ, և երրորդ՝ որ նույն աշուղը կարող էր ունենալ մի քանի անուններ։ Այսպես օրինակ, ԺԲ դարի աշուղ Զարուրին մրցույթներում հաղթելով, ի թիվս այլ աշուղների, նաև հայտնի Թիւմճարիին, ստացել է Քեշշօղը՝ մականունը, որը փոխել է Զարուրիի։ Կ. Պոլսում մտերմանալով մի թուրք բեյի հետ՝ ներկայացվում է Սուլթան Մահմուդ Բին, որին հանպատրաստից ձոնում է մի տաղ։ Առառ պարգևի հետ միասին սուլթանից նա ստանում է նոր մականուն՝ Շավիճ<sup>6</sup>։

Հայատառ թուրքերն աշուղական դրականությունն ուսումնասիրել են։ օտարազգի հետազոտողներից գերմանացի Նշանավոր արևելագիտներ էննո Լիտմանը<sup>7</sup>, Օտտո Շպիլը<sup>8</sup> և ուրիշներ։ Թուրք հայտնի գիտնական Ֆոււադ Քյոփրյուլում իր աշխատություններում անդրադարձել է երեք հայ աշուղների, որոնք գրել են հայատառ թուրքերն։ Դրանք են՝ Մեսիհի էրմենին, Սերգիս Զեքին (Նուռլյան), Միրզա Խանը։ Յ. Քյոփրյուլում դրվատանքով է հիշատակում ԺՈ դարի մի այլ աշուղի, ոմն Վարդանի, որն անհամեմատ ավելի տաղանդավոր է եղել, քան վերը հիշատակվածները<sup>9</sup>։ Իղղեթ Ռվակին, Ահմեդ Ռասիմը թվում են Ստամբուլի բազմաթիվ հայ աշուղների, որոնք միաժամանակ թուրքերն են կատարել։ Յուսուֆ Նարիի մի նամակից իմանում ենք ԺԶ դարի երկու հայ աշուղների մասին՝ Վարդան և Մեշնում<sup>10</sup>։

Ահա մի քանի անուններ՝ վերցված հայատառ թուրքերն տաղարաններից։ Պահարի, Սետաէի, Մելզումի, Ակեահի, Մերշումի, Զաեհիֆի, Ճեհատի, Շուլսի, Էօմեր, Շագիրի, Թանդիրի, Ապիտի, Ֆասլը, Նեպաթի, Հաշիմի, Գարունի, Մահգունի, Սենաթի, Կեվչերի, Սարհօշ օղլու, Մեծնումի, Տելրի, Իրֆանի, Բավզիա, Նեվնի, Լիւմճեյի, Նեֆինի, Նիհատի, Վեհապի, Ճիւտայի, Նաղիր<sup>11</sup>, Արրահամ, Կարաջ օղլան, Դալլար, Մուրադ, Տօնի, Միսկին, Բուրջի, Պետրջի օղլի, Օվչի Նավասի, Մամադ,

Համբար օղիի, Քեշիշ, Ալավերդի, Մահմուդ, Հարություն Սալմաստեցի<sup>12</sup>: Աշուղները (հիմնականում սազի նվագակցությամբ) շրջել են Օսմանյան բազմադպ կայսրությունով, երգել խաղացել, կատարել են իրենց և թե ուրիշների ստեղծագործությունները: Եվ քանի որ թուրքերներ հասկանալի էր բոլոր մյուս ազգերի համար ևս, բնական է, որ լինելով անգամ հայախոս գալառների ծնունդ՝ աշուղները հիմնականում կատարել են թուրքերներ:

Հայատառ թուրքերներ տաղարանների ամենագեղեցիկ նմուշները սիրո տաղեր են, հավաստող դարերից եկած ամենախոր փիլիսոփայությունն այն մասին, որ զգացմունքներից ամենագեղեցիկը վեր է հասարակական սոցիալական, դասակարգային, ազգային ու կրոնական բոլոր պատկանելություններից ու նախապաշարումներից՝ թեև այն ընդվզում է բարձրագործական սովորությունների ու ավանդույթների գեմ:

Տաղերում նկատել ենք կառուցվածքային հետեւյալ տարրերակները. — մեկ տողը հայերն է, մյուսը հայատառ թուրքերներ (երբեմն արաբախառը): Տողերից մեկը մյուսի թարգմանությունն է կամ՝ միմյանց շարունակում են առանց թարգմանության:

Հայերն երկտողին, քառատողին հաջորդում է հայատառ թուրքերներն երկտողը կամ քառատողը՝ նույն սկզբունքով:

Նույնիսկ հայերն տաղերում, հայերններում տեքստը երբեմն ընդմիջվում է հայատառ թուրքերներ բառերով, մտքերով, առանձին քառյակներով, որոնք բովանդակային շարունակություն են կազմում և կամ նախորդի թարգմանությունն են պարզապես:

Մեծ թիվ են կազմում այն տաղերը, որոնց հեղինակները, ստեղծման ժամանակը անհայտ են և որոնց հրատարակությունը մի քանի ստվար հատորներ կարող է կազմել: Դրանց մեծ մասը գեղարվեստական որոշակի արժեք են ներկայացնում: Ահա սիրո տաղի մի օրինակ: «Տաղ՝ Դրիգորի ասացեալի»-ի առաջին մասը երկլեզված է:

Ֆիզանէ պաշլատըմ պիկակալէր թիպի

(Սոխակների պես ողբալ սկսեցի)

Վարդն է նըստեր ի բարձր որպես թագուհի,

Տաղէրէ կէզէրտմ պէն մէճլուն քիաի

(Թափառում էի Մեճնումի պես սարերում)

Թապալիմ թապկըլիմ ի վերայ վարդի:

Խարշիտան կէլէն կէսլերի մէստան

(Դիմացից եկողի աշքերը խումար)

Կամ արեք մօտ լիս կամ տուր պատասխան

Ճիկէր տաւղրանորի վուրդուն ու կիրեան

(Զարկված սիրտս ողբաց խոշտանգված)

Արեկ որ նըստիք մէճլիս ի սէլլան  
(Եկ նստենք խինդ ու ուրախության)  
Կէլ սէն եանըմա, եղանճա ահան  
(Դու ինձ մոտ արի, մոտ ժամանակներս)  
Զմեղ ուրախացոյ զարկ զմը բռայ չշշտէն  
Պիւլափիւ տէ կէլտի՛ պիւլափիւ խանտէն  
(Սոխակի էլ եկավ, զվարթ սոխակը)  
Ես եմ խիստ ուրախ ի քո գալըստեան:  
Սալանի զազել ծարուր քաշել ես  
(Գեղցկուհի, մազերիդ ծարուր քաշել ես՝  
Լովն աք մըթըլ, վարդ հոտավ, քեաֆուր ես  
(Ճերմակ երեսով, սոկեզօծված, ձյունասպիտակ վարդի հոտավ)  
Սինին, աք լուզու կարմիր հաղել ես  
(Ճերմակ կրծքիդ վառ կարմիր ես հաղել)  
Ֆումմաք մուտավար նուշ ու շէլ երես:  
(Բերանդ կլոր նուշ ու երեսդ խոնավ):  
Է հապիպ զալա զու զիս արիր բոց  
(Սիրահար մնա, զու զիս արիր բոց)  
Մուխաֆ մնացեալ հայրի մի հրեց  
(Շատ խորհրդավոր ես մնացել ի հնոց)  
Էշ շամլը նա տապ մարկարտէ շարոց  
(Նոնու ես նման, ինչպես գովիճ, մարդարտէ շարոց)  
Ըսխյնիւիր սա ի մեշ վարդենոց:  
Է կարմիր ըսպիտակ զու սոկի զընդուլ,  
Էր զարկեր գուն զիս այդ շարիսի նևտով,  
Տապալիմ զեմ զիմացտ ահ կանչեմ ձայնով,  
Դուն ուսաի ուսար թուղ ամպ լինելով:  
Է վիզըտ շող կուտա, երեստ է փայլուն  
Ով ըզքեղ տեսանէ սըրտիկն է յարիւն,  
Հիզանդ և փափաք եմ ի քո կարաւուն,  
Արեկ զիս ի տես, իմ հէքիմըն դուն:  
Թե չի գաս ի տես, մեզը է քո հոգուն,  
Կու մնոնիմ հալվէթ ի քո կարօտուն,  
Դու ինձ զեղիկ արալ Աստուծոյ սիրուն,  
Իմ սըրտին ումեկըն և արեցն դուն:  
(Իմ որաի հուլոն ու արեք դու):  
Այդ զեղեցկութիւնդ կու անցանի  
Անճա պիտի լաս ողորժու լալի  
Գիտես թի ինչ խըզենը արի դու ինձի  
Պագիկ մի պարտ էր ալլի գոնվի:  
Որ երթամ ռանզում իմ գանգատըն դուն  
Էր հանց կու պահես ըզմարդն երերուն,  
Մաղրը և խայտառակ կառնես թընամոյն  
Քանց քազ հազար կալ ճավրով ճիկէր դուն<sup>13</sup>:

Հայատառ թուրքերեն տաղարաններում տեղ են գտել քառյակներ, գաղելներ, բելիթեր, որոնցից մի քանիսի հեղինակներն ամենայն հավանականությամբ հայեր չեն:

Հայատառ թուրքերենով մեղ են հասել բազմաթիվ աշխատանքային, հեթանոսական և քրիստոնեական տոներին նվիրված երգեր (ծաղկաղարդի, բարեկենդանի, վարդավառի, համբարձման տոների ժամանակ շուրջպարերի հետ կատարվող երգեր): Այս երգերի մի մասի վառ թատերայնությունը թույլ է տալիս վերարտադրելու որոշ ծիսակատարություններ՝ ամենայն մանրամասնությամբ: Այս առումով անշափ գունեղ են հարսանեկան երգերը, որոնք բազմաթիվ մասերից են կազմված: Յուրաքանչյուր արարողություն ուղեկցվում է համապատասխան երգով: Բացի թատերական երանգներից՝ դարերի փորձն ու փիլիսոփայությունն են պարունակում ընտանեկան կյանքին վերաբերող երգերը: Դրանք մեղմ ու քնքույշ օրորոցայիններ են, տանտանաներ: Դրանք հատկապես գունեղ, երգիծական երգեր են, որոնց գործող անձիք հարսերն ու սկեսուրներն են:

Աշուններն անբաժան ուղեկիցներն են եղել պատերազմների, ապստամբությունների<sup>14</sup>: Նրանք երբեմն ամենայն մանրամասնությամբ նկարագրել են դեպքերը, դեմքերը: Այս երգերն իրենցից ներկայացնում են սպառնական, խրոխտ ոճով գրված քայլերգեր: Շատ հաճախ, արշավանքների, մարտերի, ընդհարումների մասին պատմող երգերը թուրքերեն են հնչել նույնիսկ հայախոս գավառներում, որպեսզի թուրքերը ևս լսեն, հասկանան: Բազմաթիվ նման երգեր գրված են ընդդիմախոսությունների հիման վրա, ուր հետաքրքրությամբ երևան է գալիս պայքարող կողմերի նկարագիրը: Թուրքերն այս երգերում տարբեր իրադրություններում տարբեր բնավորության գծերով են հանդես գալիս. վախկոտի դիմաց՝ գոռող, պոռոտախոս ու ամբարտավան, իսկ քաջի հետ հանդիպելիս՝ քծնող ու վախկոտ:

Արագորեն են հյուսվել քաղաքական, երգիծական երգերը, որոնք արագ էլ մոռացության են մատնվել, քանզի նվիրված են եղել որոշակի դեպքերի, առանձին պատմական դեմքերի, իրադարձությունների: Այս երգերը հիմնականում որոշակի ուղղության, կառուցվածքային կանոնների շեն ենթարկվել: Ուղեկցվելով թամապուրայի նվագակցությամբ, կատարվել են խնջույքների, ճամփորդությունների, ուխտագնացությունների ժամանակ: Ժողովրդական բանահյուսության ամենահինքնաբուխ արտահայտությունները երգերն են, որ կատարվել են տարբեր առիթներով՝ նաև տիսուր ու դժբախտ: Մեզ հասած հայատառ թուր-

քերեն պանդիմտության երգերը կարուտի երգեր են՝ լեցուն ավելի շատ հոռետեսությամբ, քան թե բարի վերադարձի ու լավ վաստակի հույսով։ Այս երգերը վերաբերում են ոչ միայն պանդուխտին, այլև նրան սպասող մորը, հորը, հարազատներին, հարսնացուին։ Մորմորով լեցուն այս երգերի մի մասը բնականաբար վերաճում է անհծոի՝ ուղղված իրենց դժբախտության պատճառը հանդիսացողին։

Կէօպիմիւն բշը աէօլիմսին  
Ճիշտինէ աթեշ տիւզսին  
Օճաղըն պատսըն  
Էլին պաշընա երխըլըն։

Ալքիդ լույսը մարի  
Հոգիդ կրակ ընկնի  
Օչախդ կործանիի  
Տունդ գլխիդ փլվի։

Ժողովրդի դառնությունների, դժբախտ ու տիսուր օրերի երգերից են եղերերգերը, ողբերը, որոնք հիմնականում կատարվել են հանպատրաստից և ունեցնել են իրենց որոշակի, ընդունված բովանդակային և կառուցվածքային ձևերը<sup>15</sup>։

Ժողովրդական բանահյուսության մյուս ժանրերին վերաբերող ստեղծագործությունները արդյունք են նաև ժողովրդի մեջ ընդունված՝ ձմեռվա երկար երեկոներին հավաքվելու, պատմություններ պատմելու, զբաղվելու, զվարճանալու սովորության։ Մեծ թիվ են կազմում առածները, առակները, առացվածքները<sup>16</sup>, հեքիաթները<sup>17</sup>, վիճակախաղերը<sup>18</sup>, թվաբանական խոսելուկները, տաղ-հանելուկները և առած-հանելուկները<sup>19</sup>, ոտանավորները<sup>20</sup>, գուշակությունները<sup>21</sup>, պատմությունները՝ ընդմիջված երգերով<sup>22</sup>. Այս ստեղծագործություններում գերակշռում են շափածո ձևերը։

Ժողովրդի կենցաղի, սովորությունների մի այլ կողմի՝ սնուտիապաշտության արտահայտություններն են նաև հմայագրերը։ Ընդունված են եղել հմայագրերի արաբատառ տեքստերը։ Ռւստի պատահական չէ, որ հայատառ թուրքերն հմայագրերին անպայման կից են նրանց արաբերեն և պարսկերեն տեքստերը<sup>23</sup>։

Տրամարանական պիտի համարել այն երևույթը, որ լոկ հայկական կամ ինքնուրույն ստեղծագործություններ կատարելով բանասացները, աշուղները այդքան մեծ հարգանք, սեր ու ժողովրդականություն գժվար թե կարողանային վայելել Օսմանյան կայսրության նման բաղմագք մի երկրում։ Նրանք մեծ դեր են խաղացել նաև պետության մյուս ժողովրդների բանահյուսության տարածման, կատարման, մշակման, նոր տարրերակներ ստեղծելու գործում։ Այդ են վկայում տարբեր ժանրերի ստեղծագործություններին կից (ոմանց) պարսկերեն, հայատառ

պարսկերեն, թաթարերեն, հունարեն, եբրայերեն, լատիներեն, հունգարերեն (մաճառերեն), հայատառ քրդերեն, օսմաներեն, հայատառ արարերեն, մոլդավերեն զուգահեռ տարընթերցումները:

Հայատառ թուրքերենով մեզ են հասել ոչ միայն այլազգի և այլազգու աշուղների ստեղծագործությունները, այլև նրանց ժողովուրդների բանահյուսության մի շարք նմուշներ: Արևելքում տարածված սիրավեպերի առկայությունը հայատառ թուրքերեն ձեռագրերում ապացուց է այն բանի, որ դրանք մեծ սիրով պատմվել, երգվել են նաև հայկական շրջաններում, գրի են առնվել հայատառ թուրքերենով: Շահ Իսմայիլի, Ասլիի և Քյարամի, Աշուղ Ղարիբի, Քյոռ Օղլու, Խան Չորանի, Թահիր Միրզայի պատմություններն առատորեն ընդմիջված են բազմաթիվ երգերով<sup>24</sup>:

Հոգևոր, կրոնաբարոյախոսական բնույթի ամենավաղ հայատառ թուրքերեն նմուշները ԺԶ—ԺԷ դարերին պատկանող օրհնություններ և աղոթքներ են<sup>25</sup>: Հատկապես թուրքաշատ վայրերում հայերն ազատ չէին իրենց մայրենի լեզուն օգտագործելու Մահվան սպառնալիքով, լեզուն կտրելով՝ արգելվում էր խոսել հայերեն: Նույնիսկ քարոզք եկեղեցուակտարվում էր թուրքերեն՝ հասկանալի լինելու թուրքախոս հայերին: Բացի առօրյա եկեղեցական ծիսակատարություններին վերաբերող ձեռագրերից, հայատառ թուրքերենով պահպանվել են կրոնաբարոյախոսական պատմություններ<sup>26</sup>, հոգևոր տաղեր<sup>27</sup>, եկեղեցիների պատմությանը վերաբերող ձեռագրեր<sup>28</sup>, վարք սրբոց<sup>29</sup>, խրատներ<sup>30</sup>, հայսմալուրք<sup>31</sup>, ախտարք<sup>32</sup>, ճաշոց<sup>33</sup>, եկեղեցական գրագրության օրինակներ<sup>34</sup>, ամուսնական դաշնագրերի պատճեններ<sup>35</sup>, անդորրագիրք և կահագիրք<sup>36</sup>, ճառեր<sup>37</sup>, կրոնական տաղեր<sup>38</sup> և այլն:

Երկեղզվյան՝ հայերեն և հայատառ թուրքերեն տեքստերը հիմնականում թարգմանություններ են՝ կատարված լատիներենից, իտալերենից, արաբերենից: Հետաքրքրություն են ներկայացնում բժշկարանները. օրինակ՝ իտալերենից թարգմանված եռամաս մի բժշկարան, որը ԺԷ դարի ձեռագիր է<sup>39</sup> և կազմված է բնախոսության, ախտահանության, ախտորոշման բաժիններից: Բժշկարաններն ունեն առողջապահությանը, մարդակազմությանը, բույսերի բուժիչ հատկություններին նվիրված մասեր:

Հետաքրքրություն է ներկայացնում, կարծում ենք, «Պատմութիւն գիտոյ Ամերիկայի» ձեռագիրը<sup>40</sup>:

Գիտություններին վերաբերող ձեռագրերն, ի տարրերություն նմանատիպ հայերեն ձեռագրերի՝ անհամեմատ աղքատ են, ոչ միայն քա-

Նակով (մոտ 40), այլև ընդգրկման շրջանակներով։ Ժէ դարից սկսած հանդիպում ենք քիմիային<sup>41</sup>, թվաբանությանը<sup>42</sup>, աստղաբաշխությանը<sup>43</sup> և վիրված ձեռագրեր։ Համեմատաբար շատ են բժշկության, մարդակաղմության, դեղագործության<sup>44</sup> մասին ձեռագրերը։ Կան նաև թանաքպատրաստելու<sup>45</sup>, տարրեր գույներ ներկելու միջոցների մասին<sup>46</sup> նամակների և պարտամուրհակների օրինակներ<sup>47</sup>։ XVIII—XIX դդ. Օսմանյան կայսրության տնտեսական, առևտրական կապերի վիճակի առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում Կոստանդնուպոլսի մաքսատան սակացուցները<sup>48</sup>։

Փատմությանը վերաբերող հայատառ թուրքերեն ձեռագրերի թիվը մոտ 20 է՝ «Պատմութիւն Օսմանեան թագաւորաց»<sup>49</sup>, «Պատմութիւն Աղեքսանդր Մակեդոնացւու»<sup>50</sup>, «Պատմութիւն Նադիր շահին»<sup>51</sup>, «Պատմութիւն Լութֆիկ թագաւորին»<sup>52</sup>, Վարքագրական բնույթի են «Պատմութիւն Գրիգոր Լուսաւորիչին»<sup>53</sup>, «Պատմութիւն Եղիալի Խարբերդցւոյ»<sup>54</sup>, «Վարք եւ պատմութիւն ի Դաշտիկ ծաղկողի գրոց»<sup>55</sup>, «Պատմութիւն Նահատակութեան Ապոնաթումայ»<sup>56</sup>, Պատմական բովանդակության ձեռագրերից են՝ «Գրիգոր պատմութեան ընդդէմ Փափապաշտից»<sup>57</sup>, Գրիգոր Դարանաղցու երկը<sup>58</sup>, ուղերձներ<sup>59</sup> և այլն։

Հայատառ թուրքերեն ձեռագրերի թվում են «Պատմութիւն Փարէղու եւ Վենալի»<sup>60</sup> միջնադարյան ասպետական ամենահայտնի և ամենասիրված ստեղծագործությունը՝ ժամանակին թարգմանված աշխարհի տարրեր լեզուներով (թարգմանիլն է Երեմիա Քյոմուրճյանը), և Երեմիա Քյոմուրճյանի «Պատմութիւն Տիմօխ»<sup>61</sup> լիրիկական պոեմի հայատառ թուրքերեն տարրերակը։ Հետաքրքական է մ.թ.ա. է դարում, ասորա-բարելական միջավայրում ստեղծված հաղվագլուտ, հմայիչ գրական մի հուշարձանի՝ «Խիկարի զրույց»-ի հայատառ թուրքերեն տարրերակի առկայությունը։ Այն ստեղծվել է Թրքախոս հայերի միջավայրում՝ թարգմանվելով զրույցի հայերեն տարրերակից<sup>62</sup>, Այսպիսով, «Խիկարի զրույցը» երևան է եկել նաև թուրքալեզու գրականության մեջ։

Այս ձեռագրերում ևս հանդիպում ենք հայերեն գրված մասերի Դրանք երբեմն հայատառ թուրքերեն բնագրի թարգմանություններն են, երբեմն՝ ուղղակի հայատառ թուրքերենը ընդմիջվում է հայերենով, իսկ հաճախ նաև՝ հայերեն հատվածներն արտահայտում են նախորդ՝ հայատառ թուրքերեն հատվածների համառոտ բովանդակությունը։ Եթե ձեռագիրը երկլեզվա է, հաճախ մեկ թերթի վրա տրվում են միանգա-

մից երկու գուգահեռները, ինչպես հանդիպում ենք ավետարաններում<sup>63</sup>, քարոզներում<sup>64</sup>:

Վերը նշված համարյա բոլոր ձեռագրերը հետագայում բազմաթիվ տպագրություններ են ունեցել, թեև քիչ շեն նաև այն ձեռագրերը, որոնք պատմական, գիտական և գեղարվեստական արժեք են ներկայացնում, անտիպ են և կարոտ հետազոտման: Այս առումով, պատմական որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Թովմա (Թումա) վարդապետի մահվան առթիվ գրված հայտառ թուրքերեն «Վասն Թումայի վարդապետի Կոստանդնուպոլիսի պատրիարքի», որ ետում սպանանելք<sup>65</sup> տաղը՝ նվիրված 1657 թ. աթոռակալների<sup>66</sup> միջոցով սպանված Կ. Պոլսի պատրիարք Թումա Հալեպցում: Տաղն անանուն է, գրված առաջին գեմքով՝ Թումայի անունից և նման բնույթի հայտառ թուրքերեն մեզ հայտնի միակ գործն է: Հայ միջնադարյան պանդսության երգերին հատուկ ձևով է նկարագրվում մահվան սնարում շուրջը ոչ մի բարեկամ շտեսնող Թումայի կարոտը, վիշտը, մորմոքն ու ողբերդական միճակը: Ահա այդ տաղը՝

Տաղ վասն Թումայի վարդապետի Կոստանդնուպոլիսի պատրիարքի,  
որ ետում սպանանել

Թումայ էյ տէր, սուլում նէ տիր կիւնահըմ պիլինմէզ,  
(Թուման ասում է, հանցանքս ի՞նչ է, մեղքս ի՞նչ է, չի իմացիլի)  
Աքար պէնիմ չէշիմ հաշի սիլինմէզ,  
(Կհօսի իմ արտասուքը և չի սրբի)  
Պու տիենարտէ էհի իման պուլումմազ  
(Հավատացյալ չի գտնիլի այս երկորամ)  
Ետա էլլէրտէ կալտըզըմի աղլէրիմ:  
(Ողբում եմ, որ օտարության մեջ եմ մնացել)  
Քահաբէ ֆէլէր պիպէ վէրմէտի էման  
(Ստոր աշխարհը մեզ աման<sup>67</sup> շտվեց (փրկություն շտվեց))  
Հէքայ կէլտի պաշըզըզայ պէկումէն,  
(Անսպասելի փորձանք եկավ մեր գլխին)  
Պաղլանըպ դընաանէ կիրտիկիմ զէման  
(Երբ կապուած զնդան նետեցին)  
Քարանլըբուայ կալտըճաղըմ աղլէրէմ:  
(Ողբում եմ, որ խավարի մեջ մնացի):  
Ղարիպ կեօնկլում, տուշմէտի պիր էլայի,  
(Պանդուսա հոգիս ու մի դադար շունեցավ)  
Նէ կեահտէն տըբտըլար պէնի կուլայէ,  
(Այն ժամանակվանից, երբ ինձ շղթայեղին)  
Եալնըգնա կալտըզըմը աղլարըմ:

(Ողբում եմ մենակ մնալուս համար)՝  
Պիո իքի մընաֆըթ կիրտի քանըմայ,  
(Մի երկու ոսխու մահու տվեցին)  
Եարանլէրիմ պուլումատի եանըմայ,  
(Փրկողներ ինձ շմոտեցան)՝  
Քնաֆիր զիմինլէր<sup>68</sup> կիրտիլէր քանըմէ,  
(անհավատ զիմիները արյունս թափեցին)  
Հէսրէթիլէ օլտիճէրիմ աղլարէմ:  
(ողբում եմ կարոտով մահանալուս համար):  
Պէնիմ աշըմ էտէնլէրէ քալմասըն,  
(Թող նրանց այդ չներվի)  
տունեասընտէ էհրէթինսիէ կիւմեսըն,  
(ոչ այս, ոչ այն աշխարհում չուրախանան)  
տէվրի քըհայմեթոտէ իման պումասըն,  
(ահեղ դատաստանի ժամին ներում չգտնեն)  
մուրատըմայ էրմէտիմ աղլարըմ:  
(Ողբում եմ, որ նպատակիս չհասա):  
Աղլատը կէօպէրիմ քան եաշ աղլատը,  
(Աշքերս արտասկում են, արյուն արցունք թափում)  
աճի սօղէր ճիկէրնիմ տալլատը  
(դառը խոսքներն այրեցին չոգիս)  
զալըմ ճէլլատ քոլլարըմը պաղլատը  
(անխիղճ դահիճը թներս կապկեց)  
եատ էլլէրտէ օլտուկումը աղլարը:  
(ողբում եմ պանդխտության մեջ գտնվելո):  
Պաք շու պաշըմըղայ կէլէն պու իշէր,  
(Տես մեր գլխին եկածները).  
Քնաֆիր կէորսէլ պէնի կումահըմըզ պաղըշիլը,  
(անհավատն անգամ ինձ տեսնելով մեղքերիս թողություն կտա)  
խալիրէ տօնմէտի կեօրտուկումըզ տուշէր  
(տեսած երազներս բարի ավարտ շունեցան)  
եատ էլլէրտէ օլտուկումը աղլարէմ:  
(ողբում եմ պանդխտության մեջ գտնվելո):  
Սէլամ էլլէն վալիտէմէ, կարտաշըմէ  
(Բարեւ տարեք իմ մորն ու եզրորը)  
թիւրլի թիւրլի հալլար կէլտի պաշըմէ,  
(տեսակ տեսակ փորձանքներ եկան գլխիս)  
գէհիրլէն աղը կաթտըլար աշըմայ  
(կերակուրիս մեջ դառը թույն խառնեցին)  
եատ էլլէրտէ օլտուկումի աղլարէմ:  
(ողբում եմ պանդխտության մեջ գտնվելուս համար):  
Եարանլարըմ հիւտամ սաթամ սաթասըն,  
(Բարեկամներ, աստված ձեզ պահապան),  
Հէպար էլլէն քարտաշլարըմ աղլասըն.

(Հայտնեցեք եղբայրներիս, թող ողբան)՝  
հկմշիրէմ վալիտէմ սիեահ պազլասըն,  
(թուլու ու մայրս սենոր թող հագնեն)  
պիր քրէճիկ կէօմէքտիկիմ ազլարըմ:  
(ողբում եմ, որ մեկ անդամ էլ շտեսա):  
Վատէմ յէթոփ պու տիեարտէն կեօլօլտըմ  
(ժամս հասավ, այս աշխարհից հեռանում եմ)՝  
գերտիմիզ պիրիքն արթը յիւզ օլտը,  
(մի վիշտ ունեինք, հարյուրը դարձավ),  
եազըր պէնիմ էմէճիմ հէլ օլտը,  
(ափսոս իմ գործը ի միք դարձավ),  
օնուն իշուն պէն տաճիյան ազլարըմ:  
(դրա համար ես շարունակ ողբում եմ):

Հայտառ թուրքերին ձեռագրերի հրատարակությունները, բնագրերի բննական ուսումնասիրությունները հետաքրքիր արժեքների, վերագնահատումների առիթ կտան: Ձեռագրեր, որոնք սպասում են իրենց մշակներին:

А. СТЕПАНЯН

## ОБРАЗЦЫ ПОЭТИЧЕСКОЙ АРМЕНОПИСЬМЕННОЙ ТУРКОЯЗЫЧНОЙ ЛИТЕРАТУРЫ

### Р е з ю м е

Арменописьменные туркоязычные рукописи разбросаны по всему миру, но подавляющее большинство их хранится в Ереванском Матенадаране им. Месропа Маштоца (около 300 рукописей и фрагментов). Записаны они в разные периоды в разных армянских культурных и религиозных центрах на протяжении 600 лет. Это богатое наследие содержит образцы фольклора, ашугской поэзии, художественных произведений, религиозно-дидактических, теологических рукописей, а также трудов по разным наукам. Эти рукописи, в основном, малоизучены и ждут многостороннего исследования, так как большинство из них представляет определенный интерес в плане историческом, художественном и научном.

В данной статье наряду с подробной характеристикой поэтической арменописьменной туркоязычной литературой впервые публикуется два ее образца—тага (стиха): любовный таг Григора и исторический таг о гибели константинопольского армянского патриарха Товмы Алеппского в 1657 г.

- 1 Երեանում, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ավելի քան 180 ձեռագրեր պարունակում են հայտառ թուրքերին տաղեր, բանահյուսության նմուշներ:
- 2 Գ. Լևոնյան, Աշուղները և նրանց արվեստը, Երևան, 1944, էջ 34:
- 3 Ա. Ալպօյաննեան, Պատմութիւն Հայ Կեսարիոյ, Գաճիրե, 1937, էջ 1554:
- 4 Ahmet Kabaklı, Türk Edebiyat, Ankara, 1967, s. 139, 633.
5. Vasfi Mahir Kocatürk, Türk Edebiyat Tarihi, Ankara, 1970, s. 426, 474, 498, 584.
- 6 Ա. Ալպօյաննեան, Պատմութիւն Հայ Կեսարիոյ, էջ 1556:
7. Enno Littmann, Das Malerspiel, Sitzungsberichte der Helderger Akademie der Wissenschaften, Phil. hist., Kl., 1910.
- 8 Առաջնի, Ein türkisches Streitgedicht über die Ehe, „Bidarini Evil ile Bekaryn dasitaný“. (D A volume of Oriental Studies presented to „Professor Edvard G. Browne“ pp 269—284.
- 9 Fuad Köprülü. Türk Edebiyatının Ermeni Edebiyat üzerindek: Teşiratı, Edebiyyat Fakültesi Mecmuası\*, İstanbul, 1922; Fuad Köprülü, Ed. Edebiyat Araştırmaları, Ankara, 1966, s. 239—269.
- 10 Խ. Ամիրյան, Հայ մշակութիւն պատմության նենգափոխման հարցի շուրջ, Երևան, «Սովետական գրականություն» ամսագիր, 1972, № 3:
- 11 Մատենադարան, ձեռ. 6438:
- 12 Անդ, ձեռ. 9003:
- 13 Անդ, ձեռ. 2394, էջ 182ա—184ա, տաղե անտիպ է, թարգմանությունը մերն է:
- 14 Աշուղների ստեղծագործություններին տարրեր գավառներում տարրեր անվանումներ են տրվել: Օրինակ, Ձելթոնում ավաշներ են անվանվել աշուղների մարտական նաև հովվերդական երգերը:
- 15 Մատենադարան, ձեռ. 3300:
- 16 Մատենադարան, ձեռ. 5941, 1400, 2163, 8048, նաև Յ. Թօփնեան, Ցուցակ Հայոցին ձեռագրաց Արմաշի վանքին, ձեռ. 158, էջ 2ա—163, «Աղվեսագիր» (163 առակ):
- 17 Մատենադարան, ձեռ. 157:
- 18 Անդ, ձեռ. 1675, 10264:
- 19 Անդ, ձեռ. 1786, 3442, 5373, 5616:
- 20 Անդ, ձեռ. 3830, 3998, 9117, 9404, 10097:
- 21 Անդ, ձեռ. 10262, 5941:
- 22 Անդ, ձեռ. 9074, 6657:
- 23 Անդ, ձեռ. 9906, 10284:
- 24 Անդ, ձեռ. 2842, 7318, 9003:
- 25 Անդ, ձեռ. 362, 1644, 1679, 1856, 2274, 3506, 5613, 8469:
- 26 Անդ, ձեռ. 9705, 10136:
- 27 Անդ, ձեռ. 5084, 1823, 3443, 6744, 8277, 8469, 8504, 9138:
- 28 Անդ, ձեռ. 2861, 6744, 8504:
- 29 Անդ, ձեռ. 5084, 7868, 9073, 9643, 10061:

- 30 Անդ, ձեռ. 1670, 6703, 9117, 10036;  
 31 Անդ, ձեռ. 2905, 6817, 7543;  
 32 Անդ, ձեռ. 8823, 9008, 9717;  
 33 Անդ, ձեռ. 4656;  
 34 Անդ, ձեռ. 517, 1670, 1856, 2861, 3476, 5043;  
 35 Անդ, ձեռ. 2514, 7265;  
 36 Յ. Տաշիբան, Ցուցակ Հայերեն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի  
վիճակա, ձեռ. 441;  
 37 Քէջիշեան, Ցուցակ Հայերեն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին,  
ձեռ. 176 (ԺԸԴ-ը). Ղուկաս Փինէլոստա Ցիսուտեան կարդինալի Շքիթապ քի, անտէ սէոյ-  
լէնիր կէլէներ օմուլտէն օթրու (Գիրը՝ յորու ճառի զհանդերձեալ կինաց);  
 38 Մատենադարան, ձեռ. 2065;  
 39 Մատենադարան, ձեռ. 9711;  
 40 Ն. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, ձեռ. 14;  
 41 Մատենադարան, ձեռ. 131, 6463, 10183;  
 42 Անդ, ձեռ. 524;  
 43 Անդ, ձեռ. 6420, 9713;  
 44 Անդ, ձեռ. 159, 1129, 4026, 5538, 9559, 9878, 10046;  
 45 Անդ, ձեռ. 459, 1387;  
 46 Անդ, ձեռ. 9677;  
 47 Անդ, ձեռ. 1803, 10186;  
 48 Անդ, ձեռ. 8015, 8016;  
 49 Ն. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, ձեռ. 14;  
 50 Մատենադարան, ձեռ. 6891;  
 51 Անդ, ձեռ. 2722;  
 52 Անդ, ձեռ. 10247;  
 53 Անդ, ձեռ. 8219 և ձեռ. 8988՝ Պաղտասար Դավիթ. «Վարք Գրիգոր Լուսավորիչ»;  
 54 Անդ, ձեռ. 6891;  
 55 Անդ, ձեռ. 8049;  
 56 Անդ, ձեռ. 2622;  
 57 Անդ, ձեռ. 1911;  
 58 Անդ, ձեռ. 9704, էջ 1ա—5ա, «Պատմութիւն յաղագս առնելոյն տաճկաց զՍուրբ  
Նիկողայոս Եկեղեցին ի ձնուցս հայոց եւ տալոյն զինի միոյ տարու զՍուրբ Հրեշտա-  
կապիտ Եկեղեցին փոխանակ նորին» և «Պատմութիւն յայլմէ վասն նոյն սուրբ Եկեղեց-  
ւոյն, Գրիգոր վարդապետ Կոլեցեալն Պարօնտէր, որ երբեմն էր պատրիարք սրբոյ  
Երրուսաղէմի յամի տեառն 1631: Նա զամենայն անցան իւր և զոր ինչ ետես վասն Պա-  
լատու Սուրբ Հրեշտակապետ Եկեղեցւոյն գրեաց այսպէս» (Հեղինակ Գրիգոր Դարանադ-  
ցի), էջ 5ր—10ր:  
 59 Անդ, ձեռ. 4494;  
 60 Անդ, ձեռ. 9700;  
 61 Անդ, ձեռ. 1456;  
 62 Պատմութիւն եւ խրատք Եկեղեցի Խմաստնոյ, Գիրք Ա (գիտական հրատարա-  
կութիւնը Ա. Մարտիրոսյանի), Երևան, 1969, էջ 303—325 և Ալիմ Եկեղեց առլաւարիկի  
նասիհաթե (գտնվում է Զմմառի վանքում, ձեռ. 413):

63 Մատենադարան, ձեռ. 5047:

64 Անդ, ձեռ. 7044:

65 Անդ, ձեռ. 7717, էջ 128r—129r, ձեռագիրն անտիպ է, թարգմանությունը  
մերն է:

66 Քանի որ Կ. Պոլսի պատրիարքարանը իրենից ներկայացնում էր ոչ միայն Հոգևոր, այլև արևմտահայության համար նաև քաղաքական իշխանություն և անօրինում էր նյութական մեծ կարողություն, ուստի և միշտ էլ սուր պայքար է մզվել պատրիարքական աթոսին ափբանական համար: Պատահական չէ, որ երրեմն աշխարհական մեծահարուսա ամերաները պատրիարք չեն ընտրում, իրենք էին համարվում աթոսակալ և օգովում էին պատրիարքին տրվող բոլոր իրավունքներից: Սուլթանական կառավարությունը շահաղորդաված էր լինում այս փոփոխություններում, քանզի յարաքանչյուր նման գեպքում կառավարությունը որոշակի դումար էր գանձում:

67 Աման, Էման—մուսուլմանների կողմից հաղթված քրիստոնյաններին՝ ներում:

68 Զիմմի—միշտաղարում այսպիս էին անվանում Օսմանյան կայսրության ոչ մահմեդական հպատակներին, Այստեղ՝ հավանաբար նկատի ունի իր հակառակորդ հույն հոգևորականներին:

## Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ

ԿԱՐՆՈ ՍԱԼԴՈՒԽԵԱՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ  
ՏՈՀՄԱՔԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԱՐԱԲԱԿԱՆ ՎԻՄԱԳԻՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

Բագրատոսյաց թագավորության անկումից հետո Հայաստանը ենթարկվեց սեղուկ թյուքքերի ավերիլ արշավանքներին, որի հետևանքով փոխվեց ալվատական իշխանությունների պատկերը Հայաստանում, քանզի այդ ժամանակվանից առավել մեծ տարածություն էին զբաղեցնում մահմեդական ամիրությունները:

ԺԲ դարի սկզբին Հայաստանի հյուսիսում իրենց գոյությունը պահպանել էին Տաշիր—Զորագետի և Սյունյաց թագավորությունները, Խաչենի իշխանությունը և այլ մասն հայկական իշխանություններ։ Հարավային Հայաստանում կային Տարոնի Թոռնիկյանների և Վասպուղականի Խեղենեկյան Արծրունիների իշխանությունները։

Հայաստանի այլ մասերում կաղմավորվել էին մահմեդական ամիրություններ, որոնց պատմությունը սերտորեն կապված է Հայաստանի այդ ժամանակաշրջանի պատմության հետ։ Այդպիսի միավորներից էր Կարնո Սալդուխյանների ամիրությունը։

Կարնո սալդուխյան ամիրության վերաբերյալ պատմողական աղբյուրների տեղեկությունները սակավ են։ Հայաստանի տարբեր վայրերում պահպանված վիմագիր, և, մասնավորապես, արաբերեն արձանագրությունները լրացնում են այդ բացը և լուսաբանում ամիրության ժամանակագրության, տոհմաբանության և քաղաքական պատմության միշտը հարցեր։

Կարնո Սալդուխյանների ժամանակագրության և ամիրության կաղմավորման հարցերով զբաղվել են մի խումբ հետազողողներ՝ Մ. Դեֆրեներին, Ա. Բեյլուն, Ե. Ցամբաւուր, Մ. Կիրզիշօղլուն, Կ. Կահենը, Ֆ. Սումերը, Ս. Բոռնազյանը և ուրիշներ։

Ի մի բերելով եղած նյութերը առաջին անգամ արևելագետ Մ. Դեֆ-

բեմերին կազմել է Կարնո Սալդուխյանների նախնական տոհմածառը<sup>1</sup>.  
որի մեջ բացակայում են մի շարք ամիրներ:

Արու-Լ Կասիմ

Ալի

Շահ-Բանու

Խլաթի թագավոր Սուքման Բ-ի  
կինը

մալիք Սալտուկ կամ Սալիկ  
իշխան է 548/1153—1154 թթ., հիշա-  
տակվում է 560/1164—65 թթ.

Դաւատը՝ նշանվեց Խկոնիայի սուլթան  
Կիլիճ-Արևանի հետ, բայց ամուսնա-  
ցակ Սալաթիայի տեր Զու-Լ-Նումի հետ

մալիք Մուհամմադ (Հավանարար վրաց-  
աղյուրների նար աղ-դինը, որին հա-  
ջորդեց թոռը՝ Մուզաֆիրադ-դինը, ապա  
Մուհամմադի որդի Սալիք-Շահը, որը  
բանտարկվեց 597/1201 թ.

Հայտնի տոհմաբան Ե. Ցամբառուրը, ի մի բերելով նախորդ հետա-  
զուառղների և աղյուրների տվյալները, կազմել է Կարնո Սալդուխյան-  
ների նոր ճյուղագրությունը, որը նույնպես թերի է և լրացման ու ճշշտ-  
ման կարիք ունի: Ահա այն՝

Արու-Լ Կասիմ

Ալի

Մալիք Սալդուկ

Շահ-Բանու (Խլաթի տեր Սուքման Բ-ի  
կինը)

Մուհամմադ

Դաւատը (Մալաթիայի և Սեբաստիայի  
տեր Զու-Լ-Նումի կինը)

Մալիք-Շահ

Ալա աղ-դին

Մուզաֆիրար աղ-դին

Ե. Յամբառութը տվել է նաև Կարինում իշխող ամիրների մոտավոր ժամանակագրությունը<sup>2</sup>, որը նույնպես վերանայման խիստ կարիք ունի:


Սալդուխյաններով զբաղվել են մի շարք թուրքագետներ: Ա. Բեյ-գուն 30-ական թթ. հավաքել և հրատարակել է Կարինում և նրա շրրջակայքի գյուղերում պահպանված վիմագիր արձանագրությունները: Սալդուխյաններից հասած երեք արձանագրությունների շուրջ նրա տված պատմական ակնարկը<sup>3</sup> ոչ միայն չի հաստատվում այլ աղբյուրների տվյալներով, այլև առանձին իշխաններին շփոթում է միայն հետ: Անհամեմատ օգտակար դատողություններ են պարունակում Կ. Կահենի ակնարկը<sup>4</sup> և Ֆ. Սումերի Սալդուխյաններին նվիրված հոգվածը<sup>5</sup>: Ֆ. Սումերը իր առջև խնդիր շղնելով խորանալ տոհմաբանության մեջ, ավելի շուտ ի մի է բերել Սալդուխյան ամիրության քաղաքական պատմությունը, սակայն չի օգտագործել Սալդուխյաններին վերաբերող բոլոր արձանագրությունները, ուստի նրա ուսումնասիրությունը նույնպես լրացման կարիք ունի:

Հայ ուսումնասիրողներից Սալդուխյանների մասին մի ակնարկ է գրել Ս. Բոռնազյանը<sup>6</sup>, որը նույնպես թերի է և ամբողջացման կարիք ունի:

Բուն նյութին անցնելուց առաջ մեջ ենք բերում Սալդուխյան ամիրներին վերաբերող արաբերեն վիմագրերի տեքստերը և մեր թարգմանությունը:

1. Կարինի միջնաբերդի «Թեփսի մինարե» աշտարակի շինարարական արձանագրությունը (տե՛ս նկ. 1):

Բ. 1



..... اقبال مولانا ضياء الدين  
قطب الاسلام نصير الدولة ظهير  
المملة شمس الملوك و السلاطين  
[تاج الامر المظفر] اينماج بيفو  
البطريرك بيك ابي المظفر غازى<sup>7</sup>  
بن ابي القسم ...

2. Կարսի միջնաբերդի ներքին պարսպի հարավային դարպասի շինարարական արձանագրությունը՝

أنشأ هذه القلعة المباركة  
نصف الملك فيروز آقاي، أعز  
الله انصاره في أيام مولانا  
السلطان الملك عز الدين  
أيد الله دولته، باعانته  
بنت السلطان كرم الدين،  
المعروفة نور الله قبرها  
و مرقدها [في سنة ثمان  
و أربعين و خمسينية].<sup>8</sup>

...Բարգավաճում մեր տիրակալ  
Դիա աղ-դինին, իսլամի բևեռին,  
պետության պաշտպանին, Հա-  
մայնքի հենարանին, թագավոր-  
ների և սուլթանների արեգակին  
[իշխանների թագին ալ-Մուլաֆ-  
ֆար] ինանց-թեկու Ալփ-թուղթի  
բեկին, Արու-լ Մուղաֆֆար Ղա-  
զիին իրն Արու-լ Ղասիմին...

Այս օրհնյալ բերդը կառուցել է  
թագավորների ասաֆ (իմաս-  
տում վեզիր) Ֆիրուզ-Ակալը, թող  
աստված ամրապնդի նրա հաղ-  
թանակները, մեր տիրակալ՝ սուլ-  
թան, մալիք Իզզ աղ-դինի [իշ-  
խանության] օրերին, թող աստ-  
ված պաշտպանի նրա պետու-  
թյունը, Քարամ աղ-դին սովոր-  
անի նայտնի դատեր օգնությամբ,  
թող աստված լուսավորի նրա շի-  
րիմը և գերեզմանը [հինգհա-  
րյուր քառասում ութ թվականին] (1153—1154):

3. Կարսի բերդի շինարարական արձանագրությունը՝


[1] عمر هذا البنيان الامير شهسوار  
ایران(و)نور ان' المجاهد المظفر'  
[2] سيف الا سلام سالك الانام  
بهادر المملكة مجاهد الامة حسام  
الملوک و السلاطین  
[مقام اجيوش المساهين' الامير  
الامّ منين فيروز وزير ملك عز  
الدين]<sup>9</sup>

Այս շինությունը կառուցել է ա-  
միր, իրանի և Թուրքանի դյուցա-  
շըն, մարտնչող, հաղթական, իս-  
լամի սուր, ազնվարու մարդ-  
կանց մեջ, համայնքի քաջամար-  
տիկ, աղգի (համար) պայքարող,  
հագավորների և իշխանների  
թուր, մահմեդական զորքերի [հը-  
րամանատար], հավատացյալների  
ամիրի [պաշտպան] Իզզ աղ-դին  
մալիքի վեզիր՝ Ֆիրուզը:

Նկ. 2Ա (արձանագրություն 4)



4. Արծկեի (Աղիլ-Զելազ) բերդի պարսպի շինարարական արձանագրությունը (տե՛ս նկ. 2 Ա, Բ):



նկ. 2Բ (արձանագրություն 4)


أمر ببناء هذه القلعة مولانا  
ولا مير الكبير ظهير الدين أمين  
الملة حسام الملوك والسلطانين.....  
الأجل السيد .... [عز] الدين  
سلفيق بن علي ولبي<sup>10</sup> .....

[Հրամայել է կառուցել այս բեր-  
դը, մեր տիրակալ], մեծ ամիր,  
հավատի ապավին, համայնքի  
պաշտպան թագավորների և սուլ-  
թանների սուր...) փառապանծ,  
պարոն.... [Իզզ] աղ-դին Սալ-  
դակ իրն Ալի, նովաճավոր...

5. Կարինի Ուլու Խամի մեծ մզկիթի շինարարական արձանագրությունը՝

بني المسجد الجامع الملك العالم  
العابد أبو الفتح محمد بن  
خمس وسبعين وخمسة أيام.<sup>11</sup>

Այս մեծ մզկիթը կառուցել է մա-  
լիք, գիտնական, աստվածավախ  
Արուլ ֆարեն Տոմամմադը՝ հինգ-  
հարյուր յոթանասում հինգ թվա-  
կանին (1179—1180):



նկ. 3 (արճանագրություն 6)

- [1] [أمر ببناء] هذه القلعة مولانا الامير  
المجاهد تا[هر الخوارج والمتمردين]  
قاتل الكفرة والمشركين،  
[المغيث] على المظلومين فخر  
الغزاوة ظهير الدين [بها] الامة  
امين المملكة
- [2] الملك ملك الرؤم والأرمن (و)  
ديار بكر وربيعة، شهسوار ايران  
[و نوران] زين
- [3] الحاج والعرميin أبو منصور أرغين  
بساتة<sup>12</sup> (شاه<sup>13</sup>) بن محمد بن
- [4] سلدق بن على بن أبي القسم  
عزنصر في شهر ربیع الاول سنة  
ثلثین وستمائة هجرية<sup>14</sup>.
- [5] [Հրամայել է կառուցել այս բեր-  
դը մեր տիրակալ, ամիր, մար-  
տզնչող, հերետիկոսներին] և ըմ-  
բոստներին հաղթող, անհավատ-  
ներին և բազմաստվածայիննե-  
րին կործանող, ճնշվողների  
[պաշտպան], զագիների պար-  
ծանք, հավատի հենարան [հա-  
մայնքի հպարտություն, ազգի ա-  
պավեն], Ռումի, Հայաստանի  
Դիար-Բաքրի և Դիար-Ռաբիա եր-  
կրքների տիրակալ, իրանի և [թու-  
րանի] դյուցազն, ուխտագնացու-  
թյան երկու սրբավայրերի զարդ՝  
Արու Մանուշ Արդին Բասար  
(Չան ?) իրեն Մումամմադ իրեն  
Սալդուկ իրեն Ալի իրեն Արուլ Կա-  
պիմ. թող [աստված] ամրապնդի  
նրա հաղթանակը ուսրի առաջին  
ամսին, հիջրայի վեցհարյուր երե-  
սում թվականին (հունվար 1233):

Վերոբերյալ արձանագրություններից առաջինը պատկանում է Կարինի Սալդուխյան<sup>14</sup> իշխան Դիա աղ-դին Ղազի իրն Արու-լ Կասիմին: Վիմագիրը ոչ միայն խոսում է պաշտպանական շինության մասին, այլև բերում է Կարնո տիրոջ՝ Դիա աղ-դին Ղազիի տոհմական ծննդարանությունը և նրա ամբողջական տիտղոսաշարքը: Այս տիրակալի մասին պատմողական աղբյուրներում թիւ տեղեկություններ են պահպանվել: Նրա ինքնությունը և վիմագրի թիւականը որոշելու համար դիմենք այլ աղբյուրների ժդ դարի արար հեղինակ իրն ալ-Ասիրը 496/1102—1103 թվականի դեպքերի մեջ, Բարբէարուկի և Մուհամմադ Տափարի միջև սելջուկյան գահի շուրջ ծավալված պայքարի հապակցությամբ հիշատակում է: «... իսկ սուլթան Մուհամմադն իր մերձավորների մի խմբի հետ գնաց Արճեց (Արջիշ), որը Հայաստանում է, ճակատամարտից քառասուն փարսսի հեռավորության վրա Սա Խլաթի գավառներից է, ամիր Սուլթան ալ-Կումբրիի տիրություններից: Նա այնտեղից գնաց և լաթ, և նրա հետ նարարերության մեջ մտավ ամիր Ալին՝ Արգան ալ-Մուսմի տերը, ապա գնաց Անի, որի տիկն էր Ֆաղըն ալ-Մավլադիի (ալ-Շադդիկի—Ա. Խ.) եղբայր Մինուզիհը<sup>15</sup>: Այս վկայությունից պարզվում է, որ Կարնո տեր ամիր Ալին եղել է սելջուկյան գահի հավակնորդ Մուհամմադ Տափարի դաշնակցը, որը պարտություն էր կրել 495/1102թ. Բարբէարուկից՝ Խոյի մոտ տեղի ունեցած, ճակատամարտում: Դժբախտաբար արար հեղինակը լի տալիս Կարնո տիրոջ՝ ամիր Ալիի հոր անոնը կամ տոհմական պատկանելությունը: Սակայն հաղորդումից հաստակ երևում է, որ ամիր Ալին հաստատվել էր Կարինում դրանից առաջ:

Կարինի արարերեն վիմագրում հիշատակվող Դիա աղ-դին Ղազիի մասին մի արժեքավոր հիշատակություն է պահպանվել Ստամբուլի Ֆաթիհի անվան գրադարանում պահվող «Քիթար ալ-Հիդայա Ֆիտ-տիր» խորագիրը կրող ձեռագրի՝ Դվինում 510/1116 թ. գրված հիշատակարանում: «Ամիր, փառավոր իսֆահանալար, պարոն Դիա աղ-դին... ինանց թեյքու Ալի-Թուղրիլ-բևկ, Արու-լ Մուզաֆֆար Ղազի իրն Արու-լ Կամիմի... գրապահնոցին»<sup>16</sup>:

Այստեղ, ինչպես տեսնում ենք, հիշատակվում է Կարինի, «Թեփսի Ժինարեի» աշտարակի վիմագրից հայտնի Դիա աղ-դին Ղազի ամիրը Հիշատակարանը հաստատում է վիմագրում բերված նրա ամբողջական տիտղոսաշարքը և հայրական Արու-լ Կասիմ» անոնք: Բացի դրանից, հիշատակարանը ցույց է տալիս, թե ամիր Դիա աղ-դին Ղազին իշխում էր 510/1116 թ., մի փաստ, որը մեզ օգնում է վերականգնելու մոտավոր

Հշգրտությամբ ոթեփսի մինարե» աշտարակի վիմագրի թվականը՝ թե՛արաբերեն վիմագիրը և թե՛ հիշատակարանը Սալդուխյանների տոհմածառը հասցնում են մինչև Արու-լ Կասիմը։ Այս փաստը հաստատվում է արաբական վիմագրության այլ տվյալներով նույնպես։ Այսպես, Մժնկերտի վերոբերյալ (Հ 6) արձանագրության մեջ, Սալդուխյան վերջին իշխանը տալիս է իր ծննդաբանությունը՝ «...Արու Մանսուր Արղին Բասաթ իրն Մուհամմադ իրն Սալդուկ իրն Ալի իրն Արու-լ Կասիմ...»<sup>17</sup>։ Այստեղ նույնպես Արու-լ Կասիմի որդին հորջորջված է Ալի։

Ի մի բերելով պատմողական և վիմագիր աղբյուրների տեղեկությունները կարելի է անել երկու եզրակացություն։ Աղբյուրների մի խումբը վկայակոչում է ամիր Դիա ադ-դին Ղազի իրն Արու-լ Կասիմի գոյությունը կամ իշխանությունը Կարինում 510/1116 թ., իսկ երկրորդ խումբը՝ ամիր Ալի իրն Արու-լ Կասիմի իշխանությունը Կարինում 496/1103 թ.։ Այստեղից կարելի է ենթադրել, թե Արու-լ Կասիմը կամ ունեցել է երկու որդի՝ մեկը Ալի անունով, մյուսը՝ Ղազի (Դիա ադ-դին Ղազի), կամ էլ այս երկու իշխանները նույնն են։ Մենք հակված ենք նույնացնելու այս երկու ամիրներին, մանավանդ, եթե ընդունենք, որ Դիա ադ-դին հորջորջումը տիտղոս է, բացի որանից, շատ տիրակալներ ժես դարի վերջում ժիշտի առաջին կեսում հայտնի էին Ղազի տիտղոսով։ Օրինակ՝ Երզնկա-Կամախի տերը հայտնի էր Մանգուչակ Ղազի<sup>18</sup> անունով, Մալաթիայի և Սեբաստիայի տեր Դանիշմենդի որդին՝ Ամիր Ղազի Գյումյուշանգին<sup>19</sup> տիտղոսներով։ Երբեմն էլ նույն իշխանը տարբեր աղբյուրներում հիշատակված է տարբեր անուններով, օրինակ՝ Անիի Շադրաղյան վերջին տիրակալը հայտնի էր իր շահնշահ տիտղոսով, իսկ վիմագիր արձանագրություններից պարզվում է, որ նրա իսկական և պաշտոնական անունը Սուլթան է<sup>20</sup>. Այս ձևով եթե մոտենանք Կարնո իշխանի անվանման հարցին, ապա կարելի է ենթադրել, որ թե՛ Դիա ադ-դին և թե՛ Ղազի հորջորջումները կարող են լինել նույն իշխանի սոսկ տիտղոսները, մինչդեռ նրա իսկական անունը եղել է Ալի։

Դիտական գրականության մեջ Կարնո տիրակալ Ալի իրն Արու-լ Կասիմի և Դիա ադ-դինի ինքնության հարցը բաց է միացել։ Հայտնի պատմաբան-տոհմաբան Ե. Ցամբառի կազմած տոհմածառում ամիր Դիա ադ-դին Ղազին առհասարակ քացակայում է<sup>21</sup>, Պատմաբան Ֆ. Սումերը այս երկու ամիրներին համարում է տարբեր անձնավորություններ<sup>22</sup>։ Հայագիտական գրականության մեջ գտնում են, որ Դիա ադ-դին (Արու-լ Մուզաֆֆար) Ղազին ու թե Արու-լ Կասիմի որդին, այլ թոռն

է։ Վերջին տեսակետը առաջացել է վիմագրի սխալ ընթերցման հետեւ՝ վանքով և ակնհայտ թյուրիմացություն է<sup>23</sup>։

Եվրոպացի որոշ վիմագրագետներ, հիմնվելով թուրք պատմաբան Ա. Բեյգուի սխալ ընթերցման վրա, Դիա աղ-դին Ղազիին նույնիսկ նույնացնում են Արու-լ Կասիմի թոռ հղղ աղ-դին Սալդուկի հետ և Թեփսի մինարեի վիմագիրը թվագրում ժթ դարի կեսերով<sup>24</sup>։

Դիա աղ-դին Ղազիի կամ ամիր Ալիի մասին հայկական և վրացական աղբյուկները տեղեկություններ չեն տալիս։ Նրա մասին որոշ կարևոր տեղեկություններ պահպանվել են ԺԲ դարի արար պատմիչ՝ Իրն ալ-Ազրակ ալ-Ֆարիկիի մոտ։ Ահա թե ինչ է հաղորդում նա. «Հուամ աղ-դին Թիմուրթաշը մնաց մի որոշ ժամանակ, այնուհետև ամուսնացավ Կարինի (Արզան ալ-Ռումի) Ղազի ամիրի դստեր՝ Խաթունի հետ։ [Այնուհետև], նա եկավ Մայյաֆարիկին և նրանից ունեցավ երկու տղա՝ Նաջմ աղ-դին Ալիի ամիրը 520[1126] թ. և Զամալ աղ-դին Սալդին 521[1127] թ.»<sup>25</sup>, Ֆարիկիի այս հաղորդումը կրկին անգամ հաստատում է Կարինում Ղազի ամիրի իշխանության փաստը 1126—1127 թթ.։

Ամփոփելով աղբյուրների տեղեկությունները Կարինի Սալդուխյան իշխանների մասին, պետք է ասել, որ 1103 թ. Կարինում իշխում էր ամիր Ալին, 1116 թ. Հիշատակվում է Դիա աղ-դին Ղազին, որը իշխել է մինչև ԺԲ դարի 20-ական թվականների կեսերը։ Թե երբ է ամիր Ալին անցել իշխանության գլուխ, դժվար է ասել, բայց հիմքեր կան ենթադրելու, որ նա իշխել է Կարինում մոտավորապես ժԱ դ. վերջերից, իր հոր՝ Արու-լ Կասիմի մահվանից հետո։

Կարինի Սալդուխյան Դիա աղ-դին Ղազիի մասին մեզ հասած վերջին տեղեկությունը վերաբերում է նրա մահվանը։ ԺԲ դարի արար պատմիչ ալ-Ազիմին 526/1131—1132 թթ. դեպքերի մեջ Հիշատակում է՝ «Մահացավ Արզանի տեր՝ Ղազին»<sup>26</sup>, Մենք գիտենք, որ տվյալ ժամանակահատվածում Արզան (Արզն)՝ Բաղեշում իշխում էր Շամս-աղդառուա Թուղան-Արսլանը<sup>27</sup>: Վերջինս, ինչպես ճիշտ կերպով նկատել է Յ. Սումերը, չի կրել «Ղազի» տիտղոսը։ Բացի դրանից, այս հաղորդումը սրբագրելով, առաջարկում է «Արզանի տեր» արտահայտության փոխարեն կարդալ՝ «Արզան առ-Ռումի տեր»<sup>28</sup>, հետևաբար Սալդուխյան Ղազի իշխանը պետք է մահացած լինի 526/1131—1132 թթ.։

Ամփոփելով արաբական վիմագրության տվյալները պետք է նկատել, որ վիմագրերում հիշատակվող ամիրների ծննդաբանությունը վերջանում է Արու-լ Կասիմ ամիրով, իսկ այս տոհմը և ամբողջ իշխանու-

թյունը հայտնի է դարձել տոհմապետ «Սալղուխի» անունով։ Այստեղից միտք է ծագում, թե արդյոք ամիր-տոհմապետ «Սալտուկը» նույն Արու-լ Կասիմը չէ՝, քանի որ նույն տոհմապետը կարող էր ունենալ Սալտուկ անունը և Արու-լ Կասիմ մականոմքը, թե ե՞րբ է հաստատվել Արու-լ Կասիմը Կարինում և նրա շրջակայքում, այդ մասին կոնկրետ տեղեկություն մեզ չի հասել։ Կարելի է ենթադրել, որ նա հաստատվել է այս շրջանում մոտավորապես ժԱ դարի 80-ական թվականներին։ Մինչև այսօր իշխել է այն տեսակետը, թե ամիր կամ զորապետ Սալտուկը 1071 թ. Մանաղկերտի ճակատամարտում ցուց տված ուղղմական օգնության դիմաց Կարինում և նրա շրջակայքում իկթա հողատիրուկթ է ստացել սելջուկյան սուլթան Ալփ-Արսլանից<sup>29</sup>, Այս տեսակետը վերանայման կարիք ունի, քանի որ զորապետ Սալտուկի՝ Մանաղկերտի ճակատամարտին մասնակցելու փաստը չի հաստատվում այլ աղբյուրների տվյալներով և այն հիմնված է սոսկ հավանականության վրա<sup>30</sup>։ Այսպես, թե այնպես Կարինի Սալղուխյան իշխանության կազմավորման հարցը վերջնականապես լուծված չէ և գիտական գրականության մեջ տարրեր մեկնաբանություններ է ստացել։

Ուսումնասիրողների մի խումբ Սալղուխյան ամիրության կազմավորման հարցը, ինչպես նշվեց, կապում է Մանաղկերտի ճակատամարտում Սալղուխի մասնակցության հետ, երկրորդ խումբը՝ վրացական աղբյուրներում հիշատակվող Ահմադ զորահրամանատարի 1080 թ. արշավանքի հետ<sup>31</sup>, վերջապես, երրորդ խումբը այդ Ահմադ հրամանատարին կապում է ոչ թե Կարինի, այլ Կարսի ամիրության հիմնադրման հետ<sup>32</sup>։

Մանաղկերտի ճակատամարտին Սալղուխի կամ Արու-լ Կասիմի մասնակցության վարկածը, ինչպես ասացինք, չի հաստատվում աղբյուրների նյութերով։

Հետազոտողների երկրորդ խմբի տեսակետը վերանայելու համար անհրաժեշտ է դիմել վրացական աղբյուրներին։ Այսպես, ԺԲ դարի աղբյուր «Արքայից արքա Դավթի պատմության» մեջ կարդում ենք. «Քանի դեռ Գեորգի թագավորը այդ ժամանակ գտնվում էր Ղվելիի շրջակայքում, նրա վրա հարձակվեց թուրքերի բազմաքանակ բանակը զորեղ նետաձիգ և ուժեղ ամիր Ահմադի գլխավորությամբ, որը այդ օրերին գրավել էր Կարս քաղաքը։ Քրիստոնյաների ներքին դավաճանության պատճառով, նրանք հաղթեցին Գեորգի թագավորին, նրա զորքը անհամար կոտորեցին, վերցրեցին մեծաքանակ ավար՝ ոսկյա, արծաթյա սպասք, բազմատեսակ թանկարժեք իրեր և թագավորական վրան-

ներ ու այլ իրեր և գնացին: Թագավորը Աճարիայից գնաց Արխաղիա: Ավարով ծանրաբեռնված թուրքերին (թուրքմեններին—Ա. Խ.): Հանդիպեցին մեծ ամիրներ՝ ոմն իասի (Եասի) և թուժուշը, որոնք թուրքերի անհամար բազմության հետ քոչում էին Հումաստան (Փոքր Ասիա—Ա. Խ.): Տեսնելով ոսկու և հարստության մեծաքանակ ավարը և իմանալով Գեորգի թագավորի փախուսաի մասին, նրանցից լսեցին հետեւալը, —ինչո՞ւ եք գնում դեպի Հումաստան, ահա անմարդ և լիադանձ Վրաստան երկիրը: Նրանք անմիջապես փոխեցին իրենց ճանապարհը և սփովեցին մորեիների նման երկրի երեսին... Այս առաջին և մեծ արշավանքը տեղի ունեցավ 300 (1080) թվականին<sup>33</sup>:

Վրացական աղբյուրի այս հաղորդումը վկայում է Ահմադ զորահրամանատարի կողմից Կարսի գրավման մասին և տալիս թուրքմեն, այն զորապետների անունները՝ թուժուշ և ոմն իասի, որոնք օգնություն են ցուց տվել այս արշավանքի ժամանակի: Այստեղ, ինչպես տեսնում ենք, ոչ մի խոսք չի ասվում ո՛չ Կարինի կամ Ուղթիքի գրավման, ո՛չ էլ Արու-լ Կասիմ կամ Սալդուս ամիրի մասին: Նույն այս վկայությունը պահպանվել է Քարթլիս ցխովրեայի ԺԲ դարի հայերեն թարգմանության մեջ. «Ճաւուրն յայնոսիկ ասպատակեցին թուրքք յեղկիրն վրաց և բազում արինս հեղին և զյոլովս գերեցին և գնացին, որոց գլխավորին անուն թուժուր կոչէին»<sup>34</sup>: Ինչպես տեսնում ենք, Քարթլիս ցխովրեայի հայերեն թարգմանությունը պահպանել է միայն թուժուր (թուժուշ) զորապետի անունը, իսկ մյուս երկու ամիրների՝ «Ահմադի» և «ոմն իասիի» անունները դուրս են մնացել, հավանարար գրիշների մեղքով:

Թուրքագիտական գրականության մեջ վրացական աղբյուրի թուժուր ամիրը նույնացվում է Արու Յակուր զորավարի հետ<sup>35</sup>: Վերջինս, մեր կարծիքով, պետք է լինի ոչ թե Կարինի, այլ Կարսի թյուրքական ամիրության հիմնադիրը: Բացի դրանից Արու Յակուր՝ Արու-լ Կասիմ շփոթությունը գրիշների կողմից դրեթե անհնարին է: Ահմադիսով, վրացական աղբյուրը ոչ մի տեղեկություն չի տալիս Կարինի կամ Ուղթիքի գրավման կամ Արու-լ Կասիմի այս շրջանում հաստատվելու մասին, ուստի հետազոտողների այն կարծիքը, որ Ահմադ զորահրամանատարն է հիմնադրել Սալդուս ամիրությունը Կարինում 1080 թ., նույնպես չի հաստատվում աղբյուրների տվյալներով և վերանայման կարիք ունի:

Թեև գրավոր աղբյուրներում կոնկրետ տեղեկություններ չկան, սակայն տարածում է ստացել այն կարծիքը, թե Արու-լ Կասիմը հաս-

տատվել է Կարինում և նրա շրջակայքում Ահմադ զորահրամանատարի 1080 թ. արշավանքից հետո, որը «արևելքի զորավար» Գրիգոր Բակուրյանի ձեռքից զավթել էր Կարինը, Ուղթիքը և այլ բերդերու վերջ տվել բյուզանդական իշխանությանը այս շրջանում: Մեր Կարձիքով, Սալդուխյան իշխանության հիմնադիր Արու-լ Կասիմի՝ Կարինում հաստատվելու հարցը վերջնականապես լուծված չի կարելի համարել:

Հայաստանի արարերեն վիմագրերում Կարինի Սալդուխյան ամիրների ծննդարանությունը վերջանում է Արու-լ Կասիմով, մինչդեռ այս տոհմը հայտնի է դարձել Սալդուխ (Սալտուկ) ամիրի անունով և մինչև վերջիրս այն կարծիքն էր տարածված, թե տոհմը կոչվում է ԺԹ դարի կեսերին իշխող հզզ աղ-դին Սալդուխի անունով<sup>36</sup>: Սակայն անանուն արար հեղինակի «Քիթար ուլ-ինրա» երկում 516/1123 թ. իրադարձությունների մեջ հիշատակվում է նաև Սալդուխյան տոհմը. «Դուքայս [մալիքը] հարմար առիթ գտնելով հարձակվում է Հիլզայի (հրաքում) վրա և դրավում այն: Բաղդադի վրա նրա [սպառնացող] վտանգը դիմագրավելու համար ալ-Մուսթարշիդ Բիլլահ խալիֆը օգնության է կանչում ծայրամասերի ուժերին՝ Վասիթից՝ Սաադի տոհմին, Բասրայից՝ Զանգի իրն Ակ-Սունկուրին, Դիար-Բաբրից՝ Թուղան-Արսլանին, Սալտուկի տոհմին (բանու Սալտուկ), Բուղայի տոհմին...»<sup>37</sup>:

Անանուն արար հեղինակը վկայում է Սալտուկի տոհմի (Սալդուխյան տոհմի) գոյության մասին 516/1123 թ.: Հիշատակությունը փաստորեն ցույց է տալիս, որ Կարինում իշխող ամիրների տոհմը 516/1123 թ. արդեն հայտնի էր Սալտուկ անունով և ոչ թե անվանվել: ԺԹ դ կեսերին իշխող հզզ աղ-դին Սալդուխից: Պացի դրանից պարզվում է, որ իշխութական այս տոհմի նախահայրը նույնպիս հայտնի է եղել Սալտուկ (Սալդուխ) անունով:

Ի մի բերելով աղբյուրների տվյալները Սալդուխյան տոհմի նախահոր վերաբերյալ կանգ ենք առնում տոհմապետներ Սալդուխի և Արու-լ Կասիմի ինքնության բացահայտման հարցի վրա: Արարական վիմագրերը վկայում են Արու-լ Կասիմի, իսկ անանուն արար հեղինակ՝ Սալդուխի մասին: Այստեղից կարելի է ենթադրել, թե Արու-լ Կասիմը և տոհմապետ Սալդուխը նույն պատմական անձնավորությունն են:

Վերադառնալով Կարինում իշխող ամիրների ժամանակագրությանը պետք է ասել, որ արար հեղինակը ուշագրավ տեղեկություն է հաղորդում 516/1123 թ. Կարինի Սալդուխյան տոհմի խալիֆների հանդեպ յուրահատուկ պարտականությունների մասին և այս թվականին Կա-

րինում իշխող Դիա ադ-դին Ղազիին կարելի է դիտել որպես Աբրասյան խալիքաների ստորագիւած:

Ինչպես ասվեց, Դիա ադ-դինը մահացել է 525/1131—32 թթ.: Նրանից հետո, ըստ արաբական վիմագրության, իշխել է որդին՝ Իղզ ադ-դին Սալդուկար: Ամիր իզզ ադ-դին Սալդուկար հիշատակվում է երեք արձանագրությունների մեջ: Կարսի միջնաբերդի երկու արձանագրություններից մեկում նա հանդես է գալիս «սուլթան, մալիք» տիտղոսներով: 548/1153—1154 թթ. վիմագրում Կարսի կառավարչի դուստրը և Իղզ ադ-դին Սալդուկի վեզիր Ֆիրուզ-ակայը նշված են որպես Կարսի պարիսպների և աշտարակների շինարարության նախաձեռնողներ: Նույն վիմագրից պարզվում է, որ Կարսի կառավարիչը եղել է Քարամ ադ-դինը, որը կրում էր միայն սուլթան տիտղոսը: Բացի դրանից, նույն արձանագրության «մեր տիրակալ (մառանա)» իզզ ադ-դինի (իշխանության) օրերին» արտահայտությունը թույլ է տալիս առաջ քաշել այն հիմնադրույթը, որ Կարսը ժի դարի կեսերին գտնվել է Սալդուկյան ամիրության գերիշխանության տակ, այլ կերպ ասած, Կարսի Քարամ ադ-դին իշխանը ընդունել էր Կարսի Սալդուկյան տիրակալ իզզ ադ-դինի գերիշխանությունը և դարձել նրա ստորակա (վասալ): Այս քաղաքական նշանակությունը ունեցող փաստի օգտին է խոսում նաև Կարսի բերդի շինարարական երկրորդ արձանագրությունը (№ 3), որտեղ, առհասարակ, բացակայում է Կարսի կառավարչի անունը կամ նրա իշխանությունը բացահայտող որևէ բանաձև կամ ակնարկ: Ընդհակառակն այս վիմագրում գովերգվում են Սալդուկյան տիրակալ իզզ ադ-դինի վեզիր Ֆիրուզ-ակայի սխրագործությունները: Մեր կարծիքով այս երկու վիմագրերը արձանագրվել են ի փառաբանումն Կարսի ազատագրմանը Սալդուկյանների կողմից, քանի որ այլ աղբյուրների համաձայն 548/1153 թ. ղփչաղները ներխուժել էին Կարս և քաղաքը ավարառության մատնել<sup>38</sup>: Հավանաբար Կարսի կառավարիչը այդ ժամանակ օգնության է կանչել Սալդուկյաններին, որոնք քաղաքը ազատագրելուց հետո սկսել են ամրաշինությունը: Այս իրադարձության հետ էլ պետք է կապված լինի արարերեն վիմագրի Սալդուկյան ամիրության վեզիրը և զորահրամանատար Ֆիրուզ-ակային վերաբերող՝ «մահմեղական զորքի հրամանատար» արտահայտությունը: Ուշագրավ է, որ արար հեղինակ իրն ալ-Ասիրի մոտ նույն այս տարվա իրադարձությունների շարքում հիշատակվում է նաև վրացիների և Սալդուկյան զորքերի միջև տեղի ունեցած մի ճակատամարտ: Այս տարում (548/1153—1154) Հայաստանում վրացիների (քուրջերի) և Կարնո քա-

ղաքի (Արգան ալ-Ռում) տեր Սալդուկի միջև սաստիկ պատերազմ եղավ, Սալդուկը պարտվեց: Վրացիները նրան գերեցին և ապա ազատ արձակեցին<sup>39</sup>: Թեև արար հեղինակը չի հիշատակում ճակատամարտի վայրը կամ նրա պատճառները, բայց կարելի է ենթադրել, որ խոսքը դիմացների այն հարձակման մասին է, որն արձանագրել են այլ մահմեդական հեղինակներ: Հավանաբար այս ճակատամարտը աեղի է ունեցել Կարսի մոտակայքում: Այսպես թե այնպես Կարսի միջնաբերդի վիմագիրը ցույց է տալիս, որ հենց այս տարրում՝ 548/1153—54 թթ. Սալդուխյան վեցիրը սկսում է Կարսի միջնաբերդի շինարարությունը և հիշատակում այն «իմ տիրակալ՝ իզզ ադ-դինի [իշխանության]» օրերին: Սալդուխյան տիրակալի ավելի վաղ գործունեության մասին մեղ ուշնչ հայտնի չէ, սակայն հավանական է, որ ամիր իզզ ադ-դինն իշխանության գլուխ է անցել իր հոր՝ Ալիի (Դիա ադ-դին Ղազիի) մահվանից հետո, այսինքն՝ 526/1131—32 թթ., թեև պատմողական աղբյուրների հնագույն հիշատակությունը նրա մասին թվագրված է միայն 543/1148—49 թթ. և պահպանվել է ԺԲ դարի արար պատմի իրն ալ-Ազրակի մոտ: Վերջինս հազորդում է. «Խլաթի տիրուհին՝ Խաթունը, իզզ ադ-դին Սալտուկի դուստրը հասավ Հիսն Քելֆա, որպեսզի այնտեղից Հիշազ մեկնի (ուխտագնացության), սակայն Յախըր ադ-դին Կարա-Արսլանը նրան հրավիրեց իր մոտ և մեծ պատիվ ցույց տվեց»<sup>40</sup>: Այս վկայությունը իրն ալ-Ազրակ ալ-Ֆարիկիի մոտ բերված է 543/1148—49 թթ. դեպքերի մեջ և չի հիշատակված Սալդուխի դստեր անունը: Նրա անունը և ինքնությունը հաստատվում է արար հեղինակ (ԺԲ դար) իրն ալ-Ազիմի մոտ պահպանված արժեքավոր մի վկայությամբ. «Սալդուկ իրն Ալի իրն Արուլ Կասիմի դուստր Շահ-Բանուան իշխանուհին (մալիքաթ) 563[1167—68] թ. կառավարում էր Ռումը (Փոքր Ասիա—Ա. Խ.) և Հայաստանը: Նա Խլաթի և (ամբողջ) երկրամասի տեր Շահ-Արմեն Սուրման իրն Իրրահիմ իրն Սուրմանի կինն էր»<sup>41</sup>:

Ինչպես տեսնում ենք, Կարնո իշխան Սալդուկը ու թե իր քրոջն էր ամուսնացրել Խլաթի տեր Սուրման Բ-ի հետ, ինչպես կարծում էին մինչև հիմա<sup>42</sup>, այլ իր աղջկան:

Այս ժամանակաշրջանում թե Կարնո Սալդուխյան իշխան Սալդուխը և թե՝ Խլաթի տեր Սուրման Բ-ը մահմեդական դաշնակից ամիրների հակավրացական պայքարի եռանդում կազմակերպիչներն էին: Այս պայքարին հաճախ մասնակցում էին նաև Կարսի Ահղարյան իշխանները, Անիի Շաղդաղյանները, Ատրպատականի Ելտկուզյան աթարեկները և, վերջապես, Իրաքի սելջուկյան սուլթանները<sup>43</sup>:

Վրացական թագավորությունը ժԲ դարի 50—60-ական թթ. պայքարի մեջ էր մահմեղական միացյալ ամիրների հետ, որոնք պաշտպանում էին Ասիր Շաղդաղյաններին, Վերջիններս ժԲ դարի 50-ական թթ. այնքան էին թուլացել, որ ի վիճակի շին ենցել Անիի թաղաքային բնակչության ընդվզումները, որոնք հաճախ, վոաց թագավորների օդնությամբ, տապալում էին ոչ ցանկալի կառավարչին և նորը հաստատում նրա գումարեն<sup>44</sup>:

Մեզ է հասել Կարնո աիրակալ Խղդ աղ-դին Սալղուսի մի դրամ, որի վրա նա հիշատակվում է Իրաքի սելջուկյան սուլթան Մասուդ իր Մուհամմադից հետո<sup>45</sup>: Արևելագետ-պատմաբան Կ. Կաչենը, հիմք ընդունելով այս դրամը, գտնում է, որ Կարնո իշխան Խղդ աղ-դին Սալղուկը, այնուամենայնիվ, ոչ թե Ռումի սելջուկյան սուլթանների, այլ Իրաքի սելջուկյան սուլթանների ձեւական ստորական էր: Այս փաստը, նրա կարծիքով, ցույց է տալիս թե Կարինը ավելի շատ կապված էր ոչ թե Ռումի (Փոքր Ասիր), այլ Իրանական աշխարհի հետ: Սակայն պատմողական աղբյուրների այլ տվյալները ցույց են տալիս, որ Կարնո Սալղուսյանները թեև ձեւականորեն ընդունում էին Իրաքի սելջուկյան սուլթանների գերակայությունը, սակայն բազմաթիվ թելերով կապված էին Ռումի սելջուկների և Հարսան: այլ մանր պիտական կազմավորումների հետ: Այսպես, արաբ հեղինակ Իրն ալ-Ասիրի մոտ պահպանվել է մի տեղեկություն, որը որոշակի լուս է սփռում այս հարցի վրա: 560/1164 թ. դեպքերի մեջ նա գրում է. «Այս տարում (1164—1165 թթ.) թշնամություն ընկավ իկոնիայի (Կոնիյա) և Ռումի երկրից իրեն հարսան (Հողերի) տեր ալ-Մալիք Կիլիչ Արսլան իրն Մասուդ իրն Կիլիչ Արսլանի և Մալաթիայի ու Ռումի այլ մասերի տեր Յաղի Արսլան<sup>46</sup> իրն Դանիշմենդի միջև և սաստիկ պատերազմ տեղի ունեցավ: Բանն այն է, որ Կիլիչ Արսլանը ամուսնացել էր ալ-մալիք Սալղուկ իրն Ալի իրն Արու-լ Կասիմի դստեր հետ: Հարսը տարվեց Կիլիչ Արսլանի մոտ մեծ օժիտով, որի արժեքը չգիտենք: Մալաթիայի տեր Յաղին հարձակվեց նրա վրա, հափշտակեց Հարսին իր ամբողջ ունեցվածքով և կամեցավ ամուսնացնել նրան իր եղբորորդու՝ Զու-լ-Նում իրն Մուհամմար իրն Դանիշմենդի հետ: Նա հրամայեց Հարսին հրաժարվել մահմեդականությունից և ամուսնացրեց իր եղբորորդու հետ: Կիլիչ Արսլանը հավաքեց իր զորքը և շարժվեց իրն Դանիշմենդի դեմ: Նրանք իրար հանդիպեցին, պատերազմեցին ու պարտվեց Կիլիչ Արսլանը...»<sup>47</sup>:

Այս վկայությունից երևում է, որ «մալիք Սալղուկի» Հարաբերությունները Ռումի սելջուկների հետ բավական լավ էին: Պատահական

շէ, որ Կարնո տերը բարեկամական հարաբերություններ՝ խնամիական կապեր էր հաստատում հենց սուլթան Կիլիչ Արսլանի հետ, այն դեպքում, երբ նա մերժեց խնամիական կապեր հաստատել թուլացած Շաղդաղյանների հետ։ Այսպես, այս դեպքերից տարիներ առաջ (1153—1154 թթ.), երբ Անիի Թախր աղ-դին Շադդադը փորձեց կնության վերցնել մալիք Սալդուկի աղջկան, նա մերժում ստացավ Կարնո տիրոջից։ Այս մերժման վրեժն առնելու համար նա Սալդուխյան տիրակալին խարհությամբ հրավիրեց Անի, միաժամանակ հրավիրելով վրաց Դեմետրի թագավորին՝ իր զորքով։ Նրանց միջև տեղի ունեցած ճակատամարտում Սալդուկը ոչ միայն խայտառակ պարտություն կրեց և գերի ընկալ, այլև միայն մեծ նվեր ուղարկելով վրաց թագավորին կարողացավ աղատվել<sup>49</sup>։

Կարնո իշխան իզզ աղ-դին Սալդուկը բաղմից բախվել է վրացական զորքերի հետ, կազմակերպել հարևան ամիրների հետ միացյալ արշավանքներ Վրաստանի դեմ, սակայն որոշակի արդյունքի չի հասել։ Հայ պատմիչների վկայությամբ իզզ աղ-դին Սալդուխը հովանավորել է վրաց թագավորներից դժգոհ հայ և վրաց ազնվականության ներկայացուցիչներին, օրինակ, Ամիր Քուրդ Արծրունուն, որը պաշտոնազուրկ էր արված և արտաքսված Վրաստանից։ Ամիր Քուրդ Արծրունին և նրա ժառանգները որոշ տիրություններ էին ստացել Սալդուխից՝ Կարինի շոշանում<sup>50</sup>։

Սալդուխյան իշխանության տիրությունների մասին աղբյուրները քիչ տեղեկություններ են հաղորդում։ Կարսի արաբերեն արձանագրությունների համաձայն այս իշխանության ազդեցության, հավանաբար և տիրությունների մեջ էին ընդգրկվել նաև Վանանդը և Ուղթիքը։ Մժնկերտի արաբերեն վիմագրի համաձայն Սալդուխյաններին էր պատկանում նաև Մժնկերտն իր շրջակայքով։ Սալդուխյանների արևմտյան և հարավարևմտյան սահմանների մասին ողինչ հայտնի չէ, այս իմաստով ուշադրությունը կատարվ փաստ է բովանդակում Արծկեի բերդի պարիսպների արաբերեն վիմագրը (№ 4)։ Այստեղ հիշատակվում է իզզ աղ-դին Սալդուկի անունը։ Թեև վիմագրը եղծված է սկզբի և վերջի հատվածներում, ակայն մեր կողմից կարդացված հատվածում հստակորեն երևում է Սալդուխի անունը և այս փաստը արդեն խոսում է այն իրողության օգունին, որ Սալդուխյանների տիրությունները իզզ աղ-դինի օրոք տարածվել են մինչև Վանա լճի հյուսիսային և հյուսիս-արևմտյան սահմանները, մասնավորապես, մինչև Արծկե։ Բացի Արծկեի բերդից, ենթադրվում է, որ իզզ աղ-դին Սալդուխի կողմից պետք է կառուցված լինեն նաև

Բարերդի պարիսպները<sup>51</sup>: ԺԴ դարի սկզբին այդ պարիսպները վերանորոգել է Մուղիս աղ-դին Թուղրիլ իրն Կիլիչ Արսլանը. Այդ մասին կրկին անգամ վկայում են բերդի շինարարական արարերեն արձանագրությունները<sup>52</sup>: Նույն վիմագրերը վկայում են նաև, որ Բարերդը նույնպես մտել է Սալդուխյանների տիրույթների մեջ: Այս իշխանության կաղմում են եղել նաև Ավնիկը, Թորթումը, Զիվինը և ամբողջ Բասենի դաշտավայրը: Այսպիսով, Սալդուխյանների ամիրության սահմանները տարածվում էին Հյուսիս արևելքում՝ Վանանդից մինչև Բարերդի շրջանը, իսկ Հարավում ընդգրկում էին Վանա լճի Հյուսիսային և Հյուսիս-արևմտյան շրջանները: Այս ամիրությունն իր քաղաքական հզորացման գագաթնակիտին է հասել հենց իզզ աղ-դին Սալդուխի իշխանության տարիններին, որի գահակալության վերջին տարին պարզվում է արար Հեղինակ ալ-Ֆարիկիի մի վկայության օգնությամբ. «Ծնծ թվականի ուաշար ամսվա սկզբին (1168 թ. ապրիլի կեսերին) լուր հասավ, թե Արզան ալ-Ռումի տիր իզզ աղ-Դին Սալդուխը մահացել է և նրան հաջորդել է որդին՝ ալ-մալիք Մուհամմադը»<sup>53</sup>:

Մալիք Մուհամմադի մասին գրավոր աղբյուրներում շատ քիչ տեղեկություններ են պահպանվել: Կարինի «Ուկու-Զամի» մեծ մզկիթի վիմագիր արձանագրությունում նշված է, որ Կարինում իշխող մալիք Մուհամմադը 575/1179—1180 թթ. կառուցել է մեծ մզկիթ: Այստեղ նա հիշատակված է «Արու-լ Ֆաթհ մալիք Մուհամմադ»: Սակայն այլ աղբյուրներից նա հայտնի է «Նասիր աղ-դին» անունով: Այսպես, հասել են մեղ այս ամիրի մի քանի դրամներ, որոնցից մեկը թվագրված է 585 (1189) թ. և ունի հետեւյալ արարերեն արձանագրությունը. «Փառավոր սուլթան Թուղրիլ իրն Արսլան», իսկ մյուս երեսին՝ «Նասիր աղ-դին Կիլիչ-Արսլան Մուհամմադ իրն Սալդուխ»<sup>54</sup>:

Որոշ ուսումնասիրողներ կարծում էին, թե դրամի «Կիլիչ-Արսլան» տիտղոսը վերաբերում է Կարնո տեր Մուհամմադ իրն Սալդուխին, այդ իսկ պատճառով նրան անվանում էին Կիլիչ Արսլան Մուհամմադ<sup>55</sup>, մինչդեռ այս դրամի վրա հիշատակվում են երկու իշխաններ, մեկը՝ Սալդուխյան, մյուսը՝ Ելտկուզյան: Սկզբից այստեղ հիշատակվում է Ատղոպահականի աթաբեկ՝ Մուղաֆֆար աղ-դին Ռաման իրն իլդեգիզը, որը ունեցել է հենց նասիր աղ-դին Կիլիչ-Արսլան տիտղոսը<sup>56</sup>, ապա Կարնո ամիր Մուհամմադ իրն Սալդուխը: Թուղթ-սելջուկյան տիրակալների անունների այսպիսի հաջորդականությունը բացատրվում է այդ իշխանների իրավաքաղաքական դրությամբ և սելջուկյան պետության համակարգում զբաղեցրած աստիճանով: Այս իմաստով Ե. Ցամրառովը

արդարացիորեն գտնում է, որ Կարնո տեր Մուհամմադ իրն Սալդուխը իրաքի սեղուկյանների ստորակա (վասալ<sup>57</sup>) էր: Կարինի Սալդուխյան տիրակալի մասին պահպանված մյուս վկայությունը մեղ է հասել վրաց Թամար թագուհու պատմիչի միջոցով: Հստ այդ անանում պատմիչի, վրացական զորքերը հարձակվել են Սալդուխյանների մայրաքաղաք Կարինի վրա, ճակատամարտում մահմեդական զորքին օգնում էին Կարսի և Սուլմարիի ամիրների զորագնդերը: «Սալդուխի որդի Նասր էղ-դինը իր երկու որդիներով» այդ ժամանակ գտնվում էր քաղաքում: Ճակատամարտը ավարտվում է վրացական զորքի փայլում հաղթանակով<sup>58</sup>: Գիտական գրականության մեջ վրացական աղբյուրի ռնասր էղ-դինը նույնացվել է Կարնո տեր մալիք Մուհամմադի հետ<sup>59</sup>, Բացի դրանից, Թամար թագուհու պատմիչի վկայության համաձայն, Կարնո տեր ռնասր էղ-դինը ուներ երկու որդի: Բարեբախտարար մեկ որդու անունը պահպանվել է նույն պատմիչի մոտ՝ «Սալդուխի թոռ Մութաֆրադին անունով», որի մասին անանուն հեղինակը հաղորդում է մի սիրավեակ՝ թե երիտասարդ ամիր Մութաֆրադինը (Մուղաֆֆար աղ-դին—Ա. Խ.) հրաժարվելով մահմեդական հավատից, ներկայանում է Թամար թագուհու պալատը՝ նրա հետ ամուսնանալու նպատակով, սակայն այդ առաքելությունը անհաջողության է մատնվում և երիտասարդ ամիրն ամուսնանում է Գեղորգի Դ թագավորի ապօրինի դստեր հետ և վերադառնում հայրենի քաղաքը<sup>60</sup>:

Մասնագիտական գրականության մեջ Մուղաֆֆար աղ-դին (Մութաֆրադին) ամիրի ինքնության հարցը վերջնական լուծում չի ստացել: Ցամրանուրը նրան համարում է ոչ թե Սալդուխի, այլ մալիք Մուհամմադի թոռը<sup>61</sup>: Արևելագետ Կ. Կահենը նրան նույնացնում է մալիք Մուհամմադի՝ արարական աղբյուրներից հայտնի, Սալիք-շահի որդու հետ և անվանում ալ-Մուղաֆֆար Մալիք-Շահ<sup>62</sup>: Թե՛ առաջին և թե՛ երկրորդ տեսակետը վերանայման կարիք ունեն: Մուղաֆֆար աղ-դինի՝ Մալիք Մուհամմադի թոռ լինելու փաստը չի հաստատվում ոչ մի աղբյուրի տվյալներով: Եթե վաստակաշատ պատմաբան Ցամրանուրը օգտվել է վրացական աղբյուրի տվյալներից, ապա այնտեղ ասվում է, թե Մուղաֆֆար աղ-դինը եղել է Սալդուխի թոռը և ոչ թե որդին: Որքան հայտնի է, այս անվան միակ վկայությունը պահպանվել է հենց Թամար թագուհու պատմիչի մոտ, և եթե այլ աղբյուրների տվյալներ շունենք, ապա մենք իրավունք շունենք հավատ լընծայել վրաց պատմիչի տեղեկությանը: Այլ հարց է՝ արդյո՞ք իշխել է իրականում Մուղաֆֆար աղ-դինը հոր մահվանից հետո: Դժվար է ասել, քանի որ այլ տեղեկություն չունենք:

Ինչ վերաբերում է Կ. Կահենի տեսակետին, ապա պետք է ասել, որ «Ալ-Մուզաֆֆար Մալիք-Շահ» անոնը առաջացել է տարբեր հեղինակների մոտ հիշատակվող անձանց՝ տվյալ դիպում, «Մուզաֆֆար աղդին» և «Մալիք-Շահ» անոնների մեխանիկական միացմամբ: Մեր ձեռքի տակ եղած աղբյուրների մեջ այս անոնը՝ ալ-Մուզաֆֆար Մալիք-Շահ ձևով չի հանդիպել: Բացի այդ, արար և պարսիկ հեղինակները նշում են, որ մալիք Մուհամմադի որդին հայտնի է Մալիք-Շահ անոնով: Այսպես, իրն ալ-Ասիրը, որից հետո նաև Արու-լ Ֆիդան, իրն Խալդունը, Արու-լ Ֆարազը և ուրիշներ Կարնո տիրակալ մալիք Մուհամմադի որդուն հիշատակում են 597/1201թ. դեպքերի մեջ: «Այս տարրում՝ Ռամադան ամսին (5 հունիս—5 հուլիս) Ռուքն ալ-Դին Սուլայման իրն Կիլիչ Արսլանը դրավեց Մալաթիա քաղաքը, որն իր եղբօր՝ Մուհող ալ-Դին Կայսար Շահին էր պատկանում: ... և այնտեղից գնաց Կարնո քաղաք (Արդան ալ-Ռում), որը պատկանում էր ալ-Մալիք իրն Սուլամմադ իրն Սալդուկի տղային<sup>63</sup>: Նրա տոհմը երկար ժամանակ տիրում էր Կարնո քաղաքին: Երբ այնտեղ (Կիլիչ Արսլանը—Ա. Խ.) գնաց ու մոտեցավ, նրա տերը, վստահելով նրան, դուրս եկավ հաշտություն կնքելով՝ Ռուքն ալ-Դինի ուղած պայմաններով, սակայն վերջինս ձերքակալեց նրան, իր մոտ բանտարկեց ու գրավեց երկիրը: Սա վերջինը եղավ իր տոհմի այն մարդկանցից, որոնք իշխեցին (այդ քաղաքում):»<sup>64</sup>,

Ինչպես տեսնում ենք, արար հեղինակը չի տալիս Կարնո տիրակալ Մուհամմադի (մալիք Մուհամմադի) թոռան անոնը, որը բնագրում գրված է «الله» վալադ (տղա) և ոչ թե «այտնի بن»—իրն (որդի) քառով: Բացի դրանից, Մուհամմադի որդին հիշատակվում է «Մալիք» բառով: Եթե Հ. ընկալենք որպես անձնանում, ապա ստացվում է՝ «Մալիքի որդի» արտահայտությունը: Հետեաբար Մալիքը նույնպես ունեցել է մի որդի: Մեր կարծիքով իրն ալ-Ասիրի այս տեղեկությունը աղավաղված է գրիշների կողմէց: Մուհամմադի որդի Մալիք-Շահի անվան երկրորդ մասը բաց է բողնվել գրիշների մեղքով մակար—«մալիք» բառը իշխան կամ մալիք հասարակ իմաստով ընկալելու պատճառով: Այս աղավաղման փաստը և Մուհամմադի որդու «Մալիք-Շահ» անվան գոյությունը պարզելու համար զիմենք այլ աղբյուրների: Այսպես, արար հեղինակի նույն տեղեկությունը պահպանվել է նաև պարսիկ հեղինակների մոտ: Դիմենք ԺԶ դարի հեղինակ Շարաֆ-խանին: Այս հեղինակը Զեմիշգեղեկի (Զմշկածագի) կառավարիչներին նվիրված գլխում գրում է. «... Զմշկածագի կառավարիչների տոհմածառը հասնում է, նրանց կարծիքով, Արբասյան խալիֆների հետ-

նորդներից մեկին՝ Մալքիշ անոնով. Մի քանի մեծ պատմիչների ասելով, նրանց տոհմի հիմնագիրը հանդիսանում է ամիր Սալիկը (Սալտուկը—Ա. Խ.) իրն Ալի իրն Կասիմ (Արու-լ Կասիմ—Ա. Խ.), որը պատկանում է սելջուկյան սուլթանների ճյուղերից մեկին. Սելջուկյան Ալփ-Արսլանի գահակալության ժամանակ նա տիրում էր Կարինին և նրան հարող ամրող նահանգին, մինչև (այն ժամանակ), եթք 556/1160—61 թթ. նրա և Վրաստանի իշխանների (թագավորների—Ա. Խ.) միջև պատերազմ տեղի ունեցավ. նա (Սալտուկը) իր բոլոր աղջկականների և բանակի հետ գերի ընկավ վրացիների մոտ: Սակայն, քանի որ նրա քույրը Շահ-Արմենի կինն էր, ուստի նա Վրաստան ուղարկեց մեծ նվերներ և ընծաներ ու փրկագնեց նրան բանտարկության շղթաներից: Նրա մահվանից հետո իշխանությունը անցավ նրա որդի Մալիք Մուհամմադին: Եթք Մալիք Մուհամմադը հեռացավ այս աշխարհից, իշխանությունն անցավ նրա Զակիաշին (քոռանը—Ա. Խ.<sup>65</sup>): Զակիաշի (թոռան) մահվանից հետո իշխանության գահի վրա բարձրացավ Մալիք-Շահ իրն Մուհամմադը...»<sup>66</sup>:

Ինչպես տեսնում ենք, Շարաֆ-խանը հիշատակում է Սալդուխյան տոհմի իշխաններին, սկսած Սալդուխից: Նրա այս վկայության մեջ նույնպես կան մի շարք աղավաղումներ և պատմական ընույթի անձըշտություններ: Նախ այստեղ հեղինակը միացնում է Սալտուկ անոնով երկու իշխաններին: Առաջին իշխանը տոհմի հիմնադիր Սալտուկն է, որը իրոք պետք է լինի սելջուկյան Ալփ-Արսլանի ժամանակակիցը: Իսկ մյուսը հայտնի իղղ աղ-դին Սալտուկն կամ Սալդուխն է: Վրաց թագավորների հետ պայքարել է ոչ թե տոհմապետ Սալտուկը, այլ իզգաղ-դին Սալտուկը (Սալդուխ Բ):

Վկայությունից հստակ երևում է, որ մալիք Մուհամմադի որդին դա Մալիք-Շահն է: Այստեղ նույնպես հիշատակվող իշխանների միջև խառնաշփոթ կա, մանավանդ մալիք Մուհամմադի որդու և թոռան ինքնության հարցում, ուստի հարցը պարզելու և խառնաշփոթ վիճակից դուրս գալու համար դիմենք այն աղբյուրներին, որոնցից Շարաֆ-խանը քաղել է այս տեղեկությունը: Թուրքագետ Ֆ. Սումերը արդարացիորեն նկատել է, որ Շարաֆ-խանը իր վկայությունը քաղել է Գաֆֆարիից, ուստի դիմենք այդ աղբյուրին. «Ամեն Սալիկ (Սալտուկ—Ա. Խ.) իրն Արու-լ Կասիմը Ալփ-Արսլանի կարգադրությամբ դարձավ Կարինի (Արդան ալ-Ռումի) և նրա շրջակայքի տերը: 556/1160—61 թթ. ամիսների ընթացքում նա պատերազմ մղեց վրացիների հետ և իր զորահրամանատարների հետ գերի ընկավ: Նրա քույրը՝ Շահ-Բանուան, ելաթի

տեր Շահ-Արմեն Սուլայման (Սուլբան)⁶⁷ իրն իրրաջիմ իրն Սուլայմանի կինն էր, վրաց թագավորին մի քանի նվերներ ուղարկելով փրկադնեց նրան։ Նրանից հետո այս երկրի իշխանությունը անցավ նրա որդու՝ մալիք Մուհամմադի ձեռքը, իսկ նրանից հետո նրա թոռան՝ Մալիք-Շահ իրն մալիք Մուհամմադին։ Հետագայում, Ռուբն ալ-դին Սուլայման իրն Կիլիչ Արսլանը նվաճեց այս երկիրը երեքշարթի օրը, հինգ-հարյուր իննսուն ութ թվականի Շավվալ ամսին (1202-Հունիս-Հուլիս) և ձերբակալեց իրեն ընդառաջ եկող՝ Մալիք-Շահին։ Սրանից հետո, ոչ-ոք միշխեց նրանցից։<sup>68</sup>

Ինչպես տեսնում ենք, պարսիկ հեղինակը հստակորեն տարրերում է Մալդուխի որդուն և թոռանը։ Մալդուխի որդին եղել է Մուհամմադը, իսկ թոռը՝ Մալիք-Շահը, որը մինչև վերջերս համարվում էր Մալդուխյան տոհմի վերջին ներկայացուցիչը, սակայն, ինչպես կտեսնենք մի քիչ հետո, այս տոհմից իր գոյությունն էր պահպանել ևս մի շառավիղ, սակայն այդ հարցին անցնելուց առաջ, տեսնենք, թե ինչ տեսակետներ կան Մալիք-Շահի ինքնության շուրջ։

ԺԴ դարի հեղինակ իրն Բիրիի մոտ Մալդուխյան վերջին իշխանի մասին պահպանվել է մի տեղեկություն, որի համաձայն, երբ Ռուբն ադ-դին Սուլայման-Շահն իր զորքով հասավ Կարին, նրան ընդառաջ եկավ Կարնո (Արզան ալ-Ռումի) տեր «Ալա՛ ադ-դին Մալտուկին», սակայն սուլթանը ձերբակալեց նրան և նրա իշխանությունը հանձնեց իր եղբայր Մուդիս ադ-դին Թուղրիլ-Շահին, որովհետև նա սուլթանին պատշաճ կերպով շղիմավորեց։<sup>69</sup>

Իրն Բիրիի մոտ հիշատակված «Ալա՛ ադ-դին Մալտուկիի» ինքնության հարցը կասկածի տակ է դրվել։ Թուրքագետ Ֆ. Սումերը գտնում է, որ Կարնո տիրոջ «Ալա՛ ադ-դին Մալտուկի» անվանումը անընդունելի է, քանի որ իրն Բիրիին փորձում է արդարացնել Ռուբն ադ-դին Սուլայմանի նվաճողական վարքագիծը՝ իրը թե Մալդուխյան ամիր Ալա՛ ադ-դինը պատշաճ մակարդակով չի դիմավորել նրան։<sup>70</sup>

Ե. Ցամբառը իրն Բիրիի մոտ հիշատակված Ալա՛ ադ-դին իշխանին ընդունում է որպես Մալիք-Շահ (Մալիք) իշխանի որդին։<sup>71</sup> Մակայն, այս նույնացումը չի հաստատվում այլ աղբյուրների տվյալներով, ուստի այն վերանայման կարիք ունի։

Ի մի բերելով եղած տեղեկությունները դժվար չեն նկատել, որ թե՛ արարա-պարսկական աղբյուրներում և թե՛ իրն Բիրիի պարսկերեն երկում խոսքը 597/1201 թ. միանույն դեպքի մասին է, ընդ որում Կարնո. տերը մի դեպքում անվանված է Մալիք-Շահ, իսկ մյուս դեպքում՝

Ալա՛ աղ-դին Սալտուկի: Այստեղից կարելի է ենթադրել, որ «Ալա՛ աղ-դին» հորդորջումը կարող է լինել Կարնո տիրոջ պաշտոնական տիտղոսը (Լակար), մինչդեռ նրա իսկական անունը պետք է լինի Մալիք-Շահ:

Կարնո տեր Մալիք-Շահը, ինչպես ասվեց, ըստ իրն ալ-Ասիրի, Արու-լ Ֆիդայի, Արու-լ Ֆարազի, Գաֆֆարիի և այլ Հեղինակների 597/1201 թ. ձերրակալվել է Ռումի սելցուկյան սուլթան, Ռուքն աղ-դին Սուլայմանի կողմից, որը նրա տիրույթները հանձնել է իր եղբայր Մու-դիս աղ-դին Թուղրիլ-Շահին՝ Երզնկայի և Կամախի տեր Ֆախր աղ-դին Բահրամ-Շահի հետ Վրաստանի դեմ արշավելու ժամանակ:

Թե ամիր Մալիք-Շահը կամ Ալա՛ աղ-դինը ե՞րբ է անցել իշխանության գլուխ, դժվար է ասել, այդ մասին ոչ մի տեղեկություն չունենք, բայց ԺԲ դարի հեղինակ հմադ աղ-դին ալ-Խսֆահանիի և իրն Վասիլի տեղեկությունների համաձայն ԺԲ դ. 90-ական թթ. Կարինում իշխում էր ոչ թե Ալա՛ աղ-դին Մալիք-Շահը, այլ իղղ աղ-դին Սալդուկի դուստր Մամա Խաթունը: Իմադ աղ-դին ալ-Խսֆահանին վկայում է, որ նրա ալ-Մալիք ալ-Մուսաֆֆար Թակի աղ-դին՝ Ռմար իրն Շահնշահ իրն Այյուբը 587/1191 թ. ուամադան ամսին սկսեց հարձակումը Խլաթի տեր Բեգ Թեմուրի դեմ, նրան պարտության մատնելուց հետո, շարժմե-Մանազկերտի վրա և սկսեց քաղաքը պաշարել, այնտեղ նրան Արգան ալ-Ռումից օգնության հասան Սալդուկի դուստր իշխանուհի Մամա Խա-թունի զորքերը Թակի աղ-դին՝ Ռմարը մահացավ Մանազկերտի պա-շարման ժամանակ<sup>73</sup>:

Դժվար չէ կռահել, որ 587/1191 թ. Կարինում իշխող Մամա Խա-թունը թշնամական հարաբերությունների մեջ էր Խլաթի տեր Բեգ-Թե-մուրի հետ, այդ իսկ պատճառով նա հանդես էր գալիս Այյուբյան տի-րակալ Թակի աղ-դին Ռմարի կողմից, որը հատուկ ծրագրեր էր մշա-կել Հարավ-արևմտյան Հայաստանի շրջանները նվաճելու համար: Բայց դրանից, այս հաղորդումը մեզ օգնում է պատասխանելու այն առեղծ-վածային հարցին, թե ումն է պատկանում Դերջանի Մամա Խաթուն գյուղում մինչև օրս կանգնած ճարտարապետական նշանավոր դամ-րարանը և քարավանատունը<sup>74</sup>: Ճարտարապետ Պ. Պարուջյանի կարծի-քով, Մամա Խաթունի դամբարանի նախագիծը տրված է Անիի և դարի դպրոցը շարունակող հուշարձանների ավանդույթներով և մահմեդական ճարտարապետությունը իր տեսակի մեջ եղակի այս շքեղ կոթողի ստեղծագործական սկզբունքների կապը հայ ճարտարապետության հետ հանդիսանում է մահմեդականություն ընդունած խլաթցի ճարտարապե-տի նրբորեն ծածկված նպատակը<sup>75</sup>:

Մամա Խաթունի գործոմեռության մասին շատ քիչ բան է հայտնի: Մենք լգիտենք, թե նա երբ է անցել իշխանության գլուխ Կարելի է ևնթաղրել, որ իշխել է իր եղբայր մալիք Մուհամմադից հետո Նրա մասին մեզ է հասել նաև մի վկայություն ժի՞ դ. Հեղինակ իրն Վասիլի միջոցով: Ըստ նրա, 597/1200—1201 թթ. Կարինի Մամա Խաթուն իշխանութիւն Այուբյան տիրակալ Ալ-Մալիք Աղիլից խնդրում է մի ազգեցիկ ամուսին գտնել իր երկրորդ կառավարելու և նրա հետ ամուսնանալու համար: Վերջինս նարլուսի տեր՝ Ֆարիս աղ-դին՝ Մայմոնին խորհուրդ է տալիս ամուսնանալ Կարինի իշխանութու հետո Սակայն, երբ Ֆարիս աղ-դին՝ Մայմոնը դալիս է Կարին, պարզվում է, որ նա դատված և բանտարկված է<sup>78</sup>: Թեև արար հեղինակը չի հաղորդում նրա բանտարկության պատճառների մասին, սակայն պետք է ևնթաղրել, որ իշխանութու հակառակորդները իրենց ձեռքն էին վերցրել իշխանությունը, մանավանդ, որ նա ցանկանում էր այլ երկրից կառավարիչ հրավիրել և իշխանությունը իր ձեռքում կենտրոնացնել: Մեր կարծիքով նա հեռացվել է գահից նույն իշխող դինաստիայի այլ անդամների կողմից հենց 1200 թ., քանի որ իրն ալ-Ասիրի հաղորդման համաձայն 1201 թը վականի հունիս-հուլիս ամսին քաղաքում արդեն իշխում էր մալիք Մուհամմադի որդի՝ Մալիք-Շահը, որը, ինչպես ասվեց, բանտարկվեց սելջուկյան սուլթան Ռուքն աղ-դին Սուլեյմանի կողմից և Կարինի իշխանությունը հանձնվեց Մուղիս աղ-դին Թուղրիլ-Շահին:

Մալդուխյանների մասին այլ տեղեկություններ չեն պահպանվել պատմողական աղբյուրներում: Արդյոք իշխել են Սալդուխյանները 597/1201 թվականի Ռուքն աղ-դինի հայտնի արշավանքից հետո, այդ մասին աղբյուրները լուս են, սակայն Մժնկերտի առարերեն արձանագրությունում նշված է, որ Սալդուխյան իշխաններից մեկը՝ Արու Մանսուր Արդին Բասաթ իրն Մուհամմադ իրն Սալդուկ իրն Ալի իրն Արու-լ Կասիմ անոնմով իշխել է Մժնկերտում (Բասեն) 630/1233 թ.:

Արձանագրությունը տալիս է նաև Արու Մանսուր Արդին Բասաթի մի ճոխ տիտղոսաշարք: Եթե ընդունենք, որ Սալդուխյան իշխանը գոյատել է իշխել է մինչև 30-ական թթ., ապա նա պետք է ընդունած լիներ Ռումի սելջուկների գերակայությունը: Քաղաքական տեսակետից թվում էր, թե այս վիմագրում պետք է Սալդուխյան իշխանը արտացոլեր Ռումի սելջուկյան սուլթանների վեհապետությունը կամ գերիշխանությունը: Սակայն այդ մասին չի ակնարկում վերոհիշյալ վիմագիրը: Կարելի է ևնթաղրել, որ Արդին Բասաթը եղել է սովորական

ավատատեր-իշխան։ Հայտնի է, որ ժարի առաջին քառորդում թարձր Հայքում և մասնավորապես Կարինում, Թարերդում և մոտակա գավառներում իշխում էր Կիլիչ-Արսլան Բ-ի որդի Մուղիս-ադ-դին Թուղրիլ-Շահը։ Այդ մասին վկայում են Թարերդի պարիսպների արարերեն շինարարական յոթ արձանագրությունները (610/1213 թ.)<sup>71</sup>։

Համաձայն Իբն-ալ-Ասիրի Մուղիս ադ-դին Թուղրիլ-Շահը մահացել է 622/1225 թ.<sup>72</sup>, որից հետո իշխանությունը անցել է նրա որդի՝ Ռուքն ադ-դին Զահան-Շահի ձեռքը, սակայն վերջինս երկար չի իշխել։ Նույն արար հեղինակը վկայում է, որ Խլաթի պաշարման ժամանակ Զալալ ադ-դին Խորեզմ-Շահի կողմից, Կարնո տերը, որը հանդես էր գալիս որպես Խորեզմ-Շահի դաշնակից, և ռազմական օգնություն էր ցույց տալիս նրան, գերի ընկավ Ռումի սելջուկյան սովորական Ալա՛ ադ-դին Կայ-Կուրաղի ձեռքը։ Թոնագրավեց նրա տիրութները և ամբողջ ունեցվածքը<sup>73</sup>։

Այսպիսով, ի մի բերելով քննության արդյունքները, պետք է նշել, որ պատմողական աղրյուրներից բացի, Հայաստանում պահպանված արարերեն վիմագիր արձանագրությունները հավաստի տեղեկություններ են հաղորդում և բովանդակում այնպիսի փաստեր, որոնք թույլ են տալիս լրացնել պատմողական աղրյուրների բացը, որոշակի հըշտուամներ անել։ Սալդուխյանների ժամանակագրության և տոհմարանության մեջ, ճշտել նրանց տիրութների սահմանները, ինչպես նաև վեր հանել նրանց քաղաքական պատմությունը։

Մեր ձեռքի տակ եղած նյութերի հիման վրա կարելի է հանգել հետևյալ եզրակացություններին։

1. Սալդուխյանների ամիրությունը կազմավորվել է մեծ սելջուկյան տիրակալների (սուլթանների) իշխանության թուկացման շրջանում, երբ աշխարհակալության ներսում ծայր առան մի քանի մանր պետական ավատատիրական կազմավորումներ (օրինակ Մանգուչակյանների, Դանիշմենդյանների, Արտուխյանների ամիրությունները) մոտավորապես ԺԱ. դարի 80-ական թվականներին։

2. Սալդուխյան իշխանության հիմնադիրը—արարական վիմագրերից հայտնի Արու-Լ Կասիր կամ պատմողական աղբյուղների տոհմապետ Սալտուկն (Սալդուխյան) է։

3. Սալդուխյան ամիրությունը քաղաքական ասպարեզ է իշել ամիր Ալիի կամ Դիա՛ ադ-դին Ղազիի օրոք և հզորության գագաթնակետին հասել իզզ ադ-դին Սալդուխյան (Բ) օրոք։ Այս տիրակալի ժամանակ

Կարդինալ Սպրուկսան իշխանացին տոհմածառը (ԺԲ դար) և ժամանակագրությունը:

Աբով-Ն Կասիմ Սալտուկ (Սալտուկ) Ա					
Դիա աղ-դին Ղազի (=ամիր Ամ)					
Իզզ աղ-դին Սալտուկ (թ)					
Մայա Խալիլն (1191—1201 թթ.)	Հաչ-Բանուան (Խլաթի տեղ Եաչ-Արման Սուքան 2-րդի կինը)	Նասիր աղ-դին 1168—1190 (')	Աբով-Ն Ֆաթի Սուհամադ կիւալ Դանիէլ կիւալ կիւալ Հու-Նումեր կիւալ	Աբով-Ն Ֆաթի Սուհամադ տիւալ Դանիէլ կիւալ տիւալ Հու-Նումեր կիւալ	Գրասուր (Մալաթիայի տեր Ֆախրի-աղ-դին Դաուլաթ-Շահի կիւալ)
Աբով Սահսուր Աղջին Բասար	Ակա' աղ-դին Սալիք-Շահ'	Մուզաֆիար աղ-դին	Մուզաֆիար աղ-դին	Մուզաֆիար աղ-դին	

իշխան ամիրների ժամանակագրություն՝

1. Աբով-Ն Կասիմ Սալտուկ (Սալտուկ), ԺԱ դարի 80—90-ական թթ.
  2. Դիա աղ-դին Ղազի (=ամիր Ամ)
  3. Իզզ աղ-դին Սալտուկ Թ
  4. Նասիր աղ-դին Սուհամադ (Աբով-Ն Ֆաթի)
  5. Մամա Խալիլ իշխանչի
  6. Դիա աղ-դին Սալիք-Շահ'
  7. Աբով-Սահսուր Աղջին Բասար 1233 թ.
- (Մ Ճնշելուած առկրուան ալատաներ)

Սալդուխյան ամիրությունը ձեռք է բերել պետական կաղմավորման բոլոր առանձնահատկությունները (դրամներ, տիտղոսներ, տարածք), թեև քաղաքական տևակետից ընդունում էր մեծ սելջուկների ձեսկան գերակայությունը:

4. Մալիք Մուհամմադի, Մամա Խաթունի, ապա Մալիք-Շահի օրոք Սալդուխյան իշխանների հզորությունը նվազում է, և նրանք դառնում են մեծ սելջուկների, ապա Ռումի սելջուկների և Ելտկուզյանների յուրատեսակ ստորագաներ:

5. Մամա Խաթունի օրոք ծայր առաջ առաժ երկապակություններն ավելի են սրվում և բորբոքվում ԺԲ դարի 90-ական թթ. իշխող դինաստիայի տարրեր խմբավորումների միջև։ Այս մրցապայքարը ավարտվում է ամիրության կործանմամբ Ռումի սելջուկյան սովորական Ռումի աղ-դին Սուլյամանի կողմից՝ 1201 թ.։

6. Սալդուխյան տոհմի վերջին հայտնի ամիրը՝ Արու Մանսուր Արդին Բասաթը, իշխել է Մժնկերտի շրջանում մինչև ԺԳ դարի 30-ական թվականները։

## А. ХАЧАТРЯН

### ХРОНОЛОГИЯ И ГЕНЕАЛОГИЯ САЛДУХИДОВ КАРИНА ПО ДАННЫМ АРАБСКИХ ЭПИГРАФИЧЕСКИХ ИСТОЧНИКОВ

#### Р е з ю м е

Рассмотрение данных арабских надписей из Карина, Карса, Мжнкера и Арцке (Адил-Джеваза) в сопоставлении со сведениями нарративных источников позволяет сделать некоторые новые выводы по вопросам хронологии и генеалогии династии Салдухидов.

1. Княжество Салдухидов Карина образовалось примерно в 80-х годах XI в. Ее основоположником, очевидно, был эмир Абу-л Касим, которого следует отождествить с родоначальником Салтуком (Салдух I).

2. Эмира Диля ад-дина Гази арабской надписи каринской башни следует идентифицировать с эмиром Али (1100—1131—1132 гг.).

3. При Изз ад-дине Салдухе II (1132—1168 гг.) во владения салдухидского княжества входил еще Вананд (Карсский район) и северо-западные районы Ванского озера.

4. Начиная с малика Мухаммада, салдухидские правители Карина стали формальными вассалами Великих сельджукидов и Румийских сельджукидских султанов.

5. После малика Мухаммада правила его сестра Мама Хатун дочь Салдуха (примерно в 1190—1200 гг.).

6. Эмира Малик-шаха нарративных источников следует идентифицировать с Ала ад-дином Салтуки, правившим в Каине в 597—1901—1202 г.

7. Последним представителем рода Салдухидов Каина был эмир Абу Мансур Аргин Басат ибн Мухаммад, упомянутый в арабской надписи Мжикертской крепости 630/1233 г.

8. Кроме Каина, во владения салдухидского княжества входили Карс-Вананд, Баберд, Басен, а также северные районы Ванского озера.

#### ՍԱՆՈՒԱԳՐՈՒԹՅՈՒՆԵՐ

1 M. Defremery, *Fragments de géographes et d'historiens arabes et persans inédits relatifs aux anciens peuples du Caucase et de la Russie Méridionale*, — J. A. Juin, ser. IV, t. XIII, Paris, 1849, p. 491—498.

2 E. de Zambaur, *Manuel de géographie et de chronologie pour l'histoire de l'Islam*, Berlin, 1955, (այսուհետք՝ Zambaur) p. 145.

3 A. A. Beygu, *Erzurum Tarihi, anıtları, kitabeleri*, Istanbul, 1936, s. 16—41, 85—97 (այսուհետք՝ Beygu, Erzurum).

4 Cl. Cahen, *Pre-Ottoman Turkey*, trans. from french by Jones-Williams London, 1968, p. 106—107.

5 F. Sumer, *Saltuklular*, —, *Selcuklu Arastirmalari Dergisi*\*, III, Istanbul, 1971, (այսուհետք՝ Sumer, Saltuklular), s. 391—432.

6. «Հայ ժողովրդի պատմություն», հ. 3, Երևան, 1976, էջ 490—491, 463.

7 M. Belin, *Voyage de Paris à Erzurum*, —JA, ser. IV, t. XIX, avril, Par 1852, p. 373—374, *Repertoire chronologique d'épigraphie arabe*, t. IX, publié sous la direction d'Et. Combe, de J. Sauvaget, et de G. Wiet, le Caire, 1937, p. 1—2 (No 3202 այսուհետք՝ RCEA), Beygu, Erzurum, s. 94—95, Sumer, Saltuklular, s. 402.

Վերոիշյալ ամիրի տիտղոսների վերծանման հարցում մասնագետներն առաջարկում են տարրեր ընթերցումների Վիմագրի հնագույն հրատարակող U. Բելինը ու միայն ատլիս է արձանագրության արաբերեն վերծանությունը և ֆրանսերեն թարգմանությունը, այլև բերում է վիմագրի մի գծանկար-պատճեն, որը, ի միջի ալլոց, վիմագրի յասին պահպանվող միակ իրական վկայությունն է (տե՛ս Belin, Voyage, p. 373—374): Այստեղ նաև տիտղոսաշարքում կարդավ է <sup>المنظور بيك</sup> «ալ-Մոնթուր Բիկ» և <sup>الظاهر بيك</sup> «ալ-Ռուզաֆֆար-բեկ»: Սակայն մյուս վիմագրագետներն այդ ընթերցման փոխարեն առաջարկում են վերաբերյալ ալ-թքրիմիկ <sup>الثقيميک</sup> — Թուղրիլ-բեկը՝ տարբենթերցմը (տե՛ս Beygu, Erzurum, s. 95 Sumer, Saltuklular, s. 402, RCEA, IX, p. 1—2, I. Konyali, Erzurum Tariht, cilt 2, Istanbul, 1960, n. 137). Բացի դանիք, տիտղոսի այս բաղադրամակը U. Բելինը, U. Բելինը և Նուսրեթը ընկալում էին որպես անձնանում (տե՛ս U. Բելինը, Էջիւն, էջ 94—95), իսկ <sup>غازى بن</sup> «Ղազի իրեն անվան փոխարեն նուսրեթը և Բելինը

սխալմամբ առաջարկում են կարդալ Հայոց ժամադարձ աղ-դին» (աևս Թեյզու, Խվ. աշխ., էջ 94—95); Նորագույն մասնագետներից ի. Կոնյալին, որից հետո նաև Ֆ. Սոմերը տալիս են վերօնիշյալ տիտղոսի և անվան ճիշտ ասքրերակը, որը համընկեամ է 510/1116 թ. արարերևն հիշատակարանում պահպանված այս ամիբի տիտղոսների հետ:

8 M. F. Kirzioğlu, Kars Tarihi, cilt. I. İstanbul, 1953, s. 389 (այսուհետեւ՝ Kars Tarihi, I), RCEA, IX, p. 43 (No 3265). Վիմագրի արարերեն ընագիրը բիրված է ժեկարի ճանապարհորդ էվլիս Զելերիի մոտ, որից հետո այն առանց թվականի հրատարակվել է Մ. Կիրզիոջու և «Արարական վիմագրության ժամանակագրական դիվանում»։ Սակայն իրականում վիմագրին ունեցել է թվական և հայտնարերվել է Կարսի բիրդի վերանորոգյան ժամանակ՝ 987/1579—1580 թթ. Լաւա Մուսաֆա-փաշայի կողմից, որը նույնպես բիրդի նորոգման մասին երկիրգլյա (արարերեն՝ օսմաներն) վիմագրի է փորագրել տվել չափ գրչությամբ։ Բայց թուրք մատենագիրները վերցին երկիրգլյա վիմագրի տեքստը մեջբերելու փոխարեն, տալիս են ԺԲ դ. վիմագրը։ Բարերախտարար այս վիմագրի ամբողջական տեքստը թվականով հանդերձ պահպանել է ԺԲ դարի հետինակ իրաւաճիմ Փելմին, որի վկայության միջոցով մինչ վերականգնում ենք վիմագրի նախկին թվականը։ Թուրքական աղբյուրների հայ թարգմանիչ Ա. Խ. Սաֆրաստյանը սխալ է տառադարձել վիմագրում հիշատակվող Կարսի Թարամ աղ-դին ամիբի դատեր անունը և Կարսին իջջ աղ-դին իշխանին վերաբերող հատվածը։ Այսպես, ձևական աղ-դին՝ «Պող աստված պաշտպանի» հայտնի վիմագրային բանաձեռ դարձել է վերօնիշյալ ամիբի անվան մասնիկ և տառադարձած է «Եղյուլլահ» (Մելիք Իղեղդին Իյուլլահի իշխանության օրոք), իսկ Կարսի կառավարչի դատեր անունը՝ «Բաջ ուն-Նիսա» վերածվել է «Բննդիլ-Քերիմեղդին» անհասկանալի անվան (տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Գ., Եվլիս Զելերի, թարգմանություն բնագրից, առաջարան և ծանօթագրություններ Ա. Խ. Սաֆրաստյանի, Երևան, 1967, էջ 116 (տողատակ)), հմատ։ «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովարդների մասին», թարգմանություն բնագրից, ներածությունով, ծանօթագրություններով, աերմինարանական բառարանով և հավելվածով կազմեց Ա. Խ. Սաֆրաստյանը, հ. Ա, Երևան, 1961, էջ 44): Ըստ վիմագրի, Կարսի կառավարչի անունն է Թարամ աղ-դին, իսկ նրա դատեր անունը՝ Թաջ ուն-Նիսա։ Վերջապես Կարսին տիրող անունը՝ Իղդ աղ-դին, իսկ հաջորդող ձևական աղ-դին՝ արաւակայտությունը սխալ է ընկալվել օսմաններենի թարգմանչի կողմից։ Իրականում դա հայտնի վիմագրային, բանաձեռային բարեմաղթանը է և առնվազում է բնագրի հաջորդ ժամանակակից պատությունը բառի հետ։

### 9 Kars Tarihi, I, s. 389.

10 Սաղէավոր քովիով այս վիմագրը փորագրված է Արծենի բերդի հյուսիսային պարսպի վրա և եղծված է սկզբնամասում ու վերջնամասում պարսպի մասնակի փլւման հետեւանքով։ Վիմագրը լուսանկարել է Հ. Ա. Օրբելին 1911 թ. (տե՛ս Ի. А. Орбели, Предварительный отчет.—Избранные труды, Ереван, 1963, с. 188—189, 195): Այդ լուսանկարը սիրով մեզ է տրամադրել իրանագետ լ. Տ. Գյուղալայանը, որի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը։ Վերօնիշյալ տեքստը Հ. Օրբելու լուսանկարի հիման վրա փաստորեն առաջին անգամ է հրատարակվում։ Այս վիմագրը գրավել է նաև թուրքագիտ Ա. Թեմալիի ուշագրությունը։ Վերջինն, հավաքար վիմագրի բարձր տեղադրության պատճառով, չի անդրադառնում նրա վերծունու-

Թյանը, բայց հրապարակում է նրա մի անհաջող լուսանկարը (տե՛ս A. Kemali, Ahlat tabeleri Istanbul, 1932, s. 63 (sek. 6)).

11 Թուրքագետ Ֆ. Սումերը ևնթադրում է, որ Կարինի «Ուզու-Զամի» մզկիթի մեղ հասած արձանագրությունը հանդիսանում է նախնական ընդարձակ բնագրի համարությած և խմբագրված տարրերակ, որը իրագործվել է ավելի ուշ (տե՛ս Sumer, Saltuklar սար, s. 331). Նախնական բնագրի կրնատման կամ խմբագրման օգտին է խոսում նաև անգլիացի հայտնի ճանապարհորդ Լինչի Հետևյալ վկայությունը. «Ինձ ցուց տվեցին այս մզկիթին պատկանող մի փաստաթուղթ, որը վկայում է մզկիթի կառուցման մասին սուլթան և հոգնոր առաջնորդ Մահմեդ ալ-Ֆաթիհ կողմից 575 (1179—1180) թվականին (տե՛ս Linch, Armenia. Travels and studies, vol. 2, London, 1901, p. 21; X. Լինչ, Արմենիա, Путевые очерки и этюды, перевод с англ. Е. Джунковской, т. 2. Тифлис, 1910, с. 271) Անդիխացի հեղինակի խոռոքելից հարելի է կունել, որ «հին փաստաթուղթը վերաբերում է մզկիթի հիմնադրման և նրա օգտին վակֆային ևնեցվածքներ կամ տիրութիւններ փոխանցելու ակտին: Եթե Լինչի մեջբերված վկայությունը ճիշտ է, ապա պետք է նշել, որ այդ փաստաթուղթի մեջ նույնական կեղծված կետեր կան, քանի որ վերոհիշյալ մզկիթի կառուցողը, ըստ պահպանված համառոտ բնագրի, ոչ թե օսմանյան սուլթան Մահմեդ ալ-Ֆաթիհն է, ինչպես վկայում է անգլիացի Հեղինակը, այլ Արռւ-լ Ֆաթի Սուլհամմադ իրն Սալդուկը, որը Կարինում իշխան է ՓԲ դարի 70-ական թվականներին (տե՛ս Zambaur, p. 145): Այսուղի, Արռւ-լ Ֆաթի Սուլհամմադ անունը փոխարինված է Մահմեդ ալ-Ֆաթիհ անունով: Եթե Լինչի վկայությունը ճիշտ է, ապա Սալդուկյան տիրակալի անունը մտացածին փոխարինվել է Օսմանյան հայտնի սուլթանի անունով, պահպանելով նախկին 575/1179—1180 թվականը»:

12 Ա. Բեյզուն և ենորոպացի վիմագրագետները օհայ նին («Ալղին Բասաթ», ընթերցման փոխարեն տալիս են օհայ մալլ Մալիք Շահ տարբնթերցումը (տե՛ս Erzurum, s. 38, RCEA, IX. p. 209 (No 3498). Իսկ թուրքագետ Մ. Կիրդիօղլուն տալիս է օհայ ու օհայ երես Ալի-Շահ տարրերակը (տե՛ս Կարս Tarıhi, s. 392). Մենք փորձել ենք ստուգել վերոհիշյալ տարբնթերցումները Ա. Բեյզունի մոտ հրատարակված և պահպանված միակ լուսանկարի օգնությամբ, սակայն անհաջող լուսանկարը թույլ չի տալիս ստուգել այն: Այդ իսկ պատճառով պահպանված ընդունել ենք նորագույն հնատառուող ի. Կոնյալիի «Արղին Բասաթ» տարրերակը (տե՛ս Konyali, Erzurum Tarıhi, s. 511):

13 Այս վիմագրի թվականի շուրջ կան հակասական կարծիքներ: Թուրքագետ Ֆ. Սումերը գտնում է, որ ի. Կոնյալիի առաջարկած 630/1233 թ. հավատ լի ներշնչում, քանի որ Կարինի շրջանում այդ ժամանակ իշխում էին Ռումի սելջուկյան սովորանները և Արղին Բասաթը պետք է իշխած լինի ՓԲ դարի վերջերին (տե՛ս Sumer, Saltuklular, s. 524). Ա. Բեյզուն և նրա հետքերով եվրոպացի վիմագրադատները կարդում են թիւ անձնագիր հարյուր իննսուն երեք (1197) տարիթիվը (տե՛ս Beygu, Erzurum, s. 38, RCEA, p. 209 IX, Kars Tarıhi, s. 392) Մ. Կիրդիօղլուն ընդունում է ձևագույն վեցհարյուր շորս (1207—1208) տարիթիվը: Այս տարբնթերցումների ճշտությունը ստուգելու համար հարկավոր են նոր լուսանկարներ, իսկ թարբը, որի վրա փորագրված է եղել վիմագրիր, այսօր կորցրել է իր նախնական վիմագրը և խիստ եղծված է: Մենք պայմանականորեն ընդունում ենք ի. Կոնյալիի ընթերցումը:

14 Սալդուխյան տոհմի կամ իշխանության անվանումը տարրեր գրությամբ է պահպանվել: Արարական աղբյուրները տալիս են մուտք (սաղով), մուտք (սինով), մուտք (դալով) ձևերը, Հայաստանի արարերներ վիմագրերում առնելով մուտք գրությամբ է: Մեր կարծիքով մուտք «Սալդուխ» տարրերակը իրականության ավելի մոտ է: Հայկական աղբյուրներում այս անունն արձանագրված է երկու ձևով՝ Սալդուխ և Սալդուխ: Վրացական աղբյուրների գրությունը ավելի մոտ է հայկականին և կարելի է տառադրձել «Սալդուխ», «Սալդուխ»:

Եվրոպական և Բուրբագիտական գրականության մեջ տարածված է «Սալդուխ» ձևը: Մենք հետեւ ենք հայագիտական գրականության մեջ ընդունված «Սալդուխ» գրությանը և օգտագործում այն թե՛ ամբողջ տոհմի և թե՛ ժարի կեսերին իշխող հզզ-աղողին Սալդուխ (կամ Սալդուկ) իշխանի համար: Վերչին իշխանին տոհմապես նույնանուն իշխանից տարրերիւու համար տոհմապեսի անվան համար պայմանականորեն ընդունել ենք Սալդուխ գրությունը:

15 «Օտար աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին», 11: «Արարական աղբյուրներ», թ. Իրեն ալ-Ասիր, Թարգմանություն բնագրից, առաջարան և ծանոթագրություններ Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1981 (այսուհետեւ՝ Իրեն ալ-Ասիր): էջ 233. Հմմա. Իբն el-Athiri, Chronicon quod perfectissimum inscribitur, ed. C. J. Tornberg, vol. X. Upsaliæ, Lugduni Batavorum, 1870 (այսուհետեւ՝ Իբն el-Athiri), p. 247a.

16 Ֆ. Սումերը այս հիշատակարանը քաղել է Ստամբուլի Ֆաթիհի անվան գրադարանում պահպան ձեռագրից: Մենք հղում ենք ըստ նրա վկայակուության և բերված արարերներ բնագրի (տե՛ս նշված աշխ., էջ 602):

17 Konyali, Erzurum Tarihi, s. 511. Sumer, Saltuklular, s. 425.

18 Histoire des Seldjoucides d'Asie Mineure d'après d'Ibn Bibi, texte persane publiée d'après M. Th. Houtsma, vol. IV, Leide, 1902, p. 2, 21: Հմմա. Zambaur, p. 145.

19 Zambaur, p. 146; Հմմա. կ. Է. Բօսվորտ, Мусульманские династии, Справочник по хронологии и генеалогии, перев. с английского и примечания П. А. Грязневича, М., 1971 (այսուհետեւ՝ Բօսվորտ), с. 181.

20 A. A. Խաչատրյան, Нижнетալышская арабская надпись 570/1174 г. ՊԲՀ, 1979, № 4, с. 195—196.

21 Zambaur, p. 145.

22 Sumer, Saltuklular, s. 401—402.

23 Ն. Սարգսյան, Տեղագրութիւնը ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 71—72: Ս. Եփրիկյան, Բնաշխարհիկ նկարագրդ բառարան, հ. 2, գիրք Ա, Վենետիկ, 1907, էջ 314: Մ. Հովհաննեսիսյան, Հայաստանի բրոդը, Վենետիկ, 1970, էջ 8:

24 Beygu, Erzurum, s. 94. Հմմա. RCEA, IX, p. 1—2 (No 3202).

25 Sumer, Saltuklular, s. 406 (No 25).

26 Այս վկայությունը բերված է ըստ Ֆ. Սումերի: Վերշինս ոգուվել է Ֆարիկիի պատմության ստամբուլյան ձեռագրերից (տե՛ս նշված աշխ., էջ 408):

27 V. Minorsky, Studies in caucasian history. London, 1953, p. 83.

28 Sumer, Saltuklular, s. 408.

29 Beygu, Erzurum, s. 36, I. Kafesoglu, Sultan Meliksah devrinde, İstanbul, 1953, s. 114, Kars Tarihi, I, s. 373; Gabriel, Monuments, II, 169—170; Zambaur, p. 145.

30 F. Sumer, Malazgird savasına katılan türk beyleri, — Selçuklu Araştırmalar Dergisi<sup>c</sup>, c. IV, İstanbul, 1979, s. 20<sup>c</sup>, 207.

31 H. Inaçik, Erzurum, El.N.E., vol. 2, Leiden-London, 1965, p. 712. Խոնազյան, Հայաստանը և սելջուկները, էջ 177, 200; Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 463, 490.

32 W. Barthold, (C. Heywood), Kars, El.N.E., vol. IV, Leiden-Paris, 1978, p. 697; C. E. Bosworth, The Political and Dynastic history of the Iran World (A. D. 1000—1217), — . The Cambridge history of Iran\*, vol. 5, London, 1968, p. 95.

33 Картлис цховреба (История Грузии), грузинский текст, т. 1, Тбилиси, 1955 (այսուհետև՝ Картлис цховреба, 1), с. 319; Համար. Brosset, Histoire de la Géorgie, I, p. 346.

34 Թարթիս Ցխովլիքայի կամ վրաց պատմության հին հայերեն թարգմանության վրացերեն բնագիրը և հին հայերեն թարգմանությունը, ուսումնասիրությամբ և բառզրով, լույս ընծայից իլիս Արուլաձեն, Թրիլիսի, 1953 (այսուհետև՝ Թարթիս Ցխովլիքա), էջ 235. Հմմտ. Համառու պատմութիւն վրաց ընծայիալ Զուանշիրի պատմիչի, Վենետիկ, 1884 (այսուհետև՝ Զուանշիր), էջ 114—115: Addition et éclaircissement à l'histoire de la Géorgie depuis l'antiquité jusqu'en 1469 de I—C par M. Brosset, St.-G, 1851 (այսուհետև՝ Addition et éclaircissement), p. 56.

35 M. H. Inanc, Turkiye Tarihi selçuklular devri, I, Anadolu'nun fethi, İstanbul, 1944, s. 111—112. I. Kafesoglu, Sultan Meliksah devrinde, İstanbul, 1953, s. 114. Kars Tarihi, I, s. 374. Н. Н. Шенгелия, Сельджуки и Грузия в XI в., Тбилиси, 1968, с. 308—309 (на груз. яз., реэ ме на русс. яз.). Հայացիտական գրականության մեջ տարածում է ստացել այն տեսակետը, թե 1080 թ. գետի Վրաստան արշավանքի հրամանատար Ահմադը այդ արշավանքին մասնակից ամբող Բուժդղուրն (Բուժդղուն) է, որի անունը պահպանվել է վրաց աղբյուրի ԺԲ դարի հայերեն Բարգմանության մեջ (տե՛ս Ղ. Ալիշան, Ալրարատ, Վենետիկ, 1890, էջ 84, Հմմտ. Կրպէ, Կարս քաղաք, Սոսկուա, 1893, էջ 9; Ս. Էփրիլյան, Բնաշնարհիկ նկարագրության, հ. 2, գիրք Ա, Վենետիկ, 1907, էջ 346):

36 Beygu, Erzurum, s. 40, M. Kirzioglu, Kars tarihi, I, İstanbul, 1955, s. 375.

37 Սումերը այս վկայությունը քաղել է Մտամրովի Յաթիհի անվան գրադարանի ձեռագրից (տե՛ս Սումեր, նշված աշխ., էջ 396, ծան. 10):

38 W. Barthold, C. Heywood, Kars, p. 697. M. Kirzioglu, Kars, IA, cilt 6, İstanbul, 1967, s. 360—361.

39 Իբրէալ-Ասիր. էջ 257, Հմմտ. Ibn el-Athir, XI, p. 126.

40 Sunier, Saituklular, s. 411.

41 Ibn al-Adim, Bugyat al-talab fi tarikh Halat, yatinlagan<sup>c</sup> A. Sevim, Ankara, 1976 (այսուհետև՝ Ibn al-Adim), s. 298.

42 Խլաթի տեր Շահ-Արմեն Սուրման Բ-ի հնոյ մասին ուսումնասիրողները կարծիք են կազմել հիմնականում Հայ հեղինակների կամ իրն ալ-Ասիրի Հաղորդագումերից: Իշխում է այն կարծիքը, որ նա եղել է Կարինի Սալդուխյան տիրակալ Իզզ աղ-դին Սալդուխի քույրը՝ Շահ Բանու (կամ Բանուար) անունով (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 490, Մանանյան, հ. 9, էջ 113 (ծան. 1), 2. Մարգարյան, Հունաստանի Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր, կրնան, 1980 (այսուհետև՝ Մարգարյան, Մի քանի հարցեր), էջ 98 (ծան. 52); Այս թիուր կար-

ժիրը առաջացել է իրն ալ-Ասիրի այն հազորդման հետևանքով, որի համաձայն Խլաթի Շահ-Արմեն Սուրբան Բ-ի կինը՝ Շահ Բանուար անունով, նղել է իր ագ-դին Սալդուխի բույրը (տե՛ս Իբn el-Athir, IX, p. 185. Հմմտ. Իրն ալ-Ասիր, էջ 259—260): Այս աղպակցության հարցում սիմալ պատկերացում են ունեցել նաև միջնադարյան հայ պատմիչները: Հսոս Վարդան պատմիչը և մի մանր ժամանակագրության Սալդուխին է դարձել Շահ-Արմենի փեսան (տե՛ս Վարդան, Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 124: Հմմտ. Մանր ժամանակագրություններ, Կաղեց Վ. Հակոբյան, մաս 2, Երևան, 1956, էջ 164 (ծան. 77) և ոչ թե հակառակը Խլաթի իշխանունու անունը ոչ թե Շահ Բանուար է, ինչպես հազորդում է իրն ալ-Ասիրը, այլ Շահ Բանուան: Նա եղել է ոչ թե Սալդուխի բույրը, այլ նրա աղջիկը: Այս ճշգրտումը մենք առաջարկում ենք Շահ-Արմենների արքունիքում ծառայող ամիր Ասադ իրն Ամմարի հուշագրության հիման վրա, որը նա թողել է իշխանունու պալատում 563/1167—68 թթ. եղած ժամանակի: Այդ վկայությունը մեզ է հասել ԺԲ դարի արար հեղինակ իրն ալ-Ազիմի միջոցով (տե՛ս Իբn al-Adim, s. 298):

43 ԺԲ դարի 50—60-ական թթ. ծավալված պայրարի մասին տե՛ս Minorsky, Studies, p. 87—97, Մարզարյան, Մի քանի հարցեր, էջ 99—122:

44 Տե՛ս Իբn el-Athir, XI, p. 132, Minorsky, Studies, p. 89—89, Ibn al-Qalanisi, History of Damascus 363—555 a. h., edit. with extracts from other histories... by H. F. Amedroz, Leyden, 1908, p. 316, 361.

45 Catalogue of oriental coins in the British Museum, vol. III, the coins of the turkmen houses of Seljook, Urtuk, Zengee ... by S. Lane-Pool, edit. by, Reginald S. Pool, London, 1877 (այսուհետև Catalogue of oriental coins, III), p. 113 (No 306). A. Tevhid, Catalogue des monnaies du Musée Imperial Ottoman, quatrième partie, Constantinople, 1903 (այսուհետև Tevhid, Catalogue), p. 71. П. Марков, Инвентарный каталог мусульманских монет Эрмитажа, С. Петербург, 1896, с. 403.

46 Cf. Cahen, Pre-Ottoman Turkey, p. 106—107.

47 Մալաթիայի և Սիրաստիայի Դանիշմենդյան տիրակալ Յաղի Արսանի անվան միշտ ձեզ պահպանվել է Նիբարի արաբերն արձանագրության մեջ «Յաղի-Բասան» ձևով (տե՛ս M. van Berchem, Epigraphie des Danischmendites,—Zeitschrift für Assyriologie, Bd. XXVII, Berlin, 1912, S. 86—87, Բօսվորտ, с. 181). ԺԲ դ. հեղինակ Միխայել Ասորու մոտ պահպանվել է Յակուբ-Արսան ձևով (տե՛ս Միխայել Ասորի, Ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1871, էջ 448, Հմմտ. Chronique de Michel le Syrien, ed. et trad. J. B. Chabot, t. III, Bruxelles, 1963, p. 321): Հայաղիտական գրականության մեջ մտել է նաև Ալիբասան աղավաղված ձևը (տե՛ս Մանանյան, Երկեր, հ. 9, էջ 99—91):

48 Իրն ալ-Ասիր, էջ 261: Հմմտ. Ibn el-Athir, XI, p. 209.

49 Ibn al-Qalanisi, p. 328. Minorsky, Studies, p. 86—87.

50 С. Т. Еремян, Юрий Боголюбский по армянским и грузинским источникам,—«Научные труды Ереванского госуниверситета», т. 23, Ереван, 1946, с. 399, 413.

51 Beygū, Erzurum, s. 241.

52 Л. Т. Гյозальян, Неизданные надписи байбуртской крепости, ВВ, т. VIII, М., 1956, с. 306—330.

53 Minorsky, Studies, p. 96. Sumer, Saltuklular, s. 408, 415. Իզզ աղ դին  
Սալտուկի գահակալության ապրիները մասնագիտական գրականության մեջ լաւարան-  
ված չեն. Դրամագիտներ Ս. Լեն-Փուլը, Ա. Թելէֆիզը և Պ. Մարկովն ընդունում են 1145—  
1174 թթ. (տե՛ս Lane-Pool, Catalogue, III, p. 113. Tevhid, Catalogue, p. 71.  
Մարկով, Каталог, с. 403. Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 400). Այս թվա-  
կանները ոչնչո՞ղ պայմանագորված չեն. Տոհմարան Ե. Յամբառութը ընդունում է  
1153—1163 թթ. (տե՛ս Zambaur, p. 145). Վերջին թվականները հավանաբար ար-  
տացոլում են արար հեղինակների տեղեկությունները այդ թվականների մասին. Մ.  
Կըրդիովլուն տալիս է 1145—1174 թթ. (տե՛ս Kars Tarihi, I, s. 374—375). Այս  
թվականներն ակնհայտ մասալ են, քանի որ 1174 թ. ամիեն արդեն կենդանի չեր. Պոփ.  
Վ. Մինորսկին նախապես տալիս է 1153—1164, սակայն արար հեղինակի տվյալներով,  
այսուհետև, ընդունում 1153—1168 թթ. (տե՛ս Studies, p. 87, 96).

54 Lane-Pool, Catalogue, III, p. 114 (No 310). Tevhid, Catalogue, p. 72.  
Մարկով, Каталог, с. 404.

55 Beygu, Erzurum, s. 40. Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 491.

56 Zambaur, p. 226; Босворт, с. 171. Саир ад-дин ал-Խուսեйն, Ахбар ад-  
даулат ас-сельджукийа (зубдат ат-таварих փառար ալ-սուլթան ալ-Խուսեйն, ալ-Խուսեйն, 1153—1164, աշխաբար արար հեղինակի տվյալներով,  
մասնաւում 1153—1168 թթ. (տե՛ս Studies, p. 87, 96)).

57 Zambaur, p. 145.

58. «История и восхваление венценосцев», грузинский текст перевел, с пре-  
дисловием и примечанием сиабдил действительный член АН Груз. ССР, проф.  
Կ. Ս. Կեկелидзе, Тбилиси, 1954 (*այսուհետեւ՝ Իստորիա և վոքականության մասին*, ս. 53—54. Համար. 1. Մելիքուր-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հա-  
յերի մասին, հ. Ա, Երևան, 1934, էջ 14. Brosset, Histoire, I, p. 432, 260. Վա-  
խուզափի Բագրատիոնիի մոտ պահպանված համապատասխան հաղորդման մեջ «Կարի-  
նի մոտ տեղի ունեցած Հակատամարտի մատման քաղաքում գտնվել է Նասր է-դ-դինին  
իր երկու եղբայրների հետ» (տե՛ս Մելիքսեբ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և  
հայերի մասին, հ. Գ, Երևան, 1938, էջ 46). Հավանաբար Վախուզափի մոտ պահպա-  
նված վկայությունն աղավաղվել է գրիշների մեղքով. Իրականում այստեղ յոսութը եր-  
կու որդիների մասին է, ինչպիս այդ մասին վկայում է Թամար թագուհու պատմիքը:

59 M. Defremery, Fragments de géographes et d'historiens arabes et per-  
sans inédits relatifs aux anciens peuples du Caucase et de la Russie Meridionale  
JA, 1849, s. IV, t. XIII. Paris, 1849, f. 494. Zambaur, p. 145. Cahen, Pre-otto-  
man Turkey, p. 108. Sumer, Saltuklular, s. 418.

60 «История и восхваление венценосцев» с. 45. Համար. Еремян, Юрий Бого-  
любский, с. 413.

61 Zambaur, p. 145.

62 Cahen, Pre-ottoman Turkey, p. 107.

63 Իր ալ-Ասիրի այս վկայությունից երևում է, որ այն աղավաղված է գրիշների  
մեղքով. «Ալ-Մալիք իր Սունամադ իր Սալտուկի տղա» արտահայտության «տղա»  
բառը վերաբերում է ոչ թե Սալտուկին, այլ «Մալիքին» և այն ավելացվել է գրիշների  
կողմից: Այսպես, ԺԴ դարի արար հեղինակ Իր Խալդունի մոտ պահպանվել է «Իր  
ան Խլդուն» կետը «العَبْرُ وَدِيَانُ الْمُبْتَدَأُ وَالْخَبْرُ» (տե՛ս، وَدِيَانُ الْمُبْتَدَأُ وَالْخَبْرُ).

(١٧٩) مطبعة بولاق، ١٩٨٤، مجلد خامس، ص ٢٣٩ (ابن Khaldoun)، Այստեղ, ինչպես ահանում ենք, զուրս են մշացել երկու բառ առևտուն անձ (ալ Մալէք աղան), Աբու-լ Ֆարաջի ժողովանիվել է «Մալիք Մահմամմադ իբն Սալիհովի տղան» տարրերակը (ակ'ս Barhebraeus, The Chronography of Abul Faradj... Trans. from Syriac by E. A. Wallis Budge, vol. 2, London, 1932, p. 426. Այստեղ նույնական չի պահպանվել երկու բառ՝ «վալադ» և «իրա»):

64 Իրն ալ-Ասիր, էջ 280; Հմատ. Ibn el-Athir, XII, p. 320. Abu-l Faradj, p. 426. ibn Khaldoun, V, p. 168. Abu-l Feda, IV, p. 192.

65 Յ. Սումերը, հիմք ունենալով Գաֆֆարիի մաս պահպանված համապատասխան տեղերությունը, Եարաֆ-խանի հաջողական աղականված ձեր սրբագրում է և առաջարկում կարգաւորությունը՝ Հինգին նրա Խորակ (ակ'ս Sumeg, Saltuklular, s. 428—429).

66 Шараф-хан ибн Шамс ад-дин Бидлиси, Шараф-наме, т. 1, перевод, предисловие, примечания и приложение Е. И. Васильевой, М., 1967, с. 220—221.

67 Սրբագրում Յ. Սումերին է (տե՛ս նշված աշխ., էջ 428):

68 Պատմության այս հատվածը բերված է ըստ Սումերի Գաֆֆարիի պատմության իրանական հրատարակության բաղումների (տե՛ս նշված աշխ., էջ 428):

69 Ibn Bibi, El-evamirul-alaiyye fil umuril-alaiyye, onsoz ve fihristi hazir-Hyan A. S. Erzi, I, Tıbkıbasımı, Ankara, 1956, s. 73—74. Հմատ. Նույնի Histoire des Seldjoucides d'Aste Mineure, v. IV, p. 21—22.

70 Սումեր, նշված աշխ., էջ 423:

71 Zambaur, p. 145.

72 Իրն ալ-Ասիր, էջ 280; Հմատ. Ibn el-Athir, XII, p. 111.

73 İmad ed-din el-Katib el-İsfahani, Conquête de la Syrie et de la Palestine par Salah ed-din, publié par le comte Carlo de Landberg, vol. I, texte arabe, Leyde-E. J. Brill, 1888, p. 401.

74 Մամա Խաթունի գամբարանի և բարավանատան թվագրման հարցի շուրջ տե՛ս, R. H. Ural, Les monuments Islamiques de la ville d'Erzurum et de sa région.—Bibl. archéologique et historique de l'institut franc d'archéologie d'Istanbul, t. XXII, Paris, 1968, p. 129—142. O. Aslanapa, Turkish art and architecture New York, 1971, p. 140—141. Beygu, Erzurum, s. 258—261.

75 B. Paboujian, Le mausolé de Mama Khatun à Terdjani et les monuments de l'école d'Ani, Հայկագեղան հայագիտական հանդես, էջ (7), Պէրութ, 1979, էջ 211; Հմատ. П. Пабуджян. Терджанский мавзолей Мама Хатун и армянская архитектура, II международный симпозиум по армянскому искусству (доклады), Ереван, 1978, с. 7, 9.

76 Իրն Վասիլի այս հաղորդումը բերում ենք ըստ Յ. Սումերի բաղումների (տե՛ս Սումեր, նշված աշխ., էջ 420):

77 Գյոզալյան, Неизданные надписи байбуртской крепости, с. 306—330.

78 Իրն ալ-Ասիր, էջ 317; Հմատ. Ibn el-Athir, IX, p. 357. Zambaur, p. 145, note 2.

79 Իրն ալ-Ասիր, էջ 339—341; Հմատ. Ibn el-Athir, XII, p. 320. Zambaur, p. 144, note 5.

ԽԱԼԻՖԱ ԻԲՆ ԽԱՅՅԱԹԸ ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ  
ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ Է—Թ ԴԴ. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂՔՅՈՒՐ

Մոտ երկու տասնամյակ առաջ արաբագիտությանը հայտնի դարձավ մի նոր պատմական երկ՝ Խալիֆա իրն Խայյաթի Պատմությունը<sup>1</sup>, որի ուսումնասիրությունից պարզվեց, որ այդ արաբ պատմագրությունից մեզ հասած հնագույն աշխատությունն է։ Նորահայտ պատմական երկի մասին դեռ չկան մասնագիտական ուսումնասիրություններ, բացի բնագրի հրատարակության առաջարանից։ Խալիֆա իրն Խայյաթը նոր, թարմ նյութ է մատուցում խալիֆայության տարրեր նահանգների, ընդ որում և Հայաստանի քաղաքական կյանքի մասին։

Որպես պատմական երկ այն առնչվում է արաբ պատմագրության կազմավորման շրջանին։

Արաբ պատմագրությունը<sup>2</sup> կազմավորվել է յուրահատուկ պայմաններում։ Խալիֆայության նվաճումներից որոշ ժամանակ հետո սկսել են գրի առնել մոտիկ անցյալի դեպքերը։ Մեզ հասել են մատենագրական տեղեկություններ, որ արդեն Ը դարի սկզբից գրի են առնվել է դարի իրադարձությունները, ինչպես նաև նախիսլամական (հեթանոսական) շրջանի ավանդությունները, ցեղային տոհմարանությունները (անսար) և այլն<sup>3</sup>։

Նախիսլամական շրջանի եմենի պատմությունը գրի է առել Ուահրի իրն Մումարբիհը<sup>4</sup> (մեռ. 728/734) իր Քիտար ալ-Միշան (Թագերի մատյան) Արկի մեջ, որը մեզ հասել է Արդ ալ-Մալիք իրն Հիշամի<sup>5</sup> (մեռ. 833) խմբագրությամբ, իսկ հեթանոսական Արարիայի ավանդությունները և հետագա դեպքերի շրաբնանքը տվել է Հիշամ իրն Մուհամմադ ալ-Քալիխն<sup>6</sup> (մեռ. 819)։ Շարադրել են նաև Մուհամմադի վարքը (սիրա), լայնորեն օգտագործելով նրա մասին ավանդությունները (հաղիս) և կրոնական առաջին արշավանքների (մաղաղի) նյութերը։ Հայտնի է Մուհամմադ իրն Խակի<sup>7</sup> (մեռ. 768) մեզ հասած

աշխատությունը, որից առատորեն օգտվել է վերոհիշյալ Աբդ ալ-Մալիք իրն Հիշամը:

Այս ամենը հիմք դարձավ խալիֆայության նվաճումների և պատմության շարադրման համար: Այս արար պատմագրության նախնական շրջանն է, որն ընդգրկում է թ դարի առաջին կեսը: Առաջին կարևոր դեմքը, որ շարադրել է խալիֆայության պատմությունը, հասցնելով մինչև Հարու ալ-Ռաշիդի օրերը, Մուհամմադ իրն Օմար ալ-Վակիրին<sup>8</sup> (մեռ. 823) է, որի երկերը հիմնականում կորել են և միայն մի փոքր մասն է պահպանվել՝ կրոնական առաջին արշավանքների (մաղաղի) մասին<sup>9</sup>, իսկ մյուս աշխատությունները (Եգիպտոսի, Սիրիայի և Միջագետքի նվաճումները)<sup>10</sup> նրա անվամբ վերաշարադրվել են ժթ դարում և կոչվում են կեղծ-Վակիրիի երկեր Վակիրիի գործերը թ դարում լայնորեն օգտագործել են պատմիչները և հաճախ վկայակուել նրան:

Նրան ժամանակակից է Աբու Ուբայդան<sup>11</sup> (մեռ. 824), որը թեև հայտնի է որպես նախիսլամական ավանդությունների հետազոտող, սակայն գրել է նաև խալիֆայության պատմության մասին: Վերջապես, արար պատմագրության այս ժամանակաշրջանի ներկայացուցիչը է Մադահինին<sup>12</sup> (մեռ. 830/849): Այս երկու պատմիչների երկերը չեն պահպանվել, սակայն ժամանակին օգտագործվել են թ դարի պատմիչների կողմից:

Ահա այս վիճակում էր արարական պատմագրությունը, երբ հանդես եկավ Խալիֆա իրն Խայյաթը:

Խալիֆա իրն Խայյաթ ալ-Ռաֆուրին միջնադարյան արար մատենագրության մեջ հայտնի է եղել որպես «Կենսագրությունների դասակարգում» (Թարակատ) կոչվող աշխատության հեղինակ: Նրան հիշատակում են Թարարին<sup>13</sup> (Ժ դ.), իրն ալ-Նադիմը<sup>14</sup> (Ժ դ.), իրն ալ-Ասիրը<sup>15</sup> (Ժ դ.), իրն Խալիֆանը<sup>16</sup> (Ժ դ.), իրն Քասիրը<sup>17</sup> (Ժ դ.), իրն Տաղը թիրդին<sup>18</sup> (Ժ դ.): Իրն ալ-Նադիմը Ֆիհրիստ կոչվող մատենագիտական աշխատությունում, այլ աշխատությունների շարքում, հիշատակում է նրա Պատմությունը, իսկ իրն Քասիրը նրան բնորոշում է որպես պատմագրության կարկառում դեմքերից մեկը: Նրա պատմական երկից օգտվել ու վկայակուել է իրն Տաղը թիրդին: Արար պատմագրության պատմության առաջին ուսումնասիրող Ֆ. Վյուստենֆելդը<sup>19</sup> հիշատակում է Խալիֆա իրն Խայյաթին որպես պատմիչի:

Եվ ահա 1963-ին, Մարոկկոյի մի հեռավոր մենաստանում (զառիյա), հայտնաբերվեց Խալիֆա իրն Խայյաթի ձեռագիրը, որը շուտով բերվեց Ռաբաթի մատենադարանը: Թվում էր, թե սա նրա «Կենսագրու-

Քլունների դասակարգում» (Թարակատ) աշխատության մի ձեռագիր օրինակն է, սակայն թաղդադի համալսարանի իսլամի պատմության դասախոս, բանասեր Աքրամ Դիա ալ-Շմարին<sup>20</sup> պարզեց, որ դա Խալիֆա իրն ալ-Խայյաթի պատմական երկն է և 1967-ին հրատարակեց Թաղդադում<sup>21</sup>, երկը, վերանայված, երկրորդ անգամ հրատարակվեց 1977-ին (Դամասկոս-Բեյրութ): Այս հայտնագործությունը մի բացառիկ երևույթ էր արաբագիտության մեջ, քանզի աշխատությունը ամբողջովին պահպանված հնագույն արաբական պատմական երկն է:

Խալիֆա իրն Խայյաթ ալ-Ռւաֆուրին<sup>22</sup>, որը հայտնի է նաև Շարաբ անվամբ, ծնվել է մոտավորապես 776/777 թվականին Թասրայում (Իրաք): Նրա հայրը և պապը ուսումնասիրել են ավանդությունները (Հաղիս) Մուհամմադի մասին: Խալիֆան ուսումնառությունն անց է կացրել թասրայում, ուր նրա ուսուցիչներն են եղել Հիշամ ալ-Քալրին, ալ-Մադահինին և ուրիշներ, իսկ նրա աշակերտներից կարելի է հիշատակել Թուխարիին (որն իր կրոնական աշխատության մեջ հիշում է նրան) և իրն Հանբալին: Խալիֆան մահացել է հավանաբար Հիջրի 240 (854) թվականին, թեև որոշ մատենագիրներ այլ թվականներ են նշում: Հստ որոշակի տվյալների նա ապրել է 80 տարի:

Նրա պատմական երկը մեզ է հասել եղակի ձեռագրով, որը Ռաբաթի մատենադարանում 199 թվահամարն է կրում: Ոմի 336 էջ և գրված է մաղրիբյան հստակ գրությամբ: Որոշ տեղերում ձեռագիրը խոնավությունից տուժել է և ինչ-որ բառեր չեն կարդացվում: Դրչագրի վերջում կա ընդօրինակողի անոմը՝ Ահմադ իրն Մուհամմադ ալ-Աշարի և թվականը՝ Հիջրի 477 (1085 փրկլական): Այս պատմական երկը մեզ հասել է Բակիյ իրն Մախլաղի (817—889) խմբագրությամբ, որը Խալիֆայի աշակերտն էր Իրաքում<sup>23</sup>:

Իրն Խայյաթն ունի բազմաթիվ աղբյուրներ՝ իրն Խսակը, Մադահին, Արու-լ-Յակզանը (մեռ. 805/806) և Արու Ռւբայդան. Վերջինս թեև համարվել է նախիսլամական ավանդությունների մասնագետ հեղինակ, սակայն գրել է նաև Պարսկաստանի, Բասրայի, Ահուազի, Խորասանի և Հայաստանի նվաճման մասին<sup>24</sup>: Նա թեև Վակիրիին չի վկայակողում, սակայն հիշատակում է մահվան թվականը՝ 207(823)<sup>25</sup> և, անկասկած, ծանոթ է նրա աշխատությանն ու, հավանաբար, օգտագործել է նրա տեղեկությունները: Բացի նախորդ պատմիչներից նա բազմաթիվ բանագործ տեղեկություններ է հավաքել ժամանակակից ծերունիներից, որոնց անոմները հիշատակում է<sup>26</sup>:

Նա իր պատմական նյութը շարադրելիս հիմք է ընդունել հիջրի

թվականությունը, ընդ որում ամեն մի թվական մի վերնագիր է, իսկ այդ վերնագրի տակ՝ ենթավերնագրեր խալիֆաների անուններով կամ դեպքերով։ Բանն այն է, որ հաջորդող՝ թ դարի բոլոր պատմիչները (Իրն Կուտայրա, Դինավարի, Բալազուրի, Յակուրի) թեև օգտագործում են Հիջրի թվականությունը, սակայն իրենց աշխատովթյունների վերնագրերը հիջրի թվականությամբ շեն կազմում, այլ խալիֆաների անուններով, կամ դեպքերի հիշատակումով։ Խալիֆա իրն Խայյաթի երկի հայտնաբերումով առավել ևս պարզ դարձավ որ հենց սկզբից արար պատմագրությունը օգտագործել է թվականությունը (Հիջրի) որպես շարադրանքի հիմք, և Թարարին (մեռ. 923) առաջինը լէ, որ հիջրի թվականները վերնագրեր է դարձրել<sup>27</sup>։

Խալիֆա իրն Խայյաթի Պատմությունն սկսվում է տարրեր թվականությունների հիշատակմամբ (տարիին), Մարդիկ սկզբում թվականությունն սկսել են Աղամի՝ դրախտից վտարվելուց։ Թվականությունն սկսել են Աղամի՝ դրախտից վտարվերում է մահմեդական թվականությանը, ապա ոմանք գտել են, որ պետք է թվագրել Մուհամմադի ծննդյան տարուց, կամ մահվան օրվանից, կամ նրա քարոզի ներշնչում ստացած ժամանակից և ի վերջո հանգել են այն եղբակացության, որ պետք է թվագրել նրա՝ Մեքքայից Մադինա գաղթի<sup>28</sup>, այսինքն՝ 622 (Հիջրա) թվականից։

Պատմիչը մանրամասն շարադրում է Մուհամմադի ճակատամարտերը իր թշնամի մեքքացիների դեմ, նշում, որ նա պայմանագրեր կնքելու նպատակով պատվիրակություններ է ուղարկել Եգիպտոսի ղպտի պատրիարքի (Մուկառուկիս), պարսից Սասանյան արքայի (Քիսրա) և Հոռոմների կայսրի (կայսար) մոտ<sup>29</sup>։

Խալիֆան կարեոր աղբյուր է արաբական խալիֆայության նվաճողական արշավանքների պատմության։ Նա այսպես է նկարագրում Ցարմուքի վճռական ճակատամարտը. «Ըստմի զորքերը Ցարմուքում հանդես եկան Հարյուր Հազար հոռոմներով և Կուդաա ցեղի արարներով։ Նրանց հրամանատարն էր սակելլարիսուր, որը Հերակլի ներքինիներից էր»։ Մի ուրիշ աղբյուր վկայակուլելով գրում է. «Հոռոմները երեք հարյուր հազար էին և նրանց հրամանատարն էր Վահանը (Բահան), որը պարսից որդիներից էր և քրիստոնեություն ընդունելով միացել է Հոռոմներին...։ Եվ սաստիկ պատերազմից հետո ալահը բազմաստվածաններին պարտության մատնեց ու նրանց մեծ կոտորած տվեց։ Ճակատամարտը տեղի ունեցավ երկուշաբթի օրը տասնհինգ թվականի ուաշաբ ամսից հինգ օր անցած (13 օգոստոս 636)»<sup>30</sup>։

Զարմանալի շպետք է թվա, որ մի գեղքում բյուզանդական զորքի հրամանատար հիշվում է Թեոդորոս սակելլարիոսը, մյուս գեղքում՝ հայազգի Վահան ստրատելատը։ Այդ մասին Թեոփիանեսն ավելի հստակ է։ Նա վկայում է, որ Հերակլիոս կայսը տեսնելով իր եղրոր՝ Թեոդորոսի պարտությունը արաբներից «զորավար նշանակեց մի ուրիշ՝ Վահանին»։ Երբ արաբները հարձակվեցին «Վահանը իմանալով այդ մասին, դիմեց կայսերական սակելլարիոսին, որպեսզի շտապի իրեն օդնության։ Սակելլարիոսը եկավ Վահանի մոռա։ Սակելլարիոսի զորքը պարտություն է կրում և «Վահանի զորքերն ապստամբություն բարձրացնելով, Վահանին կայսը են հոչակում»։ Ինչպես հայտնի է, բյուզանդացիք պարտվեցին։ Թեոփիանեսն ավելացնում է. «Երկու զորավարների գլխավորած զորքը 40 հազար հոգի էին»<sup>31</sup>։

Այսար պատմիչներից Բալազուրին<sup>32</sup> Յարմուքի ճակատամարտի մասին գրում է. «Ասում են, որ Հերակլը անթիվ զորք հավաքեց, բաղկացած հոռոմներից, Ասորիքի (Շամ), Զաղիրայի ու Հայաստանի ժողովրդից։ Նրանց թիվը մոտավորապես երկու հարյուր հազար էր. Նա հրամանատար նշանակեց իր մերձավորներից մեկին։ Յակուրին (թ. դ.) ավելի պարզ է գրում. «Ապա նա (Արու Ուրայդան) լսեց, որ հոռոմների բռնապետը բոլոր երկրներից զորքեր է հավաքել և իրենց դիմ է ուղարկել անթիվ բազմությամբ։ ... Խսկ Արու Ուրայդան իր զորքի առաջապահ դարձեց Խալիդ իրն ալ-Վալիդին, որը բազմաստվածյանների հետ կռվի բռնվեց, բախվեց հոռոմների տեր (Հրամանատար) Վահանին (Մահան) և սաստիկ գոտեմարտ տեղի ունեցավ»<sup>33</sup>, Թարարին (Ժ. դ.) և հիշում է Վահանին<sup>34</sup> (Բահան) որպես երկու հրամանատարներից մեկը և ապա վկայում, որ. «(Հերակլը) ուղարկեց սակելլարիոսին, իր ներքինիներից մեկին, որը շարժվեց հարյուր հազար ռազմիկներով, որոնց մեջ կային տասներկու հազար Հայաստանի ժողովրդից, Զարաշայի գլխավորությամբ»<sup>35</sup>։

Հետաքրքրական է, որ Տիգրոնի նվաճման առթիվ Խալիֆա իրն Խալյաթը, արար լինելով հանդերձ, նշում է արաբների խիստ ցածր մակարդակի փաստեր, որոնց մասին ընդհանրապես նշում են պարսկական (օտար) ժագում ունեցող պատմիչները, ինչպես Դինավարին ու Բալազուրին։ Սրանց մոտ նկատվում են շոտրիյայի (նվաճված մահմեղական ժողովուրդների կողմից արաբներին ցածր ցույց տալու)՝ տրամադրությունները։ Այսպես, Խալիֆան պատմում էր, որ կողոպուտով զբաղված արաբները քամֆորան (քաֆուր) մսի վրա էին ցանում և ասում՝ ինչ դառն է պարսիկների աղը։ Նրանք դեղինը փոխում էին սպի-

տակի հետ, այսինքն ոսկին՝ արծաթով, շիմանալով ոսկու արժեքը<sup>37</sup>: Այս նույնը պատմում է նաև Դինավարին<sup>38</sup>, իսկ Բալազուրիին<sup>39</sup> նշում է, որ մի արար գերի ընկած աղնվական կնոջը վաճառել էր հաղար դիրհեմով (արծաթ) և երբ հարցնում են, թե ինչու ավելին լպահանջեցիր ասում է՝ երբեք չէի մտածել, թե հազարից ավելի թիվ կա:

Եղիպատոսի նվաճմանն առնվող դեպքերի շարադրման ժամանակ Խալիֆան հիշում է հիջրի 25-ի (645—646) Ալեքսանդրիայի ապստամբությունը «Այդ տարում Ռումի թագավորը ներքինի Մանուելին նավերով ուղարկեց Ալեքսանդրիա»<sup>40</sup>, Բալազուրին գրում է. «Նա իր մերձավորներից մի մարդու ուղարկեց, որը կոչվում էր Մանուել՝ երեք հարյուր նավերով»<sup>41</sup>; Թեոփանեսը մի քիչ այլ ձևով է նկարագրում. «Հիշելով, որ Եղիպատոսի (Ալեքսանդրիայի) պատրիարք Կյուրոսը հպատակություն է հայտնել արաբներին, կայսը ետ կանչեց նրան և ավգուստավլիոս նշանակեց հայազգի ոմն Մանուելի»<sup>42</sup>:

Մեր պատմից հատուկ ուշադրություն է նվիրում Օմայան ժամանակաշրջանի պատմությանը: Արաբական խալիֆայության պատմության համար խիստ կարևոր են նրա տեղեկությունները պետական կարգի վերաբերյալ, ընդ որում, յուրաքանչյուր խալիֆայի մասին պատմելուց հետո վերջում, հատուկ գլխի տակ, հիշում է արքունի բարձրաստիճան պաշտոնյաներին: Բանն այն է, որ արար պատմիլիները ընդհանրապես հակիրճ տեղեկություններ են հաղորդում պետական կարգի մասին, մինչդեռ Խալիֆայի տվյալներից պարզվում է, որ դեռևս Օմայան խալիֆայության հիմնադիր Մուավիայի (661—680) օրոք արդեն որոշ զարգացած պետական կարգ է գոյություն ունեցել<sup>43</sup>: Նա նշում է նամակների քարտուղար (քատիր ալ-ռասայիլ), ինչպես նաև կնիքի դիվան (դիվան-ալ-խատամ), որի պետը պաշտոնական գրությունների վերահսկիչն էր: Դիվանի և բոլոր գործերի վերակացուն էր Սարշուն իրն Մանսուր ալ-Ռումին<sup>44</sup> (հոռոմ՝ այսինքն քրիստոնյա), որը հիշվում է նաև Արդ ալ-Մալիքի (685—705) օրոք որպես քարտուղար (քատիր)<sup>45</sup>, իսկ Վալիդի (705—715) իշխանության տարիներին՝ հարկային դիվանի (դիվան ալ-խարազ) պետ<sup>46</sup>: Սա որդին էր Մանսուր իրն Սարշունի (Մերգիոս), որն արաբական նվաճման նախօրեին, բյուզանդացիների օրոք, Դամասկոսի հարկային տեսուլն էր<sup>47</sup>: Սարշուն իրն Մանսուրի որդին էր քրիստոնյա նշանավոր մատենագիր Հովհան Դամասկեցին (675—749/753), որը նույնպես երիտասարդ ժամանակ ծառայել էր Օմայանների արքունիքում որպես հարկային տեսուլ<sup>48</sup>: Ապա հիշվում է սենեկապետը (հաջիր), առաջապահ զորքի (շուրթա) հրամանատարը,

արքունի պահակաղորքի (Հարսա) հրամանատարը, Այս ցուցակը, մի քիչ այլ ձևով, կա նաև Թաքարու<sup>49</sup> մոտ, որը, հավանաբար, Խալիֆա իրն Խալիֆից է օգտվել:

Խալիֆա իրն Խալիֆից խիստ շահեկան տեղեկություններ է տալիս արաբական խալիֆայության դեմ 703 թվականի հայերի ապստամբության<sup>50</sup> և Հարակից դեպքերի մասին, որոնց համեմատությունը արար և հայ պատմիչների զուգահեռ տվյալների հետ շատ հետաքրքրական է: Հստ նրա, 82 հիշրի (15 փետրվար 701—3 փետրվար 702) թվականին «Արդ ալ-Մալիք (Խալիֆան) իր եղբորը՝ Մուհամմադին ուղարկեց Հայաստան և այնտեղ բնակիչները կովեցին, իսկ նա հաղթեց նրանց: Ապա նրանք հաշտություն խնդրեցին և նա հաշտության պայմանագիր կնքեց ու նրանց կառավարիչ նշանակեց նարիչ իրն Արդալլահ ալ-Անազիին: Նրանք դավաճաննեցին ու սպանեցին նրանք<sup>51</sup>: Խոսքը Հյուսիսի փոխարքա Մուհամմադ իրն Մարուանի՝ 701 թվականի Հայաստան կատարած մեծ արշավանքի և հայերի 703-ի ապստամբության մասին է, միայն թե ապստամբությունը, ինչպես բոլոր արար պատմիչների մոտ, դրվում է արշավանքից առաջ: Իսկ նշված կառավարչի անունը հայտնի չէ ու մեկ այլ պատմիչի մոտ: Նույն տարվա մասին իրն ալ-Ասիրը գրում է. «Մուհամմադ իրն Մարուանը արշավեց Հայաստան, հաղթեց, և (հայերը) հաշտություն խնդրեցին և նա հաշտություն կնքեց ու կառավարիչ նշանակեց Արու Շայխ իրն Արդալլահին, սակայն նրանք դավաճաննեցին ու սպանեցին նրան: Ասվում է, որ նրան սպանեցին ութսուներեք թվականինք<sup>52</sup>: Խալիֆա իրն Խալիֆից հենց 83 (4 փետրվար 702—23 հունվար 703) թվականի տակ գրում է. «Արդ ալ-Մալիք իրն Մարուանը իր եղբորը Մուհամմադին ուղարկեց Հայաստան և նրանք (հայերը) հաշտության պայմանագիր կնքեցին: Նա նրանց վրա կառավարիչ նշանակեց Արու Շայխ իրն Արդալլահ ալ-Ղանավիին և Ամրու իրն ալ-Սադա ալ-Ղանավիին, սակայն երկուսին էլ դավաճաննեցին ու սպանեցինք<sup>53</sup>: Այստեղ Խալիֆա իրն Խալիֆից և իրն ալ-Ասիրը համաձայն են, որ այդ տարիներին (կամ տարում) նշանակվել է Արու Շայխ իրն Արդալլահը և սպանվել: Իսկ նրանից հետո հիշված անունը շկա այլ պատմիչների մոտ:

Ղեռնդ պատմիչը, խոսելով Մուհամմադ իրն Մարուանի 701-ի արշավանքի ու վերադարձի մասին, նշում է միայն, որ նա մեկին որպես կառավարիչ թողեց իր տեղում<sup>54</sup>: Նույն դեպքի մասին Հովհաննես կաթողիկոս Դրասիանակերտցին վկայում է, որ Մուհամմադը կառավարիչ թողեց Արդալլահին<sup>55</sup>: Դրասիանակերտցու վկայությունը հաստատում

է ժամանակակից արար պատմիչ ալ-Քուֆին (մեռ. 926), որն առանց թվական նշելու գրում է, որ Արդ ալ-Մալիք խալիֆան իր եղբորը Զաղբրայի, Հայաստանի (Արմինիա) և Ասրպատականի կառավարիչ նշանակեց ու հզոր բանակ տվեց: «Եվ Մուհամմադ իրն Մարուանը այս բանակով Ասորիքից դուրս եկավ, իր հետ ունենալով Մասլամա իրն Արդ ալ-Մալիք իրն Մարուանին և հասավ Զաղբրա երկիրը: Դրանից հետո իր մոտ կանչեց իր ընկերակիցներից մեկին, որը կոշվում էր Արդալահ (Ուրայդալահ) իրն Արու Շայխ ալ-Առուփից, հանձնեց նրան տաս հաղար ուղղմիկներ Ասորիքից բնակիչներից և հրամայեց հարծակվել Հայաստանի վրա, պատերազմելու այնտեղ գտնվող խաղարների և այլ անհավատների դեմ: Արդալահ իրն Արու Շայխն իր զորքով մեկնեց ու հասավ Հայաստան: Այդ մասին իմացավ երկրի ժողովուրդը և մահմեդականների դեմ դուրս բերեց հսկայական բազմություն՝ հարյուր հազարից ավելի մարդկանց: Նրանք մահմեդականներին կոտորեցին, ոչ մեկին ողջ լթողնելով»<sup>56</sup>: Հայերի տված այս ջարդը, հավանաբար, արձագանքն է հետագայում՝ 703-ին Վարդանակերտի ճակատամարտում հայերի տարած հաղթանակի, ուր հայերը գրեթե բոլոր արաբներին կոտորեցին<sup>57</sup>:

Այսպիսով, Հովհաննես Դրասխանակերտցին Մուհամմադի թողած ոստիկան է հիշում Արդալային, որը կրկնելով Քուֆին՝ նրան կոչում է Արդալահ իրն Արու Շայխ, իսկ Խալիֆա իրն Խայյաթը այդ ոստիկանին անվանում է Արու Շայխ իրն Արդալահ ալ-Ղանաուի, որը կրկնում է իրն ալ-Ասիրը: Մնում է եղրակացնել, որ գուցե խոսքը վերաբերում է երկու տարբեր անձնավորությունների՝ մեկը Արդալահ իրն Արու Շայխ, իսկ մյուսը՝ Արու Շայխ իրն Արդալահ<sup>58</sup>:

Բացի Խալիֆա իրն Խայյաթից, Քուֆիից և իրն ալ-Ասիրից Թ դարի արար պատմիչներ Բալազուրին<sup>59</sup> և Յակուբին<sup>60</sup> ևս վկայում են, որ Հայաստանը ապստամբ վիճակում էր և Մուհամմադ իրն Մարուանը եկավ, ճնշեց ու նվաճեց: Նրանք ապստամբությունը (որը տեղի ունեցավ 703-ին) ավելի շուտ են նշում, քան Մուհամմադի 701 թվականի ավերիչ արշավանքը, որով Հայաստանը վերջնականապես նվաճվեց արաբական խալիֆայության կողմից: Արար պատմիչներին հայտնի չէ, որ 703-ի հայերի ապստամբությունից հետո Հայաստանը լճնշվեց խալիֆայության կողմից, որովհետև Սահակ Զորոփորեցի կաթողիկոսի խնդրանքով արաբական իշխանությունները ժամանակավորապես հրաժարվեցին վրիժառու լինելուց:

Մակայն ապստամբությունից հետո, ըստ Ղևոնդի, Մուհամմադը

է ժամանակակից արար պատմիչ ալ-Քուֆին (մեռ. 926), որն առանց թվական նշելու գրում է, որ Արդ ալ-Մալիք խալիֆան իր եղբորը Զաղբրայի, Հայաստանի (Արմինիա) և Ասրպատականի կառավարիչ նշանակեց ու հզոր բանակ տվեց: «Եվ Մուհամմադ իրն Մարուանը այս բանակով Ասորիքից դուրս եկավ, իր հետ ունենալով Մասլամա իրն Արդ ալ-Մալիք իրն Մարուանին և հասավ Զաղբրա երկիրը: Դրանից հետո իր մոտ կանչեց իր ընկերակիցներից մեկին, որը կոշվում էր Արդալահ (Ուրայդալահ) իրն Արու Շայխ ալ-Առուփից, հանձնեց նրան տաս հաղար ուղղմիկներ Ասորիքից բնակիչներից և հրամայեց հարծակվել Հայաստանի վրա, պատերազմելու այնտեղ գտնվող խաղարների և այլ անհավատների դեմ: Արդալահ իրն Արու Շայխն իր զորքով մեկնեց ու հասավ Հայաստան: Այդ մասին իմացավ երկրի ժողովուրդը և մահմեդականների դեմ դուրս բերեց հսկայական բազմություն՝ հարյուր հազարից ավելի մարդկանց: Նրանք մահմեդականներին կոտորեցին, ոչ մեկին ողջ լթողնելով»<sup>56</sup>: Հայերի տված այս ջարդը, հավանաբար, արձագանքն է հետագայում՝ 703-ին Վարդանակերտի ճակատամարտում հայերի տարած հաղթանակի, ուր հայերը գրեթե բոլոր արաբներին կոտորեցին<sup>57</sup>:

Այսպիսով, Հովհաննես Դրասխանակերտցին Մուհամմադի թողած ոստիկան է հիշում Արդալային, որը կրկնելով Քուֆին՝ նրան կոչում է Արդալահ իրն Արու Շայխ, իսկ Խալիֆա իրն Խայյաթը այդ ոստիկանին անվանում է Արու Շայխ իրն Արդալահ ալ-Ղանաուի, որը կրկնում է իրն ալ-Ասիրը: Մնում է եղրակացնել, որ գուցե խոսքը վերաբերում է երկու տարբեր անձնավորությունների՝ մեկը Արդալահ իրն Արու Շայխ, իսկ մյուսը՝ Արու Շայխ իրն Արդալահ<sup>58</sup>:

Բացի Խալիֆա իրն Խայյաթից, Քուֆիից և իրն ալ-Ասիրից Թ դարի արար պատմիչներ Բալազուրին<sup>59</sup> և Յակուբին<sup>60</sup> ևս վկայում են, որ Հայաստանը ապստամբ վիճակում էր և Մուհամմադ իրն Մարուանը եկավ, ճնշեց ու նվաճեց: Նրանք ապստամբությունը (որը տեղի ունեցավ 703-ին) ավելի շուտ են նշում, քան Մուհամմադի 701 թվականի ավերիչ արշավանքը, որով Հայաստանը վերջնականապես նվաճվեց արաբական խալիֆայության կողմից: Արար պատմիչներին հայտնի չէ, որ 703-ի հայերի ապստամբությունից հետո Հայաստանը լճնշվեց խալիֆայության կողմից, որովհետև Սահակ Զորոփորեցի կաթողիկոսի խնդրանքով արաբական իշխանությունները ժամանակավորապես հրաժարվեցին վրիժառու լինելուց:

Մակայն ապստամբությունից հետո, ըստ Ղևոնդի, Մուհամմադը

նորից զորքով եկավ Հայաստան և գաղտնի հետևում էր Հայաստանի նախարարներին<sup>61</sup>: Գուցե սրան է վերաբերում Խալիֆա իրն Խայյաթի<sup>62</sup> և իրն ալ-Ասիրի<sup>63</sup> այն վկայությունը, թե 85 հիջրի (14 հունվար 704—1 հունվար 705) թվականին Մուհամմադ իրն Մարուանը արշավեց Հայաստան և այնտեղ անցկացրեց ամառն ու ձմեռը: Այստեղ, թյուրիմացությամբ, արար պատմիչները մեկ տարով հետ են բերել դեպքերը, քանի որ այդ կարող էր տեղի ունենալ միայն 703-ին:

Շարունակելով դեպքերի շարադրանքը, Խալիֆան 84 հիջրի (24 հունվար 703—13 հունվար 704) թվականի տակ ավելացնում է, որ ահոռոմները հարձակվեցին Հայաստանի վրա Մուհամմադ իրն Մարուանի դեմ և ալլահը նրանց պարտության մատնեցա<sup>64</sup>: Այս, ակներեսուն, Հայաստանից հեռացած Հայոց իշխան Սմբատ Բագրատունու 705-ին կատարած հարձակմանն է վերաբերում: Այդ թվականի աշնանը Սմբատ Բագրատունին, իր գահին վերահաստատված Հուստինիանոս Բ-ից օդնական բյուզանդական զորք ստանալով, Տայքի կողմերից հարձակվեց արարական տիրապետության տակ գտնվող Վանանդ գավառի վրա, սակայն Դրաշպետ պյուղի մոտ պարտություն կրեց<sup>65</sup>:

Քուփին այսպես է նկարագրում Դրաշպետի ճակատամարտը. Մուհամմադը, լսելով Հայաստան ուղարկած իր զորքի պարտությունը, 40 հազարանոց զորքով դիմեց Հայաստան: Երբ Հայաստանի միջին մասերը հասավ, նրա դեմ դուրս եկավ հոռոմների և հայերի մեծ բազմություն: Մուհամմադ իրն Մարուանը կատաղի պատերազմ մղեց և վախենում էր խայտառակությունից ու պարտությունից, քանզի անհավատները մեծ բազմությամբ էին հավաքվել: Սակայն բարձրյալն ալլահը հեթանոսներին (բազմաստվածյաններին) փախուստի մատնեց և մահմեղականներին ուժեղացրեց իր հովանավորությամբ<sup>66</sup>:

Այս դեպքերի հիշատակումից հետո Խալիֆան 84 (703—704) թվականի տակ ռազմական նրանց պարտության մատնեցա արտահայտությունից հետո անմիջապես շարունակում է. ռեվ դա կրակի (հրդեհի) տարին է (սանատ ալ-հարիկ): Բանն այն է, որ Մուհամմադը (բյուզանդական) զորքի պարտությունից հետո (հայերի դեմ) ուղարկեց Օսման իրն Աֆֆանի մասուա Զիյադ իրն ալ-Զառահին և Հուգայր իրն ալ-Արաջ ալ-Հադրամիին և նրանց վառեցին իրենց եկեղեցիներում, տաճարներում և գյուղերում: Հրկիզումը կատարվեց նախճավանում և Վասպուրականում<sup>67</sup>:

Արաբները թեև 703-ի ապստամբության վրեժը Սահակ կաթողիկոսի խնդրանքով չեին լուծել, սակայն Սմբատ Բագրատունու այս հար-

ձակումից հետո նրանք առիթը բաց լթողեցին և հարյուրավոր հայ նախարարների կանչելով Դվին ողջ-ողջ ալոեցին Նախճավանի ու Խրամի եկեղեցիներում<sup>68</sup>:

Այս արյունալի դեպքերը հիշատակում են նաև արար պատմիչներ Բալաղուրին<sup>69</sup>, Յակուրին<sup>70</sup>, իրն ալ-Քասիրը<sup>71</sup> և իրն Տաղրիբիրդին<sup>72</sup>, իսկ Քուֆին վկայում է, որ այդ վառված Եկեղեցիները կան և մինչև օրս կոշվում են մուհատարիկա (վառվածներ)<sup>73</sup>:

Խալիֆա իրն Խալիֆը կարևոր աղբյուր է նաև արարա-խազարական երկարատև պատերազմների հետազոտման համար: Հետաքրքրական է Հյուսիսի (Արմինիա, Ատրպատական, Ջազիրա) փոխարքա Մարուան իրն Մուհամմադի (Հետագայում խալիֆա Մարուան Բ, 744—750) արշավանքի նկարագրությունը Կովկասի լեռնային շրջաններում: Այս մասին մանրամասն տեղեկություններ կան Խալիֆա իրն Խալիֆը<sup>74</sup>, Բալաղուրի<sup>75</sup>, իրն ալ-Ասիրի<sup>76</sup> և մասամբ Արուլ-Մահասին իրն Տաղրիբիրդի<sup>77</sup> գործերում: Խալաբիների դեմ մղած երկարատև պատերազմների մասին, որը վճռական նշանակություն ունեցավ Խալիֆայության կյանքում, Յակուրին<sup>78</sup> ու Թարարին<sup>79</sup> զարմանալիորեն մի քանի խոսքով են արտահայտվում: Մարուանը 737-ին ջախջախելով խազարների խաքանին արշավեց դեպի Կովկաս՝ լեռնային իշխանությունները նվաճելու<sup>80</sup>: 118 հիշրի (20 հունվար 736—7 հունվար 737) թվականի տակ Խալիֆան գրում է.

«Այս տարում Մարուան իրն Մուհամմադը արշավանք կատարեց Հայաստան ու մտավ Վրթանեսի (Ուարտանիս), հողը երեք դոմերից և Վրթանեսը փախավ խազարների մոտ, թողնելով ամրոցը: Մարուանը նրա առջև քարանետ մեքենաներ դրեց: Համզինի (Խումրին) բնակիչները սպանեցին Վրթանեսին ու նրա գլուխը ուղարկեցին Մարուանին: Մարուանը Վրթանեսի գլուխը ցուցադրեց ամրոցի բնակիչներին և նրանք իշան, հանձնվեցին Մարուանին, որը կոտորեց ուզմիկներին ու գերեվարեց նրանց ընտանիքները»<sup>81</sup>:

Այս Ուարտանիս (Վրթանես) կոշված անձնավորությունը հիշված է իրն ալ-Ասիրի մոտ Վարնիս (Ուարնիս)<sup>82</sup> ձեռվէ: Սակայն նույն դեպքերի մասին պատմելիս իրն Տաղրիբիրդին նույնպես Ուարտանիս ձեռն է օգտագործուած<sup>83</sup>: Ենթադրել են, որ այս Ուարտանիսը հայկական Վրթանեսն է<sup>84</sup>: Սա բացառված լէ, քանի որ Լաքզի (որի տերն էր Ուարտանիսը) և ընդհանրապես Դարրանդի կողմերում հայ տարրի առկայությունը հայտնի փաստ է և դարձել է հատուկ ուսումնասիրման առարկա<sup>85</sup>:

Խալիֆա իրն Խայյաթը իր աշխատանքում ուշադրության առարկա է դարձել Աբբասյան ժամանակաշրջանի արաբա-բյուզանդական պատերազմները և խոռվությունները խալիֆայության ներսում։ 134 հիշորի (30 հունիս 751—17 հունիս 752) թվականին հիշում է բյուզանդական զորքի հրամանատար Հայազգի Քուշան պատրիկին։ Բյուզանդական ուժերը արաբների հետ բախվում են Զորրորդ Հայքում (Զորրորդ Արմինիա) և Հաղթում<sup>86</sup>։ Քուշանը (Քուսան, Գուսան), ըստ Դիոնիսիոս Տել Մահրացու<sup>87</sup>, եղել է Զորրորդ Հայքի հայ իշխաններից և անցել է Բյուզանդիայի կողմը։ Այս արշավանքը, ըստ երեսութին, մաս էր կազմում կամ նախորդել էր Բյուզանդիայի կայսր Կոստանդին Ե Կոպրոնիմոսի արշավանքին, որի հրամանատարն էր Քուշանը, երբ բյուզանդացիք գրավեցին Մալաթիան (Մելիտինե) և Կարնո քաղաքը (Թեոդոսիոպոլիս)<sup>88</sup>։

Մեր պատմիչը ընդհանրապես կարևոր տեղեկություններ է հաղորդում արաբա-բյուզանդական պատերազմների մասին և կարելի է ասել, որ նրա մոտ կան այնպիսի տվյալներ, որոնք չկան իր հաջորդներ Ցակուրիի ու Թարարիի մոտ։ Ամեն մի խալիֆայի նվիրված հատվածի վերջում, երբ թվում է պետության բարձրաստիճան պաշտոնյաներին, նշում է նաև Բյուզանդիայի դեմ ամառային արշավանքների (սահիֆա) զորավարներին։

Կարևոր տեղեկություններ է պարունակում նորահայտ պատմությունը նաև Արմինիա (Հայաստան, Վիրք, Աղվանք, Շիրվան, Դարբանդ) նահանգի արար կառավարիչների ցուցակի ճշտման ու լրացման համար։ Նա նշում է քսանից ավելի կառավարիչների (ոստիկանների) անուններ, որոնց մեջ կան գոյություն ունեցող ցուցակներում շհիշված անուններ<sup>89</sup>։

Խալիֆա իրն Խայյաթը համաշափորեն չի նկարագրում խալիֆայության պատմության տարբեր ժամանակաշրջանները։ Այսպես, առաջին շորս խալիֆաների երեք տասնամյակ տևող պատմությանը պատշաճ ծավալ (մոտ 100 էջ) է հատկացված, Օմայանների շուրջ 90-ամյա պատմությանը՝ մեծագույն բաժինը (մոտ 200 էջ), իսկ Աբբասյանների հարյուրամյա շրջանին՝ Օմայաններին հատկացված ծավալի մեկ երրորդը, թեև դա նրան ժամանակակից պատմությունն է։ Հանրահայտ փաստ է, որ պատմիչը իրեն մոտիկ և ժամանակակից պատմական դեպքերը շատ ավելի մանրամասն է շարադրում, քան հեռավոր ժամանակաշրջանը, որի տվյալներն այլ աղբյուրներից է քաղում։ Սակայն մեր պատմիչը իր շարադրանքում հատուկ վերաբերմունք չի ցուցաբերում Օմայանների նկատմամբ։

Նորահայտ պատմական երկը միացման օղակ է մի կողմից և դարի և թ դարի առաջին կեսի պատմագրության և մյուս կողմից թ. դարի երկրորդ կեսի զարգացած պատմագրության միջև։ Նրա մոտ դեռ շկան օտար ազգեցություններ՝ իրանական, սովորային, բյուզանդական-քրիստոնեական (ասորական), որ պարզ կերպով երևում է թ դարի երկրորդ կեսի զարգացած պատմագրության ներկայացուցիչների՝ իրն Կոտայքայի, Դինավարի, Բալազուրի (մասամբ) և Հատկապես Յակոբի մոտ<sup>90</sup>։

Իրն Խալիֆայից օգտվել են Հետագա պատմիչները, ինչպես Թարարին, իրն ալ-Ասիրը և իրն Տաղրիբիրդին։ Նրա պատմությունը հնարավորություն է տալիս ճշգրտելու և լրացնելու Հայաստանի է—թ դդ. և ընդհանրապես խալիֆայության պատմության շատ հարցեր։

## А. ТЕР-ГЕВОНДЯН

### ХАЛИФА ИБН ХАЙИАТ КАК ИСТОЧНИК ПО ИСТОРИИ АРМЕНИИ И ХАЛИФАТА VII—IX вв.

#### Резюме

Обнаружение рукописи Истории Халифы ибн Хайята в 1963 г. в Марокко стало важным событием в области арабистики. Иракский ученый А. Д. ал-Умари издал его текст в 1967 и 1976 гг., подчеркнув, что сочинение Халифы ибн Хайята (ум. 240 г. х., 854/855) является самым ранним дошедшим до нас трудом по истории арабского халифата.

Новооткрытое историческое сочинение содержит много важных сообщений по истории Армении VII в., а также периода арабского владычества (701—862) в Армении. Рассказывая о первых походах арабов, автор сообщает интересные данные о битве при Йармуке, о командующем византийскими войсками армянине Вахане (Бахан), а также об армянине Мануиле, командовавшем византийским флотом при нападении на Алкесандрию в 645 г.

Весьма интересны и важны сообщения Ибн Хайята о восстании 703 г. в Армении против халифата. Армения окончательно была завоевана арабами в 701 г., после чего была образована провинция Арминия (включавшая кроме Армении также Картли, Арран, прикаспийские области (Ширван) и Дарбанд). Но вскоре, вследствие жестокой политики халифата, вспыхнуло восстание

(703 г.) и, по сообщению автора, первый арабский правитель (остикан) Арминии был убит. Об убийстве правителя упоминают еще ал-Куфи (Х в.) и Ибн ал-Асир (XIII в.), но некоторые подробности (как, например, имя правителя) переданы по-разному у армянских и арабских историков. Сведения Халифы ибн Хайята помогают выяснению этих вопросов. Далее он рассказывает о нападении румов (ромеев, во главе с Смбатом Багратуни, патрикием Армении, находившимся в византийских владениях) в 705 г., и их поражении. Вслед за этим он упоминает о сожжении большой группы армянских нахараров (феодалов) в церквях армянских городов Нахчаван и Храм (Нашава и Басфорджан).

Этот год он называет «санат ал-харик» «год пожара» т. е. огня, сожжения, (выражение, которое мы находим лишь в XIV в. у ибн ал-Касира и в XV в. у Ибн Тагри Бирди, явно заимствовавшим его у Ибн Хайята). Куфи же называет упомянутые церкви «сожженными» («мухтарика»).

При описании похода наместника северных провинций (Армения, Джазира, Адарбайган) Марвана ибн Мухаммада против хазар (737 г.) автор упоминает о его нападении на царя лакзов (в области Дарбанд), которого Ибн ал-Асир называет Варнисом. У Ибн Хайята он назван Вартанисом (предполагается, что это армянское имя Вртанес), в такой форме это имя передано также у Ибн Тагри Бирди. Ибн Хайят сообщает и другие новые для нас сведения о военных действиях арабов против хазар.

В его сочинении интересны новые сведения о правителях Армении, которые способствуют дополнению их списков.

Сообщения Ибн Хайята важны для изучения политической истории халифата и отдельных провинций этого обширного государства. Они особенно важны для исследования арабо-византийских военных столкновений в Малой Азии. Автор отличается еще тем, что после изложения деятельности каждого халифа подробно упоминает все государственные должности и имена должностных лиц соответствующего периода.

Сочинением Ибн Хайята пользовались Табари, Ибн ал-Асир и особенно Ибн Тагри Бирди, который несколько раз прямо ссылается на него, а также другие арабские историки. Его данные существенно уточняют и дополняют сведения арабских историков.

#### Ա Ռ Ա Պ Ի Կ Վ Ր Ա Բ Ի Ն Ե Ր

1 Tarikh Khalifah ibn Khayyat, Beyrouth-Damas, 1977.

2 Արար պատմագրության պատմությանը նվիրված հայտնի աշխատություններն են. F. Wüstenfeld, Die Geschichtsschreiber der Araber und ihre Werke, Göttingen, 1882; C. Brockelmann. Geschichte der arabischen Litteratur, Bd. I-II, Weimar-

Berlin, 1898—1902: D. S. Margoliouth, Lectures on Arabic historians, Calcutta, 1930. H. A. R. Gibb, Muslim historiography, The Encyclopaedia of Islam, Supplement, Leiden-London, 1938, p. 233—245. F. Rosenthal, History of Muslim historiography, Leiden, 1952; J. de Somogyi, The development of Arabic historiography, Journal of Semitic Studies, v. III, 1958, 4, October, p. 373—387; F. Sezgin, Geschichte des arabischen Schrifttums, Bd. I, Leiden, 1967, S. 265—S. 237—389.

3 X. A. P. Гибб, Мусульманская историография, в кн. Арабская литература, М., 1960, с. 119—128.

4 Համբ (Աւահը) իրն Մոնարքին պարսկական ժագում ունեցող հրեա էր, որը հավահարա մահմեդականացել էր. Ph. Hitti, History of the Arabs, London, 1958, p. 244. Sezgin, I, S. 305—307; Wahb ibn Munabbih, Kitab attiljan fi mu-luk Himyar, ed. Krenkow, Haydarabad, 1347 (1928).

5 Brockelmann, I, S. 135. Նա հիմյարական (հին հմենական) ժագում ուներ:

6 Sezgin, I, S. 268—270. Նրա աշխատությունը հիմնված էր Հիրայի քրիստոնեական փաստաթղթերի և պարսկերենից թարգմանված նյութերի վրա:

7 Idem, S. 288—290. Նրա պապը՝ Յասարը զերի ընկած քրիստոնյա էր:

8 Brockelmann, I, S. 135—136.

9 History of Muhammed's campaigns by al-Wakidy, ed. by A. Kremer, Calcutta 1856.

10 Futuh al-Sham, al-Qahira, 1282 (1866): Futuh Misr, Calcutta, 1277 (1860); Geschichte der Eroberung von Mesopotamien und Armenien, von el-Wakedi Hamburg, 1847.

11 Khalifa ibn Khayyat, preface A. D.-al-Umari, p. 19—20. Նա Միջագետքէ հրեաներից էր:

12 Sezgin, I, S. 314—315.

13 Tarikh al-Tabari, v. VII, Le Caire, 1969, p. 510.

14 Khalifa (preface), p. 12 (n. 3).

15 Ibid, p. 11 (n. 6).

16 Ibn Khallikan, Wafayat al-Ayan. II, Beyrouth, 1969, p. 243—244.

17 Ibn Kathir, al-Bidaya w-al-nihaya, t. X, Beyrouth, 1981, p. 322.

18 Ibn Taghribirdy, al-Nudjum al-Zahira, I, al-Qahira, 1929, p. 181, 286.

19 F. Wüstenfeld, S. 19.

20 Khalifa (preface), p. 3—4.

21 The History of Khalifa ibn Khayyat, v. 1—2, ed. by Akram D. al-Umari, 1967.

22 S. Zakkar, Ibn al-Khayyat al-Usfuri Khalifa, Enc. de l'Islam, Leyde-Pa-ris, t. III, 1971, p. 862—863.

23 Khalifa (preface), p. 31—34.

24 Ibid, p. 19.

25 Ibid, p. 472.

26 Ibid, p. 23—30.

27 Այն կարծեց, թե արաբները թվականով պատմագրությունը պարսիկներից են.

**Վերցրել** (И. П. Петрешевский, в кн. «История Ирана с древнейших времен до конца XVIII века», Л., 1958, стр 77), գուցե ճիշտ համարվեր մինչև կալիքա իրեն կայաբի սույն երկի հայտնաբերվելը, քանի որ թ դարի մյուս պատմինները (իրեն կուտայրա, Դինավարի, Բալազորի, Ցակուրի) լսու ժիշտի տարիների շեն շարադրել իրենց աշխատությունները, թեև շարադրանիր մեջ օգտագործել են այն ՀՀնց Արդ ալ-Մալիք խալիֆայի օրոք (695—705), երբ Բողարկվեցին առաջին արարական դրամները, զրաներ թվական էին կրում: Համենայն դեպք պարսկական ազդեցությունը արարական պատմագրության վրա ընդունված փաստ է (C. Brockelmann, Geschichte der arabischen Litteratur, I, S. 134), որի դրսության վառ օրինակ է այն հանդամանքը, որ գեռ է զարի կեսերին պարսիկ իրն ալ-Մուկաֆան (մեռ. 757թ.) թարգմանել էր արարեցնի պարսից արքաների տարեզրությունը՝ Խվաթայ նամակը: (Եթա պահճակերեն բնադրից հետազայում օդագել է Ֆիրդուսին Շահնամեի հորինման համար):

28 Khalifa, p. 49—51.

29 Ibid, p. 79.

30 Ibid, p. 130—131.

31 Քենանես Խոստովանոյ, թարգմ. Հ. Բարբիկյանի, Բյուզանդական աղբյուրներ, Դ (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 13), Երևան, 1983, էջ 46—47:

32 Liber expugnationis regionum auctore al-Beladsori, ed. M. I. de Goeje, Lugd. Bat., 1968, p. 135

33 Yaqubi, Tarikh, II, Beyrouth, 1960, p. 141.

34 Tarikh at-Tabari, Le Caire, III, 1960, p. 389, 391, 393—395, 435, 572.

35 Tabari, III, p. 570.

36 I. Goldziher, Muhammedanisches Studien, I, Halle, 1888, S. 147—216  
История Ирана, с. 77.

37 Khalifa, p. 133.

38 Dinawary, al-ak̄ibar al-Tiwal, Beyrouth, p. 127.

39 Beladsori, p. 244.

40 Khalifa, p. 158.

41 Beladsori, p. 221.

42 Քենանես, էջ 47:

43 Khalifa, p. 228.

44 Tabari, V, 1971, p. 330.

45 Khalifa, p. 263.

46 Ibid, p. 299.

47 Ph. Hitti, History of the Arabs, p. 195.

48 Иоанн Дамаскин, Сов. ист. энц., 6, М., 1965, с. 171.

49 Tabari, V, p. 330.

50 703-ի պատմագրության մասին տես՝ Ս. Զամշեան, Պատմութիւն Հայոց, Վեհաբիկ, Բ, 1785, էջ 376—382; M. St Martin, Mémoires historiques et géographiques sur l'Arménie, I, Paris, 1818, p. 340—341. M. Chazarian, Armenien unter der Arabischen Herrschaft, Marburg, 1903, S. 44—46. Ա. Օրմանեան, Աղաւապառում, Ա, Գեյրութ, 1959, էջ 779—787. J. Laurent, L'Arménie entre Byzance

et l'Islam, Lisbonne, 1980, p. 215, 243—245. Բ. Առաքելյան, Հայերի ապստամբությունը արարական լծի դեմ 703 թ., ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր (հաս. դիտ.), 1941, 5—6, էջ 55—62; Ա. Տեր-Ղենողյան, 703 թվականի ապստամբությունը Հայաստանում խալիֆայության դեմ, Պատմա-բանասիրական հանդես, 1952, 3, էջ 33—46.

51 Khalifa, p. 288.

52 Իրն ալ-Ասիր, Թարգմ. Ա. Տեր-Ղենողյանի, Արարական ազրուրներ, Բ (Օսմարադրամիները Հայաստանի և Հայերի մասին, 11, Երևան, 1981, էջ 65); (Այսուհետեւ Իրն ալ-Ասիր):

53 Khalifa, p. 289.

54 Պատմութիւն Ղենդեայ մեծի վարդապետի Հայոց, աշխ. Ա. Մալխասեանց, Ա. Պետրոսիրդ, 1887, էջ 23; (Այսուհետեւ Ղենդ):

55 Պատմութիւն Յովհաննու կաթողիկոսի, Երուաղեմ, 1867, էջ 121.

56 Kufi, Kitab al-Sutuh, VI. Hyderabad, 1972, p. 294.

57 Ղևոնդ, էջ 24—25.

58 Հ. Խալրանյան, Արարացի ոստիկանները Հայաստանում, ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր (հաս. դիտ.), 1956, № 8, էջ 107.

59 Beladsori, p. 205.

60 Yaqubi, II, P. 272.

61 Ղևոնդ, էջ 31.

62 Khalifa, p. 291.

63 Իրն ալ-Ասիր, էջ 66:

64 Khalifa, p. 290.

65 Ղևոնդ, էջ 32.

66 Kufi, VI, p. 294.

67 Khalifa, p. 290.

68 Ղևոնդ, էջ 33—34, Հովհաննես (Դրասխանակերպացի), էջ 124—125.

69 Beladsori, p. 205.

70 Yaqubi, II, p. 272.

71 Ibn Kathir, IX, 198, p. 52. Լեռ. Հայոց պատմություն, Բ (Երկեր, 2), Երևան, 1987, էջ 375; Դ. Ալիշան, Յուշիկը հայրենեաց հայոց, Վենեսուլի, 1880, Ա էջ 147.

72 Ibn Taghribirdy, I, 207.

73 Kufi, VI, p. 295.

74 Khalifa, p. 348—349.

75 Beladsori, p. 208—209.

76 Իրն ալ-Ասիր, էջ 86—88:

77 Ibn Taghribirdy, I, 279.

78 Yaqubi, II, p. 318.

79 Tabari, VII, p. 160.

80 М. И. Артамонов, История хазар, Л., 1962, с. 226—230.

81 Khalifa, p. 348—349.

82 Իրն ալ-Ասիր, էջ 86; Ա. Արտամոնովը վկայակոչելով Բ. Դորեն (Дорн, Известия о хазарах восточного историка Табари, Журн. мин. нар. просв., 1844,

ч. XIII, № 7, 8, с. 91—92) մեջ բերած տեղեկությունը, գտնում է, որ իր ալ-Ասիրի հիշած Վարնիսը Լաքդի Բագավոր Օպասն է (Артамонов, История хазар, с. 231):

83 Ibn Tagħribib dy, I, p. 279.

84 Т. М. Сипенкова, «История» Халифы ибн Хайята, как источник по истории арабских завоеваний на Кавказе и в Закавказье. «Историография и источниковедение истории стран Азии и Африки», V, Л., 1980, с. 80 (Էջ 76—80). Արար աշխարհագրագիտ Յակուտը (ԺԿ դ.) Ուարտանիսը համարում է բերդ, Սամսատի կողմերում (Yaqtūt, Mudjam al-Buldan, Beyrouth, 1977, V, p. 370). Հ. Նալբանդյանը այն նույնազնում է Վարդենիքի հետ, Ակնի կողմերում (Արարական ազրյուրները Հայաստանի և հարեան երկրների մասին, Երևան, 1965, Էջ 210):

85 У. Թարխուզարյան, Դերբենդի հայ-աղվանական Բագավորությունը, ՊԲՀ, 1969, № 3, էջ 125—147:

86 Khalifa, p. 411.

87 Chronique de Denys de Teill-Mahré, Paris, 1895, p. 56.

88 Beladsoří, p. 199.

89 Հիշամ խալիֆայի օրոք (724—743) հիշվում է առաջապահ զօրքի (Չուրբա) հրամանատար Քաար իր Համիդ ալ-Արսին (Khalifa, p. 361), որը հետագայում նշանակել է Արմինիայի կառավարիչը Օմայան վերջին խալիֆա Մրուան Բ-ի օրոք (744—750) Արմինիայի կառավարիլ է նշանակվում ոմն Արդալլահ իր Սուալիմ, որը շուտով մեռնում է (Khalifa, p. 407).

90 Гибб, Арабская литература, с. 128—131. Հիշյալ չորս պատմիլներից երեքը (իր Կուտայրա, Դինավարի, Բալազուրի) պարսիկ են:

I. ԴԱՆԵՂՅԱՆ

ԺԸ ԴԱՐԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԲՑՈՒՐ ԻՐԱՆԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ  
ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրալին ֆոնդում պահվում է գիտական շրջաններին տակավին անծանոթ ԺԸ դ. հայ Շնդինակ իգնատիոս Տիգրանակերտցու շափածո երկը հետևյալ վերնագրով. «Համառոտութիւն պատմական և տաղաշափական ոտիւք յաղագս արևելեան և Պարսից յաշխարհի աւերման ի ձեռանէ օսմանցոց, աշխատասիրեալ ի յումեմնէ իգնատիոս մեղսասիրսին արեղայէ Տիգրանակերտեցոյ, որում տէր ողորմեսցի»<sup>1</sup>: Երկը բովանդակում է իրանի տիրապետությանը ենթակա շրջանների նվաճումն օսմանցիների կողմից, աֆղանների՝ իրան կատարած արշավանքը, իրանի հաղթանակը վերջիններիս և օսմանյան ուժերի դեմ ու կորցրած շրջանների վերանվաճումը, հայ ժողովրդի վիճակը ԺԸ դ. երրորդ և չորրորդ տասնամյակների քաղաքական այդ վայրիվերումների ընթացքում:

Մատենադարանում պահվում է սույն երկի երկու տարրերակ՝ զետեղված առանձին ժողովածումներում, որոնք այստեղ են բերվել էջմիածնի մատենադարանից: Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրացուցակից զատ իգնատիոսի երկը հիշատակված է նաև Հ. Կարենյանցի «Ճուցակում»<sup>2</sup>, որին վկայակոչում է Հր. Աճառյանը «Հայոց անձնանումների բառարանում»<sup>3</sup>: Այն հանգամանքը, որ վերջինիս մեջ հիշատակվում է իգնատիոսի երկի լոկ մեկ տարրերակը, առանց գույքահամարի, նշումով՝ «թվական անհայտ», ապացուց է, որ Աճառյանը ձեռագիրը նկարագրելիս այն ձեռքի տակ լի ունեցել: Խսկ Կարենյանցի «Ճուցակում» իգնատիոսի երկը հիշատակված է այլ անվանումներով (համեմատած մեր ձեռքի տակ եղած ձեռագրերի հետ, որոնցից մեկի վերնագրի ճշգրիտ իմաստը տալիս է Մատենադարանի ձեռագրացուցակը)<sup>4</sup>. Էջմիածնի ցուցակում տարրերակներից մեկը տրված է իմաստի փոքրինչ փոփոխումով, առանց նշելու ձեռագրի ընդորինակման թվականը<sup>5</sup>,

իսկ երկրորդն իսպառ փոխարինված է հետևյալ տեղեկությամբ. «Զոտանաւորս և զայլ հատուկտիր բան յիգնատիոս արեղայէ»<sup>6</sup>: Պետք է ենթադրել, որ դա հետևանք է ավելի շուտ այն բանի, որ Կարենյանցը չի ձգտել «Ճուցակում» հարազատորեն վերարտադրել ձեռագրերի վերնագրերը (նման պատկերը կրկնվում է նաև այլ ձեռագրերի նկարագրության ժամանակ), բան այն, որ նա նկատի է ոնեցել մեկ այլ տարրերակ. որովհետև իգնատիոսի երկից զատ այստեղ հիշատակված են ներկա ժողովածուում ընդգրկված միևնույն տեքստերը՝ դարձյալ նկարագրական բնույթի վերնագրերով:

Բոլոր դեպքերում իգնատիոսի երկի ներկա տարրերակները ոչ միայն ընդգրկված չեն եղել գիտական շրջանառության մեջ, այլև չեն ուղեցել իրենց գիտական լիարժեք նկարագրությունն ու հրատարակությունը:

Սույն երկի և նրա հեղինակի վերաբերյալ ինչպես որևէ այլ ձեռագրացուցակում, այնպես էլ գրականության մեջ հիշատակություն գտնելու մեր ապարդյուն որոնումները<sup>7</sup> հիմք են տալիս հավաստելու, որ գործ ունենք նորահայտ աղբյուրի հետ: Ավելին. հայագիտության մեջ ցարդ անհայտ է և նրա հեղինակի՝ իգնատիոս Տիգրանակերտցու անունը: Մինչդեռ, ինչպես ստորև կտեսնենք, հիմքերը կան ենթադրելու, որ, պատմական այս երկից բացի, նա հեղինակ է նաև բանաստեղծությունների, ու բացառված չէ, որ հետագայում հայտնաբերվեն իգնատիոսի այլ ստեղծագործություններ կա:

Ինչպես նշվեց, Մաշտոցյան Մատենադարանում պահվում է «Համառոտության» երկու տարրերակ: Նրանցից մեկը (=Ա) զետեղված է № 1430 ձեռագրերի ժողովածովի մեջ, որն ընդօրինակվել է 1658 թ., մասսամբ՝ ԺՈ դարում, ամենայն հավանականությամբ Արդնիում<sup>8</sup>: Ժողովածուն, որի սկզբի մասն էշակալված չէ, բաղկացած է 105 թերթից, մեծությունը՝ 15,3×10, նյութը՝ թուղթ, վիճակը՝ բավարար, միասյուն, նոտըրգիր, տողերի քանակը՝ 17—20, լուսանցազարդ, պահպանակը՝ թուղթ 1, ուղղագիծ երկաթագիր (մի քանի բառ), կազմը՝ կաշեպատ ստվարաթուղթ, դրոշմազարդ: Տեքստը գրված է սև թանաքով, վերնագիրը և մեկը ընդմեջ տողերի սկզբնատառերը, երբեմն նաև առանձին, կարենոր համարված տողեր՝ կարմիր թանաքով: Հիշատակարան՝ էջ 19թ, 105ա, 89թ և այլն: Ժողովածուն ընդգրկում է տարրեր բովանդակությամբ տեքստեր, գլխավորապես՝ կրոնական բնույթի (մեկնություններ, քարոզներ, կրոնական երգեր): Գրիշները տարրեր են: Ժողովածուն ավարտվում է իգնատիոսի «Համառոտությամբ»:

Նրկրորդ ժողովածուն՝ ձեռ. 1835, որի մեջ զետեղված է մյուս տարբերակը (=Բ), կազմված է 342 թերթից (այդ թվում բազմաթիվ շքրված թերթեր<sup>9</sup>, մեծությունը՝ 21×16, նյութը՝ թուղթ, վիճակը՝ բավարար, նուրգիր, երկսյում, տողերի քանակը՝ 26,32, կազմը՝ կաշեպատ տախտակ, դրոշմաղարդ, ստացող՝ հաշատուր վարդապետ Կոստանդնուպոլսիցի (սա նաև գրիչներից մեկն է)<sup>10</sup>: Գրված է սև թանաքով, վերնագիրն ու որոշ բառեր, ինչպես նաև յուրաքանչյուր երկտողի սկզբնատարը՝ կարմիր թանաքով։ Իգնատիոսի երկը մյուս տեքստերից տարբերվում է սկզբում և մի քանի լուսանցքներում ունեցած զարդանկարներով։ Այս ժողովածուն ևս բովանդակում է տարարնույթ գործեր, գիշավորապես՝ կրոնական և ավարտվում մեր հեղինակի աշխատասիրած տեքստով, որը էջակալված լէ։ Ժողովածովի սկզբում զետեղված նյութերից մեկի («Մեկնութիմ սահմանացն ...») հիշատակարանի վկայությամբ ընդօրինակումը կատարվել է 1764 թ. էջմիածնում<sup>11</sup>։ Դրանից ելնելով, ժողովածուն նկարագրողներն այդ թվականը վերագրել են ամբողջ ժողովածուին, մինչդեռ, ինչպես ստորև կտեսնենք, Իգնատիոսի երկը գրվել է շատ ավելի վաղ, թեև տեղադրված է ժողովածովի վերջում։

Աղբյուրի ամբողջական պատկերը ներկայացնելու նպատակով կատարած բնագրագիտական ու այլ պրատումները տվեցին մի շարք հարցերի պատասխաններ՝ կապված Իգնատիոս Տիգրանակերտցու և նրա ստեղծագործության հետ։ Տարբերակների համադրումից պարզվեց, որ Բ տարբերակն ունի «նախադրություն»<sup>12</sup>, որի մեջ հեղինակը խոսում է այս երկի ստեղծման հանգամանքների մասին, որոշ տեղեկություններ հաղորդում նաև իր մասին։ Նման բովանդակությամբ հիշատակարանով է ավարտվում Ա տարբերակը, որը մասնավորապես աշքի է ընկնում հայոց եկեղեցու և կաթողիկոս Ղազար Զահկեցու գովերգմամբ։ Նույնը որոշ փոփոխություններով գտնում ենք Բ տարբերակում, սակայն բուն տեքստից անջատ և առանձին վերնագրով՝ իրեն ինքնուրույն մաս<sup>13</sup>։ Ա տարբերակն ավելի հակիրճ է և, ի տարբերություն մյուսի, չի ընդգրկում շատ մանրամասներ, բարոյախոսական հատվածներ, համեմատություններ Աստվածաշնչից և այլն։ Նկատելի է զանազանություն առանձին փաստերի շարադրման մեջ։ Տարբերակները հեռանում են միմյանցից նաև առանձին արտահայտությունների, մակդիրների, տեղանունների և անձնանունների տարբեր ձևերի գործածմամբ։ Ավելացնենք և՝ ուղղագրական ու ոճական տարբերությունները, բայաձեւերի գրաբարյան և նրանից շեղվող ձևերը և այլն։ Ի վերջո, տարբեր են վերնագրերը։ Բ տարբերակին առավել ընդարձակ է և

իրենից ներկայացնում է երկում նկարագրված գլխավոր իրադարձությունների թվարկումը<sup>14:</sup>

Տարբերակների բաղդատումն, ինչպես բովանդակության ու ոճի, այնպես էլ ձեռագրագիտական տեսակետից, ցույց է տալիս, որ նրանցից մեկը յուսի խմբագրությունն է։ Առանձին կարևորություն ունի գրքաձևերի համեմատումը. երկու տարբերակում նրանք այնքան նման են միմյանց, որ կասկած չի մնում, որ երկուի գրիլը միևնույն անձն է։ Ավելին, փաստերը հիմք են տալիս եզրակացնելու, որ գրիլը ինքը՝ հեղինակն է։

Այսպես, Ա. տարբերակի էջերից մեկում (99 ա) առկա են երկու շնչված տողեր, որոնք, սակայն, ուշադիր զննելու դեպքում կարելի է վերականգնել.

«...Նախապատվեաց զդի նորայն  
և ամփոփեաց զնա ի թուրպան»<sup>14:</sup>,

Խոսքը Բաղդադի համար օսմանցիների գեմ մղված մարտերում հաղթանակ տարած Թահմասպ Կովկի խանի (Հետագայում Նադիր շահ) հրամանի մասին է՝ Քիրքուք տեղափոխելու և պատվով թաղելու այդ մարտում զոհված թոփք զորահրամանատար Օսման փաշայի դիակը։ Հիշյալ ջնջված տողերին առընթեր պայմանական նշանը ցույց է տալիս, որ նրանց փոխարինում է նույն պայմանական նշանը կրող հատվածը՝ զետեղված երկի վերջում<sup>15:</sup> Այս հատվածը նույն իրադարձության առավել մանրամասն նկարագրությունն է, որտեղ, ի դեպ, շեն կրկնվում հիշյալ երկու տողերը։

Միանգամայն պարզ է, որ նման ուղղում կամ փոփոխություն կարող էր արվել միայն հեղինակի կողմից (մանավանդ, որ երկը շափածուէ):

Եվս մեկ փաստ. Իգնատիոսի մի այլ գործի հիշատակարանում խոսվում է նաև «Համառոտության» ստեղծման մասին. «...Կատարեցաւ կրկնատեսակ շարամանութիւնս, մինն Պարսից յաշխարհի աւերման և նորոգութեան ըստ հոմերականի...»։ և այստեղ իսկ, լուսանցքում, նույն գոշաձևով նշված է. «Ի ՌՃԶէ թւոյս մերոյ և ի մայիս ամսոյ ԱԱ»<sup>16</sup> (=1738թ. մայիսի 31): Սա իգնատիոսի «Համառոտության» գրվելու թվականն է, որը նույնությամբ հանդիպում ենք երկու տարբերակներում<sup>17:</sup> Երկը ավարտելու թվականն ու ամսաթիվը նման ճշգրտությամբ կարող էր տալ միայն ինքը՝ հեղինակը։

Ի վերջո, իգնատիոս-ընդօրինակողի գոյության փաստը. Իգնատիոս Տիգրանակերտցու մասին տեղեկություններ որոնելիս հանդիպեցինք մի-

ձեռագրի՝ ընդօրինակված (մասամբ) 1722թ. Արդնիում, արեղա իգնատիոսի կողմից: Համընկնում են ժամանակը, վայրը և գրչի անունը, որը ձեռագրում հիշատակվում է երիցս<sup>18:</sup> Ահա հիշատակարաններից մեկը. «Եվս և իգնատիոս անարդ և վերջացեալ եթ յարեղայիս որ սիրով ցանկացայ գրել զայս օրհնեալ սուրբ մատեանն...»<sup>19:</sup> Այս ձեռագրի գոշաձեկի համադրումը «Համառոտության» երկու տարրերակների հետ ցուց է տալիս բոլոր երեք գրչաձեկերի լիովին նույնությունը և կասկած չի թողնում, որ №802 ձեռագրի ընդօրինակող իգնատիոսը մեր հեղինակն է:

Այստեղից հետևում է, որ նրա երկի երկու տարրերակն էլ ինքնագիր օրինակներ են: Դրանով, թերևս, կարելի է բացատրել և այն հանգամանքը, որ երկու տարրերակում էլ ընդօրինակողի անունը, որ սովորաբար նշվում է, բացակայում է:

Այսպիսով, իգնատիոս Տիգրանակերացին եղել է մեզ հետաքրքրող երկի ու միայն հեղինակը, այլև՝ առկա ձեռագրերի գրիշը և տարրերակներից մեկի խմբագրողը (մշակողը): Այս կապակցությամբ հարց է առաջանում. ո՞րն է խմբագրված տարրերակը: Երկի գովելու ժամանակը հնարավորություն չի տալիս պատասխանելու այս հարցին, քանի որ երկու տարրերակում էլ այն նույնն է: Բայց մի շարք անուղղակի փաստեր կարող են օգնել այս հարցում: Ուշադրության առնենք, օրինակ, հետևյալ հանգամանքը: Ա. տարրերակում Անդրկովկասից Խորասան գաղթեցվածների վիճակի նկարագրությունից հետո շարունակելով խոսքը գիլզաների առաջնորդի՝ Միր-Մահմուտի մասին, հեղինակը չի նշում նրա անունը, որն այստեղ փոխարինված է դերանվամբ: Այսպես.

«Քրիստոնէից ազգս ամենայն  
շար նեղութեամբ նուաղեցան,

Վըշտաց շարեաց ի նեղութեան  
յերկաթակապ աղքատացան:  
Համբաւ նորին ել քաղցրաձայն...»<sup>20:</sup>

Ինչպես տեսնում ենք, այստեղ բացակայում է անմիշական կապը վերջին տողի և Միր-Մահմուտ անվան միջև, և առաջին հայացքից պարզ չէ, թե ում համբավի մասին է խոսքը: Բ տարրերակում նույն իրադրձությանը նվիրված է ավելի ընդարձակ մի հատված, որի վերջում հեղինակն ավելացնում է, որ գաղթեցվածներն ընկան ծառայության

«ի ձեռն պերճին յանձնապաստան  
Մահմուտ կոչեան Աղվանեան,  
Համբաւ նորին ել բարձրաձայն...»<sup>21:</sup>

Այստեղ անմիջապես հասկանալի է, որ իուսքը Միո-Մահմուդի մասին է:

Նման՝ առավել մշակված և հղկված հատվածներ Բ տարբերակում շատ կարելի է մատնանշել: Ընդհանրապես, վերջինս աշքի է ընկնում առավել հղկվածությամբ և՛ իմաստային, և՛ տաղաշափական առումով՝ նկատելի է հեղինակի ձգտումը նաև հարստացնելու երկը կրոնաբարոյախոսական մեկնաբանություններով՝ նկարագրված իրադարձությունների առթիվ, ինչպես նաև հայոց եկեղեցու և հովվապետների փառաբանությամբ: Դա ժամանակի պահանջն էր, և միայն այսօրվա հայացքով է ակնհայտ դրա հետեւանքով առաջ եկած այն ձգվածությունն ու հաճախ տաղակությունը, որ բնորոշ են «Համառոտության» Բ տարբերակին: Դրա փոխարեն հանգերն այստեղ ավելի բարեհնչում են, Ա տարբերակի թուրքերեն կամ հայերեն ուամկական շատ բառեր փոխարինված են գրականով (թեև ոչ բոլոր դեպքերում): Ա տարբերակի զնշումներն այստեղ փոխարինված են անհրաժեշտ հատվածներով: Բացառված չէ, որ Տիգրանակերտցին օգտագործել է իրեն ընծայված<sup>22</sup> գրչագիր մատյանի վերջին ազատ թերթերը՝ իրեն պատվիրված ստեղծագործության նախնական օրինակի համար: Պատահական չէ, որ այս տարբերակում կան զնշումներ, լուսանցքում ավելացված տողեր. Բ տարբերակը նման ուղղումներից զերծ է և գրված է վերջիններիս հաշվառմամբ: Որոշ փաստեր, ըստ երևութին, ստուգվելուց հետո արժանահավատ շրջանվելով, թում հանվել են կամ փոփոխվել<sup>23</sup>:

Այսպիսով, մեր համոզմամբ, «Համառոտության» տարբերակներից Բ-ն խմբագրվածն է:

Ինչ վերաբերում է երկը գրելու ժամանակին, ապա, ինչպես նշել ենք, ըստ «Համառոտության» երկու տարբերակում, նաև «Սիոնի որդիք»-ի (այդ մասին տե՛ս ստորև) հիշատակարանում կատարված նշումների, այն գրվել է 1738 թ. մայիսի 31-ին<sup>24</sup>: Հասկանալի է՝ երկու տարբերակները չեն կարող գրվել միևնույն օրում (մանավանդ, որ երկրորդ տարբերակում որոշ փաստեր ճշգրտված են): Հստ երևութին, մշակված տարբերակում հեղինակը նշել է նույն թվականը, ինչ նախկին ձեռագրում: Ի դեպ, «Սիոնի որդիք»-ի հիշատակարանի լուսանցքում նշված թվականը, ի տարբերություն «Համառոտության» երկու տարբերակների, որտեղ թվականը նկարագրական ձևում, արտահայտված է հայկական տառերով՝ ՌՃԶէ, որոնց գրելու ժամանակ փոքրիկ անփութությունը կարող էր թվականի ընթերցման մեջ թյուրիմացության պատճառ դառնալ: Այսպես է պատահել տվյալ դեպքում, քանի որ № 1835 ձեռագրի նկարա-

գրության մեջ (Կըկրորդ շապիկի վրա) , նշված է իբրև «Համառոտության» գրվելու թվական՝ ՌՃԶԵ ( = 1736)՝ է-ն ե-ի հետ շփոթելու հետեւանքով: Ոչ թիշ ջանք պահանջվեց համոզվելու համար, որ այդ թվականի վերջին տառը պետք է կարդալ է և ոչ՝ Ե, ինչպես տալիս է ձեռագրի հիշյալ նկարագրությունը:

Դժվար է որոշակի խոսք ասել երկի ստեղծման վայրի մասին: Ենթադրում ենք, որ երկու տարրերակն էլ գրվել են Արդնիում, թեև № 1835 ժողովածուի առաջին մասը գրվել է էջմիածնում: Ոչ մի փաստ շունենք Իգնատիոսի՝ էջմիածնում եղած լինելու մասին: Բայց և այն, որ նրա երկը, ժողովածուում հաջորդելով հանդերձ էջմիածնում կատարված ընդօրինակություններին, կարող էր գրված լինել վերջիններից առաջ Արդնիում, անտրամարանական չէ, եթե նկատի ունենանք, որ «Համառոտության» և նրան նախորդող տեքստի միջև առկա է 100 չգրված էջ, և բացառված չէ, որ մատյանը պատրաստված է եղել Արդնիում, որտեղ մեր հեղինակը վերջին մասում գրել է մեզ հայտնի երկը, որից հետո այն ինչ-ինչ հանդամանքներում տեղափոխվել է էջմիածին<sup>25</sup> և 1764 թ. հարբածացվել ընդօրինակված տեքստերով:

Իգնատիոս Տիգրանակերտցու մասին ինքնակենսագրական որոշ տեղեկություններ գտնում ենք բնագրի երկու տարրերակներում: Բացի դրանից, № 1430 ձեռագրի վերջում կան ևս մի քանի տեղեկություններ նրա մասին, որոնց հեղինակը հայտնի չէ (գրված է այլ գրչաձեռով, Իգնատիոսի մասին խոսվում է երրորդ դեմքով)<sup>26</sup>:

Ըստ այդ սուլ տվյալների, Իգնատիոսը ծնվել է 1684 թ. դեկտեմբերի 8-ին: Արդնու Բարձրահայաց Սուրբ Աստվածածին վանքում<sup>27</sup> 1717 թվականից եղել է արեղա և ապա 1724 թ. սեպտեմբերի 21-ից՝ վարդապետ: Այս տվյալները համընկնում են հեղինակի հիշատակարանի տեղեկությունների հետ.

«Հուսկ յօրինողս այս պատմութեանն՝  
իգնատիէս Տիգրանկերտեան,  
լոկ արեղայ անուանական,  
Զոր ի վանիցս եմ Արդընեան»<sup>28</sup>,

Տիգրանակերտցու կրթական մակարդակի մասին խոսում է իր իսկ վկայությունը.

«Զի հրահանգից վարժարանի  
շեմ տակափն ներկուռ բանի  
Յաթենականըն քաղաքի  
զանձնս իմաստիւք ու կրթեցի»<sup>29</sup>,

Զնայած դրան, նա հեղինակել է շափածո այլ գործեր ևս, որի վը-կայությունն է «Բացատրութիւն ներս. Ծնորհալու Սիոնի որդիք երգոյն» վերնագրով մեկնաբանությունը՝ զետեղված № 1835 ժողովածուի մէջ<sup>30</sup>: Իդեալ, սա ևս հեղինակի ինքնագիր օրինակն է: Այստեղ առկա՝ իգնատիոնի հիշատակարանից տեղեկանում ենք, որ մեզ հետաքրքրող աղբյուրը գրվել է այ խնդրոյ և ըստիամանէ յումեմն Պայազատի, Երեմիաս կոչեցելոյց<sup>31</sup>: Խնշես տեսնում ենք, Իգնատիոսը գրելու պատվեր է ըստացել և այս էլ՝ ոչ մեկ անգամ: Արդյոք դա չի վկայում նրա հեղինակության և շրջապատի կողմից նրա ստեղծագործական ոմակությունները ու գիտելիքների ճանաշման մասին:

Ենթադրում ենք, որ իգնատիոսը հեղինակ է նաև շափածո այլ ստեղծագործությունների: Սույն ժողովածուները զննելիս նկատեցինք, որ նրանցից մեկում զետեղված են տաղեր (տարրեր հեղինակների ու նաև անանուն), որոնց վերջում հիշատակարան-բարոյախոսությունն ավարտվում է այսպես.

«Ի տառապեալ մեղսասիրսին նաւակէ՝  
Իգնատիոս Գրիգորիէ զաւակէ,  
Ճընեալ, սընեալ Տիգրանակերտ քաղաքէ,  
Առսկ արեղայ և յաջողմանց յահեկէ»<sup>32</sup>:

Կարծում ենք, որ սխալված չենք լինի, եթե այս տողերը, թերևս նաև անանուն տաղերը, վերագրենք Իգնատիոս Տիգրանակերտցուն, եթե նըկատի ունենանք նաև «Համառոտության» և հիշյալ տաղերի գրչաձեւերի նմանությունը:

Քանի որ Իգնատիոսը վարդապետ էր, կրօնավոր, ուստի և նրա երկը, մասնավորապես թարրերակը, տոգորված է ժամանակի կրօնական շնչով, դավանաբանական դատողություններով և, որ գլխավորն է՝ արհավիրքները մարդկանց մեղքով բացատրող՝ «վասն մեղաց մերոց» գաղափարով.

«Այսքան աղէտք, որք պատմեցան,  
Վասն իմ մեղացըն գործեցան»<sup>33</sup>,

Պատահական չեն, ուրեմն, նշված հիշատակարանում Իգնատիոսի հետեյալ տողերը. «Նմանապես հետեցեալքն ի յԱրքունի պողոտայէն զկերակուրն կենաց այսինքն գիրս սուրբս փոխեն ի կերակուրս մահաբերս, որոց աղջամուղջ խաւարին յափտեան պահեալ կան...»<sup>34</sup>:

Ներկայացվող աղբյուրի լեզուն ոչ խորին գրաբար է: Զնայած հան-

դիպող որոշ թուրքերն ըառերին, ակներև է Իգնատիոսի ձգտումը՝ գրել անխառը հայերենով. և պետք է արժանին մատուցել հեղինակին, որ թուրքական միջավայրում կարողացել է այս ասպարեղում հաջողության հասնել: Լեզվի նկատմամբ հեղինակի ուշադրությունն ավելի ակնառու է մշակված տարրերակում: Խաթարող հանգամանքն այս հարցում շափածո լինելն է (ութունյա յամբ), որի ստիպմամբ խոսքը հագեցված է անհարկի կամ աղավաղված վերջավորությամբ բառերով, որոնք հանախ չեն: կապվում կոնտեքստի հետ և կոչված են լոկ ապահովելու հանգավորումը:

Մի կողմ թողնելով Իգնատիոսին իբրև բանաստեղծի արժեքավորելու խնդիրը, դիտենք մեզ հետաքրքրող երկը որպես պատմական սկզբանաղբյուր: Անդրադառնալով «Համառոտությանը» այս տեսանկյունից, պետք է առաջին հերթին նկատի ունենալ, որ հեղինակն իր նկարագրած իրադարձությունների ժամանակակիցն է, որոշ հարցերում (կապված թուրքիայի հետ) նաև՝ ականատես: Նրա վկայությամբ՝ իրանա-թուրքական պատերազմները («զհարուած պարսից») նկարագրում է իբրև ականջալուր<sup>35</sup>: Իգնատիոսը խոստովանում է, որ որոշ իրադարձություններին լավատեղյակ չէ,

«Թանգի յերկիրս էր հեռաստան  
Պարսից տանէն ւարելեան,  
Ուտի ոչ զոր գտի պատմաբան  
Հաւաստ բանին ճշշմարտութեան»<sup>36</sup>,

Այս «անտեղյակությունը», սակայն, փոխհատուցվում է նրանով, որ տվյալ դեպքում մենք հնարավորություն ունենք դիտելու, թե որքանով և ինչպես էին ընկալվում ու գնահատվում ԺԸ. դ. 20-30-ական թթ. թուրք-իրանական պատերազմները «թիկոնքում»՝ թուրքիայում: Մյուս կողմից, դատելով բերված շատ մանրամասների ճշգրտությունից, կարելի է եղրակացնել, որ Իգնատիոսը տեղեկություններ է քաղել իրադարձություններին բավականաշափ տեղյակ անձանցից: Իբրև արժանիք պետք է ընդգծել «Համառոտությանը» բնորոշ հատկապես մի գիծ, որը թույլ է տալիս նրան վեր դասելու մասնավորապես թուրք և պարսիկ պալատական պատմագիրների ու ժամանակագիրների մեծ մասից: Ի տարրերություն վերջինների թողած՝ արքաների հաղթանակները շեփորող պատմությունների, որոնցում անտեսված են պատերազմական գործողությունների ընթացքում ոտնատակ եղող և մեծագույն շփով տուժող ժողովրդական զանգվածները, Իգնատիոսն ուշադիր է նրանց նկատմամբ և լայն տեղ է հատկացնուած նրանց վիճակի նկարագրությանը: Ան-

առարակույս, առանձին արժեք են ներկայացնում «Համառոտության» նոր սփաստերը քաղաքական անցուղարձերի նկարագրության մեջ, եթե դրան ավելացնենք նաև արդեն հայտնի տվյալների հավաստումն ու լրացումը, ինչպես նաև ցարդ կասկածելի հաղորդումների ճշգրտմանը նպաստող տեղեկությունները, ապա պարզ կդառնա սույն սկզբնաղբյուրի գիտական արժեքը նշված շրջանի պատմության որոշ մանրամասների լուսաբանման համար:

Պատմական այն ժամանակահատվածը (1719—1736 թթ.), որին նվիրված է Իգնատիոս Տիգրանակերտցու «Համառոտությունը», հարուստ է փոթորկալից իրադարձություններով: Ասիական երեխմնի հզոր երկու տերությունները՝ Թուրքիան և Իրանը, շարունակում էին դարավոր հակամարտությունը, որը զուգորդվում էր այդ երկրների ներքին ցնցումներով: Դասակարգային հակասությունների սրումը, գյուղացիական ապրուտամբությունների նոր ալիքը, ինչպես նաև Իրանի տիրապետության տակ գտնվող ժողովուրդների ու ցեղերի ազատագրական պայքարն ընդդեմ շահական իշխանության հանգեցրին Սեֆյան հարստության բարձմանը: Աֆղանների հարձակումը և Միր-Մահմուդի կողմից Իրանի թագի նվաճումը (1722թ.), իսկ 1736-ին Նադիր շահի գահակալությունը այդ տարիների առանցքային իրադարձությունները եղան Իրանի համար: Սույն ժամանակաշրջանում էր, որ, ձգտելով օգտագործել Իրանի դժվարին իրադրությունը, օսմանյան Թուրքիան պատերազմ հայտարարեց նրան (1723թ.) և գրավեց մի շարք շրջաններ: Իրանի տիրապետությանը ենթակա տերիտորիաների (այդ թվում՝ Անդրկովկասի) նվաճման ուղղությամբ օսմանյան Թուրքիայի գործողություններն ակտիվացան 1723թ. ուսւ-իրանական պայմանագրի կնքումից հետո, քանի որ Ռուսաստանի գիրքի ամրացումն Անդրկովկասում և Իրանում չէր կարող շահանգություններ թուրքիային:

Այս պայմաններում ասպարեզ ելավ Թահմասպ-ղուլի խանը, որը օգտագործելով ժողովրդի ատելությունը արտաքին թշնամիների նկատմամբ, 1730-ին ջախջախեց աֆղաններին և վտարեց Իրանից: Նույն շրջանին է համընկնում Թուրքիայի ներքին վիճակի սրումը, որն ուղեկցվեց 1730 թ. Ստամբուլի ապստամբությամբ և Սուլթան Ահմեդ Գ-ի հրաժարականով: Նման իրադրության մեջ Թահմասպ-ղուլի խանը հնարավորություն ստացավ իրանա-թուրքական պատերազմում վերցնել նախաձեռնությունը և պարտության մատնելով թուրքերին, ստիպել նրանց ստորագրելու 1736 թ. Կոստանդնուպոլսի հաշտությունը, որով օսմանցիները պետք է

ընդունեին 1733 թ. Բաղդադի պայմանագրի պայմանները, այն է՝ վերադարձնել վերջին 10 տարում նվաճած իրանի բոլոր տերիտորիաները և ընդունել 1639 թ. իրանա-թուրքական պայմանագրով որոշված սահմանը:

Քաղաքական այս զիգզագները աղետալի անդրադարձումներ էին ունենում հայ ժողովրդի համար։ Թուրքական և պարսկական զորքերի գոտինմարտերը Անդրկովկասը նվաճելու համար զուգորդվում էին հայ ժողովրդի կենաց և մահու պայքարով, որ մղում էր նա՝ դիմակայելով մերթ մեկ, մերթ մյուս զավթիչներին։ ԺՈ դարը հայտնի է հայ ժողովրդի կյանքում աղատագրական նշանավոր ապստամբություններով թուրք և պարսիկ նվաճողների դեմ՝ Երևանի (1724 թ.), Մեղրիի (1727 թ.), Հալիձորի (Նույն թ.) և այլ հերոսամարտերով։

Այսպիսիք են, ընդհանուր գծերով, այն իրադարձությունները, որոնցով բնորոշ է հպատիոս Տիգրանակերտցու նկարագրած շրջանը։

Պատմության այս փուլը լուսաբանում է գտել ինչպես պարսիկ հեղինակների (Մոհամմադ Մեղրի խան Ասթերաբաղի, Մոհամմադ Քաղեմ, Շեյխ Մոհամմադ Ալի Հազին) երկերում և թուրք պատմագիրների (Խոմայիլ Ասրմ Էֆենդի, Չելերի Զադե, Ռաշիդ, Սուլեհի, Շաքիր) աշխատություններում, այնպես և հայկական աղբյուրներում՝ Աբրահամ Կրետացու, Աբրահամ Երևանցու, Հակոբ Շամախիցու, Թամրուրի Քիշիկ Հարությունի, Պետրոս Դի Սարգիս Գիլանենցի և այլոց կողմից։ Թվարկված 'աղբյուրներից շատերի համեմատությամբ խիստ փոքրածավալ «Համառոտությունը», այսուհանդերձ, գալիս է հարստացնելու աղբյուրների այս շարքը՝ հավաստելով կամ լրացնելով նրանց տեղեկությունները հիշուալ շրջանի վերաբերյալ։ Ուստի և այս կամ այն աղբյուրում արդեն առկա և հպատիոսի երկում իրենց հավաստումը գտած փաստերի կողքին հետազոտողն այստեղ կդատի պատմական իրադարձությունների շղթան ամբողջացնող լրացուցիչ տեղեկություններ։

Նպատակ ունենալով հետազոտողների ուշադրությանը ներկայացնել հպատիոս Տիգրանակերտցու սուլյա աշխատությունը և շանալով դուրս շգալ վերջինիս բնագրի հրատարակության հետ կապված հարցերի շրջանակներից, ձեռնպահ ենք մնում լուսաբանելու նրա հաղորդած բոլոր տեղեկությունների հետ առնշվող հարցերը, որ հատուկ ուսումնասիրության նյութ կարող են լինել։ Ուստի կբավարարվենք մի քանի դիտողություններով։

Տիգրանակերտցին իր երկն սկսում է դեպի Իրան աֆղանների արշավանքի և Միր-Մահմուդի կողմից Սպահանի ու Իրանի գահի գրավ-

ման նկարագրությամբ։ Պատմագրության մեջ ընդունված է, որ Միք-  
Մահմուդի երկրորդ՝ Հաղթական արշավանքն իրան կատարվել է 1721-ի  
վերջին—22-ի սկզբին։ «Համառոտության» Ա. տարրերակում նշված է  
1719, Բ-ում՝ 1721 թ.<sup>37</sup>։ Հավանաբար, Ա.-ում սխալ նշված թվականը  
հեղինակը խմբագրելիս, ուղղել է։ Նկատենք, որ Միք-Վեյս ու նրան  
հաջորդող Միք-Մահմուդն այստեղ նույնացված են։

Աֆղանական արշավանքի նկարագրության մեջ ուշադրություն է  
դրավում Սպահանի և նոր Ջուղայի<sup>38</sup> բնակիչներին (գլխավորապես Հա-  
յերին)։ Ղանդահար գաղթեցնելու փաստը։ Ղանդահարի անվան տակ  
հեղինակը, թերևս, նկատի ունի (կամ շփոթում է) Խորասանը։ Եթե  
այդպես է, ապա նրա այդ հաղորդումը հաստատում է Հայկական որոշ  
աղբյուրների տվյալները Թահմասպ-ղուկի խանի ծրագրի մասին՝ Խորա-  
սանում ստեղծելու հայկական գաղութ։ Այսպես, կաթողիկոս Հակոբ  
Շամախիցու վկայությամբ, նշված ժամանակ Խորասան է գաղթեցվել  
300 ընտանիք Երևանից, 200՝ Նախիջևանից, ինչպես և մեծ թվով բնա-  
կիչներ Կարսից<sup>39</sup>։ Հայերից բացի, Արքահամ Երևանցու հաղորդմամբ,  
Խորասան գաղթեցվեցին 15000 ապստամբներ Շուշթարից և Դեսվիլից,  
իսկ 48 հազար՝ բախտիարներից<sup>40</sup>։ Տիգրանակերտցին այդ քայլը գնահա-  
տում է իրրև աղետալի ձեռնարկ գաղթեցվողների համար։ «Զնորին  
խափեաց պատրողական», — շեշտում է Հեղինակը, խոսելով գաղթեցվող-  
ներին տված խոստումների մասին, ըստ որոնց, տեղափոխվելով Ղան-  
դահար, նրանք կարող էին անդորր գտնել անընդմեջ պատերազմներից  
ու կողոպուտից<sup>41</sup>։ Այդ փաստի մասին հիշատակում է և Արքահամ Կրե-  
տացին, որի հաղորդմամբ Նադիրը հրամայեց Խորասան գաղթեցնել 300  
-ական հայ ընտանիք Թիֆլիսից և Արարատյան երկրից։ Թիֆլիսցինե-  
րին հաջողվեց Կրետացու իսկ ջանքերով փրկագին տալ 300 թուման և  
որոշ քանակությամբ հացահատիկ<sup>42</sup>։ Ի դեպ նշենք, որ հայոց կաթողի-  
կոսը վայելում էր Նադիրի հովանավորությունը։ Ինչ խոսք՝ շահը ջա-  
նում էր օգտագործել նրա ազեցությունն իր նպատակների համար։  
Բայց Կրետացին այս իրավիճակն օգտագործել է փայլուն կերպով, ձեռք  
բերելով մեծ թվով թագավորական ուղամաներ, որոնցով բավարարու-  
թյուն էր տրվում կաթողիկոսի այս կամ այն խնդրանքին։ դրանցից մե-  
կըն էլ Թիֆլիսահայերի ազատումն էր գաղթից՝ փրկագնի միջոցով։ Իսկ  
Խորասան տեղափոխվող արարատցիներին, Նադիրի կարգադրությամբ,  
հատկացվեցին փոխադրամիջոցներ։ Ս. Տեր-Ավետիսյանը դրա հիմքում  
տեսնում է Նադիրի ցանկությունը՝ հայերի միջոցով զարգացնելու Խո-  
րասանի առևտուրը։ Մ. Օրմանյանը, սակայն, դա բացատրում է այն

Հովանավորող վերաբերմունքով, որ ցուց էր տալիս այդ օրերին նա-  
դիր շահը հայոց կաթողիկոս Արքահամ Կրետացում, որի՝ բավարարում  
ստացած խնդիրքներից մեկը գաղթեցվողներին տրված հիշյալ օգնու-  
թյունն էր<sup>43</sup>: Անտարակույս, առևտրի զարգացման խնդիրը, իբրև երկրի  
բարգավաճման կարևորագույն լժակներից մեկը, չէր կարող շզբաղեցնել  
նրա տիրակալին (մանավանդ, որ ընդամենը մեկ հարյուրամյակ էր բա-  
ժանում նրան իրանի ծաղկուն առևտրի շրջանից): Ունենալով նախնի-  
ների փորձը, Նադիր շահը չէր խորշում գործելու նույն միջոցներով:  
Հիշյալ իրադարձությունների մեկ այլ ականատես, Նադիր շահի Հնդկաս-  
տան կատարած արշավանքի մասին հայտառ թուրքերենով գրված  
պատմության հեղինակ Քիչիկ Հարություն Թամրովին վկայում է, որ  
Նադիրը հայ գաղթականներին տրամադրեց տուն, հողամաս և հազար  
թուման՝ եկեղեցի կառուցելու համար, հատուկ ուղամով արգելելով  
մահեղականների թշնամական վերաբերմունքը նրանց նկատմամբ<sup>44</sup>:  
Մենք այստեղ առանձին շենք անդրադառնա նադիրի այս «հոգատարու-  
թյան» բուն նպատակներին, որը հիշեցնում է շահ Արքաս Ա-ի «հոգա-  
տարությունը» բոնի կերպով իրան գաղթեցված հայերի նկատմամբ:  
Տվյալ գեպքում կարևոր այս փաստի հիշատակումն է նորահայտ աղ-  
բյուրում: Պիտք է նկատի ունենալ, սակայն, որ այստեղ հիշյալ ձեռ-  
նարկը վերագրված է Միր-Մահմուդին: Եթե գտնվեն փաստարկներ, որոնք  
բացառեն իգնատիոսի կողմից նադիրի և Միր-Մահմուդի գործողություն-  
ների շփոթումը, ապա կարելի կլինի խոսել նաև վերջինիս կողմից հա-  
յերին Ղանդահար գաղթեցնելու մասին: Բոլոր գեպքերում, գաղթեցումը  
կատարված փաստ է, որի մասին հավաստում է մեր հեղինակը, ար-  
ձանագրելով, որ, չնայած գաղթականներին տված խոստումներին, Միր-  
Մահմուդը

«Զնոյնք հարկատու արար վախճան,  
ալ և բաղումթ ի սուր ածման.  
Թրիստռնէից ազգս ամենայն  
լար նեղութեամբ նուաղեցան»<sup>45</sup>:

Անդրադառնալով թուրքիայի՝ իրանին հայտարարված պատերազմի  
հարցին, իգնատիոսը բերում է բավականին յուրօրինակ մի ռապտճա-  
ռաբանություն», ըստ որի թուրքերի՝ իրանի տիրապետության սահմանը  
ներխուժելու պատճառը Միր-Մահմուդի «հանդգնությունն» էր՝ իր շուր-  
ջը սփռելու անհաղթ պատերազմողի փառքը: Եվ Սովորան Ահմեդ Գ-ն  
որոշում է պատժել այդ «անարժան քուրդ ամիրային», զրկել նրան իր

փառքից<sup>46</sup>, Թուրք-իրանական պատերազմների հարուցիւը հայտնի է: Այս պատճառաբանությունը, սակայն, կարող է հետաքրքրություն առաջացնել այնքանով, որ ցուց է տալիս, թե թուրքական իրականության մեջ ինչ կերպ էր ընկալվում և մեկնաբանվում քաղաքական անցուդարձը: Իգնատիոսը փաստորեն արձանագրել է Թուրքիայում գոյություն ունեցած հասարակական կարծիքը (որը, անշուշտ, գալիս էր Թուրքիայի կառավարող շրջաններից) Թուրք-իրանական հակամարտության պատճառի մասին:

Բայց այստեղ ուշադրություն է գրավում իգնատիոսի մի հետաքրքրութիր վկայությունը ևս: Ժխտելով, իրը, Միր-Մահմուդի իրավունքը՝ տիրելու իր անվան շուրջը հյուաված փառքին, Սուլթան Ահմեդն ասել է.

«Նա չի փառաց այնու արժան  
այն մարացի քուրդ ամիրայն»<sup>47</sup>:

Վերջին արտահայտությունը որոշակիորեն հիշեցնում է պարթևների թագավոր Արտավանի մի արտահայտությունը. Ժխտելով Սասանյան հարստության հիմնագիր Արտաշիրի իրավունքը՝ տիրելու գահին, նա ասում էր, որ Արտաշիրը թագին անարժան քուրդ է: Բանն այն է, որ Միր-Մահմուդը մեր աղբյուրում անվանված է ոչ լոկ քուրդ, այլ՝ «մարացի քուրդ»: Մար՝ մեղացիների անվանումն է, ուստի «մարացի քուրդ» արտահայտությունը նշանակում է «մեղացի քուրդ»: Այսպիսով ստացվում է, որ Միր-Մահմուդը մեղացի քուրդ էր, որը, անշուշտ, անհավանական է. Հայտնի է, որ նա պատկանում էր աֆղանական գիլզացեղին: Սակայն, եթե այս հարցի մասին պրատումներ անելու լինենք, ապա հետաքրքիր կապ կտեսնենք մի շարք փաստերի միջև, ինչպես՝ գիլզա—գուրան (գիլզաների երկու ճյուղավորումներից մեկը և քրդական խոշոր ցեղերից մեկը) —գիլ (քրդական վաղ ցեղերից մեկը) անվանումների միջև, որը կարող է նույնպես հետաքրքիր հետակությունների հանգեցնել:

Անկախ այս փաստերից, մեզ թվում է, որ «մարացի քուրդ» արտահայտությունը մեր աղբյուրում պատահական չէ և նյութ է տալիս մտորումների համար (մասնավորապես քրդագետներին, նաև՝ աֆղանագետներին):

Նման, առաջին հայացքից «պատահական» հաղորդումներ Տիգրանակերտցու երկում քիչ չեն, և դա ոչ թե խաթարում, այլ, ընդհակառակը, բարձրացնում է նրա արժեքը այն իմաստով, որ մեր առջև դնում է նոր հարցեր:

Ինչպես արդեն նշվել է, իգնատիոսի երկի արժեքավոր գծերից մեկը ժողովրդի վիճակի լայն պատկերումն է, նրա կրած փորձությունների խոր ընկալումն ու արտահայտումը: Պատահական չէ, որ այս երկն անվանված է նաև «Ողբ» (Կարենյանցի ցուցակ): Հեղինակը թեև խոսում է զիսավորապես հայերի վիճակի մասին, սակայն նրա մոտ կան տվյալներ նաև այլ ժողովուրդների մասին, որոնք մշտական արշավանքների, ավերի ու կողոպուտի են ենթարկվել:

«Ոմանք սրոյ ճարակեցան,  
ոմանք ներքոյ ոտից մեռան,  
Ոմանք յերկրէ երկիր տարան  
ի գերութիմ անօգնական»<sup>49</sup>:

Այսպիսի նկարագրություններով, որոնք համահնչյուն են այլ աղբյուրների վկայությունների հետ<sup>50</sup>, հարուստ է «Համառոտությունը»:

Սակայն նկարագրելով հանդերձ ժողովրդի դառնությունները, իգնատիոսը լի հիշատակում նրա դիմադրության փաստերից և ոչ մեկը: Հայտնի է, որ նադիրի տարած հաղթանակները աֆղանների և օսմանցիների դեմ հնարավոր դարձան միայն շնորհիվ երկրի բնակչության մեջ ծայր առած ազատագրական պայքարի<sup>51</sup>: Հիշենք 1724 թ. Երևանի հերոսական պաշտպանությունը օսմանցիներից<sup>52</sup>: Անդրկովկասում 1724—1731 թթ. հենց միայն հայերի կողմից թուրքական զավթիչներին ցուց տված զինված դիմադրական շարժման վկայությունն են մեծ թվով փաստաթղթեր<sup>53</sup>: Թիշ շեն ազրյուրների տվյալները Անդրկովկասի ժողովուրդների միացյալ պայքարի վերաբերյալ: Այդ բոլորը մեր հեղինակը լրության է մատնում, և դրանում է նրա երկի մեծ թերությունը: Արդյո՞ք պատճառը հեղինակի անտեղյակությունն է: Թերևս՝ երբ խոսքը հեռավոր լեզգիների մասին է:

«Եւս ըզլեկզւյ հակասութեան  
ամենեկին շեմ գիտնական»<sup>54</sup>:

Սակայն այնպիսի խոշոր իրադարձությանը, որպիսին 1730 թ. Ստամբուլի ապստամբությունն էր Պատրոնա Խալիլի գիսավորությամբ, մեր հեղինակն արդեն չէր կարող տեղյակ լինել. մանավանդ, որ իր երկում խոսում է Սուլթան Ահմեդի հրաժարականի և Մահմուդ Ա-ի գահակալության մասին, որ հիշյալ ապստամբության անմիջական արդյունքն էր:

Այսպիսի «անտեղյակությամբ» իգնատիոսը մեզ հաղորդում է այնպիսի մանրամասներ, որոնք լիովին կամ մասսամբ համընկնում են այլ

աղբյուրների տվյալների հետ (ինչպես, օրինակ, 1725 թ. պատերազմական գործողությունների ժամանակ թուրքական բանակի բաժանումը շորս մասի, 1735 թ. օսմանցիների կողմից Երևանն առանց մարտի հանձնելու, 1736 թ. իրանա-թուրքական հաշտության պայմանների և նախկին սահմաններն ընդունելու, պատերազմի ժամանակ տիրող սովոր թանկության մասին և այլն): Ուրեմն, «անիրազեկությունը» որոշ դեպքերում քող է ծառայել Տիգրանակերտցուն, մասնավորապես թուրք զավթիչների դեմ եղած դիմադրության հարցում: Ինչ-որ տեղ հեղինակին «զգուշություն» կարող էր ներշնչել երկյուղը թուրքական իշխանությունից, որի հապատակն էր նա: Զմոռանանք, սակայն, որ իգնատիոսը հոգնոր աշխարհի ներկայացուցիլ էր և, ինչպես վերևում տեսանք, կանգնած էր շարին լընդդիմանալու, անհնազանդությունը, «արքունի պողոտայից» շեղումը մերժելու դիրքում, որը և նրան կարող էր ստիպել լընել «շարյաց մեծագույնը ծնող» անհնազանդության ու ըմբոստության փաստերի մասին:

Որքան էլ այդպես, սակայն իգնատիոսին բնորոշող հատկանիշներից է հայրենասիրությունը, որի վկայությունը նրա խոր ընկալումն է «հայկական անճառ աղետի» ու ցավակից արձագանքը, որով տուրոված է ողջ «Համառոտությունը»: Դա է, որ հեղինակին զրկում է «զգուշավորությունից» և, անգամ, ովասն մեղաց մերոց» բանաձեռ մոռացնում, որա փոխարեն համակելով նրան վրիժառության զգացումով, որով իգնատիոսը գոհումակություն է հայտնում թուրքերի՝ «յուրյանց արքային մերժելու» (Սովորան Ահմատի գահընկեց արվելու) առթիվ, համարելով դա «պատիճ» իրենց կատարած ոճիրների ու ավերածությունների համար<sup>54</sup>: Եվ դա՝ չնայած ժամանակ առ ժամանակ «Համառոտությունում» երեվացող՝ թուրքական զորքի հաջողությունները ողջունող շեշտին, որը թերևս նաև «հարգանքի տուրք» էր հայոց մայր տաճարի նկատմամբ թուրքական իշխանությունների ցուցաբերած այն վերաբերմունքի համար, որի մասին այժմ կխոսենք:

Իգնատիոսի հաղորդած փաստերի մեջ առանձին հետաքրքրություն է ներկայացնում էջմիածնին տրված «ազատության» ֆերմանը: Խոսքը 1724 թ. Աբդուլլա փաշայի կողմից Երևանի գրավման ժամանակ թուրքական սովորան Ահմեդ Դ-ի հրովարտակի մասին է՝ էջմիածնին անվնաս թողնելու վերաբերյալ, որի շնորհիվ թուրք-պարսկական պատերազմի թոհուրում էջմիածնի վանքն իրոք մնաց անվնաս, և հոգմորականությունը (նաև շրջապատի բնակչության որոշ մասը) «զերծաւա»: Հայ հոգմորականությանը իրենց կողմը գրավելու և նրա միջոցով այս կամ այն

նպատակն իրագործելու համար հայ եկեղեցու նկատմամբ հովանավորությունը եղել է իրանի ու Թուրքիայի վարած ավանդական քաղաքական գիծը: Այս առումով էջմիածնի անվտանգության վերաբերյալ Թուրքիայի նման որոշումը պատճառաբանված է: Մյուս կողմից, այս փաստի հավաստիությունն է վկայում նրա հիշատակումը դեպքերի ականատես Արքահամ Երևանցու կողմից, ինչպես նաև «Ձամբռում»: Սակայն հիշյալ ֆերմանի արձակման վերաբերյալ մանրամասների շարադրման մեջ աղբյուրները միաձայն չեն: Արքահամ Երևանցին իրք ֆերմանի նախաձեռնող նշում է ոմն Սեղբոսի՝ «բարեպաշտ մեծատում ի հայոց ազգէ», պալատի պաշտոնյա, այր պատվավոր և առավել անվանի, քան Պոլսի բոլոր հայ մեծամեծները<sup>55</sup>: Ըստ «Ձամբռու», ֆերմանը ստացվել է Սիմեոն վարդապետի ջանքերով, որը էջմիածնից նվիրակ էր Պոլսում<sup>56</sup>: Իգնատիոս Տիգրանակերտցին հաղորդում է մեկ այլ անձնավորության՝ խոչա Թուխմանի մասին, «արագ լեզու յոյժ ճարտասան», որը «յոյժ ցաւեաց մեծի սուրբ տան էջմիածնի ազատութեան» և գլուխ բերեց հիշյալ հրովարտակը<sup>57</sup>: Սակայն Բ տարբերակում այդ անունը բացակայում է: Արդյո՞ք դիտվել է ոչ հավաստի և հանվել. թե՞ ժամանակի իրադրությունը կամ որևէ այլ նկատառում ստիպել է հեղինակին ձեռնպահ մնալ այդ անունը հիշատակելուց: Դրա փոխարեն այս տարբերակում շեշտվում է կաթողիկոս Աստվածատուր Համադանցին, որի հորդորը («գիր հայցական») դրդում ու ոգևորում է նրա բարեկամներին ու Թուրքական արքունիքին մոտ կանգնած հայագուններին՝ դիմելու սուլթանին այդ հրովարտակի խնդիրքով: Ըստ Երևուլյթին, կաթողիկոսի կողմից շրջաբերական է ուղարկված եղել Կոստանդնուպոլսի աղդեցիկ հայերին, որոնց նա կոչ էր անում.

«Ով իմ որդեակք ազնըականք  
 և հարազատք մեծի սուրբ տան,

Նըպաստ լերուք և օգնական  
 ի փրկութեան մեծի սուրբ տան»<sup>58</sup>:

Բացառված չէ նաև կաթողիկոսի հայցագիրը սուլթանին: Իրոք, նըման փաստաթղթի ձեռք բերումը չէր կարող իրականացվել առանց իր իսկ՝ կաթողիկոսի միջնորդության: Իգնատիոսի հաղորդումը խոչա Թուխմանի մասին, կարծում ենք, ևս արժանահավատ պետք է դիտել, քանի որ, նախ, Իգնատիոսը գրել է «տեղում», ուր ընթացել են բանակցությունները սուլթանի պալատի հետ, և նա հարցին իրազեկ կարող էր լինել: Բացի դրանից, վերոհիշյալ խոչա Թուխմանը՝ «եղբոր որդի Թու-

մաճանեան», ըստ ձեռագիր մի ժամանակագրության՝ քրոջ որդին էր անվանի խոչա թումաճանի. «Սա մեծ փաշաներու բանի կու խառնուէր, առևտուր կանէր, որ տաճիկ աղաներն չէին կարեր սորա արած գործն անել»<sup>59</sup>: Թեև այս հեղինակը աննպաստ է արտահայտվում խոչա թումաճանի քեռորդու մասին (դա կարող էր և ոմենալ սուբյեկտիվ հող), սակայն վերջինիս առկայությունը պոլսահայ իրականության մեջ փաստ է, և բացառված չէ, այս կամ այն շափով, նրա մասնակցությունը հիշյալ բանակցություններին: Աղրյուրների տարածայնությունն արդյունք է, թերևս, այն բանի, որ հեղինակներից յուրաքանչյուրը նշել է այն անունը, որի մասին առավել շափով իրազեկ է եղել Կարծում ենք, տարբեր աղբյուրներում նշված անձինք բոլորն էլ (գուցե նաև այլք) մասնակից են եղել բանակցություններին, և սուվթանական ֆերմանը արդյունք էր նրանց միացյալ ջանքերի: Պատահական չէ, որ այդ անձինք հասարակության տարբեր շերտերի ներկայացուցիչներ են՝ բարձր հոգևորականության, վաճառականության, պալատական պաշտոնեւթյան: Հայ իրականության առջև ծառացած խնդիրների լուծման ճանապարհին այս շերտերի համագործակցության վերաբերյալ հայտնի են բազմաթիվ փաստեր: Դնահատելի է, որ հգնատիոսը, հավաստելով սակավ աղրյուրներում արձանագրված այս տեղեկությունը, նաև ավելացնում է նոր մանրամասներ, հնարավորություն ընձեռելով առավել հանգամանորեն լուսաբանելու այդ իրադարձության հետ կապված հարցերը: Պատմական գրականության մեջ առայժմ շենք հանդիպել նշված ֆերմանի «պատճենին», որը շարադրում է հգնատիոսը<sup>60</sup>:

Սահմանափակվելով հգնատիոս Տիգրանակերտցու ռշամառության» մասին սույն տեղեկություններով և ստորև հրատարակելով բնագիրը, կարծում ենք, որ այն կհետաքրքրի ինչպես արևելագետներին, այնպես և հայագետներին, իբրև Ժ. առաջին կեսի՝ մի քանի ժողովուրդների հետ առնշվող պատմության հարցերի լուսաբանմանը նպաստող սկզբնայրյուր:

Հրատարակության համար հիմք ընդունեցինք Բ. տարբերակը, իսկ Ա.-ի տարընթերցվածները նշել ենք առղատակում: Բացել ենք հապավումներն ու գաղափարագրերը, թիվ արտահայտող տառերը փոխարինել ենք համապատասխան թիվ-բառով (ու—հազար): Բնագրին հարազատ մնալու միտուազ հիմնականում պահպանել ենք նրա ուղղագրությունը, թույլ տալով առանձին սրբագրություններ: Հրատարակության բնագիրը շծանրաբեռնելու նպատակով տարբերակների ուղղագրական տարբերությունները (փաշեք—փաշէք), ինչպես նաև հատուկ

անունների գանազան գրությունները (Թահմաղ—Դահմաղ) տարրն-թերցվածներում շենք նշել, իսկ տառասխալները ցույց ենք տվել շեղագրով (վատսուն). միայն առանձին դեպքերում ուղղել ենք և նշել ծանոթագրության մեջ: Պահպանել ենք շափի պահանջով դրված գաղտնավանկ ը-ն (գրրեալ): Չենք վերականգնել անհրաժեշտ յ կիսաձայնը, մասնավորապես Ա տարրերակում (փաշան), հայցական հոլովի զ-ն (ետև հրաման). մնացած դեպքերում բաց թողնված տառերը լրացրել ենք քառակուսի փակագծում (զրահայշատիւք): Պահպանել ենք ւ-ի և վ-ի բնագրում առկա գրությունը: Բառերի անջատ կամ միասին գրությունը (հատկապես շաղկապների և նախդիրների հետ) բնագրում անկանոն է և առանձին դեպքերում կարող է տեղիք տալ իմաստի աղավաղման (ինիսան—ի նիսան), ուստի այս հարցում բնագրին շենք հետեւել: Դա վերաբերում է նաև հատուկ անուններին (Տիգրան կերտեան—Տիգրանկերտեան): Հետեւելով հեղինակի՝ յուրաքանչյուր երկտող գլխատառով սկսելու սկզբունքին, շենք պահպանել, սակայն, անհարկի գլխատառերի (Արքայն) և, ընդհակառակը, հատուկ անունների փոքրատառով գրությունները. Վերջին դեպքում անվան գլխագիր սկզբնատառը տվել ենք շղագիր (Ասպահան): Անփոփոխ ենք թողել հատուկ անվան սկզբնատառի փոխարեն նախդրի գլխատառով գրության դեպքերը (Յամթայ): Պահպանել ենք նաև անձնանունների, տեղանունների և այլ անունների՝ հեղինակի նախընտրած գրությունը: Քանի որ Ա տարրերակը գուրկ է կետադրությունից, իսկ Բ-ում այն անբավարար է, բնագիրը հրատարակում ենք արդի կետադրությամբ, հրաժարվելով գրչագրի զանազան նշաններից (շեշտ, ապաթարց և այլն). դա վերաբերում է նաև և շաղկապն արտահայտող ւ-ին, որը տալիս ենք առանց ապաթարցի, բառին առընթեր (ւապրուստ), ինչպես Հայկազյան բառարանում: Բնագրի լուսանցքներում կամ այլուր կատարված լրացումները տվել ենք տեքստի համապատասխան տեղերում և նշել ծանոթագրության մեջ: Տեքստի աջ կողմում նշել ենք բնագրի էջերը (փակագծում՝ Ա տարրերակ), ձախ կողմում՝ տողակալումը:

- Համառոտութիւն պատմական և տաղաշափական  
ոտիւք վասն անցից հարուածոցն ի մերոյս  
ժամանակի ի վերայ յաշխարհին պարսից  
ի ձեռանէ ազգին Աղվանից<sup>1</sup>, մանաւանդ  
5 և Օսմանցւոց և տապալումն նոցունց  
յաշխարհի, ևս և խանգարումն նոցին  
թագաւորութեանց, դարձեալ և վերստին  
վերականգնումն և ի գօրանալն յազգին  
Պարսից ի վերայ օսմանցւոց, և կրկին  
10 նորոգութիւն նոցին թագաւորութեանց ի  
ձեռանէ նէտիր Պէկ կոչեցելույ, որ և  
մակաձայնեալ Դահմազ զուլի խան<sup>2</sup>, զոր և յետ յաղթանակին  
վերաձայնեալ անուամբ  
վէլի նամաթ<sup>3</sup> կոչեցաւ ի յերկիրն Արևելեան<sup>4</sup>:  
15 Արդ բազում թախանձանօք աշխատասիրեալ  
եղև ի յումեմնէ դանդաղկոտ և ամէնավրէպ,  
շնչին և ստորադաս իգնատիէ, ամենամեղ  
և ամենապարտ արեղայէ Տիգրանակերտեցւոյ:
- 20 Հազար հարիւր հայոց թվական<sup>5</sup>  
յեօթանասնիւ պատուաստական<sup>6</sup>  
Ղանտահարու՛ մեծ ոմն իշխան՝  
Մահմուտ կոչեալ Միգրէիզեան<sup>8</sup>

- 2—19 ոտիւք յաղագս Արևելեան և Պարսից յաշխարհի աւերման ի ձեռանէ օսմանցւոց, աշխատասիրեալ ի յումեմնէ իգնատիռս մեղսասիրսին արեղայէ Տիգրանակերտեցւոյ, որում աէր ողորմեսցի<sup>9</sup>:
- 21 վատսուն և ութ կը ըսրդական<sup>10</sup>,
- 22 մեծ շիք, ոմըն,
- 23 անուն վիս. կոչեալ, Միր Վէյիսեան:

Յարեաւ յերկիրըն Պարսկաստան  
 25 զօրօք բազմօք յաճախական,  
 Յերկիրն արար ըստուերական  
 ւարքայն նոցին ի բրոնութեան.  
 Փարթամազուն և հին արքայն,  
 որ էր նա Կիւռոսին փոխան,  
 (93r)  
 30 Զաշըս նորին միլ<sup>11</sup> ած քարշման  
 և կուրացւոյց եեդ<sup>12</sup> միոյ տան:  
 Էանց գահոյս արքունական՝  
 թախթ անուանեալ մեծն Ասպահան<sup>13</sup>  
 Եւ ըգնուղայ ընթերական  
 35 տիրեաց նոքօք շուրջ ըզսահման:  
 Ծուղայ քաղաք և Ասպահան  
 զնոսին պատրեաց թալակ<sup>14</sup> դրական.  
 «Տէր ձեզ ետ ինձ ժառանգութեան,  
 բայց յերկիրս չէ խաղաղութեան.  
 40 Առաքեցից զձեզ մեր սահման՝  
 ի Ղանտահար բընակութեան.  
 Անդ լինիշիք խաղաղութեան,  
 որպէս յերկիր ձեզ սեփհական»:  
 Զնոյնք հարկատու արար վախճան,  
 45 այլ և բազումք ի սուր ածման:  
 Քրիստոնէից ազգս ամենայն  
 շար նեղութեամբ նըւաղեցան.  
 Ըստ անացելոյ բանին Դաւթեան,  
 որ ի կանոնըն խոստովան,  
 50 Կապեալք էին յաղքատութեան,

25 անթուական Փխ. յաճախական:

28 արքայն:

37 զնոքին խափեաց պատրողական:

45 ևս Փխ. այլ:

47 նուաղեցան:

49—61 նուաղեցան նոքա տանջման,

կըշտաց, շարեաց ի նեղութեան

յերկաթակապ աղքատացան:

որպէս յերկաթս հաստատովթեան.  
Արմինիայի (Հայաստան, Վիրք, Աղվանիք, Շիրվան, Դարրանդ) ուստիկանների ցուցակը կազմել են Հ. Պետերմանը, Մ. Ղազարյանը, Ժ. Հոռանը և Ռ. Ֆասմերը, սակայն Հ. Նալբանդյանը, նոր տվյալների հիման վրա, առանձին հոդվածով ներկայացրեց<sup>17</sup> մի նոր ցուցակ, որն սկսվում է 693 թվականից, նկատի ունենալով, որ այդ տարում Աբր ալ-Մալիք խալիֆան իր եղբորը՝ Մուհամմադ իրն Մրուանին նշանակել էր Արմինիայի, Ատրպատականի և Զաղիբրայի փոխարքա ու այսպիսով իրավականորեն Հայաստանը արարական խալիֆայության մասը կազմող երկիր էր համարվում:

Հ. Նալբանդյանի երկար տարիների պատմական և բանասիրական անխոնց պրատումների արդասիքն էր «Արարական աղբյուրները Հայաստանի և Հարեան երկրների մասին» հատորը, որը լուսատեսավ հետմահու՝ 1965-ին<sup>18</sup>: Աշխատությունը պարունակում է ժողովարի արար հայտնի աշխարհագրագետ Յակուտ ալ-Համավիի «Երկրների բառարան» (Մուշամ ալ-բուլղան) կոչված աշխարհագրական բառարանից, Ժողովարի պատմիչ Արու-լ-Ֆիդայի պատմությունից և Ժողովարի իրն Շադդադի Սալահ: ալ-Դինի կենսագրությունից քաղվածարար կատարված թարգմանություններ Հայաստանի և Հայերի մասին: Սրանք կարեռ աղբյուրներ են մասնավորապես ԺՈ—Ժողովարի բոն Հայաստանի և կիլիկյան Հայաստանի պատմության ուսումնասիրման համար: Սակայն հատկապես արժեքավոր են Հ. Նալբանդյանի ծանոթագրությունները, որոնք դիտական մեծ բարեխղճությամբ են, կատարված: Ամեն մի անձնանուն, տեղանուն կամ երեսով ծանոթագրելիս նա գուգահեռներ է բերում թե՛ Հայ, թե՛ արար կամ այլ օստար աղբյուրներից, լրացնելով և իմաստավորելով բնագրի հեղինակի տեղեկությունները: Այս աշխատությունը կարող է աղբյուրագիտական աշխատանքների համար օրինակ ծառայել որպես դասական նմուշ:

Հ. Նալբանդյանից առաջ արարական աղբյուրներից թարգմանություններ են կատարել Ա. Մորդտմանը, Ա. Հովհաննեսյանը, Ն. Կարսուլովը, Բ. Խալաթյանցը և ուրիշներ, սակայն դրանք փոքրարժեք գործեր են համեմատած Հ. Նալբանդյանի աշխատանքի հետ, որը հիմք դրեց Հայաստանի և Հայերի մասին արարական աղբյուրների ուսումնասիրման մի նոր շրջանի<sup>19</sup>:

1 Հ. Նալբանդյան (Նալպանայան), Պատր ալ-ճամալի, Արև, Կահիրե, 27, 28 մայիս, 1931:

2 Խոյենի, Հայեր, որոնք կառավարած են Եգիպտոսը, Արև, Կահիրե, 2, 4 սեպտեմբեր, 1931:

3 Ն. Աղազարմ, Նոթեր Եգիպտոսի հայ գաղութի վրա, Կահիրե, 1911, էջ 23—24:

4 Գ. Փյուսլյալյան, «Հայեր, որոնք կառավարած են Եգիպտոսը» հոդվածաշարքին առթիվ, Արև, Կահիրե, 24 սեպտեմբեր, 1931:

5 Հ. Նալբանդյան, Մուրատ պեյլ մասին, Արև, Կահիրե, 2 հոկտեմբեր, 1931: Մուրատ բեյը եղել է Եգիպտոսի մամլուքների նշանավոր զեկավարներից, կովկել է Նապոլեոն Բոնապարտի դեմ, պատրաստվել հարձակվելու ֆրանսիացիների կողմէց գրավված Կահիրեի վրա, սակայն 1801-ին ժամանակաց մահացել է: Նրա հայ լինելու մասին կասկածում է նաև Ա. Ալպոյանյանը («ԱՄՆ Եգիպտոսի հահանգը և հայերը», Կահիրե, 1960, էջ 56):

6 Հ. Նալբանդյան, Հայեր, որոնք կառավարած են Եգիպտոսը, Արև, Կահիրե, 9 սեպտեմբեր, 1931:

7 Խոյենի, Ճիռվաննի Պողարի, հայաղգի անձնական բժիշկ Մուհամմատ Ալիի, Արև, Կահիրե, 1 հոկտեմբեր, 1932:

8 Վ. Թօրգոմյան, Մտեփան բժիշկ Գևորգյան (Սարգիս բժիշկ Գևորգյան) կամ Տոբքոր Ճորճիանի, Հանդես Ամսօրյա, 12, 1909, էջ 354—355:

9 Հ. Նալբանդյան, Հայ քաղաքական մտքի ուղղությունը երեկ և այսօր, Կահիրե, 1933:

10 Խոյենի, Աղա Կարապետ Գալուստ, Արմավենի տարեգիրք, Կահիրե, 1937, էջ 5—10:

11 Խոյենի, Աղեքսանդրիո Պողոսյան ազգային վարժարանը, Արմավենի տարեգիրք, Կահիրե, 1937, էջ 228—235:

12 Խոյենի, Մեր լնզում, Հայերեն լեզվի դասընթաց, Բ գիրք, Կահիրե, 1939:

13 Սերվանես, Դոն Քիշոռ Սանցեցի, թարգմանեց Հ. Նալբանդյան, Ալեքսանդրիա, 1930 (անի հետաքրքիր առաջարան):

14 Եգիպտոսում են Հիմնադրվել սփյուռքահայության խոշորագույն մշակութային կազմակերպությունները՝ Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (1906) և Համագոյայինը (1928): Քսանական-քառասնական թվականներին Եգիպտոսում էին գործում հայտնի մտավորականներ Ղափն Շանթը, Նիկոլ Աղբալյանը, Երվանդ Օտյանը, Վահան Քեքելյանը, դերասաններ Սիրանուշը, Օ. Գալֆայանը, պատմաբաններ Ա. Ալպոյանյանը, Գ. Մըրյանը, ծաղրանկարիչ Ա. Սարուխանը, նկարիչ Օ. Ավետիսյանը և ուրիշներ:

15 A. Խալբանդյան, Административная и налоговая политика арабов в Армении (с начала VIII в. до середины IX в.). Автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук, Ереван, 1950.

16 Հ. Նալբանդյան, Արարեների հարկային քաղաքականությունը Հայաստանում, Տեղեկագիր (Հարկ. գիտ.), 1954, № 12, էջ 73—84:

17 Նույնի, Արաբացի ոստիկանները Հայաստանում, Տեղեկագիր (հսրկ. գիտ.), 1956, № 8, էջ 105—124:

18 Արարական աղբյուրները Հայաստանի և Հարևան երկրների մասին, Յակուտ ալ-Համալի, Արու-Լ-Ֆիդա, Իրն Շաղդադ, կազմեց Հ. Թ. Նալբանդյան, Երևան, 1965:

19 Հ. Նալբանդյանն ուսումնասիրել է նաև Հայ-եթովպական առնշությունները, Տե՛ս «Հայերը և եթովպիան», Արև, 15—25 փետրվար, Կահիրե, 1935:

## Ա. ՄՈՒՇԵՂՅԱՆ

### ԴՐԱՄԱԳԵՏ ՊԵՐՔ ՍԱՊՊԱՂՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Անցյալ դարում ձևավորված դրամագիտությունը դարձել է պատմական գիտությունների զարգացման կարևորագույն աղբյուրներից մեկը, նպաստելով ժամանակագրության, շափագիտության, հնագրության, ապրանքադրամային հարաբերությունների, ներքին և արտաքին առևտությունների և պատմական բնույթի այլ հարցերի ուսումնասիրությանը:

Հայաստանի դրամագիտական նյութերի քննությանը անդրադարձել են Եվրոպայի հայագիտության կենտրոններում, ընդ որում առավելապես Վենետիկի ու Վիեննայի Միսիթարյանների մոտ: Հետազոտությունները հայ դրամագիտության հարցերով Հայաստանից գուրս հիմա էլ շարունակվում են: Վերչին երեք տասնամյակների ընթացքում լուրջ աշխատանքներ կատարվեցին Մերձավոր արևելքի հայկական գաղղթավայրերում, մասնավորապես Լիքանանում և Սիրիայում: Դրանց մեջ իրենց ուրույն տեղն ունեն Պերճ Սապպաղյանի հոգլածները նվիրված ինչպես անտիկ՝ հայ-հռոմեական, այնպես էլ միջնադարի՝ հայարարական և հայ-սելջուկյան ժամանակաշրջանների դրամների քըն-նությանը:

Պերճ Սապպաղյանը ծնվել է 1918 թվականին Սիրիայի Հալեպ քաղաքում, նախնական կրթությունը ստացել է տեղի Հայկաղյան վարժարանում, միջնակարգը՝ ֆրանսիական դպրոցներում: Այնուհետև ավարտելով լոնգոնի համալսարանի իրավագիտական ճյուղը դասավանդել է Հալեպի Հայկաղյան վարժարանում, աշխատակցել ռեֆրատ» թերթին, եռանդուն մասնակցություն ունեցել Հայկական Բարեգործական ընդհանուր միության մշակութային գործունեությանը՝ դասախությունների կարգացել հայագիտական նյութերի շուրջը:

Դեռևս երիտասարդական տարիներից Պ. Սապպաղյանը հետաքրքրվել է պատմության հին շրջանով, հավաքել է հին ու միջնադարյան հայկական ու արարատառ դրամներ և ստեղծել իր սեփական դրա-

մագիստրական հավաքածուն: Տիրապետելով արաբերեն և եվրոպական լեզուներին, հետեւելով մասնագիտական գրականությանը, խորամուխ լինելով հարազատ ժողովրդի պատմության սկզբնաղբյուրների մեջ, Պ. Սապագաղլյանը պարզաբանեց մի շարք հարցեր, որոնք երկար ժամանակ մնացել էին վիճելի և անորոշ:

Նա իր առաջին գործում առավել հավաստի տվյալներ ներկայացրեց անտիկ աշխարհի խոշորագույն ճակատամարտերից մեկի՝ մ.թ.ա. 69 թ. Հոկտեմբերի 6-ի Հայաստանի մայրաքաղաք Տիգրանակերտի գոտիմարտին մասնակցած Հոռմեական զորքերի թվաքանակի մասին, որ այնքան «անհեթեթ համեմատություններով ներկայացված են Հոռմին համակիր աղբւուրներու կողմէ», ինչպես զրում է հեղինակը: Հիմք ընդունելով Պլուտարքոսի և Ապպիանոսի հաղորդումները՝ Տիգրանակերտում Հոռմեացիների բռնագրաված 8000 տաղանդ, այսինքն 51, 114, 115 դրախմ գումարից ամեն մի լեռնոնականի 800 ատափկյան քաշի արծաթ դրամ (միավորի միջին կշիռը՝ 4,10 գ) բաժին հանելու մասին, Պ. Սապագաղլյանը հիմնավորեց, որ իրականում Լուկուլլոսի բանակի կազմում եղել է ոչ թի 15,000 ալլ, 63,892 զինվոր: Դա մի փայլուն ապացուց է այն կարևոր դերի, որ դրամագիտությունը, ի դեմս Պ. Սապագաղլյանի, ունեցավ ընդհանուր պատմության մեջ տեղ գտած այնքան վիճելի հարցերից գեթ մեկի պարզաբանման համար:

Պերճ Սապագաղլյանի երկրորդ գործը վերաբերում է Կիլիկիայի Հայոց թագավորությանը: Առաջին անգամ պատմաբանների ուշադրությանը ներկայացվեց Գովիտոն Լուսինյան թագավորի (1342—1344) «Կիտայ Թագաւոր Հայոց» արձանագրությունը: Քննության առարկան թագվորի կոչվող հազվագյուտ դրամն է, արծաթե դրամ, մոտ երկու գրամ քաշով: Ի տարբերություն հայոց այդ գահակալի բուն անվան՝ Կիտան, Կովտան կամ ընդհանրացված Կի ձեի, դրամը վկայում է, որ Կիլիկիան Հայաստանում գործածվել է նաև Խիտ, որից և սեռական հոլովի Կիտայ ձեր: Հայոց անձնանունների համար դրամագիտական նյութերից քաղված այս վկայությունը ուշագրավ նորույթ է:

Առավել բովանդակալից Պ. Սապագաղլյանը հանդես եկավ հայարաբական առնշություններին վերաբերող դրամագիտական նյութերի քննությամբ, ոգեշնչված այն վիճակից որ, իր խոսքերով ասած, «Հայկական դրամագիտությունը, վերջին քսան տարիներու ընթացքին բոլորեց զարթոնքի նոր շրջան մը և՛ հայրենիքին մեջ և՛ արտասահմանին»: Հայկական ՍՍՀ-ի տարածքում հայտնաբերված հին ու միջնադարյան դրամներն ու դրամական գանձերը մասնագիտական քննության են-

թարկվեցին և հրատարակվեցին Հայաստանում թողարկված արաբական դրամների ժամանակագրական տախտակները, ինչպես նաև դրամական շրջանառության տվյալներով նորովի լուսաբանվեցին երկրի տնտեսական կապերի հիմնական ուղղությունները խալիքայության դարաշրջանում։ Ի լրում հայրենիքում կատարված հետազոտությունների, Պ. Սապուղյանը ներկայացրեց տարբեր տարեթվերով Դվին, Արմինիա, Առան, Պարտավ, Մասդան-Բազունայս տեղանուններով 26 դրամներ, որոնք այժմ պահպան են Բաղդադի, Կոստանդնուպոլիսի, Կահիրեի, Դամասկոսի և այլ թանգարաններում ու հանդես եկավ վաղ արաբական դրամների թողարկման գլխավոր կենտրոնների, մասնավորապես Դամասկոսի և Վասիթի, ինչպես նաև Արմինիայի վերաբերյալ դիտողություններով։ Մեկ տարի անց՝ 1975 թ. Սապուղյանը հանդես եկավ ուշագրավ հաղորդումով առաջին արաբական արծաթե դրամի մասին, որի վրա արձանագրված էր Հայաստանի (Արմինիա) անունը։ Այդ հետաքրքրիր վկայությունը տեղիի տվյալ խորհրդածությունների և կմնա անհերքելի քանի դեռ չեն գտնվել նոր փաստեր։

Հայ արաբական հարաբերությունների վերաբերյալ 1981 թ. լույս տեսավ «Թողարկված է Արմինիայում» արաբերեն արձանագրությամբ երկու պղնձե դրամների (ֆիլսեր) մասին Պերճ Սապուղյանի վերջին հոդվածը։ Դրամագետը ցույց տվեց, որ տեղական կյանքի պատմության ուսումնասիրության համար պղնձե դրամներն առաջնակարգ նշանակություն ունեն։ Դրվագված լինելով ներքին շուկայի, տվյալ դեպքում Հայաստանի կարիքների համար, պղնձե դրամները, իրենց վրա ունեցած գործություններով, տեղեկություններ են հաղորդում նախ այդ ժամանակ իշխած ամիրաների (ոստիկանների) մասին։ Այդ ամիրաները, իրենց գորքերով և պաշտոնյաներով, ապրում էին վաճառաշահ Դվինում, որի քաղաքային շուկայի համար, տեղական ամիրաների հսկողությամբ, նրանց անունների հիշատակությամբ, թողարկվում էին հիշյալ ֆիլսեր։ Բրիտանական թանգարանում պահվող Հայաստանի (Արմինիա) արաբ ամիրա Խոհակ իրն Մուալիմի անվամբ (745—750) անտարեթիվ պղնձե դրամի և Աղվանքում (Առան) հիշրայի 153 տարեթվով (այսինքն 770) Արմինիայի փոխարքա ալ-Մահդիի հրամանով թողարկված պղնձե դրամի արաբերեն արձանագրությունների, դրամների կնիքները, փորագրող վարպետների սխալների ու վրիհպումների մասին իր մտքերն է հայտնել Պ. Սապուղյանը, միաժամանակ ցույց տալով «անոնց թանկագին նպաստը մեր պատմագրության համար»։

Պ. Սապուղյանը փորձեց ցրել այն շփոթը, որ գոյություն ուներ

Արտաշեսյան տոհմի վերջին գահակալներ Տիգրան-էրատո թագավոր-թագուհու արյունակցական կապի վերաբերյալ: Հիմք ընդունելով դրամագիտական նոր տվյալները, մասնավորապես մ.թ.ա. Ա. դ. 8—7 թվականներին վերագրված դրամները, նա ցուց տվեց, որ, դրանց թողարկումից մոտ մեկ դար անց, պատմիշ Տակիտոսի հաղորդումը հիշյալ արքայական անձերի քույր-եղբայր և միաժամանակ ամուսիններ լինելու մասին ենթակա է վերանայման: Նա ենում էր այն ընդհանուր տվյալներից, որ Արտաշեսյանները ունեին հելլենիստական բարքեր, որ նրանց համար խորթ էր քույր-եղբայր արյունակցական ամուսնությունը, որ մատենագրության մեջ Տակիտոսը վիճելի մատենագիր է, իսկ նրանից բացի ուրիշ ակնարկություն չկա այդ առթիվ և որ միշտ արքայական ամուսնությունները հետապնդել են նախ և առաջ քաղաքական նպատակներ, հետեւքը Տիգրան Դ-ը պետք է ձգտեր ամուսնանալ ոչ թե իր քրոջ, այլ ավելի շուտ դրացի երկրներից մեկում իշխող արքայական կամ Հայաստանի ազդեցիկ նախարարական տներից մեկի դստեր հետ, որով նոր հենարան կստեղծեր իր տիրակալության դիրքերն ամրապնդելու նպատակով: Խորանալով այսպիսի նուրբ հարցերի մեջ նա փորձում էր գտնել առավել հավանական պատասխաններ իրեն հետաքրքրող հարցերի վերաբերյալ Զարգացնելով քննությունը, Պ. Սապաղյանը նկատեց նաև, որ եթե էրատոն արտաշեսյան ծագում ունինար, ապա դրամի վրա պետք է պատկերվեր իր հարազատ տոհմական թագով և կոչվեր թագուհի: Հիրավի, թանգարանում պահվող Տիգրան-էրատո հազվագյուտ դրամների վրա էրատոն պատկերված է առանց թագի, հար և նման ժամանակի հոռմեական պատրիկուլու: Սրանք, անշուշտ, պատահականություններ չեն, որ նկատել է դրամագետը և դրանով իսկ հանգել այն եղբակացության, որ հարկ է առաջիկայում մանրակրկիտ ուսումնասիրել Տիգրան-էրատո արյունակցական կապերի վարկածը: Ուշագրավ է, որ Պ. Սապաղյանը, հիմնվելով պատմական փաստերի վրա, էրատոյի պատկերի շուրջը դրամի վրա դրոշմված հոնարեն գրությունը թարգմանել է էրատո Արքայակայք՝ ելնելով հելլենիստական երկրներում, մասնավորապես Սելևկյանների մոտ ընդունված թագուհիներին մեծարելու տիտղոսաձևից:

Գերճ Սապաղյանի վերջին գործերից մեկը նվիրված է Կիլիկիայի Հայոց թագավոր Հեթում Ա-ի գահակալության տարիներին (1226—1270) թողարկված դրամների ուսումնասիրությանը: Քննելով Հեթումյան հարստության առաջացման պայմանները, Պ. Սապաղյանը շեշտում է այն կարեռ գերը, որ ոմեր Կիլիկյան Հայաստանը Հեռավոր արևել-

քից դեպի Եվրոպա տարվող ապրանքային կարավանների համար։ Տարանցիկ առևտորից ստացվող եկամուտները նպաստում էին ուժեղացնելու երկրի պաշտպանումակությունը։ Հայոց թագավորությունը ձրդտում էր ամրապնդել իր դիրքերը տարանցիկ առևտորում։ Դեռևս Ա-ի ժամանակներից պայմանագրեր էին կնքվել օտարերկրյա վաճառաշահ քաղաքների հետ։ Կիլիկյան Հայոց թագավորության արծաթե դրամներն իրենց կշռային չափով (2,60 գ) և արծաթի մաքրությամբ (90—92 տոկոս) բարձր վարկ ունեին միջադարյին շուկայում։ Օտար վաճառականները, հավանաբար ոչ առանց պատճառի, նախընտրում էին ապրանքների փոխանակումը կատարել բարձրորակ արծաթե դրամներով, որպիսիք էին Զապել-Հեթումի պատկերներով Կիլիկիայի Հայոց պետության դրամները։ Այդ դրամները թողարկվում էին Զապել-Հեթումի ամուսնության և համատեղ գահակալության տարիներից։ Միջադարյին առևտորում լայն ընդունելություն գտած այդ դրամները ճանաչված էին ամենուրեք և այդ էր պատճառը, որ նրանց թողարկումը շարունակվեց նաև Զապելի մահից (1252) հետո և հարատեսց մինչև Հեթումի թագավորության վերջին օրերը (1270)։ Դրամագետի ուշադրությունից չի վրիպել այն իրողությունը, որ Հեթում Ա-ի թագավորության տարիներին Մերձավոր արևելքի երրեմնի գլխավոր քրիստոնյա պետությունը՝ Բյուզանդիան գրեթե դադարել էր արծաթե դրամներ թողարկելուց։ Փոքր Ասիայում արծաթե դրամների թողարկման մենաշնորհը Հեթումի գլխավորած Հայոց թագավորությանն էր պատկանում։

Այդ պայմաններում փոխել շրջանառության մեջ լայնորեն ճանաչված և ընդունված դրամների պատկերատիպը՝ ձեռնտու չէր։ Ինչ վերաբերում էր Կիլիկիայում Հեթում Ա. թագավորի օրոք թողարկված արծաթե դրամներին, որոնց վրա մի կողմից պատկերված է Հայոց միապետը ձիու վրա, իսկ մյուս կողմից՝ արաբերեն գրությամբ, բայց առանց որևէ պատկերի, գրված են Ծովմի սեղուկյան սովորական Ալա աղ-Դին Քայկուրաղի (1219—1236) և Ղիյաս աղ-Դին Քայխուսարապի (1236—1245) անունները, ապա դրանք Պ. Սապպաղյանը գնահատում է որպես բացափկ դրամներ, որոնց տարածումը Խկոնիայի սովորական շուկաներում նպատակ ուներ ընդլայնելու հայկական առևտորի ոլորտը։

Տարարախտաբար, Պերճ Սապպաղյանը շատ կարճ կյանք ունեցավ դրամագիտության ասպարեզում։ Այդուհանդերձ, նրա հրատարակած բոլոր մեղ հայտնի գործերը վերաբերում են հայ ժողովրդի պատ-

մության դրամագիտական կարևոր հարցերին: 1982 թ. նա կնքեց իր մահկանացում:

Հայ դրամագիտությունը կորցրեց իր նվիրյալներից մեկին, որի շանքերն ուղղված էին առավել գործոն դարգացնելու դրամագիտական միտքը Հայոց պատմության անորոշ հարցերը լուսաբանելու ուղղությամբ: Առաջիկայում, երբ քննության ենթարկվի Պ. Սապաղյանի հին և միջնադարյան դրամների անձնական հավաքածուն, բացառված չէ, որ գտնվեն կարևոր և նոր վկայություններ նրա ստեղծագործական մտահղացումների մեջ նշված այլ հարցերի վերաբերյալ:

Պերճ Սապաղյանը Սիրիայի Հնագիտական ընկերակցության վարչության անդամ էր: Նրա մահվան առթիվ Սիրիայի Հնագիտական ընկերակցության նախագահ Ս. Զ. ալ-Քավաքիրին «Ճամահիր» թերթում գրել է: «Կորցրեցինք մի գիտնականի, որը զարդարում էր Սիրիայի Հնագիտական ընկերակցությունը և մենք հպարտանում էինք նրանով, քանզի մի անձնավորություն էր, օժտված գիտնականի լավագույն հատկանիշներով»:

Պ. Սապաղյանի գիտական հարուստ գրադարանը (հազարից ավելի հատորներով), որը պարունակում է դրամագիտական և արևելագիտական շատ արժեքավոր ուսումնասիրություններ, նրա մահվանից հետո, որպես նվիրատվություն, փոխադրվեց Հայաստանի գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի գրադարան:

#### ՍԱՆՈՒԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Պ. Սապաղյան, Լուկովլոսի գինըորներուն թիվը Տիգրանակերտի ճակատամարտին (ըստ դրամագիտական տվյալներու), Հայկաշան հայագիտական հանդես, Հ. Պեյրութ, 1973, էջ 97—102:

2 Նույնի, Կիլիկիոս Կի Լիւզինյան (Գյիտոն Լուսինյան) թագավորներն ցարդ ՀՀրատարակված արծաթ-թագվորին մը, Զարթոնք օրաթերթ, Պեյրութ, 29 մայիս 1973:

3 Նույնի, Հայ-արաբական դրամագիտության մեկ քանի հարցերու շուրջը, Հայկաղյան հայագիտական հանդես, Հ. Ծ, Պեյրութ, 1974, էջ 161—181:

4 Նույնի, Արարական կայսրության առաջին արծաթ տիրճեմը կը կրե Հայաստան անունը, Գեղարդ, Սուրբիանայ տարեգիրք, Հալեպ, 1975, էջ 1—8:

5 Նույնի, Դրամագիտական և պատմագիտական առնշություններ արաբական շրջանին, նոր ապրիլ պարբերագիրք, Հալեպ, 1980, Բ տարի 1 (4), էջ 66—71:

6 Նույնի, Տիգրան Դ-ի և նրատոյի արյունակցական կապերու հարցին շուրջը, Հայկաղյան հայագիտական հանդես, Հ. Է, Պեյրութ, 1979, էջ 121—130:

7 Նույնի, Հեթում Ա-ի Հեթում-Զապել և երկեղպյան դրամներու մասին, Հայկաղյան հայագիտական հանդես, Հ. Է, Պեյրութ, 1980, էջ 233—248: Վերշերս լույս տեսավ, «Պ. Սապաղյան, Դրամագիտական հարցեր, Պեյրութ, 1986» ժողովածում:

ԱՐԵՎԵԼԱԳԵՏ ՄԱՐԻՈՒՍ ԿԱՆԱՐ

Ֆրանսիացի Արարագետ-Հայագետների շարքում (Մեն-Մարտեն, Ժ. Լորան) իր պատվավոր տեղն ունի Մ. Կանարը, որը բեղուն գործունելիություն է ունեցել թե արարագիտության, թե հայագիտության ասպարեզներում:

Մ. Կանարը ծնվել է 1888 թվականին Կենտրոնական Ֆրանսիայում: Իր համալսարանական ուսումն ավարտելուց հետո 1927 թվականին հրավիրվել է Ալժիրի ֆրանսիական համալսարանը, որը դասավանդելով մինչև 1961 թվականը վերադարձել է Ֆրանսիա: Մահացել է 1982 թվականի սեպտեմբերի 6-ին Փարիզում: Մ. Կանարը տիրապետել է, բացի եվրոպական լեզուներից, նաև հոնարենին, արաբերենին, ուսւերենին ու հայերենին<sup>1</sup>:

Հեռանալով կյանքից 94-ամյա տարիքում, նա թողել է գիտական բազմակողմանի և հարուստ ժառանգություն<sup>2</sup>: Նրա հետաքրքրության հիմնական ասպարեզը եղել են Բյուզանդիայի և արարական երկրների փոխհարաբերությունները, ընդ որում, դա կարելի է բաժանել երկու խմբի՝ Բյուզանդիայի հարաբերությունների արևելյան (Օմայան, Աբրասյան) խալիֆայության հետ և հարաբերություններ միջնադարյան Եգիպտոսի (Փաթիմյան, մամլուքյան) հետ: Ուսումնասիրություններին զուգահեռ նա արաբերենից բազմաթիվ բնագրերի թարգմանություններ է հրատարակել: Ահա այս առնչությունների ոլորտում է, որ նա բազում առիթներով ուսումնասիրել է հայ ժողովրդի պատմության տարբեր հարցեր: Նա կատարել է նաև նախկինում հրատարակված արժեքավոր մենագրությունների նոր նյութերով և արաբերեն թարգմանություններով ճոխացված վերահրատարակման շատ շնորհակալ աշխատանքը:

Իր առաջին հոդվածը, որը լույս է տեսել 1926 թվականին, նվիրված է արաբ-բյուզանդական պատերազմներին՝ կոստանդնուպոլսի դեմ արաբների կատարած արշավանքներին<sup>3</sup>: Օմայանների օրոք արաբ-

ները կրեք անգամ գրոհեցին (669, 674—680, 716—717) կայսրության մայրաքաղաքը, նույնիսկ պաշտրեցին և մեծ նեղություն պատճառեցին:

Եվ այսպես, նա հրատարակել է ուսումնասիրությունների մի ամբողջ շարք<sup>4</sup> նվիրված արարա-բյուզանդական քաղաքական բազմակողմանի հարաբերություններին, ապա այդ հարաբերություններին նվիրված արարական աղբյուրներին:

Այսպիս, Բյուզանդիայի և արաբների քաղաքական ու հասարակական հարաբերություններին նվիրված հոդվածում<sup>5</sup> նա նկարագրում է երկու պետությունների միջև դեսպանների փոխադարձ այցելությունների մանրամասնությունները, սահմանի երկու կողմերի բնակչության փոխհարաբերությունները, առևտրականների երթուղարձը և այլն. Մի այլ հոդվածում ուսումնասիրվում է Վարդ Սկլերոսին վերաբերող երկու նամակ<sup>6</sup>, որ նա հայտնաբերել էր արաբ մատենագիր Կալկաշանդիի (ժԴ—ժԸ դարեր) բազմահատոր աշխատության էջերում: Դրանք վերաբերում են արաբների մոտ ապաստանած բյուզանդացի հայտնի գործչի՝ Բաղդադում իշխող պարսիկ Բուի տիրականների հետ ունեցած հարաբերություններին:

Կանարը հատուկ ուսումնասիրել է արաբների և Բյուզանդիայի պատերազմները Ժ դարում և ընդհանրապես Համդանյանների պատմությունը, ընդ որում, նախ հրատարակել է այդ նյութի մասին եղած արարական աղբյուրներից քաղված տեղեկությունների մի արժեքավոր ժողովածու, ընդգրկելով բազում արաբ պատմիչների (իրն Զաֆիր, Զահարի, Ֆարիկի և այլն), ապա գրել է հոդված՝ Համդանյանների (Սայֆ ալ-Դառուլա) Հայաստան կատարած արշավանքների մասին<sup>7</sup> և, վերջապես, մի ծավալում մենագրություն՝ Ասորիկի ու Զաղիրայի Համդանյանների պատմությունը<sup>8</sup>: Միաժամանակ ուսումնասիրել է միայն արարական խալիֆայությանն առնվզող հարցեր<sup>9</sup>:

Արարա-բյուզանդական պատերազմներին առնվզող պատմական աղբյուրների ուսումնասիրմանն առընթեր հեղինակը պրապտումներ է կատարել նաև արարական հայտնի ժողովրդական վեպի («Զատ ալ-Հիմմա» նախանձահուզ հերոսուհին) շուրջը<sup>10</sup>, որի նյութը հիմնականում պտտվում է արարա-բյուզանդական գոտեմարտի ոլորտում, սկսած Օմայանների իշխանության գլուխ անցնելուց մինչև Վասիկ արքայան խալիֆայի օրերը (842—847): Ըստ Մ. Կանարի վեպը երկու մասից է բաղկացած. նախ Օմայանների օրոք հանդես են գալիս պատմական աղբյուրներում հայտնի ուազմիկ Բաթթալը և զորահրամանաւ-

տար Մասլամա իրն Արդ ալ-Մալիքը, ապա՝ Հերոսուհի Զատ ալ-Հիմման (կամ Զու-լ-Հիմման) և որդին՝ Արդ ալ-Վահարը. Վեպը պետք է ձևավորված լիներ մոտավորապես ԺԲ դարսում<sup>11</sup>:

Թաղմարովանդակ են նաև Բյուզանդիայի և Եգիպտոսի փոխարաբերություններին նվիրված Հոգվածները: Դրանք վերաբերում են Եգիպտոսի պատմության Ժ դարի դեպքերին և հատկապես Փաթիմյանների ու մամլուքների ժամանակաշրջանին:

Հետաքրքրական է Եգիպտոսի տիրակալ Մուհամմադ Թուղջի (որը հայտնի է Իսչիդ տիտղոսով) Բյուզանդիայի Ռոմանոս Լեկապենուին ուղղված նամակի վերլուծումը Ս. Կանարի կողմից<sup>12</sup>: Եգիպտոսը և Բյուզանդիան, լինելով Սիրիայի Համդանյանների ընդհանուր թշնամինները, բարեկամական հարաբերություններ ունեին միմյանց հետ: Այս նամակը, որը պատասխանն է Ռոմանոսի հղած նամակի, տողորված է զերմ տրամադրություններով: Իսչիդը նշում է, որ իր համար պատիվ է, որ հզոր Ռուսի (Բյուզանդիայի) տիրակալը իրեն դիմում է այնպես, ինչպես Բաղդադի խալիֆային:

Ս. Կանարը քննության է առնելու մամլուքյան Եգիպտոսի և Բյուզանդիայի միջև կնքված դաշնագրեր<sup>13</sup>, նամակներ<sup>14</sup> (սուլթան Մալիք Նասիրի նամակը՝ թուղթը Հովհան Զ Կանտակուզենին), ինչպես նաև ֆաթիմյան և բյուզանդական արքունիքների արարողությունները<sup>15</sup>, Երուսաղեմում Ս. Հարության տաճարը Ֆաթիմյան ալ-Հաքիմ թի-ամր իլլահ խալիֆայի կողմից քանդվելու մանրամասնությունները՝ ըստ արար պատմիլների տեղեկությունների<sup>16</sup> և այլն: Նա հեղինակ է նաև ֆաթիմյան խալիֆայության պատմությանը վերաբերող դիվանագիտական (Փաթիմյան Հաֆիզ խալիֆայի թուղթը Սիկիլիայի Ռոժեր Բ թագավորին)<sup>17</sup>, քաղաքական (Սիկիլիայի նվաճումը արաբների կողմից<sup>18</sup>, ֆաթիմյանների նվաճողական քաղաքականությունը) և այլ հարցերի վերաբերյալ ուսումնասիրությունների<sup>19</sup>:

Պատմական սկզբնաղբյուրների նյութերը և ընդհանրապես աղբյուրագիտությունը միշտ կարևոր տեղ են գրավել Ս. Կանարի ուսումնասիրություններում, սակայն նա ունի նաև զուտ աղբյուրագիտական աշխատություններ, ինչպես Սայֆ ալ-Դառու Համդանիի մասին վերոհիշյալ ժողովածուն, Կալկաշանդիի Փաթիմյանների տեղեկությունների քննությունը<sup>20</sup>, Ժ դարի արար մատենագիր իրան Ֆադանի Վոլգայի ավագանի մասին ուղեգրության ֆրանսերեն թարգմանությունը<sup>21</sup>:

Ս. Կանարի հետաքրքրությունը հայագիտության նկատմամբ արդյունք է արաբ-բյուզանդական առնչությունների ուսումնասիրություն-

ների և պրապտումների: Առաջինը նա ուշադրություն դարձրեց Համդանյան ամիրության Հալեպի ճյուղի հիմնադիր Սայֆ ալ-Դառվայի Հայաստան կատարած արշավանքներին, որոնք Բյուզանդիայի դեմ մղված գոտեսարտի մի մասն էին կազմում: Նախ ներկայացնում է Բագրատունյաց Հայաստանում գոյություն ունեցող արաբական ամիրությունները, ապա քննության առնում Սայֆ ալ-Դառվայի 940 թվականին Հայաստանի հարավ արևմտյան գավառները կատարած արշավանքը<sup>22</sup>:

Բյուզանդիայի և ֆաթիմյան ծգիպտոսի հարաբերությունների ուսումնասիրությունը նրա մեջ հետաքրքրություն է արթնացնում հայազգի վեղիրների<sup>23</sup> և հատկապես Վահրամ Պահլավունու նկատմամբ: Այս առդիվ նա հետազոտում է վեղիրության հարցը ֆաթիմյանների օրոք, քանզի թեև այլ մահմեդական երկրներում եղել են որոշ կարևոր պաշտոններ վարող քրիստոնյաներ կամ հրեաներ, այսուհանդերձ, մեծ թվով ոչ-մահմեդական վեղիրների առկայությունը ֆաթիմյանների պետության մեջ բացառիկ երևույթ էր ոչ միայն մահմեդական միջնադարի այլև, ընդհանրապես, միջնադարի պատմության մեջ: Մ. Կանարը մանրամասն վերլուծում է Վահրամ Պահլավունու վեղիրության խոռվահույզ շրջանը, սակայն բավարար չափով ժանոթ վիճելով հայագիտական գրականությանը (հատկապես Գ. Մըսրյանի միջնադարյան հայազգի վեղիրների մասին հմտա մենագրությանը)<sup>24</sup>, որոշ թյուրիմացության մեջ է ընկնում: Խորանալով հարցի ուսումնասիրության մեջ նա հաջորդ հոդվածում ավելի ճիշտ է մեկնաբանում հարցերը և Վահրամ Պահլավունու ծագման ու գործունեությանն առնշվող խնդիրները<sup>25</sup>:

Մ. Կանարը առավել հետաքրքրությամբ զբաղվեց Հայաստանի պատմությամբ 1960-ական թվականների վերջերին ու 70-ականի ըսկըդրին:

Արժեքավոր է նրա հանգամանալից հոդվածը 1064 թվականին Ալփ Արսլանի կողմից Անին գրավելու վերաբերյալ<sup>26</sup>: Նա գալիս է այն եղրակացության, որ ամրակուռ Անի մայրաքաղաքի ողբերգական անկումը արդյոմք էր բազմաթիվ և տարբեր պատճառների: Անին այնպիսի դիմադրություն ցուցաբերեց, որ պաշարող թշնամին հուսահաված պատրաստվում էր հեռանալ, սակայն պաշտպանների տարածայնությունները և այլ պատճառներ նպաստեցին Հայոց ոստանի անկմանը: Հեղինակը արար, հայ և այլ բազմաթիվ աղբյուրներ է օգտագործել, որոնցից, ի դեպ, արար պատմիչները Անիի անկումը հրաշքի արդյոմք են համարում: Ըստ իրն ալ-Ամիրի Անիի պարիսպները աստվածային հրաշքով փուլ եկան և սելցուկները ներխուժեցին քաղաք:

Մ. Ե. Կանարն անդրադառնում է նաև Կիլիկյան Հայաստանի և մամլուքյան Եգիպտոսի գոտեմարտին, որն ընթանում էր Հովհավյան իշխանության և Եգիպտոսի սուլթանության միջև գոյություն ոմնեցող երկարատև պատերազմի ոլորտներում<sup>27</sup>: Եգիպտոսը Բայբարս (1260—1279) և Կալառն (1279—1290) սուլթանների օրոք կատաղի հականարված էր տալիս մոնղոլների և նրանց դաշնակից Հեթում Ա-ի (1226—1269) և Լևոն Գ-ի (1269—1289) հարձակումներին: Այս պայքարի ընթացքում թեև հայկական զորքերը հաջողությամբ մաքառում էին, սակայն շատ հաճախ մոնղոլների թույլ մասնակցության պատճառով հաղթանակը մնում էր Եգիպտոսին և Կիլիկյան Հայաստանը թիրախ էր դառնում մամլուքների ավերիչ արշավանքների: Վերջապես, 1285 թվականին Լևոն Գ-ի և Կալառնի միջև կնքված հաշտության պայմանագրով Կիլիկյան Հայաստանը, որոշ վիշտումների դիմաց, միառժամանակ հրաժարվում է մամլուքների գեմ պայքարելուց: Մ. Կանարն այս պայմանագրը համարում է շրջադարձային կետ Կիլիկիայի թագավորության և Եգիպտոսի հարաբերությունների մեջ:

Արաբ պատմագրության էջերում իր պրատուաների ընթացքում Մ. Կանարը հայտնաբերում է մի հետաքրքրական տեղեկություն արևորդիների մասին<sup>28</sup>: ԺԲ դարի արար պատմիչ իրն ալ-Կալանիսին Դամասկոսի պատմությանը նվիրված երկում հիշում է, որ Դամասկոսի տեր Շիհար ալ-Դին Մահմուդ իրն թուղթեգինը 1138 թվականին իր զորքերի հրամանատար իսֆահանալար Բազուազին սպանել: Է տալիս իր զինված հեծյալների միջոցով, որոնք շամսիյյա (արևային) հայեր էին: Համեմատելով այս տեղեկությունը արևորդիների մասին եղած գրականության հետ (հատկապես Հ. Բարթիկյանի «Դրիգոր Մագիստրոսի պատասխանը Ասորվոց կաթողիկոսին» աշխատությունը) ու վկայակոչելով աղբյուրների և ուսումնասիրությունների տվյալներն այն մասին, թե Հայաստանում և հատկապես Միջագետքի կողմերում Ժ. ԺԲ դարերում եղել են արևորդիներ (արևապաշտներ, որոնք արևը նույնացնում էին Քրիստոսին), Մ. Կանարը եզրակացնում է, որ այս հայկական վարձկան զորքի արևորդի (արևային) ուազմիկները հավանաբար Սամսատի կողմերից եկած հայեր էին, որոնց գուցե հալածել էր պաշտոնական եկեղեցին և ավելացնում է, որ այդ ժամանակաշրջանի համար տարածված երևույթ էր հայ վարձկան ուազմիկների մահմեղական տմիրների մոտ ծառայելու:

Անդրադառնալով Իրանի մոնղոլական իլխանության և Ոսկե Հորդայի հակասություններին, Մ. Կանարն օգտագործում է Վարդան պատ-

միշի մի վկայությունը<sup>29</sup>, ճշտելու համար Հովավյան Աբաղյախ և Ոսկե Հորդայի Բերքեի 1265/66 թվականին Կուր գետի ափերին տեղի ունեցած հանդիպման հանգամանքները:

Մ. Կանարը քննությամ է առնում բյուզանդիայի նշանավոր պատմիչ Թեոփանեսի տեղեկությունները, փորձելով պարզել քաղաքական այն բարդ վիճակը, որ ստեղծվել էր Արխազիայում և ալանների մոտ Ծղարի սկզբին<sup>30</sup>: Այդ ժամանակ Բյուզանդիայի Հուստինիանոս Բ կայսրը, իր իշխանության երկրորդ շրջանում (705—711), ցանկանալով աղաւովել Լեռն սպաթարիոսից (ապագա կայսր Լեռն Գ Խավրացի), նրան ուղարկում է ալանների մոտ համոզելու նրանց, որ հարձակվեն Արխազաց երկրի վրա, որն ընդունել էր արաբական գերիշխանությունը: Լեռն սպաթարիոսն իր հայկական զորամասով հասնում է Ալանաց երկրիրը և այնտեղ երկար արկածներ ունենալուց հետո վերադառնում արդեն այն ժամանակ, երբ Հուստինիանոսն սպանվել էր՝ 713 թվականին:

Մ. Կանարի հայագիտական հետաքրքրություն ներկայացնող աշխատություններից է Ա. Վասիլիկի «Բյուզանդիան և արաբները» աշխատության հավելվածում զետեղված (Բ հատոր, Ա. մաս) հոդվածը՝ «Մոմանոս Լեկապենոսի մի նամակը Եգիպտոսի ամիրին»<sup>31</sup>: Նամակի վերնագրում թեև հիշված է Եգիպտոսի ամիրը, սակայն բովանդակության մեջ խոսվում է այն մասին թե այդ հասցեատիրոջը սիրաշահելու և Բյուզանդիայի տիրապետության տակ դնելու համար ինքը (Ումանուը) պատրաստ է նրան շնորհելու իշխանաց իշխան (արխոնտների արխոնտ) տիտղոսը, նրա ևնթակայության տակ դնելու Գագիկին և մագիստրոս Արասին, ինչպես նաև արևելքի որոշ մասեր: Բանն այն է, որ Ա. Վասիլիկը իր գրքում գտնում է, որ այդ արվել է Եգիպտոսի իխշիդ (տիրակալ) Մուհամմադ Բուղզիին սիրաշահելու և իր տիրապետության տակ վերցնելու նկրտումով:

Մ. Կանարը ցույց է տալիս, որ բոլորովին անհիմն է նամակի հասցեատիրոջը փնտրել Եգիպտոսում, որի տիրակալը ոչ մի առնշություն չէր կարող ունենալ Հայաստանի թագավոր Արասի և Վասպուգականի Գագիկ Արծրունու հետ: Նա գտնում է, որ դա, հավանաբար, ուղղված է եղել կամ Զազիրայի որևէ տիրակալի (Համդանյան) կամ Ատրպատականի որևէ քաղաքական գործի (օրինակ՝ Դայսամին), իսկ առկա վերնագրում Եգիպտոսի ամիրի հիշատակումը թյուրիմացություն է:

Մ. Կանարի բանասիրական պրատումների մեջ հատուկ տեղ ունեն նրա հոդվածները (արաբագիտական և հայագիտական) Խոլամի հանրագիտարանի նոր հրատարակության մեջ: Մասնագիտական հըմ-

տությամբ են գրված նրա ֆաթիմյան խալիքայության<sup>32</sup>, Զատ պէ-Հիմ-մա<sup>33</sup> ժողովրդական վկանի և այլ հարցերի վերաբերյալ արաբագիտական արժեքավոր հոդվածները: Հայագիտական հոդվածներից նախ չիշարժան է «Արմինիա»<sup>34</sup> ծավալուն հոդվածը, ուր բազմակողմանիորեն օգտագործված են արար պատմիչների և աշխարհագրագետների տեղեկությունները Հայաստանի արաբական շրջանի և Բագրատունյաց թագավորության մասին: Վահրամ (Բահրամ) Պահլավունուն<sup>35</sup> նվիրված հոդվածում հատկապես արժեքավոր է հարուստ մատենագիտությունը: «Դվին» ծավալուն հոդվածում օգտագործված է տարրեր լիգուններով Հայոց ոստանի մասին դրված հարուստ գրականությունը, ինչպես նաև Հայաստանում հրատարակված ուսումնասիրությունները՝ ներառյալ Դվինի հնագիտական պեղումների (Կ. Ղափարյան) արդյունքները: Դվինի պատմությունը տրված է Խոսրով Կոտակի կողմից այն քաղաք դարձնելուց մինչև մոնղոլների կողմից կործանումը: Հայագիտությանն առնվում են նաև «Դիար Բաբը (Աղձնիք)»<sup>36</sup> և «Իսա իրն Շայիխ»<sup>38</sup> (Արմինիայի կառավարի) հոդվածները:

Հատկապես շնորհակալ աշխատանք է կատարել Մ. Կանարը վերաբարարակելով այլոց արժեքավոր մենագրությունները՝ հարստացված նոր ուսումնասիրությունների տվյալներով և արաբական աղբյուրների թարգմանությամբ: Համաշխարհային ասպարեզ դուրս եկավ Վասիլկի «Բյուզանդիան» և արաբները<sup>39</sup> մենագրությունը՝ վերամշակված և արար մատենագիրների տեղեկություններով ճոխացված Մ. Կանարի շանքերով (մասամբ նաև Հ. Գրեգուարի օժանդակությամբ): Այս հրատարակության երկրորդ հատորի առաջին և, հատկապես, երկրորդ մասում, ֆրանսերեն թարգմանությամբ, արված են հիսունից ավելի արար պատմիչների և աշխարհագրագետների երկերից քաղված թարգմանություններ: Նույն ձևով նա վերաբարարակել է Ժ. Լորանի «Հայաստանը Բյուզանդիայի և իսլամի միջև, արաբական նվաճումներից մինչև 886»<sup>40</sup> արժեքավոր մենագրությունը:

Վերջապես Մ. Կանարը գրախոսականներով<sup>41</sup> հանդես է եկել Հայաստանում հրատարակված ուսումնասիրությունների մասին և որոշ թարգմանություններ կատարել Փարիզում լույս տեսնող «Հայկական ուսմանց հանդեսում», որի անխոնջ և բազմահմուտ խմբագիր Հ. Պերպերյանի աշխատանքներին նա որոշ օժանդակություն է ցուցաբերել:

Մ. Կանարի մահվամբ մեծ կորուստ ունեցան թե արաբագիտությունը և թե հայագիտությունը:

1 Cl. Cahen, Marius Canard (1888—1982), Revue des études Arméniennes, NS, t. XVI, Paris, 1982, p. 3—4.

2 Bibliographie de M. Canard, Extrait de Byzantion, t. XI.III (1973), Bruxelles, 1974.

3 M. Canard, Les expéditions des Arabes contre Constantinople dans l'histoire et dans la légende, Journal Asiatique, CCVII, 1926.

4 Idem, Mutanabbi et la guerre byzantino-arabe, Al-Mutanabbi, Mémoires de l'Institut français de Damas, Beyrouth, 1936.

*Idem*. La guerre sainte dans le monde islamique et dans le monde chrétien, Revue Africaine, Alger, 1936.

*Idem* (avec N. Adontz), Byzantion, XI, 1936. Quelques noms de personnages byzantins dans une pièce du poète Abu Firas.

*Idem*, L'histoire byzantine et les sources arabes, Rapport présenté au Congrès de l'Association G. Budé (Nice), Paris, 1939.

*Idem*, Deux épisodes des relations diplomatiques arabo-byzantines au X<sup>e</sup> siècle, Bull. d'Etudes Orientales de l'Institut français de Damas, XIII, 1949—1950.

*Idem*. La date des expéditions mésopotamiennes de Jean Tzimiscès, Mélanges H. Grégoire, II, Bruxelles, 1950.

*Idem*, Quelques „à-côté“ de l'histoire des relations entre Byzance et les Arabes, Studi orientalistici in onore di Giorgio Levi della Vida, Roma, 1956.

*Idem*, Les sources arabes de l'histoire byzantine aux confins des X<sup>e</sup>—XI<sup>e</sup> siècles, Revue des Etudes Byzantines, XIX, 1961.

*Idem*, La prise d'Héraclée et les relations entre Harun ar-Rashid et l'empereur Nicéphore I<sup>er</sup>, Byzantion, XXXII, 1962.

*Idem*. *Byzantium and the Muslim World to the middle of the eleventh century*, Cambridge Medieval History, t. IV, ch. XVII, 1964.

5. *Idem*, Les relations politiques et sociales entre Byzance et les Arabes, Dumbarton Oaks Papers, XVIII, 1964.

6. *Idem*, Deux documents arabes sur Bardas Skléros, Studi Bizantini e Neohellenici, V, Roma, 1939.

7 *Idem*, Sayf al-Daula, Recueil de textes relatifs à l'émir Sayf al-Daula le Hamdanide, Alger-Paris, 1934.

8 *Idem*, Histoire de la dynastie des Hamdanides de Jazira et ce Syrie, I, Alger, 1951.

9 As-Suli, Akhbar ar-Radi wal-Muttaqi, t. I, Akhbar ar-Radi, trad. fr. Publications de l'Inst. d'Et. Or. de la Fac. des Lettres d'Alger, XI, 1943.

*Idem*, As-Suli, Akhbar ar-Radi wal-Muttaqi, t. II, Akhbar al-Muttaqi, trad. fr. Publications de l'Inst. d'Et. Or. de la Fac. des Lettres d'Alger, XII, Alger, 1950.

*Idem*, Baghdad au IV<sup>e</sup> siècle de l'hégire (X<sup>e</sup> -siècle de l'ère chrétienne), Arabica, 1962.

- 10 *Idem*, Un personnage de roman arabo-byzantin, Actes du deuxième Congrès National des Sciences historiques, Alger, 1932.
- 11 *Idem*, Delhemma épopée arabe des guerres arabo-byzantines, Byzantion, X, 1935.
- 12 *Idem*, Les principaux personnages du roman de chevalerie arabe Dhat al-Himma wal-Baital, *Arabica*, 1961.
- 13 *Idem*, Dhu l-Himma, Encyclopédie de l'Islam, Leyde—Paris, p. 240—245.
- 14 *Idem*, Une lettre de Muhammad ibn Tugj, emir d'Egypte, à l'empereur Romain Lécapène, Byzantion, XI, 1936.
- 15 *Idem*, Un traité entre Byzance et l'Egypte au XIII<sup>e</sup> siècle et les relations diplomatiques de Michel Paléologue et les sultans manilius Baybars et Qala'un, Le Caire, 1937, *Mélanges Gaudefroy-Demombines*.
- 16 *Idem*, Le traité de 1281 entre Michel Paléologue et le sultan Qala'un, Byzantion, X, 1935.
- 17 Une lettre du sultan Malik Nasir Hasan à Jean VI Cantacuzène, AIEO, 111, 1937.
- 18 *Idem*, Le ceremonial fatimide et le Ceremonial byzantin, Byzantion, XXI, 1951.
- 19 *Idem*, La destruction de l'Eglise de la Resurrection par le calife al-Hakim et l'histoire de la descente du feu sacré, Byzantion, XXV, 1965.
- 20 Une lettre du calife fatimide al-Hafiz à Roger II, Atti del Convegno Internazionale di Studi Ruggeriani, Palermo, 1955.
- 21 *Idem*, La conquête de la Sicile par les Musulmans, Bull. des Et. arabes 1944 (janv.-fevr.).
- 22 *Idem*, Al-Maliki, La conquête de la Sicile par les Musulmans (trad. fr.) Bull. des Etudes arabes, 1914 (janv.-fevr.).
- 23 *Idem*, L'Afrique du Nord dans le „*Hudud al-alam*“, Bull. des Etudes arabes 1944 (nov.-déc.).
- 24 *Idem*, L'Imperialisme des Fatimides et leur propagande, AIEO. VI, 1942—1947.
- 25 *Idem*, Quelques notes relatives à la Sicile sous les premiers califes fatimides. Studi Medievali in onore di Antonio De Stefano, Palermo, 1956.
- 26 *Idem*, Fatimides et Burides à l'époque du calife Hafiz, Revue des Etudes Islamiques, 1967.
- 27 *Idem*, Al-Qalqachandi, Les institutions des Fatimides en Egypte, Texte arabe, extrait du Tome III du *Subh al-Acha*. Bibl. de l'Inst. d'Et. Sup. Isl. XII, Alger, 1957.
- 28 *Idem*, La relation du voyage d'Ibn Fadlan chez les Bulgares de la Volga, Annales de l'Institut d'Etudes Orientales, XVI, Alger, 1958. *Idem*. Quelques observations sur l'Introduction Géographique de la Bughyat at-talab de Kama, ad-Din ibn al-Adim d'Alep, Annales de l'Institut d'Etudes Orientales, XV, Alger, 1957.
- 29 *Idem*, Les Hamdanides et l'Arménie, Annales de l'Institut d'Etudes Orientales, Alger, 1948.

- 23 *Idem*, Un vizir chrétien à l'époque fatimide: l'Arménien Bahram, *Annales de l'Institut d'Etudes Orientales*, Alger, 1954.
- 24 Գ. Արյան, Ականանու հայր Եղիպատրի մէշ, Դահլիք, 1947.
- 25 M. Canard, Notes sur les Arméniens en Egypte à l'époque fatimide, *Annales de l'Institut d'Etudes Orientales*, Alger, 1955.
- 26 *Idem*, La campagne arménienne du sultan salguqide Alp Arslan et la prise d'Ant en 1064, *Revue des Etudes Arméniennes*, N. S., II, 1965.
- 27 *Idem*, Le royaume d'Arméno-Cilicie et les sultans mamelouka: I, De 1260 au traité de 1285, *Revue des Etudes Arméniennes*, IV, 1967.
- 28 *Idem*, Une mention des Arewordik dans un texte historique arabe, *Revue des Etudes Arméniennes*, III, 1966.
- 29 *Idem*, A propos de la traduction d'un passage de l'Histoire Universelle de Vardan sur les luttes entre Mongols d'Iran et Mongols de Horde d'Or, *Revue des Etudes Arméniennes*, V, 1968.
- 30 *Idem*, L'Aventure caucasienne du Spathaire Léon, le futur empereur Léon III, *Revue des Etudes Arméniennes*, VII, 1971.
- 31 A. A. Vassiliev, Byzance et les Arabes, t. II, 1<sup>re</sup> partie, La dynastie Macédonienne, Bruxelles, 1968, p. 425—430.
- 32 M. Canard, Fatimides, *Encyclopédie de l'Islam*, Leyde-Paris, II, p. 1965 p. 870—882. *Idem*, Hamdanides, EI, III, 1971 p. 128—133.
- 33 *Idem*, Dhu l-Himma, EI, II, p. 240—245.
- 34 *Idem*, Arminiya, EI, I, 1960, p. 655—659.
- 35 *Idem*, Bahram, EI, I, p. 968.
- 36 *Idem*, Dvin, EI, II, p. 695—698.
- 37 *Idem*, (avec Cl. Cahen), Diyar Bakr, EI, II, p. 353—355.
- 38 *Idem*, Isa ibn al-Shaykh, EI, IV, 1978, p. 92—95.
- 39 A. A. Vassiliev, Byzance et les Arabes, t. I La dynastie d'Amorium, Edition française préparée par H. Grégoire et M. Canard, t. II, 1<sup>re</sup> partie, La dynastie Macédonienne, préparée par M. Canard, t. II, deuxième partie, Extraits des sources Arabes, traduits par M. Canard.
- 40 J. Laurent, L'Arménie entre Byzance et l'Islam, depuis la conquête arabe jusqu'en 886, Nouvelle édition revue et mise à jour par M. Canard, Lisbonne, 1980.
- 41 M. Canard, Remarques sur l'article de M. H. Bartikian relatif à l'épopée byzantine de Digenis Akritas, REA, V, 1968, p. 307—313.
- Idem*, A propos de A. N. Ter Levondyan, L'Arménie et le califat arabe, Erevan, 1977, REA, XIII, 1978—1979, p. 387—407.  
 Հայագիտական հասարքություն են ներկայացնում նաև հառելյալ հոդվածները.
- M. Canard, N. Adontz, Quelques noms de personnages byzantins dans une pièce du poète Abu Firas, *Byzantion*, XI, 1936.
- Idem*, Une lettre du calife fatimide al-Haliz à Roger II, Atti del Convegno Internazionale di Studi Ruggeriani, Palermo, 1955.

*Idem*, Les reines de la Géorgie dans l'histoire et la légende musulmanes,  
Revue des Etudes Islamiques, Paris, 1959/I.

42 Հանդուռամ հրատարակել է Մ. Կանարի հոդվածների երկու ժողովածու՝

M. Canard, Miscellanea Orientalia, préface de Ch. Pellat, Variorum Reprints, London, 1973. *Idem*, L'Expansion arabo-islamique et ses répercussions, Variorum Reprints, London, 1974.

وَلِمُخْتَنِي عَبْدَ الْمَهْبِطِ طَاهِرَ مِنَ الْكُورَ وَهُوَ أَعْوَلُ لِرَبِيعِ مَا يَهُ وَأَوْبَرَنَّ الْفَالْفَ  
شَافِعِي الْفَوْسَةِ وَهُوَ بِيُونَ الْفَوْسَةِ دَعْدَمِ نَهْفَنَ الدَّوَابِ شَافِعِي الْفَانِدَدِ  
وَمِنَ الْفَغْمِ الْفَاشَاةِ نَ وَمِنَ الْفَسَبِ الْفَارَاسِ وَشَافِعِي الْفَارَاسِ مِنَ الْفَسَبِ  
وَمِنَ الْمَدَوْرِ مَدَحِ الْمَدَدِ شَافِعِي قَطْمَنِي فَيْزِنَ الْقَوْلَةِ الْتَرَكَ  
وَوَيْنِ حَذِيفَةَ أَنَّهُ قَالَ تَعْلِيدَ التَرَكَ عَلَى الْكَوْفَةِ وَتَنْلَبَ لِلْمَزَرَ عَلَى الْمَزَرَ وَنَلَبَ  
الْوَدَمَ عَلَى الشَّامِ وَوَرَدَى عَنْ أَنَّهُ صَلَّى اللَّهُ عَلَيْهِ وَسَلَّمَ أَنَّهُ قَالَ لِفَضِيلَيْنِ التَرَكَ  
أَهْلَ الْعَرَقِ مِنْ بِلَادِهِمْ قَالَ وَكَتَبَ عَرَبِيَّاً سَعَنَهُ الْمَادَ الْمَهْبِطَ لِهِمَا  
مِنَ الْمَتَّأَكَ فَلَمَّا كَوَافَعَهُمْ فَلَنَّهُمْ خَرَجُهُمْ بَعْدَ الْمَاتِيَنَ مَادَ لِخَرْجَهُمَا كَانُوا أَشَدَّهُمَا  
عَلَى هَذِيْنِ أَنَّهُمْ كَمَا فِي الْمَوْرِمَ وَوَرَدَى هَذِيْنِ الْبَنِي صَلَّى اللَّهُ عَلَيْهِ وَسَلَّمَ قَالَ الْمَتَّأَكَ لِهِمَا  
مِنْ سَلَبِ الْمَتَّى مَاجِلَوْنَاهُ وَوَرَدَى هَذِيْنِ عِدَادَهُ عِيَاسَيْنَ قَالَ وَاللهِ لَكُوكُنَ لِلْمَلَكَةِ  
فَوَلَرَى حَتَّى تَلَبَّ عَلَيْهِمْ الْمَهْرَ الْوَحْيِ الْمَزَرِ بِهِمْ كَانُهَا الْمَهَارَ الْمَهْرَ ٥  
وَوَرَدَى عَنْ أَنَّهُ مِنْ إِذْ قَالَ لِأَقْوَمِ الْمَعَاةِ حَتَّى يَلِيْقَنِ عَرَاضَ الْجَوَهِ مَعَافَارَ  
الْعَيُونَ فَلَمَّا كَانَتْ حَتَّى يَمْبَطِلَوْنِيْلَمْ بِشَاطِئِ دَجَلِ ٥ وَوَرَدَى لِذَعَنِيْلَمْ قَالَ  
لَا تَبْعَثُوا الرَّابِعِينَ اَتَرَكُو مَا مَاتَ كُوكُمَ التَرَكَ وَالْمَبَشَةِ ٥ وَهِيَ حَدِيثُ مَرْفَوعٍ قَلَدَ  
قَالَ آنَبِي صَلَّى اللَّهُ عَلَيْهِ وَسَلَّمَ اَتَرَكَ التَرَكَ مَا مَاتَ كُوكُمَ ٥ وَقَالَ الْمَاقْنِعُ الْكَامِبَالْتَرَكَ  
أَقْلَى حَرَبِيَّهُ وَرَنَّا وَضَعَتْ حَسَنَهُ أَوْسَتَهُ كَانَ فَعَنِ الْكَلَبَةِ فَمَا مَا أَتَيْنَهُ فَلَيْلَهُ مَا نَعَمَ  
يَوْنِي الْزَّدَوْمِيْلَكَارِجَادَلَهَا الْمَلَأِيْلَهِيْلَفِطَامَ بَغْرَهَلَعَلِيَّلَرِفَرَهُ قَالَ وَلِلْمَلَكَ  
لِهِتَّاَنَ الْمَغَرِيْلَهِدَمَ اَوْسَعَ بِلَازَنَ لِهِتَّاَنَ نَعَمَ الْمَبَنِيِّ وَالْمَفَجِيِّ الْمَلَكَ  
وَالْكَوَكَبَ وَالْمَزَرِ الْجَمَرِ وَالْعَنَالَ وَالْمَرَكَشَ وَارَكَشَ وَفَلَمَّا نَعَمَ وَفَلَمَّا نَعَمَ

مك وهى من مذاخن النهر فاما مدينه فارس فاز بها بحلق المسلمين والآخر  
اتراك لخزنيه وجميع مدابين الترك سنه عشرين مدينه فـ قال بعض العلماء بالترك  
لجناد الترك لخزنيه وهم ما يكونوا الناجي هم فندن دهم عنان الترك فـ والذى كـ يـ  
وهم اصحاب المـ العـظام والـ الفـرـغـ والـ كـيمـاـك وـهمـ الـمـلـوكـ وـهمـ اوـغـلـ بـلـادـمـ  
وـاعـزـهـمـ عـنـ حـيـعـ التـرـكـ والـبـشـائـكـةـ وـالـشـغـرـيـةـ وـالـقـرـغـزـ عـوبـ التـرـكـ وـهمـ اـصـحـلـ  
عـدـ خـلـونـ وـيرـجـلـونـ وـيرـكـيـشـ اـصـحـابـ بـنـاـ وـرـئـىـنـ قـالـ وـبـعـثـ هـشـامـ بـنـ  
عـبدـ الـمـلـكـ رـجـلـ اـمـلـكـ التـرـكـ يـدـعـهـ اـلـمـاسـلـمـ فـاـلـ مـدـخـلـ اـلـهـ وـهـوـ بـخـرـ  
سـجـاـ فـتـالـ التـرـجـانـ مـنـ هـذـاـ قـالـ رـسـولـ مـلـكـ اـلـعـربـ قـالـ غـلـامـ فـاـلـ نـعـمـ تـأـمـيـنـ  
الـمـيـتـ كـشـيرـ الـحـمـ قـيلـ لـخـبـرـ نـلـمـاـ كـارـذـ اـتـيـوـمـ رـكـبـ فـيـ عـشـ اـشـرـ بـعـ كـارـلـ وـهـدـ  
مـنـهـ لـوـاـ وـاـمـدـاـ لـجـلـ خـلـتـ عـلـهـ بـاـبـ فـصـعـدـ تـلـ وـحـولـ التـلـ غـيـفـهـ فـلـاطـلتـ  
الـشـرـ اـمـرـ وـهـدـاـ مـنـ اـلـيـكـ اـلـعـشـ اـنـ يـشـلـوـاهـ وـلـهـ بـهـ فـنـعـلـ مـنـ اـفـاعـتـ الـنـدـجـ  
كـلـمـ بـيـوـلـ جـاهـ جـاهـ حـتـىـ وـفـوـاـتـتـ التـلـ دـمـعـ صـاحـبـهـ نـكـذـ لـلـمـلـكـ خـاـزـ الـلـبـرـ  
لـمـدـاـ وـلـدـاـ اـنـ يـشـلـوـاهـ وـلـهـ بـهـ فـاـذـ اـفـعـلـ وـاـفـعـشـ اـلـفـدـرـجـ فـوـقـوـاعـتـ  
الـتـلـ وـصـعـدـ حـاجـتـمـ حـتـىـ نـشـرـ اـلـلـوـيـهـ كـلـهاـ وـهـارـ تـسـانـلـ مـاـيـهـ اـلـنـدـجـ شـالـ  
لـتـرـجـانـ قـلـ لـهـذـاـ الرـسـولـ يـعـلـمـ صـاحـبـهـ اـنـ لـيـسـ هـوـاـ جـامـ وـلـاـ اـسـكـيـتـ وـلـاـ  
خـاطـ فـاـدـ اـسـلـوـ اـمـاـنـ يـلـكـلـوـنـ وـلـخـرـخـاسـانـ زـلـجـهـ اـلـثـاثـ بـخـانـ  
لـمـاـ عـلـىـ فـنـ بـوـخـانـ لـمـاـ مـدـيـنـهـ خـافـانـ حـلـكـ اـلـقـرـغـزـ مـسـيـنـ ثـلـثـ اـشـهـرـ فـرـقـىـ  
كـبـارـ وـخـبـ وـاسـوـاـنـ وـاـهـلـهـ اـلـزـاـلـ وـفـيـمـ جـوـنـ بـعـدـوـنـ اـنـارـ وـفـيـمـ زـنـادـهـ  
عـلـىـ مـذـهـبـحـانـ وـالـلـكـنـ مـدـيـنـهـ عـنـطـيـمـهـ كـثـيـرـ اـهـمـلـ وـلـاـسـوـاـنـ وـهـلـاتـ

عنـ

عشر باباً حديثاً وعشرين هاتماً واما ما امهى على ثلثاً يه فرحة دفلا  
ملك كيماً واصحابه فبلاده يتبعون عساطط القطر وصلون ويرحلون نهاداً  
الكلان وقال على زدن كاتب المازيا لحضر مدينه بنيت على وجه الارض °  
از ملكاً من ملوك الترك انى سخنة ومستنفع ماء عادي لجاجي في طرف من اطراف  
سلطنه صرف للتاونه ثم حفرا ساساً اعرضه لوبون ذرعان ثم امر فرع من قرار  
الحفر سوراً يلاجر والكلس عصر كل سور عشر اذرع وبها فتحاً غير ضرر زنو  
ذراعاً فلما انتهى بالسور يرى له وجه المرض قلم النضا الذي ينبعها بالمرل وابيل  
ينبعها فلما ارتدوا جعل المرارة وسطها حتى وفتحها حسبيز ذراعاً ثم يلى المدنه  
له ولريعيته من المنازل والقصور وحفر حولها محندة في جرف اليربا الاما فالماء تليت  
از عادت بعد سنت لجمة عظيمة من اعظم الاجرام داودعوا اهله ونسبيه لبراته  
فصارت امنع مدينه بنيت على قلل للجبل اهية قبار الماء هن واز منك ارسلوا  
الترن رعنوا والترن لغلب لهم واشذ لحياتاً على نقب المدرن الحصون من  
المواضع البعيدة فسار اليها ونزل على فم اخوه منها ولم ينقيه اشغبوا اننقبيوا  
حتى يلغوا هانلما صاروا الى المهمة التي حولها خرج عليهم الماء في النقب فما زالوا  
تحتالوزنه وهو من يغلبهم ومنه يغلبون حتى استوى لهم قطعة وقطعاً انهم صر  
تدققروا بالمدنه لما اقتوا الى المسوروا لأخذوا افي شبهه فلما نبت خرج عليهم اطر  
المغار فكانوا الاخرجون منه شيئاً ما سال من جوابه اضعافه فلما رأوا ذلك  
على الاصحية بهم فلنصر فوا خا يبيز ه قالوا والفتحة تقع في بلاد الترك عده  
من العوالم في الميطن الواحد ربها وضعفت سمعه وسته فاما اربه وثلث

جميع ما شير لهم زمان والترك إذا أرادت أن تخلف رجلاً لم تبصم من  
خاس فقضيه ثم خضر قصعه فتصير فيها ما وقع بين يدي الصنم ثم يجيئ به المحب  
قطعة ذهب وكانت دخراً وقت برازيل أمارة ف呼ばれت حتى تلقيه ثم يقولون  
لستخلف أن تفتق هذا المعهد وأعدت لتوحيث تصريحات الساعرة، تلبس  
ساويلها وسلط عليك من قطعك من قطعك قطعاً مثل هذا المرض وأصفر  
لونك مثل الصدأ الذهب ثم يترتب بعد الميزان لك الماء مثل ما ينبع به الماء  
عبيده حيث الأمارات أو أصابته بليمة في بلادهم المدور والفنك الحديدي وم  
أرمي سهام كلها بالشباب فإذا ذاول للهبل منهم ولدر رباء وعاله وقام بارجاني  
حتى لم فاز بالبلوغ للحالم ذبح إليه فرسوا سهاماً ولخرج معن منزله وقال له ادخل لتنبك  
ثم يصبر ولديعه مثل العرب الذي يمرنه هذه سنته ثم يعودونه ومنهم قوم  
يسمون هنا لهم وتزوجهم ازواجاً ويعهم مشغاف الشهور فإذا أراد الرجل أن يتزوج  
نظري التي يريد والقى على رأسها مفتعة فإذا فضل ذلك فقد صارت أعرابية  
لا يمكّن عندها ولله ولما يدفعها الخن وفي بلادهم الخنول العيد وهو جبهة دابة تصاد  
في بلادهم وذكرتهم زخر المطوع أن بلدهم شديد البرد وأخا يسكن ستة أشهر  
في السنة وانه سلسلة إلى بلاد حنازان والقرغرى على بريانند حافاز الله وان  
كان سيراً في اليوم والليلة لشه سكك باشد سير واحد نصار عشرين يوماً  
في برازيل بما يجوز وكلام ليس فيها فرق ولا مدنه غير اصحاب المحكيم  
نزول في حيام وان كان البر في حمل معه زاد العشر يوماً وذاك انه عرف أمر تلك  
المدينة وان سافرها اشتراك في يومي برازيل بما يجوز وكلائد ثم سار بعد ذلك

